

1967



ՄՈՒՐԱ



ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ



Հրեա.

Art. Anisimovskaya, Tishchenko



Նոր շրջան VII տարի

Հրատ. IXX տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3

Մ Ա Ր Տ

1907



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ ԸՆԿ. Մաղաթ., փող., 5.

1907

№ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1) Ինքձո՞ւի Իլգա փրապանի, 5
- 2) ԲՐԱՆԴ Դրամատիկական պօէմա հինգ գործողութեամբ
Հենրիկ Իբսենի 17
- 3) ԳԱԻԱՌԻՑ Մ. Ղազարեանի 31
- 4) ԱՆՁԵՌՆԵՐԻ ՊԵՆՏԻՆԱՐԻԱՆՆԵՐԻ ԱՆՁԻ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆԻ
Դիօնէօի 37
- 5) ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻՍՅՈՒՅՑ Մինաս Յոլակի 53
- 6) Ի՞նչ ե՞ն ՈՒԶՈՒՄ ՍՈՅԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ, Գէդ
Էւ Լաֆարգի 68
- 7) ԴՊՐՈՅԱԿԱՆ ՍՈՒՄԲՈՒՐ ԵՒ ԱՆԻՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ . . . 75
- 8) ՄՈՎՍԷՍ ԹԷ ԴԱՐՎԻՆ? Պրօֆ. Ա. Դոդլի 98
- 9) «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿԻՉՆԵՐԻ» ԳՈՐԾԵՐԻՑ 102
- 10) ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ
Բժ. Կ Աղաջանեանցի 124
- 11) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) Մրա-
ւեան՝ Գաշնակցութեան կրիզիսը 2) Բիսարդ՝ Ինչո՞ւ ե՞նք
անջատուում Գաշնակցութեանից Անկախի 133
- 12) ՆՈՐ ՍՏԱՅԱԾ ԳՐԲԵՐ 139
- 13) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրորդ Պետական Դումայի դիմա-
պիծը:—Ռուս ժողովրդի Գաշնակցութիւնը:—«Աշխատա-
ւոր մասսա» եւ սրովետարիատ:—Մեր կազեաները, սո-
ցիալ-դեմոկրատիան եւ Գաշնակցութիւնը
- 14) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղացիական ապստամբութիւնը
Ռումանիայում:—Գիւղական ստորադասութիւնը եւ
կապիտալիստական դիւղատնտեսութիւնը 149
- 14) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ
- 15) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅՈՒԹ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 թ.

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան VII տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ֆուտուսան	Փարսիսան	տարեկան 10 ռ.	Մասսահման	տարեկան 12 ռ.	(32 ֆ.)
		կէս տարին 5 » 40կ		կէս տարին 7 »	(18 ֆ.)
		ամսական 90 կ.		ամսական	(3 ֆ.)

Բաժանորդագիրն ի կարելի է վճարել նաև մաս-
մաս (5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Տարր-
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, գիտաշինների և քանտորների համար բաժանոր-
դագիրն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս (4-4) ռ.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՒՈՒՄ Է

Թիֆլիսում — խմբագրատանը (ճալմափաճեան փողոց, տ. № 12)

«Գուտենբերգ», «Կենտրոնական», «Новая жизнь» (Գորովինսկի, արք. թատ-
րոնի դիմաց) զրախանութներում և «Փարոս» Կիսովում (Երևան. հրատ.)

Կայսերական այլ «եղերից» պէտք է գրվել՝ Тифлисъ,

въ редакцію журнала «МУРЧЪ».

Արասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ՅԱՅՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ, ընդունում է ամեն լեզուով: Յայտարա-
րութիւնների համար վճարում են.— 1 երես ամիս յայտարարութեան հա-
մար 10 ռ., 1/2 եր. 5., 1/4 եր.— 2 ռ., տողատեղ (կրկ.)— 40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Ի Ն Ձ Ո՞ Ի...*)

(Ի լ զ ա Ֆ ր ա պ ա ն)

Մարմարաշէն և ոսկէղօծ պատերով պսպղում էր դատարկ կանգնած ահարկու ամրոցը:

Անհամար սենեակները, ահագին դահլիճները հաղարաւօր այցելուների համար, փափուկ գորգերով զարդարած գողտիկ հիւրասենեակները, աղիւսեայ լուսառատ սրահները, տերասները և պարտէզները,—ամենը և ամեն ինչ դատարկ էր, դատարկ որպէս ձուի փքուած փոճուկ:

Ո՞վ է ապրում այդտեղ...

—«Անցեալի ոգին», ժպտալով պատասխանում էին անցեալի թեթեամիտ և հեշտասէր սիրահարները. բայց ինչպէս իւրաքանչիւր ուրուական, այնպէս և «Անցեալի ոգին» աներևոյթ և անմարմին էր:

Ամրոցը դատարկ էր, դատարկ, բոլորովին դատարկ...

Այդ մոռացուած ամրոցում ապրում էր երբեմն մի ծերունի արքայ: Նա այդտեղ էր անցկացրել իր ամբողջ կեանքը, մեռել փառաւոր սենեակներից մէկում և այդտեղ էլ, ամրոցի մութ զամբանում, չնայելով, որ մեծ հոգատաւութեամբ զմուսած էր, փտել էր նորա մարմինը: Բայց արքան արդէն իր կենդանութեան վերջին տարիներում բոլորովին ուժասպառ մի ծերունի էր և զեւ նրա մահուանից շատ առաջ զրացի աշնուականներից մէկը, ընդլայնելով իր կից կալուածները, խլել էր նրա թագաւորութիւնն ու ամրոցը:

Այն օրուանից, երբ ծերունի արքայի մարմինը մահում է գերեզման, ամրոցն ամայանում է. անտէր մնացած և անպէտք ամենքին, նա դեռ մխրթարում էր միմիայն նրանով, որ էլի թագաւորի էր պատկանում: Ժիշտ է, ամրոցը իր նոր

*) Թարգմանութիւնը կատարուած է հեղինակի առանձին թոյլատուութեամբ:

տիրոջ բազմաթիւ կայքերից մէկն էր, բայց այդ տէրը երբէք դեռ չէր բարեհաճել ոտք դնել նրա մէջ:

Հզօր կառավարիչը այնքան շատ ամրացներ ու պալատներ ունէր, որ տարուայ իւրաքանչիւր օրը կարող էր ուտել զանազան սեղանատներում, ժամանակ անցկացնել զանազան դահլիճներում և քնել զանազան ննջարաններում: Ձէ՞ որ նա թագաւոր էր: Նա համոզուած էր, որ իր իշխանութիւնն ու թագաւորութիւնը, այլ և նոյն թնդանօղները, որոնց օգնութեամբ խլել էր զառամեալ արքայի կեանքը,—ամեն ինչ տրուած էր իրան աստուածային նախախնամութեամբ: Եւ յաճախ ձեռքերը երկինք բարձրացրած, իր անհուն շնորհակալութիւնն էր յայտնում աստուածային գթառատութեան:

Տարիներ ի վեր ամբողջ այդպէս ամայի էր կանգնած: Ոչ մի շշուկ չէր խանգարում նրա երկհարիւր սենեակների մեռելային լուռութիւնը. միմիայն ժամանակ առ ժամանակ այդ չարաբաստիկ լուռութեան մէջ լսւում էր մկների ծրւժընդը, որոնք խրթխրթում էին ոսկէղօծ կարնիզների յետևում և խուլ լրսւում էր պահապանի երկշոտ քայլերը:

Միայն երկու անգամ տարեկան—վաղ զարնան և ուշ աշնան—սառն, մահասարսուռ սենեակներում ու սրահներում ամեն ինչ կենդանութիւն էր ստանում: Զրուցարանութեամբ և հանաքներով ամբողջ էր խուժում ծառաների և աղախիները հազգին ամբոխը... Եւ այդ ժամանակ միմիայն բարձրանում էր ազազակ, իրարանցում, հռում աշխատանքը. գորգերից, որոնց վերայ ոչ մի ոտք չէր կոխում, բարձրից, որոնց վերայ ոչ մի զլուխ չէր հանդստանում, մահլիճներից, որոնց վրայ ոչ ոք չէր քնում, թափւում էր փոշին: Ծառաները, ծնկէջոք սողալով, շարաթները ընթացքում մաքրում էին մոմերով հրաշալի յատակները, որոնց վերայ լուկ մկներն էին վազվզում. լուանում էին պատուհանների ահագին ապակիները, որոնցից ոչ մի աչք զուրս չէր նայում, մաքրում էին հայելիները, որոնց ոչ ոք չէր մօտենում, մաքրում էին ջահերը, որոնք երբէք չէին վառւում, մաքրում էին ժանդը ճօշերից ու զրահներից, որոնք առանց մի զործածութեան կախուած էին, ինչպէս և ամբողջ ամբողջ կանդնած էր բոլորովին անպէտք, որ ոչ ոքին պէտք չէր և ուր յամենայն դէպս պէտք էր մեծ հողատարութեամբ պահպանել:

Եւ յետոյ երկհարիւր սենեակներում դարձեալ տիրում էր լուռութիւնը: Իսկ այն մեռելային լուռութիւնը ուղեկցում էր ցերեկները զունակորուստ գորեկնեհան գորգերի վրայ ընկնող արևի, իսկ գիշերները բազկաթոռների անգոյն ծածկոցների

վերայ ընկնող սահող լուսնի ճառագայթներն շողը: Այդ հրաշալի սենեակներում, որոնք խոր ընկզմած երևակայում են երբեմնի իրանց տեսակ խնդութիւնն ու ծիծաղը, գեղարուեստական վայելչականութիւնն ու կոկետութիւնը, այնտեղ հիմա վազվզում ու ծւծւում են մկները:

Իսկ վառարաններում փչում ու շաացնում էր դօրեղ, խիստ և սպառնալից քամին, որը ձմեռուայ սև դիշերներին դատարկ ամրոցի հետ ունենում էր տխուր խորհրդածութիւններ:

Ամառուայ երեկոյ էր, վաղ ամառուայ երեկոներից մէկը, երբ ամրոցը դարձեալ ստանում էր իր առաջուայ հոյակապ դիրքը: Այդ ժամանակ ուս նորից ցնորում էր իր առաջուայ շէնութիւնը ձեռք բերելու մասին և կարծես հէքլաթների մէջի վարդերի թագուհու պալատը լինէր: Հանգիստ ունկն գնելով նա կանգնած էր բաց-կանաչ փեղոկների և թղկիների մոխրագոյն կատարների մէջ, որոնք խառնում էին մատախլապատ երկնքի հետ: Փեղոկների սաղարթը դեռ պահպանել էր իր բնիկեայ շապիկն ու գարնանային երկխայական արտևանդները, իսկ թղկու աստեղածե տերևների վերայ հլթթը կարմիր գինու նման կաթ-կաթ ծորում էր: Ամրոցի համր, ցուրտ պարխապների շուրջը սոխակը գեղգեղում էր իր սիրառատ երգը, որը ցնցում էր առանց մի արձագանքի: Իսկ ամրոցի արտաքինը բարձր ու մարմաշէն սլւներով շրջափակած թատրոնի առաջին մասի նման բարձրանում էր լուս և խիզախ:

Եւ միմիայն միայնակ մնացած ճնճողովը թռչկոտում էր սանդխների լայն ու սպիտակ աստիճանների վրայ: Բաց-կարմիր մրտավարդերը խիստ կարգերով պատում էին բերդի ներքևի մասը և կարծես հանգիստ ու աննկատելի նուազող գեղեցկութեան մարմնացումը լինէին: Ամրոցը, կարծես, արեան ալիքների միջից էր բարձրանում: Չախ կողմում երևում էին կիսաարաց կամարակապ սրահները, որոնց պատերի վրայ կանաչ ֆոնի պատկերները արեան չորացած բծերի նման արևի ճառագայթների տակ փայլում էին ծիածանագոյն շողով: Իսկ կարմիր պատի վրայ յուրտեան անշարժ, ուրախ ժպիտը շրթոնքին սառած, զմրուխտեայ թափանցիկ գնդակը բարձրացրած ձեռին պար էր զալիս գեղեցկուհին:

Յատակի հրաշալի մոզայիկների վրայ ամենևին չէր լըսւում տաների ձայն, իսկ սրահներում բացի քամու վայրի խաղողի ոստերի հետ ունեցած խաղից, ոչ մի ծպտուն, ոչ մի շարժում: Աջ կողմում ոչ սրահներ կային, ոչ էլ պատերի վրայ

պարող գեղեցիկուհիներ, — ոչինչ, բացի պահապանի պարտէզի մէջ միայնակ կանգնած խրճիթից, ներկած, ի հարկէ, նոր տիրոջ հրամայած դոյնով: Իսկ խրճիթի մօտ ժամացոյցի ճեճանակի նման յետ ու առաջ էր գնում խայտարդետ բաճկոնը հագին հերթակալ պահապանը. նա պէտք է անխռով պահէր ամբոցի գատարկութիւնն ու սրահների ամայութիւնը:

Քանի օր է արդէն արևը չէր երևում, ծանր, խժռո ամպերը պատռու-պատռու, իրար հրող կապարեայ կտուրներով կախուած էին երկրի վրայ: Արևելքից ու հարաւից անդադար լսւում էին խուլ, ընդհատուող որոտման ձայները և մերթ ընդ մերթ ձեղքելով ամպերը ցայտում էր փայլակը: Ժամանակ առ ժամանակ թափւում էր առատ անձրևի տարափ, խառն յոնկար-ծակի կարկուտների հետ: Ոոռաւ, խեղդիչ օդը լիքն էր թարմ արօտների հարբեցուցիչ բուրմունքով, թեթև, մեղմ գոլորշիներով, որ բարձրանում էին ամբոցի լայն խրամապատից:

Ամայի պարտէզի զօրացող ծառերի յետևում բարձրանում էր տաղաքարից մարդահասակ պարիսպը. նրանից ներս գտնւում էր սիւների նիզակաձև վերջաւորութեամբ երկաթեայ շրջապատը. բայց այս ամենը անբաւարար էր թուացել նոր տիրոջը և նրա օրով շինուած էր այդ համր խրամապատը: Նա գետի նման փքւում էր մինչև ասփերը. նքա վրայ տեղ-տեղ թեքւում էին դեղնած և առատ խոնավութիւնից թեքւած ուռենու ոստերը: Ծածկուած ամբողջովին ջրիմուռների իւղոտ կանաչով հանգիստ պառկած էր կինամոնադոյն թափանցիկ ջուրը: Ամպերի թերթերունքներից սպրթնած փայլակի նման արևի պայծառ լուսաւատ հայեացքը հէնց որ ընկնում էր ամբոցի վրայ, վերին յարկի բոլոր պատուհաններից լոյսը իսկոյն խուժում էր ներս: Պատուհանների ապակիները զարգարուած էին զեղարուեստական մեծ հմուտութեամբ, նրանից լուսաւորւում էր ասպետական ամբոցը: Ասպետների ձօշերն ու զրահները կամ պատերից էին կախուած, կամ դարսուած պատերի տակ գտնուող պահարաններում: Սկսած ամենահին զրահներից ահադին երեսակաւներով — ամեն ինչ կար այդ ժողովածուէ մէջ:

Ամբոցի նոր տէրը այդ ամբողջ ժողովածուն խել էր ծերունի արքայից և նա իսկապէս հիանում էր իր կեանքում միմիայն զէնքերով: Նա հիանում էր թանկագին մասունքներով և այդ հիացմունքի մէջ նրա այն համոզումը, թէ ամեն ինչ դրուած է իրան աստուածային բարեհաճութեամբ խառնում էր գոհունակութեան և պաշտածունքի զգացմունքներին հետ: Ո՞րքան երախտապարտ են այդ անգաւաճան զէնքերին նա և նրա

ազգականները: Եւ թագաւորի ձեռները իրանք իրանց այնպէս դրոււմ էին, որ նայողը կը կարծէր թէ, պատրաստ են կռուի դուրս գալու այդ դատարկ երկաթեայ պատեանների դէմ: Երկաթեայ ծնկակալերն ու կօշիկները, կարծես, պատրաստ էին շարժուելու, պղնձեայ վահանները, կարծես դրոււմ էին առաջ, դաւադաններն ու նիզակները, կարծես, պատրաստ էին ամեն ինչ կտրատելու և մետաղեայ շերտերով պատած ձիերը, կարծես, ուղոււմ էին վազել գալուպով: Այդ ամեն զէնքերը հազին ամենաերկշտ մարդն էլ դառնում էր հերոս: Օ՜, անցեալի փառաւոր օրեր... Եւ մի անգամ թագաւորը հին ասպետների զինարանից անցնելով միայնակ ակամայ գոչեց,—«կեցցէ» ու որորեց բխերը: Բայց իսկոյն և եթ յետ նայեց, վախենալով որ մի գուցէ մէկը լսէ իրան: Իսկոյն դուրսը խոնարհեց ներքև, ինքը կարմրեց, շփոթուած, ժպտալով մըթմըթաց.—«Ո՛հ, ո՛հ, իմ թագաւորութիւնը խաղաղութեան թագաւորութիւն է»։ և շարժելով սուրը ուղևորուեց դէպի սրահ. բայց այնտեղ նա շրջան կազմելով յետ թեքուեց, որովհետև իսկը ելքի մօտ կար մի հին էթնոգրաֆիական հաղուագիւտ առարկայ, որին նա տեսնել չէր կարող. այդ չորութիւնից մթափնած երեսի վրայ քարացած սպիտակ ատամները դուրս ցցած, դատարկ աչքափոսերով և ոսկրէ քթով մի եգիպտական փարաւօնի մոմիա էր: Եւ դարձեալ շարժելով սուրը արքան մի լիքը արհամարհական հայեացք գցեց փարաւօնի մազուրկ կրծքավանդակի վրայ, որի կողերը պարզ կերպով բաժանոււմ էին մէկը միւսից դատարկ միջավայրերով և նայեց մոմիայի միւս մասերը ծածկող կապտաւուն սպիտակ կտաւին:

—«Ի՞նչպիսի խեղճ թագաւոր, և այս ոսկրների աղբալիւտն էլ եղել է մի ժամանակ հրամայող»:

—«Ո՛հ, դա սուտ է, սա փտած մեռեալ է և ուրիշ ոչինչ: Եւ թագաւորը թողնելով փարաւօնի մոմիան, որ նրան ոչինչ չէր ասոււմ, դարձեալ դարձաւ դէպ առաւօտեան աստղերի նման փայլող զէնքերին և սկսեց մտածել հին, երանաւետ ժամանակների մասին: Նա նայում էր առաջուայ այն հասարակ հրացաններն, որոնք այնքան չնչին են իրանց գոցերով պաշտպանութեան համար, նայում էր թնդանօղները, որոնք իրանց գոռոցով շատերին են ոգևորել դէպի պատերազմ և յաղթութիւն: Բայց թագաւորը չդիմացաւ, հանեց գրպանից նոր թաշկինակ և չորացնելով իր արտասուաթոր աչքերը, իր ձեռով մաքրեց կոպիտ հրացաններից մէկի սուլինի վրայի աւազահատիկը: Նրա համար մեծ բաւականութիւն էր իր նախնիքների անդաւաճան, հաւատարիմ ծառաների համար մի բան անելը,

բայց ոչ մի հայեացք սա այլևս չձգեց փարաւօնի զոտելի մոմիայի վրայ:

Այդ մոմիան երբեմն ահագին փողերով ձեռք էր բերել ծերունի արքայի քմահաճ պապը—փչացնելու կամ դուրս գցելու ափսոսում էին նրա հազուագիւտութեան համար: Գուցէ խնդրողներ լինեն թանգարանի համար, կարելի է աննկատելի կերպով ծախել: Նայելը անկարելի է, նա ատամները դարձուրելի կերպով դուրս է ցցել...

Թագաւորի սակաւ այցելութիւնները դատարկ ամրոցում վերջին տարիներս աւելի ևս սակաւացան: Ամրոցում մնում էին միմիայն ծերունի պահապանը և պարտիզպանը. մնում էր էլի նոյն միապաղաղ գերեզմանային լուսթիւնը, ամրոցի դանդաղ քայքայումը, երկհարկւր անմարդաբնակ սենեակների բութ բոսային հոտը, մկների վազվզոցը յատակների վրայ և բարկացկոտ քամու մոնչոցը վառարանների դատարկ ծխնելոյգերում. իսկ այդ դատարկութեան և անմարդաբնակութեան պահապան-զինուորը գերձանի վրայ ման եկող խաղալիքի նման անպադար պտտում էր այս ու այն կողմ, յետ ու առաջ... Արեգակի վերջին ճառագայթները հանգան արդէն ասպետական ամրոցի նկարագրուած պատուհաններում. անձրևի առաջին ծանր ու խոշոր կաթիլները ընկան փիլովների թարմ տերևների վրայ:

Ընդարձակ խրամապատի շուրջն ընկած դէպի ամրոցն տանող լայն, ցեխոտ ճանապարհով գնում էին երկու մարդ, երկուսն էլ մուրացիկ՝—այր և կին:

Մարդը կաղելով, յենուելով ահագին ձեռնափայտին պընում էր առաջից առանց վերնադգեստի. փոշոտ, կապոյտ շապիկը կպել էր նրա նիհար, տձև մարմնին ու թևերին, որոնց մկանները թուլացած կապերի նման կախուած էին: Հին, պատառոտած կօշիկները բարդելով իրանց վրայ ցեխի ահագին կտորներ, դարձել էին մի մի տգեղ գունդ:

Անձրևի խոշոր կաթիլները անցնելով նրա յարդեայ ծակոտած գլխարկից հոսում էին լայն, նիհար երեսն ի վար, որտեղ նկատելի էին նրա փոքրիկ մօրուքը և բարի, հեզ ու թախծալից աչքերը:

Ամուսնու յետևից բորիկ ոտներով, կուղը հանած գնում էր կինը. նա հազիւ հաղ ճեղքում էր ցեխը. քամուց ու խոնաւութիւնից դեղնել էր նրա նիհար դէմքը, ինքը լաց եղած էր. կարծես նրա վատուժ մարմնից ծծել էին բոլոր ոյժը. սակաւ սպիտակախառն մազերը թաց գիւներով ծածկում էին նրա փոս ընկած քունքերը. բորբոքուած աչքերը կարմրել էին. ձախ ձեռին բռնած էր մի զոյգ փայտեայ տրեխներ, իսկ աջով քարշ

էր տալիս հին մոմլաթով փաթաթած մի կապոց, որ թաւալում էր նրա յետեից ցիւխի մէջ, բայց կինը ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ. նա գլխիկոր կոյրի նման գնում էր ամուսնու յետեից և դանդաղ տրտնջում: Երկուսի դէմքերի վրայ էլ նկատելի էր մի այնպիսի անմիտ, ապուշ արտայայտութիւն, որպիսին կարելի է առաջ բերել միմիայն բոլորովին ուժասպառութեան դէպքում:

Նեղուած քաղցից ու կարիքից, թուլացած կոշտ բանուորական ձեռները կախած, թեքուած ողնաշարով, ծուռ ու մուռ քայլերով հազիւ շարժւում էին այդ կեղտոտ, փալասոտ, միայնակ և ստորացած թափառականները:

Ճանապարհը ընկած էր բերնէբերան լիքը ջրով խրամատի շուրջը, որի միւս կողմում երևում էին բարձր, բրգաձև ծառերը: Գամին թեքում էր ծառերի կատարները, բանալով ամրոցի սպիտակ, փառաւոր և տխուր պատերը:

Կինը բարձրաձայն ծանր հոգոց հանեց. կապոցը ընկաւ նրա ձեռքից. նա անկարող լինելով շարունակել ճանապարհը ընկաւ խրամի ափին:

Ամուսինը ապշած նայեց շուրջը և մի յուսահատական հայեացք գցելով կնոջ վրայ, հարցրեց.

—Մարիամ.

Կինը չպատասխանեց. նա մօտեցաւ:

Ի՞նչ է, չէ՞ս կարողանում այլևս շարունակել,—հարցրեց նա կամացուկ:

Կինը հաղիւ բարձրանալով յառեց ամուսնու վրայ իր կարմիր, ուռած աչքերը, որոնցից հոսում էր առատ արտասուքը:

—Ո՛չ, չեմ կարող,—պատասխանեց նա.—այլևս ոյժ չունեմ:

Ամուսինը ուղեց բարձրացնել կնոջը:

—Թոյլ տուր ինձ պառկել,—պատասխանեց կինը:

Ամուսինը թեքուեց և փռուեց դիմնի վրայ, կնոջ կողքին:

—Ես էլ... ոյժ չկայ...—ասեց նա ծեծելով գլուխը:

—Կարկուտ է գալիս...

—Թող թափուի...

—Շուտով գիշեր է...

—Թող գայ...

Նրանք նստած էին գլուխները թեքած, իսկ կարկուտի խռոր կտորները անխնայ ծեծում էին նրանց:

—Փառք Աստուծոյ,—ասաց կինը, աւելի սաստկացնելով իր լացը:

Ամուսինը սարսափից շուարել էր:

—Ի՞նչ ասեցիր, հարցրեց ամուսինը:

—Երեխաները ապաստան ունեն:

—Այո, այդ բաղդաւորութիւն է, որ մենք նրանց չառինք հետներս:

—Ես կարծում եմ, որ բարի մարդիկ նրանց կը տան մի կտոր հաց և մի քիչ կաթ, այնպէս չէ՞:

Ամուսինը ուտելը թոթուեց:

—Իհարկէ, Մարիամ, ես կարծում եմ...

Կարկտաբեր ամպերը անցան, բայց ակունքներում և գետնի ճեղքներում ահագին կոյտերով մնաց կարկուտը: Դողալով ցրտից, փաթաթուած թաց ցնցոտիներով, որոնց խոնաւութիւնը քամին հասցնում էր մինչև նրանց ոսկրները, նրանք, չկարողանալով բարձրանալ, նստած էին խրամատի ափին:

Արդէն երեք օր է հոքա պտտում են, իզուր ջանք դնելով, իհարկէ, գտնել իրանց համար մի որևէ աշխատանք: Խեղճերը անդործ բանուորներ են, դոցանից էլ դժբաղդ ի՞նչ կարող է լինել աշխարհիս հրեան... պատուով մարդիկ, ապրած մինչև այժմ իրանց աշխատանքով, հոքա չեն կարող հիմա կարկառել իրանց ձեռները ողորմութիւն խնդրելու, —նոցանից էլ թշուառ ի՞նչ կարող էր լինել... Ո՞վքեր են նրանք: Երկու անանուն, օժտուած ուղեղով և արեամբ մեքենաներ, որոնք գործադուլից յետոյ զրկուել էին մի կտոր հացից:

Խեղճ ամուսինը ոչ մի անմիջական մասնակցութիւն չի ցոյց տուել դործադուլի ժամանակ, նա չէր էլ պատկանել կազմակերպութեան, նա մի աննշան, հասարակ բանուոր էր. բայց նա կանգնել էր իր ընկերների կողմը: Նրան դատապարտում էին այն բանում, թէ նա գործադուլի ժամանակ իր, աշխատել կամեցող ընկերներին չի թողիլ աշխատելու, բայց դա բոլորովին սուտ էր. բաւական էր մի խօսք գործի իսկական էութեան մասին և նա կարդարանար. բայց նա նստաւ մի ամիս բանտում և յետոյ, երբ արձակեցին, ամեն տեղ նրան մերժում էին աշխատանք: Բնակարանի տէրը, որին չէր վճարել իր բռնած ողորմելի հիւղի քրէհը, վերցրել էր նրա ամբողջ կայքը, ամենավերջին շորը և իրան էլ կնոջ ու երեխաների հետ քշել դուրս:

Անդործ աղքատներին ոչ ոք բնակարան չէր հաւատում և հոքա մնացել էին անապաստան: Այր և կին իրանց ամբողջ կեանքում աշխատում էին, վաստակը հազիւ բաւականանում էր մի կերպ քարշ տալու իրանց դժբաղդ գոյութիւնը: Բայց դա սովորական մի բանուորական ընտանիք էր, որ ապրում էր ոչ վատ, ոչ էլ լաւ միլիօնատուր նմանօրինակներից: Հիմա

Նրանք յանկարծ դառել են անտուն թափառականներ, անպէտք, աւելորդ, քաղցած մարդիկ, որոնք իրանք էլ զարմանում են, որ այլևս ոչ ոքին պէտք չեն:

Երեք շաբաթ սրանից առաջ կինը ծնել էր մի երեխայ: Դժբաղդաբար երեխան, ինչպէս և երկուսը նրանից մեծերը, մնաց ողջ: Բայց մայրը չէր կարող մնալ նրանց մօտ. նա պէտք է աշխատէր, որպէսզի գտնէր նրանց համար կերակուր և բնակարան: Եւ նա գնաց ամուսնու հետ աշխատանք ձգելու: Սրտացաւ դրացուհին վերցրեց նրա երեխաներին առ ժամանակ իր մօտ: Սովատանջ մայրը դրացու բարեսրտութիւնը վարձատրեց իր վիճոցով ու ոտնամաններով: Գլխաբաց, բոբիկ ոտներով արատսուքն աչքերին բաժանուեց երեխաներից. մարդը քարացել էր գլխին հասած անբաղդութիւնից:

Աշխատանք և ապաստանարան... Աշխատանք և բնակարան...

Երեք օր է արդէն, որ նրանք անձրեւի և քամու տակ գնում էին անծանօթ ճանապարհով: Մայրաքաղաքների տների ներքնայարկերում ապրող մարդիկ, նրանք սովոր չէին շատ քայլելու: Նրանց ոտները ուռել էին, վէրքեր բացուել, իսկ քաղցը տանջում էր: Որտեղ որ նրանք գիմում էին միշտ ստանում էին մերժում: Ամօթը, յոգնածութիւնը և վիշտը, միւս կողմից էլ ոստիկանական երկիւղը, նրանց թոյլ չէին տալիս ազատ խօսել, սխալել:

Դառն մտածմունքներից մարդու գլուխը պտտում էր, երկրում էլ նրանց համար տեղ չկար. ոչ մի տեղ ոչ մի օջախ չէր վառում նրանց համար, ընթրիք չէր պատրաստում. չկար մի անկիւն որտեղ նրանք դռնէ յարդի վրայ կարողանային յենել գլուխները. այս դառն մտքերը տանջում էին նրա ուղեղը և սպանում նրանց վերջին ոյժն ու ապրելու ցանկութիւնը: Կինը անդադար լաց լինելով երեխաների համար ցաւից ուժասպառութիւնից մղկտում էր. նա հիւանդ էր և չէր կարող այլևս շարժուել տեղից: Եւ ահա երկու պատկեր. այստեղ նրանք պառկած փոսի ափին ցեխի մէջ, իսկ այնտեղ՝ քամու շարժմամբ ծառերի թեքուող կտորների միջից փայլում էր ահարկու, սպիտակ սմբոցը, լիքը աղուամաղ բարձերով, փափուկ բազմոցներով, տաք անկողիններով, որոնց մէջ ոչ ոք չի քնում, բեհեզեայ բաղկաթոռներով, որոնց վրայ ոչ ոք չի հանգստանում: Կինը յոգնած երկարացրեց իր չորացած ձեռը. նրա ուռած աչքերը դժուարութեամբ էին տեսնում.

—Այնտեղ տո՛ւն է...

—Տո՛ւն... Ոչ... Այդ ռրտեղ ես տեսնում, Մարիամ:

—Այնտեղ, ծառերի յետևում...

Մարդը սկսեց նայել դէպ ամբողջի պարտէղը:

Քամին նորից թեքեց ծառերի կատարները. պատուհաններն ու աշտարակները լքուած խորհրդաւոր միայնակութեամբ մի ըոպէ նորից փայլեցին: Երևաց մինչև իսկ սևադգեստ պահապանը:

Բանուորը թքեց գետնի վրայ:

—Ձէ, Մարիամ, սա տունն է:

—Ինձ այդպէս թուաց... Ես պատուհաններ էլ նկատեցի...

—Ոչ, Մարիամ, սա նոյն հին ամրոցն է, գիտես խօ:

—Ա՛խ, այդ է... Ի՞նչպէս մենք եկել ենք այստեղ, հառաչելով ասաց կինը և նորից ընկաւ գետինը:

Ամուսինը յանկարծ տեսաւ պահապանին.

—Գնանք, Մարիամ, գնանք...

Կինը չէր շարժուում:

—Պահապանը այնտեղ է, այս կողմն է նայում. ել գընանք...

Կինը վախեցած լայն բաց արեց աչքերը և դող-գոլալով բարձրացաւ տեղից:

—Ո՞րտեղ է պահապանը:

—Այնտեղ... նա տեսնում է մեզ... Ձեռքին հրացան ունի բռնած:

—Գնանք, շուտ գնանք...

Հապճեպ մի քանի քայլ առաջ գնացին. կինը հառաչեց...

—Ո՞վ է ապրում այս պալատում:—

—Ո՞վ... ոչ ոք... դա իմ ի՞նչ գործս է... չէ, լսի՛ր Մարիամ, ես կարծում եմ... մենք կարող ենք հիմա մեր բանն անել... Այստեղ այնպէս լուռ է... չորս կողմում ոչ ոք չկայ... այստեղ էլ... տեղն ու տեղը...

Նա արձակեց իր փայտը խրամի իւղոտ ջրի մէջ, բայց յատակ չկար:

—Այստեղ աւելի լաւ է... Ուղճւմ ես, Մարիամ, դու ասում էիր խօ, որ այլևս չես կտրող...

Կնոջ աչքերում իսկոյն փայլեց մի խելացնոր վայրենի սարսափ. նա ամուր փաթաթուեց ամուսնու ուսերին:

—Ի՞նչու այդպէս դողում ես, Մարիամ, վախենում ես... Ախր միմիայն մի ըոպէ է. մի ըոպէ և արդէն խզուած կը լինի մեր կապը այս աշխարհի հետ...

—Սառն է, սառն, — փնթփնթում էին կնոջ շրթունքները: — Իմ երեխաները...

Նա դողում էր ամբողջ մարմնով, ատամները իրար էին խփում...

Մարդը փերցրեց կապոցքի կապը և ամուր կապեց կնոջը իր հետ. նա լուրջովին հանգիստ էր:

— Քար պէտք է, սա էլ բաւական է...

Կինը հաւաքերով վերջին ոյժերը ամուր փաթաթուել էր ամուսնու վզին:

Մարդը սեղմեց լուռնայքները:

— Անէծք... Անէծք... Քնիւր հանգիստ, Մարիամ...

Համբուրուեցին և մաղթեցին իրար հանգիստ քուն: Կնոջ համբուրելուց յետոյ, մարդը դանդաղ փափուկ ցեխի միջից սկսեց մտնել սառը ջուրը: Ջուրը հանգիստ շարժում էր...

Ոչ աղմուկ, ոչ կռիւ, ոչ էլ կարեկցութիւն...

Նրանք գնացին յատակը...

Բայց չանցած մի րոպէ ջրի երեսին երևաց վայրենի աչքերով մի զուլս... Նա ուզում էր աղատուել այդ ցեխից, ուզում էր շնչել, ապրել... Բայց կապտրի նման կախուել էր վըզից նրա կինը: Նա սկսեց ցնցել նրան, բայց նա չէր շարժւում նա նայեց կնոջ սևացած դէմքին, բաց բերնին, ապակեայ, մեռած աչքերին...

Եւ այն ժամանակ նա քաղահի նման ոռնալով սկսեց սարսափելի կանչել: Թռչունները թռան հեռու, ծառերի տերեւները դողացին: Խեղդուողը նայեց դէպի ամրոցը, որ երևում էր կանաչի միջից և սա այրող լուսաւոր փայլակի նման ծաղկեց նրա ուղեղը: Նա հիմա ամեն-ինչ հասկանում էր. նա ամեն-ինչ ըմբռնեց այդ ահաւոր, հրէշաւոր մահուան ըողէին: Եւ նրա արանքում շրթունքներից, որոնք լոկ աղօթքներ ու ստրկական խօսքեր էին արտասանում, լսուեցին նոր խօսքեր...

— Ի՞նչու, ի՞նչու... Ախր այստեղ ինչքան տեղեր կան... Ախր սա կարելի էր բնակարան դարձնել... Կարելի էր ապաստան շինել... Թող լինի մեզ պէս հազարաւորների համար անկիւն... Սկեսակներ, մահճակալներ, սեղաններ, աթոռներ, ավսէներ...

Ախր այստեղ մեր ամեն կարիքը կարելի է հոգալ...

Իսկ մենք... Իսկ մենք... Մենք խեղդւում ենք հոտած փոսում... Լորջում ենք ցեխի մէջ քաղցամահ... Ի՞նչու համար ենք մենք այսպէս անում... Ի՞նչու վախենում ենք, ի՞նչու երկշոտ ենք... Ի՞նչու մենք այդպէս թեթևամիտ ենք... Ի՞նչու... Ի՞նչու... Եւ նոր կեանքը արդէն պտտում էր նրա գլխին. նա

զգալով, որ արդէն խեղդւում է, կաշուց դուրս էր գալիս որպէսզի կարողանայ գոնէ մի անգամ ևս բարձրացնել կնոջ:

—Մարիամ,—գոչեց նա խեղդուելով,—Մարիամ!... դարթի՛ր նորից, դարթի՛ր դարձեալ... Մեզ համար տեղ կայ երկրում... տեղ ամենքի և իւրաքանչիւրի համար... գնանք, մըտնենք... Ո՞վ ասաց որ ես վախենում եմ... ես այլ ես չեմ վախենում... Չեմ վախենում... այլ ես... չեմ վախում...

Կեղտոտ ջուրը ահագին յորձանքով լցուեց նրա բերանը ու խեղդեց նրան. նա շրջուեց և խորասուզուեց: Մի անգամ ևս երևաց ջրի երեսին բուռնցքը դժնդակ սեղմած մի սպառնացող ձեռք և յետոյ արդէն ջրիմուռների լուռ վերմակի տակ ամեն-ինչ չքացաւ:

Սպիտակ, փառաւոր ամրոցը դատարկ կանգնած էր. բայց նա բոլորովին այն առաջուայ ամրոցը չէր: Հաստ պատերի ներսում ամեն ինչ ճրճոում, կոտրատւում և հստում էր: Այն ինչ որ թւում էր անքակտելի, յաւիտենական, հիմա յանկարծ սկսեց քանդուել. կայծակը չէր որ վերեւից քանդում էր, այլ թշուառի ժահուանից առաջ հանած անմիտ աղաղակը փշրեց հիմքի անկիւնաքարը...

Աննա Մելքոնեան

Բ Բ Ա Ն Դ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԷՄԱ

Հինգ գործողութեամբ

Հ Ե Ն Ր Ի Կ Ի Բ Ս Ե Ն Ի

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Փիօրդի, եզերքը. չորս կողմը դեք-դեք ժայռեր: Ոչ հեռու փոքրիկ բլուրի վրայ՝ հին խարխուլ եկեղեցի: Մըրիկը պատրաստուում է: Ծովափին և ծովեզրեայ լեռնաստորոտներում խմբուած է ժողովուրդը—տղամարդիկ, կանայք և երեխաներ: Մէջտեղում քարի վրայ նստած է Փոխտը և զրագրի օգնութեամբ, բաժանում է ալիւր և ուտելեղէնի պաշար: Աւելի հեռու կանգնած են ամբոխով շրջապատուած Էյնարը եւ Ազնէսը: Ափին մօտեցրուած են մի քանի մակոյկներ: Եկեղեցու բլրի վրայ երևում է Բրանդը, աննկատելի մնալով ամբոխից:

ԱՄԲՈՒԽՅ Մէկը. (Հրժշտելով առաջ անցնելով)
Ճանապարհ տուէք:

ՄԻ ԿԻՆ. ես աւելի առաջ եմ եկել:

ԱՌԱՋԻՆԸ. (Հրելով նրան) Կորիւր: (Հասնելով
Փոխտին). Շուտով լքցրու այս պարկը:

ՖՈԽՏ. Լաւ, կը սպասեմ:

ԱՌԱՋԻՆԸ. Ձի կարելի: Պէտք է տուն շտապեմ:
Այնտեղ հինգ... չորս սոված բերաններ են սպասում:

ՖՈՒՍՏ. (կատակով). Հաշիւդ էլ ես կորցրել, չգիտեա սրբան:

ԱՌԱՋԻՆԸ. Մահամերձ էր մէկը, երբ ես ճանապարհ ընկայ:

ՖՈՒՍՏ. Սպասիր: Երեւի դու նշանակուած ես ցուցակում: (Թերթելով թուղթը): Չեմ տեսնում... ոչ. հա հրէս: Դէ, բախտ ունես: (Գրազընն) ուրեմն երեսներորդ Քէնն կը տաս ինչ որ հարկաւոր:—էյ, էյ, կամաց այնտեղ, այդպէս վրայ մի տուէք:—Նիլս Սնէմիւրը այստեղ է:

ԵՐԿՐՈՐԴԸ. Այստեղ եմ:

ՖՈՒՍՏ. Դու կը ստանաս այժմ առաջին անգամուայ երեք քառորդը, որովհետեւ դուք այժմ թուով աւելի պակաս էք:

ԵՐԿՐՈՐԴԸ. Այո, Ռահնդիլլը վախճանուել է... դեռ երեկ:

ՖՈՒՍՏ. (Նշանազրելով) Մէկով պակսեց,—ինչքան չլինի էլի տնտեսութիւն է: (Հեռացողի յետնւից): Իսկ դու տես, էլ մի շտապիր նորից ամուսնանալ:

ԳՐԱԳԻՐ. (Փրթկացնելով) Խի-խի:

ՖՈՒՍՏ. (Կոպտութեամբ) Ինչի՞ վրայ...

ԳՐԱԳԻՐԸ. Դէ ծիծաղելի է... Herr ֆոխսը այնպիսի կատակաբանն է որ:

ՖՈՒՍՏ. Լուէք: Ժամանակը և տեղը չէ ատամներ ցոյց տալու. քայց կատակը—լաւագոյն դարմանն է գրգռախտութեան և վշտի մէջ:

ԷՅՆԱՐ. (Ազնէսի հետ դուրս գալով ամբողջի միջից): Դատարկեցի բոլոր գրպաններս, թափ տուի քսակս էլ թղթապանս էլ. նաւը կը մանեմ այժմ իբրեւ թափառաշրջիկ: Գրաս կը դնեմ ժամացոյցս և ձեռագրայտս:

ՖՈՒՍՏ. Այո, Աստուած ժամանակին ձեզ այստեղ ուղարկեց: Բաժանելու համար ես շատ չկարողացայ հանգանակել: Մեծ չի կարող լինել հանգանակութիւնը այնտեղ, ուր լղար գրպանը և կիսակուշտ բերանը ստիպուած է մաս հանել նրան, ով ոչինչ չունի:

(Տեսնելով Բրանդին)

Ահա մէկն էլ... Համեցէք այստեղ: Եւ եթէ լսել էք մեր պատուհասներն մասին—հեղեղի, երաշտութեան և սովի մասին,—շուտով բացէք ձեր քսակը: Մենք ամեն տուրք ուրախութեամբ կընդունենք: Մեր ամբողջ պաշարը արդէն սպառուել է. իսկ մեր դարում հինգ հացով չես կշտացնիլ հարիւրաւոր սոված մարդկանց:

ԲՐԱՆԴ. Եւ ոչ մէկին չէք էլ կարող կշտացնել, յանուն կուռքի բաժանելով թէկուզ հարիւր հազարներ:

ՖՈՒՅՏ. Ես ձեզնից խօսքեր չէի խնդրում: Սովածի աղաչանքներին միայն խօսքերով պատասխանել նոյնն է թէ հացի տեղ քար մեկնել:

ԷՅՆԱՐ. Երևի դու չգիտես թէ ինչ ծանր վիճակի մէջ է այստեղ ժողովուրդը: Այստեղ սով է, հիւանդութիւններ, կոտորածք...

ԲՐԱՆԴ. Բաւական է նայել այդ խոր ընկած և կապոյտ շրջանակներով պարփակուած աչքերի վրայ, գուշակելու համար թէ այստեղ թագաւորում է կարիքը:

ՖՈՒՅՏ. Եւ դուք կայծքարի նման պինդ կը մնաք և չէք գթար:

ԲՐԱՆԴ. (Իջնում է ամբոխի մէջ եւ խօսում ազդու): Ահա եթէ կեանքը այստեղ սովորական, տարտամ ընթացքով գնար մաքառելով կարիքի հետ—ես ձեզ կը խղճայի բոլոր հոգով: Երբ մենք սողում ենք չորեքթաթ՝ մեզնից կենդանին աւելի համարձակ է նայում: Երբ օրը օրի վրայ անցնում է, ինչպէս թմրութեան մէջ, և կեանքը առաջ է գնում յուղարկաւորութեան քայլուածքով՝ ակամայ կարծում ես թէ Աստուած ջնջել է քեզ կեանքի զբքից: Իսկ դէպի ձեզ ես տեսնում եմ որ նա աւելի բարիէ. ձեզ փորձութեան է ենթարկել, խարազանում է ձեզ զրկանքներով և պատուհասներով, վառել է ձեր արեան մէջ մահացու երկիւղը...

ՄԻ ԶԱՅՆ ԱՄԲՈՒՅՏ. (Ընդհատելով). Նա ծաղրում է մեզ և մեր դժբախտութիւնը:

ՖՈՒՏ. Նա մեզ պախարակում է նրա համար որ մենք ձեզ կերակրում ենք:

ԲՐԱՆԴ. (շարժելով գլուխը). Ոհ, եթէ իմ արիւնը թափուելով կարողանար բուժել ձեր հոգիները,—թող հոսէր մինչև որ չսպառուէր! Իսկ ազատել չարիքից—մեղք է: Տէրը ցանկանում է ձեզ հոգեպէս բարձրացնել: Կենսունակ ժողովուրդը,—որքան և նա բաժան-բաժան եղած լինի և փոքրիկ,—պատուհասներից աճում է և ամրանում և նրա բուժ հայեացքը ստանում է արծուի սրատեսութիւն, և թուլութիւնը դառնում է ոյժ, վստահ յաղթութեան! Իսկ եթէ պատուհասը չի դրդում ժողովրդին մաքառելու, ազնիւ գործեր կատարելու—նա չի էլ արժանի փրկութեան:

ՄԻ ԿԻՆ. Նայէք—ֆիօրդը եռում է նրա խօսքերից:

ՄԻ ԱՅԼ ԿԻՆ. Նա փորձում է Աստուծուն, հաւատացէք!

ԲՐԱՆԴ. Օ, ինչ վերաբերում է ձեր Աստուծուն, նա հրաշքներ չի գործիլ:

ՄԻ ԿԻՆ. Երկինքը մթնում է:

ՏՂԱՄԱՐԴԻԿ. Մահակներով, քարերով զուրս քշէք քարեայ սիրտը:

(Ամբոխը սպառնալով շրջապատում է Բրանդին: Ճոխք կանգնում է նրա և ամբոխի միջև: Այդ ընդմիջումը իջնում է զինքը կորցրած, պատառուն զգեստով մի կին:)

ԿԻՆԸ. (ճշում է ղէպի ամբոխը) Ո՞ւր յանուն Աստուծոյ օգնութիւն գտնել:

ՖՈՒՏ. Նախ և առաջ ասա ինչո՞ւմ է կարիքդ:

ԿԻՆԸ. Նրանից աւելի ահռելին չի էլ լինում:

ՖՈՒՏ. Դէ ասա:

ԿԻՆԸ. Շունչս կտրւում է... Ո՞րտեղ ես քահանայ ճարեմ: Ո՞ւմ դիմեմ օգնութեան և մխիթարանքի համար:

ՖՈՒՏ. Դու գիտես որ այստեղ մօտեցրում քահանայ չկայ...

ԿԻՆԸ. Ուրեմն նա կորած է! Վշտի՞ համար ինձ լոյս աշխարհ հանեցիր, Աստուած իմ:

ԲՐԱՆԴ. (մօտենալով նրան). գուցէ այստեղ և զանուկի քահանայ:

ԿԻՆԸ. (Բռնելով նրա ձեռքը) Թող շուտով, շուտով գայ:

ԲՐԱՆԴ. Նախ ասա բանը ինչո՞ւն է:

ԿԻՆԸ. Ահա ծովածոցի այն ափին...

ԲՐԱՆԴ. Յետո՞յ:

ԿԻՆԸ. Իմ մարդը... երեք սոված մանուկներ... և տունս դատարկ... Օհ, ո՛չ: Դեռ ասա որ նա չի կորել!

ԲՐԱՆԴ. Բացատրիր ինչու՞մ է բանը:

ԿԻՆԸ. Կուրծքս չորացել է... ոչ Աստուած, ոչ էլ մարդիկ օգնեցին... և իմ կրտսերը տանջւում էր մեռնելով սովից... Մարդս չտարաւ նրա տանջանքները և... վերջացրեց...

ԲՐԱՆԴ. Սպանեց...!

ԱՄԲՈՒԸ. (սարսափով) Ի՞ր գաւակին!

ԿԻՆԸ. Իսկ երբ հասկացաւ իր արածը—յուսահատութիւնից ձեռքը բարձրացրեց իր վրայ... Այժմ չի կարող ապրել և մեռնել չի համարձակւում... զնա նրա մօտ և գէթ նրա հոգին փրկիր! Պառկել է զրկել մանուկին և՛ սատանային է օգնութեան կանչում:

ԲՐԱՆԴ. (Կամացուկ) Արդարեւ այստեղ կարիք կայ:

ԷՅՆԱՐ. (սսլրթնած), Աստուած իմ, մի՞թէ հնարաւոր են այդպիսի բաներ:

ՖՈՒՏ. Նա իմ շրջանագաւառից չէ:

ԲՐԱՆԴ. (Հապճեպով ամբողջին) Դէ շուտ, տուէք մակոյկը և անցնենք միւս ափը:

ՄԷԿԸ ԱՄԲՈՒԽԻՅ. Այսպիսի եղանակին: Ո՞վ սիրտ կանի:

ՖՈՒՏ. Ֆիօրդի ուղղութեամբ շաւիղ կայ:

ԿԻՆԸ. Անանցանելի է. հազիւ հազ վազելով անցայ կամբջով, ինչպէս գետակը դուրս ելաւ ավերից, — տաւալ կամուրջը և ծածկեց ճանապարհը:

ԲՐԱՆԴ. Դէ քակէք մակոյկը:

ՄԷԿԸ ԱՄԲՈՒՅԻՑ. Ինչ ես անում. տես ֆիօրդը ինչպէս է կատաղել, — սոսկալի է:

ԵՐԿՐՈՐԴԸ. Եսում է, աղմկում, ալեկոծում և փրփուր արձակում:

ԵՐՐՈՐԴԸ. Պատուրը իրառնք ունի վատ եղանակին սուրբ խորհուրդներ չկատարել և պատարագ չանել:

ԲՐԱՆԴ. Սակայն մեղաւոր հոգին որի վերջին ժամը հասել է, չի կարող սպասել մինչև որ փոթորիկը հանդարտուի:

(մօտենում է մակոյկներից մէկին, նետում նրա մէջ, քակում կապանքը և քաց թողնում առաջատոները): Դուք ի՞նչ եք խնայում մակոյկը:

ՄԱԿՈՅԻՑԻ ՏԷՐԸ. Չեմ խնայում, բայց աւելի լաւ է չգնաս:

ԲՐԱՆԴ. Հիմա թող գայ այստեղ ինձ հետ, ով չի խնայում և իր կեանքը:

ՄԷԿԸ. Չէ, աղատեք...

ՄԻԻՍԸ. Ինձ ևս:

ՇԱՏԵՐԸ. Այդ նշանակում է ուղիղ դէպի մահը:

ԲՐԱՆԴ. Թող ձեր Աստուածը ոչ ոքի չանցկացնի — ինձ հետ մակոյկի մէջ իմ Աստուածն է:

ԿԻՆԸ. (կոտորատելով ձեռները): Մարդս առանց ապաշխարելու կը մեռնի!

ԲՐԱՆԴ. (մակոյկից սողադակելով ամբոխին): Մէկըն էլ է գտն ինձ հետ: Բաւական է մէկը, որպէս զի կարելի լինէր և ջուրը թափել և առաջատուր կառավարել. Թող նրանցից մէկը, որ այստեղ հաց և փող էին բաժանում յարէր ինձ!

ԱՄԲՈՒՅԸ. (յետ նահանջելով) Այդքանը մի պահանջիր!

ՄԷԿԸ. (սպառնալով) Ել մակոյկից, դուրս եկ. դու փորձում ես Աստծուն!

ՁՍՅՆԵՐ ԱՄԲՈՒԻ ՄԻՋԻՑ. Տեսէք, փոթորիկը քանի գնում սաստկանում է!

ՄԻԻՍՆԵՐԸ. Չգիմացաւ, մօտեցաւ ափին!

ԲՐԱՆԴ. (կենտրոնացնելով կաշեւորդ ափին կանչում է կնոջ) Գոնէ դու արիւր, եկ!

ԿԻՆԸ. (յետ քաշուելով) Ե՞ս: Մի՞թէ ես սիրտ կանեմ, երբ ոչ մէկը...

ԲՐԱՆԴ. Դու մի նայիր նրանց, եկ!

ԿԻՆԸ. Սիրտ չեմ անում:

ԲՐԱՆԴ. Դձու չեմ սիրտ անում:

ԿԻՆԸ. Ես մայր եմ... երեխաներ ունիմ...

ԲՐԱՆԴ. (ծիծաղով) Տեսնում եմ—աղմուտ առդում էք կանգնած:

ԱԳՆԷՍ. (վառուող թշնարով արագութեամբ դիմում է Էյնարին եւ, ձեռքը դնելով նրա ափին, ասում է) Լսեցի՞ր:

ԷՅՆԱՐ. Այո. ահա դա որ մարդ է!

ԱԳՆԷՍ. Օ, փառք Աստծոյ! Դու քո պարտքը յիշում ես! (ճշալով Բրանդին) Ահա այստեղ մէկը, պարտաւոր եւ արժանի մասնակցելու փրկման մեծագործութեան!

ԲՐԱՆԴ. Ուրեմն թող շտապի!

ԷՅՆԱՐ. (սպրթնելով) Ի՞նչպէս. — ես?

ԱԳՆԷՍ. Գնա. ես յօժարակամ կը բերեմ այդ գոհր: Ճարդ յամառութեամբ գետնի վրայ էի նայում, — այժմ իմ աչքերին բացուեց երկինքը:

ԷՅՆԱՐ. Մինչև որ քեզ չէի ճանաչել ես յօժարութեամբ կը զոհէի կեանքս, կը հետեւէի նրան...

ԱԳՆԷՍ. (դողալով) Իսկ այժմ...

ԷՅՆԱՐ. Աւելի թանգ եմ գնահատում կեանքս եւ անկարող եմ:

ԱԳՆԷՍ. (յետ քաշուելով) Ի՞նչ... ինչ ասացիր դու, Էյնար:

ԷՅՆԱՐ. Չեմ համարձակուում:

ԱԳՆԷՍ. (ճշարով) Մեզ բաժանեց վիհը! (Բրանդին)

Այդ դէպքում ես կը գամ քո յետևից:

ԲՐԱՆԴ. Լաւ. դէ շնուա:

ԿԻՆԸ. (Վախեցած ծնում է, երբ Ագնէսը նետում է մակոյկի մէջ) Տէրը փրկի...

ԷՅՆԱՐ. (յուսահատութեան մէջ վազելով Ագնէսի յետևից) Ագնէս, Ագնէս:

ԱՄԲՈՒՆԸ. (խռնուելով մակոյկի մօտ): Կանգնիր, վերադարձիր:

ԲՐԱՆԴ. (Կնկան) ցոյց տուր ո՞ւր է քո սուռը:

ԿԻՆԸ. (ցոյց տալով) Ծայրի հրուանդանի վրայ, սև ծովաժայռի յետևում (մակոյկը յետ է հրում ափից):

ԷՅՆԱՐ. (Բղականով յետևից): Ի՞նչ կասեն մայրդ, ի՞նչ կասեն քոյրերդ: Վերադարձիր և փրկիր կեանքդ:

ԱԳՆԷՍ. Մակոյկի մէջ մենք նրկւում ենք!

(Մակոյկը լողում է. ժողովուրդը խռնում է քլուր-ներին վրայ եւ լաքում ուշադրութեամբ հետեւում է մակոյկին):

ՄԷԿԸ ԱՄԲՈՒՆԻՑ. Նա հրուանդանի մօտով է ծընւում:

ԵՐԿՐՈՐԴ. Ձի կալող անցնել:

ԱՌԱՋԻՆԸ. Ինչպէս չէ. ահա և իր յետևում թողեց հրուանդանը:

ԵՐԿՐՈՐԴԸ. Տեսէք, տեսէք — ալիքի հորձանքը խրփեց մակոյկին:

ՖՈՒՏ. Բրանդի գլխարկը թոցրեց!..

ԿԻՆԸ. Եւ ծածանում է սև աղուաւի թևերից սևաթոյր նրա մագերը:

ԱՌԱՋԻՆԸ ԱՄԲՈՒՆԻՑ. Ալեկոծում է և փրփուր արձակում ֆիօրդը:

ԷՅՆԱՐ. Այդ ինչ խլացուցիչ ճիչ տարածուեց փոթորկի շփոցի և ոռնոցի միջից:

ԿԱՆԱՆՅԻՑ ՄԷԿԸ. Այնտեղից է, ժայռերի կատարից:

ՄԻԻՍԸ. (Մատնանշելով) Այնտեղ հերդն է: Հրո-
հոում է, ծվծվում նրանց յետևից:

ԱՌԱՋԻՆԸ. Եղջիւր է փչում և քարեր շարտում
նրանց յետևից կարծես հմայում լինի:

ԵՐԿՐՈՐԴԸ. Դէն շարտեց եղջիւրը և փչում է
բուռնքի մէջ:

ՄԷԿԸ ԱՄԲՈՆԻՑ. Ո՛ւ, կախարհ: Ճշիւր, փշիւր, —
շատ չես վերցնիլ: Նրա թիկունքին կանդնած է նա
— ով քեզնից զօրեղ է:

ԵՐԿՐՈՐԴ. Եթէ միւս անգամ կրկնակի սարսափե-
լի լինի փոթորիկը՝ նրա ղեկավարութեան տակ ես չեմ
վախենալ լողալու:

ԱՌԱՋԻՆԸ. (էյնարին). Ո՛վ է նա:

ԷՅՆԱՐ. Քահանայ:

ԵՐԿՐՈՐԴԸ. Ով լինում է լինի բայց նա զոչա-
դն է: Ուժեղ, համարձակ և սուկուն:

ԱՌԱՋԻՆԸ. Դա մեզ համար լաւ քահանայ կը լի-
նէր:

(Ժողովուրդը կամաց կամաց ցրում է բլուրների
վրայ):

ՖՈՆՏ (Հաւասքելով իր թղթերը և զրքերը): Յա-
մենայն դէպս — օրէնքի հակառակ է, անկանօն է խրժ-
կուել ուրիշի ծուխի մէջ և առանց ծայրայեղ կարիքի
վտանգել կեանքը: Ես էլ ի հարկէ իմ պարտականու-
թիւնը դիտեմ, օրէնքի մէջ հաստատամիտ եմ, բայց
գործում եմ միայն իմ շրջանագաւառում:

(Գնում է:)

Հրուանդանի վրայ խրճիթի առջև:

Իրիկնադէմին: Փիօրդը մաքուր է և պարզ, ինչ-
պէս հայելի:

Ա.ԳՆԷԱ նստած է ծովափին: Մի քանի րոպէ անց
խրճիթից դուրս է գալիս Բրանդը:

ԲՐԱՆԴ. Մահը եկաւ և ջնջեց ամբողջ մեղքը ու
սարսափը, այժմ նա ընկած է հանգիստ, պարզերես:

Մի՞թէ միրաժը, իլլիւզիան ընդունակ են դժոխային խաւարը դարձնել պայծառ օր: Նա միայն տեսաւ սարսափելի մեղքի արտաքին կեղևը, միայն այն, ինչ կարելի է խօսքերով արտայայտել, բռնել ձեռներով և ինչ որ նրա անուանվրայ գաւակասպանի կնիքը դրօշմեց: Իսկ այն երկու փոքրիկների մէջ, որոնք վառարանի յետևում ահից կուչ եղած, սրստուած, ինչպէս նոր բուն թողած ձագուկներ լայն բացած աչքերով նրա վրայ էին նայում, այն երկու մանուկների մէջ, որոնց հոգում մտել է և այն տեսարանը ժանգոտ բծի պէս, որ ոչ մի բանով չես կարող լուանալ, դուրս բերել նոյն իսկ խոր ծերութեան մէջ—այն երկուսի որոնց կեանքը այսուհետև կընթանայ դարհուրելի յիշողութեամբ թունաւորուած,—որոնց կեանքը հօր արարքը կը լքնի հեղձուցիչ ճենճերով, որոնց կեանքը այդ արարքից կը ծածկուի յաւիտեան չարագուշակ ստուերով,— այդ երկուսի մէջ. նա չկարողացաւ նկատել իր մահամերձ վկաներին! Այդ երեխաներից, գուցէ, ոճրագործների ամբողջ ցեղ առաջանայ սերնդից սերունդ, և վախճանի հարցին թէ ո՞րտեղից լոյս աշխարհ եկան այդ ոճրագործները, կը պատասխանեն. «հօրն են ընկել»:—Մանկական հոգու մէջ ի՞նչը պէտք է կամացուկ ջնջուի, շրտկուի սիրով: Ուր է սկիզբը մեր պատասխանատուութեան այն բանի համար, ինչ որ անցնում է ժառանգարար: Ի՞նչպիսի դատաստան և ի՞նչպիսի դատաւոր կը լինեն երբ անեղ արցունքի օրը հասնի: Որտեղ վերցնել վկաներ, որտեղ դատախազներ, երբ շուրջ բոլորը միմիայն պատասխանատուներ են: Եւ ո՞վ կը համարձակի ներկայացնել կեղտոտ վկայաթուղթը որ սերնդից սերունդ է անցել: Եւ մի՞թէ կընդունեն այդպիսի արդարաց ում. ես հօրից արդեօք ժառանգեցի պարտքերը:— Խելք պղտորող հանելուկ, որ գեռ ևս ոչ որ չի կարող լուծել: Ամբոխը անմիտ, անգիտակից պարում է անդունդի եզերքին: Կարծես պէտք է որ հոգիները աղաղակէին և սարսէին, բայց, աւաղ, հաղա-

բից ոչ մէկը չի տեսնում թէ կեանք փոքրիկ խօսքից պարտքերի ինչ սարսափելի սար է աճում:

(Խըժժի կտուից դուրս է գալիս ժողովրդի սի ըազմութիւնն եւ ժօտնում է Բըանդին:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Երկրորդ անգամ մեզ վիճակուեց հանդիպել միմիանց:

ԲՐԱՆԴ. Այժմ նա բնաւ կարօտ չէ ձեր օգնութեան:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Ի հարկէ, նա ինքը յաւիտեան ազատուեց, բայց խըժիթում մնացին երեք որբեր:

ԲՐԱՆԴ. Եւ դուք...

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Պատրաստ ենք նրանց հետ բաժանել այն փշրանքները որ ինքներս ենք ստացել:

ԲՐԱՆԴ. Թէկուզ ամենը ինչ ունիք տայիք կեանքից բացի, բայց կեանքը չտալով դուք ոչինչ չէք սուել:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Եթէ այժմ արդէն հանգուցեալը այսօր վտանգի մէջ ընկնէր, օգնութեան կանչէր ջրի տակը խորասուզուող մակոյկից՝ ես կեանքս կը զոհէի:

ԲՐԱՆԴ. Իսկ երբ նրա հոգուն կորուստ էր սպառնում—միթէ չարժէր վտանգել կեանքը:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Դու մի մոռացիր որ աշխատանքը մեզ ստրուկներ է դարձրել:

ԲՐԱՆԴ. Դէ այն ժամանակ յետ դարձրէք բոլորովին ձեր հայեացքը երկրից, անդրերկրային լոյսից, և ոչ թէ ձեր մի աչքը չռէք դէպի վեր, միւսը երկրի վրայ, —այն երկրի, ուր դուք յօժարակամ ձեր շնքին լուծ դրիք:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Իսկ ես կարծում էի թէ դու խորհուրդ կը տաս թէ ինչպէս թօթափել այդ լուծը:

ԲՐԱՆԴ. Այո, եթէ միայն կարողանայիք:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Դու կարող ես այդ անել:

ԲՐԱՆԴ. Դու ասում ես թէ ես կարող եմ...

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Այո, առաջ մեզ շատերն են

ցոյց տուել թէ ինչ ճանապարհով զնալ, իսկ զու զընացիր:

ԲՐԱՆԴ. Եւ ուզում ես ասել...

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Թէ հարկւրաւոր խօսքեր այնպիսի ուժով չեն դրօշմուիլ հոգու մէջ, ինչպէս մի գործի հետքը: Մենք եկանք քեզ մօտ ծխական ամբողջ համայնքի անունից. մենք հասկացանք թէ ինչ է մեզ պակասում, ահա քեզ պիտին:

ԲՐԱՆԴ. (Շփոթուած) Բայց ինձնից ի՞նչ է հարկաւոր ձեզ:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Եղիւ այստեղ քահանայ:

ԲՐԱՆԴ. Քահանայ... այստեղ, ես:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Երևի զու լսել ես որ մեր ծրխական համայնքը վտղուց է առանց պատուրի է մնացել:

ԲՐԱՆԴ. Այո, կարծեմ... մտաբերում եմ...

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Առաջ մեր ծխական համայնքը հռչակուած էր, այժմ ընկել է: Անբերութիւնը, ցրտերը փչացրել են հացը, յետոյ եկան համաճարակ հիւանդութիւններ, սկսան կոտորուել անասունները. կարիքը և սովը շատ նեղը գցեցին մեզ. ամեն ինչ եռապատիկ թանգացաւ,—քահանաների համար էլ ձեռնտու չգառաւ մեզանում պաշտօնավարելը:

ԲՐԱՆԴ. Խնդրիր և պահանջիր ինձնից ինչ ցանկանում ես,—միայն թէ ոչ այդ: Ես ինձ վրայ եմ վերցրել աւելի բարձր ծառայութիւն, Ինձ հարկաւոր է որ շուրջը եռայ կեանքը, որ ամբողջ աշխարհը ինձ լսէր զգաստ լսողութեամբ: Իսկ այստեղ—ինչ անեմ այստեղ ժայռերի այս տնձուկ բաւում: Այստեղ իմ ձայնը կը մարի...

Մէկը ԱՄԲՈՒԽԻՑ. Ոչ, արձագանքը այստեղ ժայռերի մէջ աւելի ուժեղ է, և ուժեղ ասուած խօսքը այստեղ աւելի երկարատև է հնչում:

ԲՐԱՆԴ. Սակայն ո՞վ կը փակի իրան մութ քարանձաւում, երբ թարթում է դէպի իրան գալար մարգա-

գետինը: Եւ ո՞վ կը սկսի գութանով վարել ապառաժները վրայ, երբ բաւականաչափ յարմար հող կայ: Ո՞վ կը սկսի սերմեր թաղել և նրանից պտուղներ սպասել երբ շուրջը պտղատու ծառերը արդէն ծաղկած կանգնած են:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՅ. (Շարժելով գլուխը), քո կատարած գործը ես հասկացայ, բայց խօսքերդ...

ԲՐԱՆԴ. Մի հարցրու. ժամանակ է ճանապարհ ընկնեմ (ուզում է գնալ):

Մէկը ԱՄԲՈՒԽԻՅ. (Կտրելով նրա ճանապարհը), Սպասիր: Ուրեմն այն գործը որին ձգտում ես դու, ծառայութիւնը որից չես ուզում հրաժարուել—այդքան թանգ է քեզ համար:

ԲՐԱՆԴ. Նրա մէջ է իմ կեանքը:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՅ. Դու պէտք է մնաս. (Ազդու) «Թէկուզ դուք ամեն ինչ տայիք, բայցի կեանքից,— չտալով կեանքը—դուք ոչինչ չէք տուել»:

ԲՐԱՆԴ. Իւրաքանչիւրը մի սեփականութիւն ունի, որ նա չպէտք է զիջանի, այդ նրա սրբութիւն սրբոցը. նրա «ես»-ն է, նրա կոչումը: Այդ չի կարելի կապել, կաշկանդել, չի կարելի առաջը կտրել, ինչպէս գետի ճանապարհը—նա պէտք է ազատ ընթանայ մինչև իր մեծ նպատակը -- ծովի գոգը:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՅ. Նոյնիսկ եթէ փական այդ գետը դարձնելով նրան ճահիճ, կանգնած լիճ—ջուրը կը հասնի իր նպատակին ցողի, անձրևի ձևով:

ԲՐԱՆԴ. (Ուշադրութեամբ զննելով նրան): Ո՞ր տեղից էր... այդպիսի խօսքեր քո բերնում:

Մէկը ԱՄԲՈՒԽԻՅ. Դու ինքդ դրիր իմ մէջ քո սեփական մեծագործութեամբ: Մոնչում էր մերիկը և ֆիօրդը եռում, իսկ դու աներկիւզ մակոյկի մէջ թըռչում էիր կորչող հողուն օգնութեան. դու վտանգում էիր կեանքդ... և մեզ քո մեծագործութիւնը գցում էր կամ սարսուռի կամ ջերմի մէջ. կարծես մեր հոգում մաքառելիս լինէր քամին արևի հետ. և զանգերի

դողանջը հնչում էր մեր աղանջներում: (Իջեցնելով ձայնը): Իսկ վաղը գուցէ մենք ամեն ինչ մոռանանք, ծալենք այդքան շատ խոստացող դրօշակը որ այսօր բարձրացրիր մեր առջև:

ԲՐԱՆԴ. Ուր ոյժ չկայ, այնտեղ նաև կոչում չըկայ: (Խստորէն) Եթէ չես կարող լինել այն ինչ պարսաւոր ես, եղիր — ինչ կարող ես, լիակատար կերպով, ամբողջապէս եղիր հողի որդի!

ՄԷԿԸ ԱՄԲՈՒՆԻԻ. (Նայում է նրա վրայ մի րոպէ և ասում) Վայ քեզ որ հետդ տանում ես լոյսը և վայ մեզ, որ միայն մի վայրկեան լոյս տեսանք!

(Գնում է. միւսները լուռ ու մունջ հետևում են նրան):

(Կը շարունակուի)

ԳԱՒԱՌԻՑ

Ազգային յեղափոխութիւնը *)

Որ մեր հայ «յեղափոխութիւնը» ընդհանրապէս գաւառներում, մասնաւորապէս Կաղզվանում վերջին վեց տարիների ընթացքում մեծ հարուած տուեց ժողովրդի առաջադիմութեան գործին՝ այդ նկատուում է հասարակական բոլոր գործերում:

I. 1880 թուին երբ առաջին անգամ մեղանում նոր ձևով դաստուծութիւն սկսուեց ծխական դպրոցում ժողովուրդը մահակներով դուրս վանեց դպրոցից «Շուն ու Կատու» սովորեց՝ ողուսուցչին: Բայց այդ բիրտ վարմունքը երկար չշարունակուեց, մի տարուայ ընթացքում ժողովուրդը հաշտուեց, ընտելացաւ և մի քանի տարուայ վերջը այդ ձևի ուսումը նրա համար անհրաժեշտ դարձաւ: Ամբողջ 14 տարի—մինչև փակուելը մեր դպրոցը նիւթապէս այնպիսի նեղ վիճակի չենթարկուեց, ինչպէս վերջին երկու տարում—բացուելուց յետոյ, որ ժողովուրդը իր կորցրածը նորից գտնելով՝ փոխանակ աւելի վառ սիրով ընդգրկելու, որպիսի սէր ցոյց տուեց բացման օր, դատապարտելի անտարբերութիւն ցոյց տուեց գործնականում: Ասլացոյց այն, որ անցեալ 1905.6 ուս. տ. ուսուցչական խումբից երկուսը մինչև օրս դեռ չեն ստացել լիապէս իրենց ունիւնները, որովհետև ժողովուրդը չվճարեց ոչ միայն նախահաշուեց բաց ֆինացած գումարի՝ մասնադրուած տուրքը, այլ և իրենց գտականների թոշակներն ու դասական պիտոյքների արժէքը չվճարողներ եղան, որպիսի վերաբերմունք նկատուում է նաև այս տարում «տուրքի» վերաբերմամբ, թէև շատ չնչին

*) Տպում ենք այս խօսուածը իբրև գաւառացի մի անաչառ գործիչի մտածողութիւն: Չարիքը ամենուրեք յարուցանում է բողոք, բոլորը ձգտում են աղատուել նրանից. խուլ են և խուսափող միայն նրանք որոնց ձեռնառն է ստեղծուած խայտառակ կացութիւնը: Ընթացողութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը առանց մագաչափ սքողելու պէտք է երևան հանել, ազատել ժողովուրդը կեղծուպատիր ցնորքներից և դեմագոգիական պոռոտախօսութիւնների ազդեցութիւններից, սրիկայական կօշմարից: Ծ. Սմբ.

գումար է բաժին ընկած ամեն մի ծխին, իսկ աղքատներն էլ գերծ են մասնակցելուց: Առարկողներ կան, որ «քեասատութիւն է», սակայն այդ բարոյապէս ընկած մարդկանց համար մի պատրուակ է, քանի որ տարէջ տարի անմիտ շռայլութիւնները բարդւում են ամենից շատ հէնց այդ առարկողների մասնաւոր և ընտանեկան կեանքում:

II Տասնհինգ տարուց իվեր տեղումս գոյութիւն ունեցող «Գրասիրաց» ընկերութիւնը՝ շնորհիւ «Թայֆայի»՝ նախանցեալ տարւում փակուեց, որը ոչ միայն տեղի ժողովրդին այլ և շրջակայ հինգ գիւղերին ձրիաբար գրքեր էր մատակարարում ընթերցանութեան համար և հարկւրաւոր նոր լոյս տեսնող գրքեր ու գրքոյկներ տարածում ժողովրդի մէջ: Իսկ այժմ գրքեր տարածելը այն աստիճան խորթացել է մեղանում, որ մարդ ամաչում է վաճառելու, թերևս ծաղրեն էլ «յեղափոխականներից» շատերը, որովհետև «մօղայական» յեղափոխութիւնից դուրս ամեն բան ծաղրելի է նրանց համար*): Վերջին ժամանակներում մի քանի ժողովներ կայացան վերոյիշեալ ընկերութիւնը վերակազմելու նպատակով, ուր յայտնի «բէժիմի» տակ դաստիարակւածներից մի քանիսը ճառախօսեցին և, ըստ իրանց սովորութեան «դուր գալու», աչքեր կապելու համար մեծ համակրութեամբ վերաբերվեցին. բայց երբ բանը հասաւ գործնականին՝ խմբով հեռացան, յոյս ունենալով, որ շատերը կը հետեւեն իրանց և գործը կը խանգարուի, իրանք կը հասնեն իրանց սև նպատակին: Թէև ընկերութիւնը վերակազմուեց, բայց անդամների քչութեան պատճառով՝ չկարողացաւ իր նախագծած ծրագիրն իրագործել:

III Մի ժամանակ, երբ այժմեան «յեղափոխութիւնը» մօղա չէր ընկել մեղանում հասարակական ժողովները իրանց համերաշխութեամբ, կարգ ու կանոնով պատկառանք էին ազդում ամենքին, ուր ամեն մի հասարակ մարդ ազատ կերպով յայտնում էր իր կարծիքը այս կամ այն հարցի վերաբերութեամբ, իսկ այժմ անհատական իրաւունքը բռնաբարւում է, ոչ ոք չի համարձակուի կարծիք յայտնել հակառակ «Թայֆաների», որովհետև յիշեալ «շօլայում» կրթուած տաք գլուխների սարսափից շատերը (մեծամասամբ տարէջ և ծեր մարդիկ) նոյնիսկ քաշւում են ժողովի գալուց, ուր շատ անգամ բանը վերջանում է «տուր ու դմբոցով»: Մի ժողովում, որը

*) Տեղիս երիտասարդներից՝ մարդասիրական ուղղութեամբ առաջնորդող՝ մէկը, որ միշտ հարուածում է կեղծաւորներին, իրեն վրէժ ծաղրում են նրան «մարդասէր» անուանելով:

կառավարութիւնն էր կազմել «դէպուտատ» ընտրելու, հարցարուեց, թէ ինչո՞ւ դպրոցական կամ այլ հասարակական ժողովներին չեն յաճախում տարէջ մարդիկ՝ ինչպէս եկել էին այն անգամ: Ժողովականներէրից մէկը պատասխանեց. «Գանք ինչ անհնր, էն որ կարծիք չենք կրայ ասել, մունջի պէս պէտք է նստենք ու ձեզ լսենք... դուք էլ ինչ ուզում էն էք անում», և այն բողոքողին ձայնակցեցին շատերը՝ լցուած զայրոյթով: Հետեւեալ, այժմ ինչ տեսակ ընտրութիւն ուզում է լինի, երբէք ժողովրդի ձայն չի կարելի համարել, այլ այս կամ այն «Թայֆայի» կամը:

Ա՛ Գալով կեանքի այլ և այլ մանրամասնութիւններին, թէ ինչ տղեղ երևոյթներ է ստեղծել այդ «յեղափոխութեան» բէժիմը, արդէն մամուլը հարիւրաւոր օրինակներ է արձանագրել ամեն կողմից—բռնութիւն, հարստահարութիւն, տէր-րոր, խլրտումներ, գոսում-գոչում (ազգ, հայրենիք, զործել, զարկել, ջնջել և այլն.) և, որ ամենագլխաւորն է ամենից զրամ շորթիւ. իսկ այդ բոլորի գումարը—միմիանց և ազգի տուն քանդել *):

Հայ «յեղափոխութիւնը» միշտ զանց առնելով կրթութեան գործը — վերջին տարիներում դեռ հարուած տալով՝ նա սկզբից և եթ իր ոտքի տակ պատրաստի հող չի ունեցել, ուստի երբէք չի ունեցել լուրջ, կայուն և տաքտիկայով գործունէութիւն, որովհետեւ զաղավարին նուիրուած անձինք հագուակիտ են եղել, մնացեալները տրամադրութեամբ հետեւել են երևալու համար: Այլ խօսքով պատահական դէպքերը ազգել են ամբոխին և նա կատաղի ալիքներով առաջ է շարժուել, պղտորուել և խոտորնակի ճանապարհներով ամեն կողմ ընթացել՝ որովհետեւ նրան ոչ թէ գիտակցութիւնն ու զաղափարն էր զեկաւարում, այլ գերադանց՝ վայրագ ուժը: Ահա թէ

*) Մենք բացառութիւն ենք համարում նրանց, որոնք անկեղծ զաղափարի սիրով տողորուած՝ միայն մի կէտ են տեսնում, այն է՝ գնալ և գոհուել հայրենիքի սիրուն, որոնցից մեծ մասը տաճկահայաստանցի են և որոնք կազմում են յեղափոխութեան միակ ուղիւն ծովը, այլ խօսքով սընունդ տուողը: Սակայն 7 տարուց ի վեր է այդ գոտում գոչումը կայ մեղանում, բայց մինչև օրս մէկը չգնաց գոհուելու, չնայելով որ բոլորն էլ շարունակ այդ են քարոզում և ուրիշ հայեացք էլ չունեն յեղափոխութեան վրայ: Բանից դուրս է գալիս՝ որ ինչպէս գաւառներում արբանակները, նոյնպէս էլ քաղաքներում ջօջերը անկեղծ, մաքուր վատուած յեղափոխականներին (օգտուելով նրանց զգացմունքներից) քարոզում, զրգոտում, ուղարկում են, իսկ իրենք միևնոյնը շարունակելով փառաւոր, բուրժուական կեանք են վարում՝ կարելի է ասել՝ նահատակների արեան գնով... Այստեղ էլ բացառութիւններ կան:

ինչու այսքան ժամանակ է մեր «յեղափոխութիւնը» մի լաւ հետեանրի չհամակելով հանդերձ՝ շատ ողորդութիւններ ստեղծեց «Այստեղ էլ, Այստեղ էլ»:

Եւրոպայի անխիղճ, դեռ կարելի է ասել անբարոյական դիպլոմատները՝ օգտուելով մեր «յեղափոխութեան» անսկզբունք, անտակտ տրամադրութիւնից, թերեւս մեծ ոճրագործի հետ ներքին հաշիւներով կապուած, փոխանակ մի այլ լաւ. կուտուրական ճանապարհ ցոյց տալու՝ արեւն պահանջեցին կեղեքուած հայի արդար դատը իրաւական ճանապարհով «Ատեան» հանելու համար: Եւ զժրագլ «Հայաստանը» իր հարազատ դաւակնների անմեղ արեւնով ողորդեց... Իսկ՝ պոռնիկի դեր խաղացող՝ Եւրոպան դարձեալ լուռ մնաց 300 հազարի դէմ բացառութեամբ մի քանի մարդասէրների, որովհետեւ այդպիսով «Հայոց հարցը» լուծման էր մօտենում առանց իրենից մի գողութիւն պահանջելու: Իսկ մեծ ոճրագործը՝ օգտուելով այդ հանգամանքներից՝ առաջ էր տանում իր արեւնոտ ծրագիրը— Հայկական հահանգներում հայերի թիւը պակասեցնել, որով ինքն ըստինքեան լուծման կը հաջնէր զժրագլ «Հարցը»: Քաւացած ազգ չէինք՝ բայց այդ կորստաբեր ճանապարհում բաւարացած մնացինք՝ յանձին «հայ յեղափոխութեան»՝ շտրունակելով միեւնոյն ուղիով առաջ գնալ, աւելի դրզուելով արեւնարբուին, որ և կոյս մնացած «Սասնոյ լեռներն էլ ներկուան արեւով», *) ուր սրից ազատութեան էլ գերի վարեցան ու սովի ձեռքը մատնուեցան:

Ժողովրդի հաւատը և պատանի սերունդի եռանդը բռնակման գորութիւն ունեն, որ հուժգու կերպով առաջ են գալիս արտաքին երեոյթներից, սոսկալի՜ է, եթէ ուղիղ ընթացք չտրուեց նրան... և այդ հսկայ ուժը շարժուեց վերջին տարիներում մեր «յեղափոխութեան» երեոյթական շարժումներից...

Բայց զժրագլաբար սանձահարող ղեկավարներ չունենալով ինքը ղեկավարեց... որեւէ այստեղ էլ մի շարք հարիւրներ ստեղծեց յեղափոխութեան գաղափարին հակառակ, որի մասին առարկութիւնները եսամոլութիւն է, և ոչ մի կերպ չի կարելի արդարանալ ապագայ չտուած յեղափոխութեան դատաւանի առաջ:

Մեր «յեղափոխութիւնը»՝ իբրեւ գէնք արգարանալու՝ միշտ յիշեցնում է եկեղեցական կալուածների գրաւման և ինքնա-

*) Մի անկեղծ գործիչ շատ լաւ է նկատել թէ «Եղբայր, միայն վաճառ է մնացել ազատ, կուզէք, այստեղ էլ մի շարժում անենք, այստեղ էլ շարժենք՝ պրծնենք»:

պաշտպանութեան դէպքերը, սակայն եթէ ազատ և անաշուքնենք, այդ գործերունն էլ նրա հասցրած փաստերը պակաս չեն: Նա յիշեալ երկու գործունն էլ—նամանականդ եկեղեցու կալուածները գրաւման—յեղափոխութիւնը բոլորովին անտեղի կերպով իր վրայ առաւ խնամատարութիւնը. քանի որ գործը ժողովրդի սրախն շատ մօտիկ լինելով՝ ինքը ոտքի կանգնեց*), որի համար շատ օրինակներ կան նոյն իսկ ամենախուլ գիւղերում ուրտեղանք զառամեալ ծերերն ու պառանքներն անգամ ցուպերը ձեռքերին գնում էին զիմազրելու և նահատակուելու եկեղեցու սիրուն: Նա աւելի կենդանի ապացոյցներ ունեւ այդ մասին. կարաի բանտում մօտ 400 լանտարիկներէից—եկեղեցու գործի համար—միայն մի քանի հոգի կային «յեղափոխականներէից»*) իսկ մնացածները—բոլորն էլ բուն ժողովրդից էին, որոնցից շատերը զայրոյթով լցուած՝ բողոքում էին յեղափոխականների դէմ, որոնք «իրանց խաբել, զրգուել, առաջ էին դրել ու իրանք փախել, ծակուծուկ մտել, ազատուել էին»:

Դալով ինքնապաշտպանութեան գործին, դեռ չեմ ծանրանում այն մասին, որ «աղգային յեղափոխութիւնը»—ժամանաւորապէս Դաշնակցութիւնը հող պատրաստեց «Շէյթանի» չար զիտաւորութեան համար... այն տրամաբանութեամբ, որ եթէ Դաշնակցութիւնից մի անրողջ բանակ կայ իր համագգիւններից զժողո՞ ու վերաւոր, հապա ռքան ևս առաւել օտարութեամբ տարրից... հէնց այդ շատ նպաստաւոր հանգամանքից օգտուելով Շէյթանը՝ իր դուերը լարեց: Հետեւեալ այդ չարիքը իր անտակտ գործունէութեամբ «յեղափոխութիւնը» ինքը ստեղծելով՝ ինքնապաշտպանութեան գործունն էլ իր մեղքը քաւելու չափ գործ չկատարեց, այլ խնամատարի դերը ստանձնելով յուսադրելով ժողովրդին՝ ամեն տեղ՝ չլարողացաւ օգնութեան հասնել ժամանակին և մեծ փաստների պատճառ դարձաւ: Սակայն չի կարելի ուրանալ, որ շատ անձնագոհիւր նահատակուեցին, որոնք են՝ որ մեր «յեղափոխականներին» փրկում են ժողովրդի անեղ պատաստանից և շատ տեղեր մեծ օգնութիւններ եղան. բայց եթէ այն միլիօնի հասնող զոհուած գումարով ժողովուրդը ինքը իրան զինէր գոնէ կիսով չափ դարձեալ այնքան կորուստներ չէր ունենալ որքան փաստեց՝

*) Ինչպէս յեղափոխութեան կողմից ոչ մի փորձ չեղաւ զպրոցների փակման և զինուորադրութեան ժամանակ, թէև ժողովրդից—Ղարաբաղում ցոյցեր եղած զինուորադրութեան միջոցով...

*) Թէև մարդասպաններ ու այլ չարագործութեան համար բռնուածներ շատ կային:

յոյսը խնամատարի վրայ զննելով *)։ որով հանգամանքից շատերը օգտուելով՝ հարստահարեցին, շահագործեցին թշուառ ժողովրդին։ Մասնաւորապէս մեղանում՝ թէև բարերազգայար ոչ մի դէպք չպատահեց, այնուամենայնիւ խնամատարութեան անունով շատ շահագործումներ կատարուեց «հանգամանքներից օգտուողների» ձեռքով։

Այս բոլոր գործուած և տեսական փաստերը աչքի առաջ ունենալով՝ վստահանում եմ ասելու, որ զոնէ մեղանում յեղափոխութիւն չկայ, նոյնիսկ իրանց հայեացքով, այլ կան այդ վեհ գաղափար անուան տակ խմբեր, ուր անհատները՝ անձնական հաշիւներով ու հաճոյքներով՝ միմիկանց հետ միացած՝ մի «միջավայր են ստեղծում և, ըստ «Պեպոյի» «հաւգործումը լըվլըվում»։

Թող յարգելի ընթերցողները յոռետեսութիւն չհամարեն և ոչ էլ մոլորութիւն, ես որպէս չէղօք անձ և յեղափոխութեան վեհ գործին նախանձախնդիր արձանագրել եմ իրական կեանքից։ Ով որ կուսակցական նեղ հայեացքով չի կարդայ իմ գրածները՝ անշուշտ կը խոստովանի նրանց ճշմարիտ լինելը։ Հետևաբար այդ բոլորը ապացուցանում են, որ մենք շատ քիչ անձինք ունենք գաղափարի սիրով մղուած յեղափոխութեան գործի ասպարէզ։ Միթէ այս չէ՞ հաստատում այն ցատալի երեւոյթը, որ չնայելով ամբողջ մասուլը արձագանք տուեց՝ այդ յեղափոխութեան գրօշակի տակ ապաստանածների ձեռքով ճնշուած ու հարստահարուած՝ ժողովրդի աղաղակներին, այնուամենայնիւ բազմաթիւ ուսեալ, ինտելիգենտ անձինք նորից-նորից պաշտպանում ու խրախուսում են իրենց անարժան գրիչներով... Իսկ այդ «փարիսեցիներին ու դպիրներին» էլ ուժու սնունդ է տալիս մոլեղնած ամբոխը... Եւ նրանց այդ վերաբերմունքը ինձ մի համեմատական՝ եզրակացութեան է հասցնում, որ ամենաթունդ պահպանողականն անգամ իր մէջ խոստովանում է, որ ազատութիւնն ու լուսաւորութիւնը լաւ են բռնութիւնից ու տգիտութիւնից. բայց նրանց ներքին, անձնական հաշիւները հակառակն են պնդել տալիս։

Իմ վերջին խօսքը։ Ամենքի համար պարզ ճշմարտութիւն

*) Այդ մասին մի շատ բնորոշ օրինակ կա մեղանում.—Երբ ինքնապաշտպանութեան համար փող էին հաւաքում մեղանում, մի տարէց մարդ վստահացել էր ասել. «Նղբայր, թողէք մեզ հանգիստ», ես իմ կացնով ու մահակով աւելի լաւ հաւատարմութեամբ կը պահպանեմ իմ տունը, քան թէ՛ մի ուրիշը իր հրացանով...»

է, որ շատ են խօսուած մարդիկ իրանց սրտին մօտիկ ցաւերի մասին. ես թէն մի անուս մարդ, բայց յեղափոխութեան վրայ նայում եմ շատ լայն և մաքուր հայեացքով՝ համարելով նրան մեր փրկութեան երկրորդ ճանապարհը (առաջինը կրթութեան զործն է), ուստի նրա ընկնելը իմ անզօր գրչին հանգիստ չէ թողնում և իմ դիտողութիւններն անում եմ. բայց, շատ ցանկալի էր, որ ձեռնհաս մարդիկ իրենց անաչառ դիտողութիւններով քննութեան ենթարկէին և այժմեան մեր «անորմալ յեղափոխութիւնը» հասցնէին իր կոչման բարձրութեան և կամ ուղղէին սխալները:

Մ. Ղալաբեան

ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹԻՒՆ ԱՆՁԻ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆԻ

(ԴԻՕՆՆՕ)

I.

Բոլոր մարդիկ պէտք է լինեն ազատ ու հաւասար իրաւունքների տէր: Բոլոր երկրների բաղաքացիները, բացի Ռուսաստանից, Թիւրքիայից, Պարսկաստանից և Զինաստանից ունեն իրանց որոշ իրաւունքները, որոնք կարելի է խլել նրանցից միայն դատարանի միջոցով, որը հրապարակական է ու երդուեալ ատենականների մասնակցութեամբ:

Ղճիւռները կայացնում են օրէնքի հիման վրայ, որը շարադրել է ոչ թէ մի որեւէ իշխանաւոր կամ դիւանատուն ըստ իր հայեցողութեան, այլ իրեն ժողովրդի ընտրած ներկայացուցիչները: Ուրիշ խօսքով, որեւէ մեղադրուածի իրաւունքներից զրկել կարելի է միայն այն ժամանակ, երբ ժողովրդի ընտրած երդուեալ ատենականները, հիմնուած հէնց միևնոյն ժողովուրդի սրբագործած օրէնքի վրայ, կը գտնեն մարդուն մեղաւոր:

Իօանն Հոդազուրկ անգլիական կայսրը, որ թագաւորում էր սրանից 700 տարի առաջ, իրեն՝ անհաճելի մարդկանց նըստարտ, 1907:

տեցնում էր բանտ, գրաւում կայքը, աքսորում առանց դատի և այլն: Եւ ահա 1215 թ. տոհմաւոր մարդիկ ու բարձունք միանալով ազատ հողագործների հետ ստիպեցին կայսրին ստորագրել Ազատութեան Մեծ Հրովարտակը: Այս հրովարտակով կայսրը խոստանում էր որ այլեւ ոչ ոք չի նետուի բանտ, ոչ ոքի կայքը չի գրաւուի, ոչ ոք չի աքսորուի, ոչ մի կերպ, բացի՝ ժողովրդի կազմած օրէնքի հիման վրայ կայացրած Երդուեալ ատենականների վճռով: Մեծ հրովարտակը խօսում է ամբողջապէս մարդկային հիմնական իրաւունքների մասին: 460 տարուց յետոյ 1679 թ. անգլիացիները ձեռք բերին իրանց կայսրից մի այլ կարեւոր հրովարտակ: Սրանով արգելւում է ձերբակալուած մարդուն երկար պահել բանտում մինչև դատը, ինչպէս անում էին այլ առաջ Անգլիայում և ինչպէս մինչև այժմ էլ գոյութիւն ունի այդ Ռուսաստանում: Այս հրովարտակի համաձայն, մարդուն չի կարելի ձերբակալել ոչ մի կերպ, բացի դատարանի որոշումով: Դատարանը գրաւոր հրահանգ է տալիս բանտային վերահսկիչին, որ սա անյապաղ քննութեան ներկայացնէ ձերբակալուածին, որտեղ նրան յայտնում են ձերբակալելու պատճառը: Այս հրահանգն է որ կոչւում է Habeas Corpus Act: Եթէ ձերբակալել են մի անգլիացու և պահում են նրան բանտում առանց յայտնելու նրան պատճառը, այն ժամանակ ամեն մէկ քաղաքացի իրաւունք ունի պահանջելու, որ ձերբակալուածին իսկոյն և եթ ներկայացնեն քննութեան կամ ազատ թողնեն, սաստիկ կը պատժուի այն բանտային վերահսկիչը կամ նա որը ձերբակալել է մարդուն, եթէ չի կատարում ճշտութեամբ Habeas Corpus Act-ի կանոնները:

Այս հրովարտակի հետեանքը այն եղաւ... որ ներկայումս Անգլիայում ձերբակալուածին 24 ժամուայ ընթացքում բերում են դատարան, ուր բոլորի ներկայութեամբ յայտնում են նրան թէ ի՞նչի մէջ են մեղադրում: Այսպիսով մարդկանց իրաւունքների պաշտպան այս հրովարտակի համաձայն, չի կարելի լոկ ամբաստանքի ու կասկածանքի հիման վրայ, երկար ժամանակով բանտում պահել մարդուն, ինչպէս այդ կատարւում է մեզանում: 10 տարուց յետոյ 1689 թ. անգլիացիները ձեռք բերին երկրորդ հրովարտակը, որի մէջ արտայայտւում էր նրանց իրաւունքները: Նա այդպէս էլ կոչւում էր Bill of Rights, այսինքն՝ օրէնք—իրաւունքների մասին: Այս հրովարտակի մէջ ասուած է, որ օրէնքը պէտք է մշակէ ինքը ժողովուրդը, և որ կայսրը չունի իրաւունք իւր կամքով փոփոխել օրէնքի գործադրութիւնը կամ հրատարակել նորը: Յետոյ

հրովարտակում յիշում է նաև, որ կայսրը իրաւունք չունի իրեն կամքով նոր հարկ նշանակելուց և որ այդ իրաւունքը վերապահւում է ժողովրդին: Կարլ I կայսրը նաւատորմ կառուցանելու համար կարիք ունէր փողի, և պարլամենտը, այսինքն ժողովրդի ներկայացուցիչները, չտուեց այդ փողը: Այն ժամանակ կայսրը իր կամքով նոր հարկ նշանակեց, ժողովուրդը մերժեց վճարել, հետևանքը, — պատերազմ ժողովրդի և կայսերական զօրքերի մէջ, և յաղթեց ժողովուրդը:

Այդ վերոյիշեալ երեք հրովարտակները *) պարունակում են իրենց մէջ քաղաքացու հիմնական իրաւունքները: Կամայականութիւնից ազատուած իւրաքանչիւր ժողովուրդ մտցնում է իր մէջ այդ իրաւունքները: Որոնք են այդ իրաւունքները:

Նախ ոչ ոք չպէտք է ձերբակալուի, մինչև որ դատարանը լուրջ և ճիշտ փաստերի հիման վրայ չհրամայէ այդ: Անգլիացիները այն աստիճանի կարեւոր են համարում այդ, որ այդ կանոնի դրժումը կարող է յուզել ամբողջ երկիրը, ինչպէս ցոյց է տալիս այդ այսպէս կոչուած Էդգարի գործը: Անգլիացիները կարծում էին, որ հարաւային Աֆրիկայի հանրապետութեան մէջ ոստիկան Զօնեսը, առանց դատաստանական հրահանգի, ներս է խուժել ոմն Էդգարի բնակարանը, նրան ձերբակալելու նպատակով, իսկ երբ Էդգարը սկսում է դիմադրել, ոստիկանը սպանում է նրան: Յետոյ երևաց որ դէպքը այդպէս չի եղել: Բայց անգլիացիներին ճշտութիւնը յայտնի չէր, նրանց յայտնի էր դէպքը այնպէս, ինչպէս վերևն էր բերուած և նրանք զայրանում էին: Այդ ժամանակ Անգլիայում համախմբումներ էին լինում, բողոքելու հարաւային Աֆրիկայի հանրապետութեան մէջ կատարուած ապօրինութեան դէմ, ուր ոստիկանը առանց դատարանական որոշումի ներս է խուժել մասնաւոր մարդու բնակարանը: Եւ երբ պատերազմ էր յայտարարուած ըօէրական հանրապետութեան, անգլիացիների մեծամասնութիւնը համակրում էր այդ պատերազմին, մտածելով որ այդ անում էր յանուն ժողովրդական հիմնական արդար օրէնքների և անարդարութիւնը վերացնելու համար: Ոստիկանութեան ապօրինի կերպով մասնաւոր բնակարան ներս խուժելու մի դէպքը յուզել էր ամբողջ Անգլիան: Այժմ տեսնենք ինչ է կատարուում այն երկրներում որտեղ մարդկանց իրաւունքները չի ապահովուած օրէնքով: Եւ կը բերեմ քաղուածներ Ռուսաստանի ոստիկանական ղեկարատմանտի վերատեսչի պաշտօնական գրութիւնից:

*) Magna Charta, Habeas Corpus Act, Bill of Rights.

«Ազգաբնակչութեան համար ամենից աւելի ծանր է, ուժեղացրած պահպանութեան ժամանակ տրուած հրահանգները, որով կռոււարչական պաշտօնեաները իրաւունք են ստանում ճնշելու մարդկանց ազատութիւնը, անտեղի խուզարկութիւններով, ձերբակալումներով ու արտորումներով: Ուժեղացրած պահպանութեան կանոնների մէջ ոչինչ չէ յիշուած խուզարկութիւնների վերաբերեալ: Ուստի այնպիսի լայն ծաւալ են ստացել խուզարկութիւնները, որ ամեն անգամ ոստիկանութիւնը դիմում է դրան որպէս մի միջոցի ստուգելու բնակչի քաղաքական բարեյոսութիւնը, շատ անգամ իրենց իրաւունք են համարում խուզարկելու թաղային ոստիկանական հսկիչները և նոյն իսկ հասարակ ոստիկանները, որոնք օրէնքի համաձայն չեն օգտուում այդ իրաւունքներով: Կամայականօրէն կատարուած խուզարկութիւնները այնպիսի մի սովորութիւն է դարձել ոստիկանների ու իշխանութիւնների համար, որ կենդրոնական կռոււարութիւնը, նախարարութիւնը ոչ մի հնարաւորութիւն չունեն այդ կամայականութիւնների առաջնաւնելու, մանաւանդ որ նա զրա գէտ մաքառելու ոչ մի յենարան ունի օրէնքի մէջ, և նախարարութեան զրուած ընդհանուր ցուցմունքները այդ խնդրի վերաբերեալ տեղական իշխանութիւններին աւելի անհասկանալի են քան այն բացառութիւնը որ պէտք է ըստ կարելոյն անդադար միջամտութեամբ բնակիչների մասնաւոր կեանքի մէջ ստուգել նրանց քաղաքական բարոյութեան աստիճանը և պահել բնակիչներին իրենց ձեռքերի մէջ»:

Այսպէս ուրմն մի ոստիկան Ձոնեսի տեղ,—հազարներ մեզանում, որոնք գիշերուայ որ ժամին ասէք ներս են խուժում խաղաղ բնակիչների բնակարանը, աստուգելու նրանց քաղաքական բարեյոսութիւնը: Սակայն ոռւս քաղաքացիների իրաւունքները չէ սահմանափակում նրանով, որ նրանք խուզարկութիւններից ապահովուած չեն: «Ձերբակալելու իրաւունքը,—ասում է միևնոյն պաշտօնական գրութեան մէջ,—խստացրած պահպանութիւնների ուժով, ժամանակի ընթացքում աւելի ու աւելի նախազգուշական միջոցից դարձել է պատժելու միջոց. շատ նահանգներում գաւառական իսպրավներին իրանց իշխանութեամբ որոշում էին իբրև պատիժ սրա նրա ձերբակալութիւնը... Այնուհետև գրութիւնը մատնացոյց է անում այն հանգամանքի վրայ, որ ժողովրդները ձերբակալում ու բանդ են նստացնում մարդկանց առանց բաւականաչափ փաստերի: Ժանդարմների համար շատ զէպքերում լիովին բաւարար է համարում ոստիկանական ագենտների տը-

ուած, անորոշ ու չստուգուած ցուցմունքները: Ուրիշ խօսքով՝ ձերբակալուելու համար բաւական է լրտեսի լոկ ցուցմունքը: Եւ որովհետեւ մեղանում գոյութիւն չունի անգլիական երկրորդ հրովարտակի՝ «ձերբակալուածին դատարանին ներկայացնելու հրամանի» Habeas Corpus Act-ի համապատասխան օրէնքներ, ուստի ձերբակալուածը այդպիսով կարող է երկար ժամանակ նստած մնալ բանտում:

Երկրորդ հրովարտակի համաձայն, «իրաւունքների մասին օրէնքով» Bill of Rights — նոյնիսկ կայսրը, եթէ չխօսենք նրա լիազօրների մասին, չպէտք է փոփոխէ ժողովրդի կողմից ընդունուած ու նրա ձեռքով սրբագործուած պոյութիւն ունեցող օրէնքները: Նա անկարող է մշտական հաստատուած օրէնքները փոփոխել ժամանակաւոր բացառիկ օրէնքներով, կազմուած բացառապէս որեւէ նահանգապետի ձեռքով: Այդպիսով Անգլիայում, որտեղ մարդկանց իրաւունքները ապահովուած են օրէնքով, կառավարութեան կողմից երկրում մտցրած ժամանակաւոր պարտադիր կանօնները, կամ ուժեղացրած պահպանութիւնը, ինքնըստինքեան համարում են ապօրինի դործողութիւն:

Կամայականութիւնը օրէնք չի համարւում միայն այն պատճառով որ ինքը կամայականութիւն կատարողը այդ անում է պաշտօնական որեւէ թղթի միջոցով համապատասխան Ա՞-ը դնելով վրան:

Ինչպէս մենք տեսանք, անգլիացիները միայն այն գործողութիւններն են օրինական համարում, որը մշակել է ժողովուրդը իր ընտրած ներկայացուցիչների միջոցով:

Քանի գոյութիւն ունի այն հիմնական օրէնքը որով ոչ ոք չի ձերբակալուի, չի արսորուի կամ չի զրկուի սեփականութիւնից ուրիշ ոչ մի կերպ, բացի երզուեալ ատենականների դատարանի հրահանգով, և ժողովրդի ձեռքով մշակուած օրէնքներով, այն ժամանակ անկարելի են լինում այն ազմինիստըատիւ արքայները, որոնք այնպէս լայն չափով գործադրւում են մեղանում: Արքայութեւն են մարդկանց մի քաղաքից միւսը, Եւրոպական Ռուսաստանից Սիբիրեայի խորքերը, զրկում նրանց աշխատանքից, քայքայում, փշրում են նրանց բոլոր ապագայ յոյսերը, և այս բոլորը—առանց երզուեալ ատենականների դատարանի, լոկ մի իշխանաւորի կարգադրութեամբ: Այդ արքայները որոնց մենք բոլորեքեանս այդպէս ընտելացել ենք, անգլիացիներին այն աստիճանի վայրենի է թւում այդ, որ նրանցից շատերը չեն հաւատում թէ Ռուսաստանում կարող են գոյութիւն ունենալ այդ օրինակ սարսափելի անար-

ղարութիւններ: Ռուսաստանում կայ այնպիսի հեռու, վայրենի ու ցուրտ վայրեր, որպիսին է Եակուտիան նահանգի Կալէմի շրջակայքը: Ձմեռը այնտեղ շարունակուում է ինն ամիս: Այնտեղ օգոստոսին արդէն ձիւն է տեղում, ձմեռը արեգակը մայր է մտնում երկար ժամանակով և երկու ամիս շարունակ գիշեր է տիրում: Յորեն չի բսնում երբէք այնտեղ, որովհետեւ գետինը խորքում քառորդ արշին սառած է: Եւ ահա շնորհիւ նրան որ միզանում գոյութիւն չունեն այն հիմնական օրէնքները, որոնց մենք թուեցինք վերոյիշեալ հրովարտականքի մէջ,—մեղմում լոկ իշխանաւորի կարգադրութեամբ այդպիսի հեռու վայրեր են արսորում առանց դատի—կին, տղամարդ, հասակաւորներ և նոյն իսկ տասն և եօթ տարեկան երախաներ: Աքսորում են ազանդաւորներին իրանց դաւանած կրօնի համար, բանաւորներին գործադուլի համար, ուսանողներին նրանց մօտ գտնուած զբոքոյկների համար, մի խօսքով այն բոլորի համար, ինչ որ Անգլիայում, որտեղ մարդս ազատ է ու տէր իր բնական իրաւունքների, ոչ մի ոճրագործութիւն չի համարւում: Այսպէս ուրեմն մենք տեսանք, թէ որքան կարեւոր է մարդու համար կամայականօրէն ձերբակալութիւններից ազատ մնալը:

II

Որտեղ մարդուս իրաւունքները անձեռնմխելի են, այնտեղ ամեն մի քաղաքացու բնակարանը սրբութիւն է կազմում,—լինի այդ միենոյն է դքսի պալատ կամ գեղական բանուորի խրճիթ: Ոստիկանութիւնը իրաւունք չունի մուտք գործել մասնաւոր անձի բնակարանը, ձերբակալելու թէկուզ ամենածանր բրէական յանցաւորին, եթէ դատաստանական մարմինը չէ հրահանգել այդ: Ոստիկանութիւնը մուտք կարող է գործել մասնաւոր բնակարանները միայն ցերեկով մինչև արեգակի մայր մանելը: Իսկ ինչ վերաբերում է մեղմում սովորութիւն դարձած քաղաքական խուզարկութիւններին, օրինական պետութիւնների մէջ, այսինքն այնտեղ, որտեղ ժողովուրդն է իր համար կանոններ մշակում,—անհասկանալի է, որովհետեւ այնտեղ իւրաքանչիւր մարդ կարող է կարգաւ այն, ինչ որ ցանկանում է, պահել իր մօտ իր ցանկացած գրքերը և խօսել նրա հետ որը իր սրտին մօտ է: Անգլիացին ասում է «իմ տունս—դա իմ բերդս է»: Ահա թէ ինչու, երբ անգլիացին լսում է որ Ռուսաստանում ոստիկանութիւնը ներս է խուժում մասնաւոր անձանց բնակարանները, ցրում հիւրերին ու ձերբակալում է, կամ թէ ինչպէս ժանդարմները կէս գիշերին

յայտնուելով մասնաւոր անձանց տներում, խուզարկում են նընշարանները, կարդում ձեռագիրները, գնում գրքերը և գրաւում նրանց բարեկամների լուսանկարները—նա դժուարութեամբ է հաւատում այդ բոլորին: Մենք տեսանք արդէն, թէ ինչպէս ամբողջ Անգլիան յուզուել էր լսելով որ Իօգանեսը գում ոստիկան Ջօնսը ներս է խուժել առանց դատարանի կարգադրութեան ոմն Էդգարի բնակարանը: Ես այստեղ կը պատմեմ, մի փոքրիկ ու ծիծաղաշարժ դէպք, որը սակայն ցոյց է տալիս, թէ Անգլիայում որպիսի ճշտութեամբ են կատարում բնակարանի անձեռնմխելիութեան կանոնները: Մի քանի տարի առաջ ես ապրում էի Լօնդօնի անգլիական պանսիօններից մէկում, որը մեծ թուով ապրողներ բնէր: Այս պանսիօնում ապրող բոլոր տղամարդիկ զբաղմունքի տէր էին, ուստի ճաշին նեկայ էին լինում միայն կանայք: Տանտիրուհին պահում էր իրլանդացի մի աղախին, որը ըստ իր սովորութեան հարբում էր յաճախ: Այդ պատճառով տանտիրուհին վերջապէս հրամայեց նրան դուրս գնալ իր տնից: Իրլանդուհին դուրս գնաց, և աւելի սաստիկ հարբած, յայտնուեց պանսիօնում ճիշտ այն ժամանակ, երբ բոլոր կանայք նստած էին ճաշի սեղանի շուրջը: Կանգնելով դռան մօտ նա սկսեց նախառել տանտիրուհուն: Վերջինս փորձեց անուշադիր ձեռնալ, և սկսեց կանանց հետ խօսել եղանակների մասին, իբր թէ այնտեղ ոչ ոք չի կանգնած: Բայց իրլանդուհին ձայնը բարձրացնելով սկսեց աւելի խիստ հայհոյեանքներ թափել տանտիրուհու հասցէին:

—Դուրս կ'ընէք այստեղից!—գոչեց վերջապէս տանտիրուհին:

—Ահա թէ ինչ! Ինձ համար այստեղ էլ լաւ է!—առարկեց աղախինը:—Պիտի կանգնեմ ու նախատեմ ձեզ բոլորի առջև, թող այս բոլոր կանայք իմանան, թէ որպիսի կին էք դուք:

—Ես ոստիկան կը կանչեմ!

—Թէկուզ երկուսին կանչիր!

Յայտնուեց ոստիկանը և կանգնեց սրահում, շէմքիցը դուրս:

—Ոստիկան! դուրս տարէք այս կնոջը այստեղից, նա հայհոյում է ինչպէս պանդուկում! Գոչեց զայրանքից գունատուած տանտիրուհին:

—Ես իրաւունք չունեմ ձեր բնակարանը մտնելու, առանց դատարանի կարգադրութեան,—պատասխանեց ոստիկանը,—օրէնքը լիազօրութիւն է տալիս ինձ այդ անելու միայնսպանութեան դէպքում: Այնպէս արեցէք որ այդ կինը յայտնուի

ձեր բնակարանի շէմքից դուրս, այն ժամանակ ես կարող եմ վերցնել նրան:

Ամբողջ տանը չկար ոչ մի տղամարդ, իսկ կանայք չէին համարձակուում կռուի բռնուել ամրակալմ և բացի դրանից հարբած իրլանդուհու հետ: Ստացուեց մի ծիծաղաշարժ դրութիւն: Ոստիկանը փնտրել էր կանգնած շէմքից դուրս, բաց դռները հանդէպ, իսկ իրլանդուհին աւելի ապահով զգալով իրան, նորից, և աւելի սաստիկ, սկսեց նախատել տանտիրուհուն: Տիկինները որպէս թէ ոչինչ չի պատահել շարունակում էին ուտել ու խօսել Լօնդօնի փոփոխակի եղանակների մասին: Կէս ժամից յետոյ յայտնուեց տանտիրուհու որդին: Սա տեղեկանալով բանի էութեան մասին, դուրս հրեց իրլանդուհուն շէմքից դուրս, որտեղ նրան իսկոյն և եթ ճանկեց ոստիկանը: Դէպքը ինքնըստինքեան փոքրիկ ու ծիծաղաշարժ է, բայց տեսէք դուք թէ անգլիական ոստիկանը որպիսի ճշտութեամբ հասկանում է բնակարանի անձեռմխելիութեան կանոնները: Իսկապէս եթէ լաւ մտածենք այս դէպքը խոր նշանակութիւն ունի: Մեզնում ոստիկանութիւնը ներս է խուժում մասնաւոր անձանց բնակարանը երբ նա կամենում է: Կը հաւաքուեն մարդիկ իրանց ծանօթի տանը, իրանց գործի մասին խորհրդակցելու, կամ կըխմբուեն աղանդաւոր-գիւղացիք միասին աղօթելու ու աւետարան կարդալու,—արդէն ոստիկանութիւնը պատրաստ կանգնած է զրանը առաջ: Լաւ է դեռ եթէ բանը վերջանայ նրանով, որ հրամայեն ցրուել. կարող է պատահել որ խմբուածներին կը քաշեն ոստիկանատուն և դոցելով ներանց այնտեղ կը պահեն:

Մի ուրիշ կարեւոր իրաւունք, որով օգտւում է ամեն մի քաղաքացի այն երկրներում, որտեղ ժողովուրդը ինքն է սըրբալործել իր օրէնքները,—այդ տեղափոխութեան ազատութիւնն է: Ռուսաստանում—ամեն ինչ անցագիրն է: Ամենաաղնիւ մարդը, անցագիր չունենալու պատճառով, բանտ է ընկնում և նրան քշում են էտապով գողերի և մարդասպանների հետ միասին: Մէկը գալիս է մի որևէ քաղաք, նրան առանց անցագրի թոյլ չեն տալիս գիշերելու: Փոխում ես բնակարանդ, դարձեալ պէտք է անցագիր ոստիկանութեան ներկայացնելու: Առանց «վկայականի» անկարելի է դառնում գործ որոնել, առևտուր սկսել կամ դպրոց մտնել: Դեռ արտասահման անցնելու համար հարկաւոր է ուրիշ ձևի անցագիր, որը ձեռք է բերում մեծ գժուարութիւններից ու ծախքերից յետոյ: Անգլիայում պէտք չէ բոլորովին անցագիր ունենալ: Այնտեղ մարդիկ ծընւում են, մտնում դպրոց, առևտուր անում, ճանապարհորդում

ամբողջ երկրում և մինչև մահը իսկ չգիտեն թէ ի՞նչ է անցագիրը: Անգլիացին այս վկայականի հետ ծանոթանում է միայն այն ժամանակ, երբ պէտք է գնալ Ռուսաստան կամ Թիւրքիա: Անգլիայի հիւրանոցներում ոչ թէ միայն անցագիր չեն հարցնում եկուորներէից, այլ նոյն իսկ մինչև վերջն էլ չգիտեն նրանց անուն ազգանունները: Որովհետև այդտեղ գոյութիւն չունի այն մի շարք ոճրագործութիւնները, որոնք սերտ կապ ունեն անցագրի հետ: Օրինական անցագիր կամ ուրիշի անցագրով ապրելը և այլն: Շնորհիւ անցագրի բացակայութեան, ոստիկանութիւնը հնարաւորութիւն չունի խառնուել քաղաքացիների մասնաւոր կեանքի մէջ: Ազգաբնակութիւնը ազատ է միանգամայն ոստիկանական կամայականութիւններից որը անխուսափելի է անցագրի գոյութեան ժամանակ: Բացի դրանից, բաւականաչափ կրճատւում է նաև զիւանատների գրազրութեան գործը: Վերցնենք օրինակ անցագրների «վաւերացումը»: Միայն Պետերբուրգում իւրաքանչիւր տարի վաւերացնում են մօտաւորապէս երկու միլիոն անցագիր: Եթէ իւրաքանչիւր անցագրի վաւերացումը հաշուենք 10 րոպէ, կը ստանաքն մօտաւորապէս 333333 աշխատանքի ժամեր: Հետաքրքիրն այն է որ չնայած Անգլիայում գոյութիւն չունի անցագիրը և տեղափոխութեան կատարեալ ազատութիւն է,—երևան չհանած ծանր ոճրագործութիւնների թիւը քիչ են քան մեզանում: Այս ցոյց է տալիս որ անցագրի գոյութիւնը լայն ասպարէզ է միայն ոստիկանական կամայականութիւնների համար, և որի գոյութիւնը ճնշում է միայն ազնիւ ու խաղաղ մարդկանց և ոչ գողերին ու աւազակներին:

Այն երկրներում որտեղ ժողովուրդը ինքն է սրբագործում իր օրէնքները, մարդիկ ազատ ու հաւասար են, և ազատ իրաւունքների տէր ազօթելու այնպէս, ինչպէս իր կամքն է, ազատ արտայայտելու իրենց մտքերը մամուլի ու խօսքի միջոցով, կամ ընդհանուր դործերի մասին համախմբուելու մասին ազատ խորհրդակցելու: Այս կոչւում է խղճի, մամուլի, խօսքի և համախմբումների ազատութիւն: Այս բոլորը մանրամաս խոսուած է շատ ուրիշ գրքերում: Բայց առայժմ այստեղ ես կասեմ հետևեալը: Անգլիայում իւրաքանչիւր քաղաքացի, երբ նա որևէ խնդրի մասին խորհելով հասնում է իր տեսակէտից ճշմարիտ, որոշ եզրակացութեան, նա ոչ թէ իր իրաւունքը, այլ իր պարտականութիւնն է համարում, յարմար պատեհից օգտուելու և իր եզրակացութեան մասին հրապարակով խօսակցելու, կամ իր մտքերը բաժանելու ուրիշների հետ: Ես թոյլ եմ տալիս ինձ քաղուածքներ անելու, իմ Անգլիայի մասին

զրուածքից: «Ամենահետաքրքիրը Լճուղանում, եթէ ճանապարհորդը կամենում է տեսնել, թող ուղևորուի կիրակի օրերը Հայդ Պարկ, դէպի մարմարեայ կամարաշարքը: Ամեն մէկ եղանակի, լինի անձրեային, ամպալից կամ ամառուայ տօթին, ցերեկուայ ժամը 3-ից սկսած, ճանապարհորդը կը գտնէ այնտեղ ահագին բազմութիւն, հաւաքուած հետորներին լսելու: Այդ բազմութեան մէջ ոմանք կանգնած դրօշակի տակ կաղմել են իրենց շուրջը օրինաւոր լսարան: Ոմանք էլ բարձրացած կամարների վրայ խօսում են լոկ «դատարկ տարածութեան» մէջ: Թէև մ. ջրջիններիս լսողներ չկայ, այնուամենայնիւ ճառախօսները դրանով չեն վրդովւում: Նրանք խօսում են շարունակ: Ահա կանգ առաւ մի անցորդ, նրա յետից միւսը և այսպէս շուտով հետորի շուրջը կազմւում է մի բազմութիւն: Նրանք լսում են ուշադրութեամբ: Երբեմն էլ որեւիցէ մէկը իր նկատողութիւնն է անում ճառախօսին: Իհարկէ եթէ ճառախօսը խօսում վայր ի վերոյ ու չհամոզուած, նրան բոլորովին չեն լսում: Երբեմն ճառախօսի խօսքերը հետաքրքրութիւն է յարուցանում, այն ժամանակ լսողները բաժանւում են տասնեակ խմբերի, այս խմբակների իւրաքանչիւրի մէջ ճարւում է անպատճառ մի «գրոց մարդ», որը կամաւոր վերցրել է իր վրայ բացադրողի դերը: Ո՞վ ասէք չկայ այս բազմութեան մէջ: Ահա բանուորը կիրակնօրեայ շորերը հագին, կարմիր բաճկոնով, զինուորը ճիպոտը ձեռին, (Անգլիայում զինուորներին ու ոստիկաններին արգելւում է զէնք կրել փողոցում): Ահա նաւաստին ձեռք-ձեռքի տուած իր հոգու հատորի հետ, դորձակատարը փաղփաղուն կոլոր գտակով և այլն: Աւելի հետաքրքիրն են հետորները: Մէկը ինչ որ թուանշաններ ձեռին դատապարտում է մինիստրներին, պարլամենտը մտցրած վերջին օրէնքի համար, մի ուրիշը բացատրում է Յովհաննու «Յայտնութեան» մութ կողմերը և բացատրում իր աղանդի վարդապետութիւնը, մի այլը համոզում է մարդկանց զըզջալ, ապաշխարել, վասն զի ահաւոր դատաստանը մօտ է, իսկ այս քարոզչի մօտ կանգնած մի ուրիշ հետոր հերքում է բոլոր դաւանանքները: Մի քիչ հեռու ծառի մօտ, կարմիր դրօշակի տակ կանգնած խօսում է անիշխանականը կամ սօցիալ-դեմօկրատը, մի քանի քայլ այն կողմը փառաբանւում է իմպերիալիզմը (աշխարհակալական քաղաքականութիւն), իսկ մի քիչ հեռու դատապարտում են կայսերականիշխանութիւնը և ապացուցում որ առանց դրան աւելի լաւ կը լինի:

Ճառախօսներից ոմանք գալիս են սեփական նուազախըմբով: Ոստիկանը անտարբեր կանգնած է մի կողմը, և նրա

գործը չէ թէ ի՞նչ են խօսում հոգևորները: Օրէնքը արգելում է նրան խառնուելու: Իր իրաւունքները գիտակցող ժողովուրդը ինքն է պաշտպանում կարգը և ոստիկանը միայն հսկում է որ բազմութեան մէջ որևիցէ մէկը չմտնէ մի ուրիշի գրպանը: Ահա թէ ի՞նչ է նշանակում խօսքի ազատութիւն: Երբ անգլիացիները անհրաժեշտ են գտնում որևիցէ խնդրի մասին միասին խորհելու, նրանք միտինգ են կազմում միեւնոյն Հայդ-Պարկում կամ որևիցէ այլ դահլիճում: Ոստիկանութիւնը իրաւունք չունի մուտք գործելու դռնփակ ժողովը: Եւ ինչի մասին էլ ճառախօսները խօսէին, հաւատի, սօցիալիզմի, կամ երկրի հիմնական օրէնքները փոփոխելու մասին,—միեւնոյն է ոստիկանութիւնը չի համարձակուի մէջ խառնուելու:

Անհատի իրաւունքների շարքին է պատկանում նաև մասնաւոր գրութիւնների անձեռմխելիութիւնը: Մեզանում նամակները յաջախ ստացւում են բացուած ու նորից կնքած: Երբեմն շատ նամակներ բոլորովին անյայտանում են: Յետոյ զուրս է գալիս որ այդ նամակները գրաւել ու կարգացել են և բովանդակութիւնից օգտուել նրա ուղարկողի կամ ստանդի դէմ: Մեզանում այն աստիճան հաւատ չեն ընծայում փոստին, որ քիչ թէ շատ կարելոր նշանակութիւն ունեցող նամակը, անպատճառ ապահովագրում են: Բացւում են ի հարկէ և ապահովագրուած նամակները, բայց այնուամենայնիւ կարելի է երաշխաւորել որ դրանք տեղ կը հասնեն: Մասնաւոր մարդկանց գրութիւնների անձեռմխելիութիւնը այն աստիճանի չէ յարգուած մեզանում, որ միշտ և ամեն տեղ, փոքրիկ քաղաքներում և գիւղերում «հասարակ» մարդկանց հասցէին ուղարկած նամակները բացւում են լոկ «հետաքրքրութիւնից» և նրա բովանդակութիւնը հիւրասիրում իրենց բարեկամ ծանօթներին: Ստորին պաշտօնեաները տեսնելով իշխանութեան այդպիսի թեթեալիւրտ վերաբերմունքը դէպի ուրիշի նամակները, իրենք էլ յափշտակում են ծրարներ, մէջը փող որոնելու կամ նոյն իսկ մարկանքից օգտուելու նպատակով: Եւ որևէ արիւն արցունքով գրուած նամակը, որ երբմէ կեանքի խնդիրներ է վճռում, անյայտանում է որևէ եօթը կոպէկի համար: Այդ չենք տեսնում մենք այն երկրներում ուր խակապէս դոյութիւն ունի գրութիւնների անձեռմխելիութիւնը: Օրինակ Անգլիայում անհատի մասնաւոր գրութիւնները նոյնպիսի սրբութիւն է կազմում ինչպէս և նրա բնակարանը: Դրա շնորհիւ ոչ թէ միայն կարելոր նամակները, այլ նոյն իսկ դրամ ու չեկեր Անգլիայում ուղարկում են հասարակ նամակի մէջ: Ոչ ոք չի կարող բացել մասնաւոր մարդկանց գրութիւնները, եթէ երևան

հանուեց որ փոստատանը բացուել ու կարգացուել է որեիցէ մէկի մի նամակը, այդ դէպքում պարլամենտի պահանջով պաշտօնանկ կը լինի մինիստրը, իսկ պոստապետը կենթարկուի դատի, որովհետեւ ոչ ոք իրաւունք չունի ապորինի գործողութիւններ կատարելու:

III

Մինք տեսանք որ մարդկային իրաւունքներ բառի տակ հասկացուած է կամայականօրէն կատարուող ձերբակալումներից, արսորանքից, ու խուզարկութիւնից ապահով լինելը, յետոյ տեղափոխութեան, խղճի, խօսքի, մամուլի, համախումբումների ազատութիւնը և մասնաւոր գրութիւնների անձեմբիսելիութիւնը: Կայ մի այլ իրաւունք ևս, որը նոյնպէս պատկանում է մարդկային իրաւունքների շարքին: Այդ իրաւունքը ահագին նշանակութիւն կունենար Ռուսաստանում: Արեւմտեան Եւրոպայում միանգամայն անհասկանալի է որ կարող է խօսք լինել այդ տեսակ իրաւունքը պաշտպանելու դէպքում: Մօսքս ուս իշխանութեան կոպտութիւններից, ծեծից ու էկզեկուցիայից Ռուսաստանի ժողովուրդը փրկելու մասին է: Անգլիայի առաջին մինիստրը, որի ձեռքին է գտնուում ամբողջ երկրի ղեկը, մեծ ստորութիւն կը համարէր իրեն համար, հպատակի կամ որեւէ բանուորի հետ խոսակցելուց թոյլ տալ իրեն մի որեւէ կոպտութիւն: Անգլիայում քաղաքավարութիւնը, — այդ «Չէնտլէմենի» այսինքն դաստիարակուած ու կարգին մարդու առանձնայատուկ նշանն է: Երբ առաջին մինիստրը ընդունում է իր ժողովուրդի անհատական կարգապահութիւնների ներկայացուցիչներին, նա մեծամասնաբար չէ յորջորջում ներանց «տղէրը» անունով, այլ խօսում է ինչպէս հաւասարը հաւասարի հետ: Դէպի ներկայացուցիչների գլխաւորը առաջին մինիստրը դառնում է «միստեր Ջօնս» կամ «միստեր Սմիս» բառով: Եւ բանուորների ներկայացուցիչը իրաւ կողմից առաջին մինիստրին ասում է ոչ թէ «ձեր գերագահութիւն», այլ լոկ՝ «միստեր» Բալֆօր կամ «սէռ»: Անգլիային չէ ընդունում որ որեիցէ մէկը «գերագահ» է» հասարակ քաղաքացուց, ներանք չեն սիրում իշխանաւոր, commander բառը, որը նրանց կարծիքով պարունակում է իր մէջ անհաւասարութեան հասկացողութիւնը:

Անգլիացուն մեծ խնդութիւն է պատճառում հրը նրանք լսում են, որ Ռուսաստանում իւրաքանչիւր ստորին պաշտօնեայ «գերագահութիւն» կամ «մեծապատուութիւն» է: Անգլիացու

կարծիրով ով ի՞նչ տեսակ ծնունդ կամ ծագում ունի, դրանով կարող են հետաքրքրուել մանկաբարձուհիները: Համեմատեցէք այժմ անգլիացու այս պարզութիւնը մերին հետ:

Ռուս իշխանաւորների գէպի իրանց ստորագրեալները ունեցած ծայրայեղ կոպտութիւնները, շմեցրել էլ անգլիացի Ֆլետչերին գեռ երեք հարիւր տարի սրանից առաջ երբ նա այցելել էր Ռուսաստանը:

«Ինչպէս իրանց ստորագրեալների վերաբերմամբ ռուս պաշտօնեաները ու իշխանաւորները կոպիտ են,—ասում է Ֆլետչերը,—այնպէս էլ նրանք անմարդավայել վերաբերմունք են ցոյց տալիս թէ գէպի իրանցից աւելի ստորին պաշտօնեաները և թէ միմիանց հետ»: Իժրագագար երեք դար առաջ Ֆլետչերի ասածները մինչև այսօր էլ գոյութիւն ունի:

60 տարի առաջ Գոգօլը, արդէն համարեա խելառ վիճակում, ուսուցանում էր կալուածատէրերին, որ գիւղացուն չպէտք է ծեծել, իսկ հայհոյել—չառ օգտակար է: «Մի իսկիւր գիւղացուն, ասում էր Գոգօլը,—նրա քիթ ու պոռնոգ ջարդելը մեծ արուեստ է, այդ կարող է անել և ոստիկանը և նոյն իսկ տանուտէրը: Գիւղացին այնքան է ընտելացել դրան, որ ծեծուելուց նա միայն թեթև քորում է իր վզակոթը... Լաւ հայհոյիր նրան հասարակութեան առջև,—այդ նրա համար աւելի օգտակար կը լինի քան վզակոթին տալը կամ չափալախը: Կպցրու նրան ամենավատ բառը, տուր նրան մի այնպիսի ածական, որ ուս մարդը երբէք չէր ցանկանալ լինել:»

Արդէն վաղուց ճորտութիւնը ոչնչացրած է մեղանում, բայց մինչև այժմ էլ գիւղացին ազատ չէ ոչ միայն հայհոյանքներից այլ նոյն իսկ քիթ ու պոռնոգ ջարդուելուց:

10 տարի առաջ Օդեսսայի քաղաքապետն էր Ջ. Նա կարծես ուրիշ ուսական խոսք չգիտէր, բացի այն կեղտոտ, կոպիտ ու սարսափելի հայհոյանքներից, որը չի դռնուի երբէք ոչ մի երոսական լեզուների մէջ: Այդպիսի հայհոյանքներով նա յարձակում էր մեծի, փոքրի, կանանց և տղամարդկանց վրայ: Եւ այս բոլորը համարւում էր սովորական կարգ կանոն, որովհետև մեղանում ուր մարդկային իրաւունքները չեն ճանաչւում, «իշխանաւորը իր պարտականութիւնն է համարում լինել կոպիտ իւրաքանչիւր հպատակի հետ: Ի հարկէ Ջ. Բացառութիւն չէ կազմում: Իւրաքանչիւր տանուտէր կամ ոստիկան, գիւղացիներին դիմելուց, իր ասելիքը նախ համեմտում է առատ յիշոցներով, որոնց և հետևում է ապտակը: Ծեծէց հառաչում է ամբողջ Ռուսիան: Ծեծում են փողո-

ցում, ոստիկանատանը, գիւղերում, բուռնցի են դիմում ոչ թէ միայն լուռ ու մունջ գիւղացու հետ, այլ Ռուսաստանի ամբողջ ծայրերում և ամենքի հետ, ինչպէս վկայում են այդ լրագրական մի շարք տեղեկութիւնները: Չպէտք է մոռանալ նաև, որ դեռ բոլորը չէ յիշատակում լրագրներում: Այդ նկատելի է միայն սովորական ժամանակները, իսկ որևէ իցէ յուզմունքի ժամանակ բուռնցքը գործադրում է ամենալայն չափով: Ես դեռ չեմ խօսում այն բոլոր սոսկալի դէպքերի մասին, երբ ուսաց բաղաճների փողոցները վերածում են պատերազմի դաշտի, կամ երբ ուսն ժողովրդի դիմաց հանում են ռուսաց թնդանօթները: Ամեն մէկ ժողովրդական շարժման «խաղաղացումն» մեզանում սերտ յերկրում է ջարթի հետ: Ծեծում են փողոցում, ոստիկանատանը ու բանակում: Իսկ գիւղօրայքում շարժումների դէպքերում լինում են սոսկալի պատկերներ, որը այնպէս ուժգին պատկերացրել է Լ. Ն. Տօլստոյը: Մեծ դրողը պատմում է թէ ինչպէս Տուլսկի նահանգում կալուածատէրը կամեցել է խել գիւղացիների սեփականութիւնը, և թէ ինչպէս գիւղացիները դիմադրել են նրան: Կալուածատէրը գանգատում է դեմակի նաշալնիկին, որը ապօրինի կերպով գործը վճում է յօգուտ կալուածատէրին: Երբ կալուածատէրը բանուորներ է ուղարկում կատարելու այդ վճիռը, նրանց դէմ գիւղացիները ուղարկում են կռնանց: Կալուածատէրը այս անգամ գանգատում է նահանգապետին, որը հրամայում է ոստիկանապետին այդ կռնանց մէկ-մէկ սառցարան նստացնել: Գիւղացիները պաշտպանում ու ձեռից չեն տալիս իրանց կռնանց ու մայրերին, և ծեծելով հեռացնում են ոստիկաններին:

Դուրս է գալիս նոր ռճրագործութիւն,—գիմազրութիւն իշխանութեան դէմ: Եւ ահա գիւղն է գալիս նահանգապետը զօրքերով: Բերում են ձիադուներ և դնում մէկ նստարան:

«Երբ ամեն ինչ պատրաստ էր,—գրում է Լ. Ն. Տօլստոյը,—իշխանաւորը հրամայեց առաջ գալ այն տասնեկերկու մարդկանցից մէկին, որոնց մատնացոյց էր արել կալուածատէրը, իրեն ամենից մեղաւորները: Առաջինը, որ դուրս եկաւ, այդ հասարակութիւնից յարգուած մի ընտանիքի քառասունամեայ հայր էր, որը ժողովրդական շահերի ամենահռանգուն պաշտպանը լինելով, մեծ համակրութիւն էր վայելում հասարակութիւնից: Նրան քաշեցին նստարանի մօտ և մերկացնելով հրամայեցին պառկել: Գիւղացին փորձեց թողութիւն հայցել, բայց նկատելով որ այդ անօգուտ է, խաչ հանեց երեսը ու պառկեց: Երկու ոստիկան շտապեցին պահել նրան... միւսնե-

ըը թքելով ավել մէջ ճօճեցին ճիւղտոնները և գանահարութիւնը սկսուեց: Սաիայն երեսաց որ նստարանը շատ նեղ է և դըժուար է պահել նրա վրայ կծկծուած տանջուողին: Այն ժամանակ նահանգապետը հրամայեց բերել մի նստարան ևս, և գնել այդ մէկին կից: Մարդիկ ձեռները պատւի նշան բռնած և «լսում եմ ձերգ պերազանցութիւն» ասելով, շտապ ու խոհարհ կատարում էին հրամանները, մինչդեռ կիսամերկ ու դաւլացած տանջուող գիւղացին, յօնքերը կիտած, աչքերը յառել էր գետնին, ու ծնօտները պողպանելով և ոտերը մերկ սալասում էր: Սարքեցին միւս նստարանը և գիւղացուն պառկացնելով նորից սկսեցին հարուածել: Նրա մէջքը, թաթերը ու կողերը գնալով աւելի ու աւելի էին ծածկւում կարմիր արիւնալից շերտերով: Եւ իւրաքանչիւր հարուածից յետոյ լսում էր խուլ հառաչանք, որը չէր կարողանում ծածկել կեղեքուող գիւղացին: Շուրջը բոլորուած ամբոխի միջից լսում էր նրա և այն բոլորի որոնց քաշել էին այստեղ պատժելու, կանանց, մայրերի ու երեխաների հեծկլտանքը...

Նահանգապետը... մատերը մէկ-մէկ, համարում էր հարուածները և ծիւղում անդադար... Յիսուն հարուածից յետոյ գիւղացին դադարեց շարժուելուց ու ձայն հանելուց... Եկաւ բժիշկը, շօշափեց գիւղացու երակները, ականջ դրեց կրծքին, և իշխանութեան ներկայացուցչին զեկուցեց, որ դատապարտեալը կորցրել է գիտակցութիւնը, և որ բժշկական տեսակէտից, հարուածների շարունակումը վտանգ է սպառնում գիւղացու կեանքին:

Հարուածները շարունակուեց մինչև 70-ը, որովհետեւ ինչ-ինչ պատճառով նահանգապետը հարկաւոր համարեց լրացնել այդ թիւը: Երբ 70-րդ հարուածը իջեցրին, նահանգապետը ասաց, «Բաւական է, հետեւեալին!» և գիտակցութիւնը կորցրած, մէջքը, ուռած ու այլանդակուած գիւղացուն բարձրացնելով նստարանից տարան, և քաշեցին դէպի նստարանը միւսին: Ամբոխի լաց ու հեծկլտոցը ուժեղացաւ... և այդպէս գանահարեցին երկորդին, երրորդին, չորրորդին, բոլորին,—իւրաքանչիւրին 70-ական հարուած տալով:

Կանանց լաց ու հեծկլտանքը գնալով աւելի ուժգին ու սրտաճմրիկ էին դառնում, և տղամարդկանց դէմքերը աւելի թախծալի: Բայց դօրքով շրջապատուած էր և տանջանքը չըդադրեց մինչև որ գործը կատարուած չէր լիովին այն չափով, ինչ չափով որ անհրաժեշտ էր գտնում սղորմելի ու կիսահարուած նահանգապետի քմահաճոյքը»:

Երբ Տոլստոյի այս գրքոյկից քաղուածքներ էինք անում

մենք ու թարգմանում անգլիերէին, գիւղացիներէ կրած տան-
ջանքի սոսկալի պատկերները, ցնցող տպաւորութիւն էին թող-
նում անգլիացիներէ վրայ: Այս քաղաածքը արտատպել էին
լրագիրները, քահանաները քարոզի ժամանակ կարդում էին
եկեղեցիներում, և այդ մասին հռետորները խօսում էին մի-
տինգներում: Այդ մի քանի տողերը պարզ դադափար էր տա-
լիս անգլիացիներին թէ որ աստիճան մարդկանց իրաւունք-
ները խախտուած են Ռուսաստանում: «Ինչպէս է թոյլ դրւում
որ քաղաքացիական գործը քննեն կառավարութեան ներկա-
յացուցիչները և ոչ թէ երդուեալ ատենականների դատարանը,
—հարցնում էին անգլիացիք,—ի՞նչ իրաւունքով է ազմինիստ-
րացիայի ներկայացուցիչը կարդադրութիւն անում մարդկանց
ձերբակալելու առանց դատի, ի՞նչպէս է միենոյն ազմինիստ-
րացիայի ներկայացուցիչը այդ աստիճանի սարսափելի ու
խայտառակ պատժելու վճիռներ արձակում ու կատարում իր
ձեռքով, պատիժներ որոնք անթոյլատրելի են ոչ թէ մարդ-
կանց այլ նոյն իսկ անասունների վերաբերմամբ:

Անգլիական տեսակէտից, էկզեկուցեան անհաւատալի, չլս-
ուած կամայականութիւն է անհատի իրաւունքներին նկատմամբ
կրթուած հասարակութեան մէջ, դրա դէմ մեղանշողը ենթար-
կուելու է ամենաժանր պատժին:

Ինձ կասեն որ, մարմնական պատիժը ներկայումս վե-
րացուած է Ռուսաստանում: Յիսուն տարի առաջ Գերցենը
գրում էր, «Մեզանում աղնուականներն են միայն ազատ մնա-
ցել մարմնական պատժից... մինչև որ չճիպոտհարեն»:

Մարմնական պատիժը վերացել է միայն թղթի վրայ, իսկ
քիթ ու պոռնոգ ջարդելը ու խարազանելը շարունակւում են
այնուամենայնիւ, և կը շարունակուեն մինչև որ անձի անձեռ-
մխելիութիւնը ճշտօրէն ապահովուած չլինի օրէնքով: *)

Կ. Աստուածատուրեան

*) Այդ բոլոր սոսկալի բռնութիւններից և դեղծումներից չկայ մէկը որ կա-
տարած չլինէին մեր Հ. Յ. Դաշնակցութեան ենիչերիները: Մեր խուժանամիտ
հասարակութիւնը և խուժանապետ «ինտելիգենտները» մեր իրականու-
թեան մէջ կը գտնեն աւելի վատթար բռնութիւններ կատարած հայ ժո-
ղովրդի վրայ այդ «կազմակերպութեան» ամեն տեսակի աղենտների կող-
մից. տարբերութիւնը այն է որ այդ «սիբիրիչները» իրանց օրգաններում
փրփուրը բերին դատափետում են ուսւ բիւրօկրատիական բեժիմին հէնց
այն գեղծումների եւ բռնութիւնների մէջ, որոնք մեր «ազգային-յեզափոխա-
կան կառավարութեան» էութիւնն է կազմում: Այդ երկդիմի տարաբա-
նութիւնն է մեր ազգային դեմագոգիայի ամենազարչելի կողմը:

Ծ. խմբ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳՆԻԱՅԻՅ

Բ.

Ճէյմս Բրայս

(The Right Hon. James Bryce, O.M., M.P., D.C.L. LL.D.
F.R.S.)

Ճէյմս Բրայս այն հազուագիւտ հայասէր անգլիացիներէն է, որուն սնունդ ամէնէ յաճախակի յիշուած է հայ մամուլի և ժողովներու մէջ և որու կեանքին ու գործունէութեան՝ այդ հարցին վերաբերմամբ քիչեր միայն բաւականաչափ ծանօթ են:

Այսուհանդերձ, նպատակէս դուրս է բոլորովին կենսագրական ընդարձակ մանրամասնութեանց մէջ մտնել^{*}): Հեռու եմ հայ ընթերցողները չը հետաքրքրող դէպքեր քրքրելէ: Առաւելութիւն պիտի տամ հոս գլխաւորապէս հատուածներու իր յօդուածներէն, գրքերէն ու ճառերէն, որոնք աւելի պերճօրէն կրնան խօսիլ հեղինակի մասին և աւելի բացայայտօրէն կը պարզեն գրութիւնը:

Բրայս, Խօթանաստուն ամեայ ալեհեր ծերունի մը, ունեցած է խիստ բազմօգուտ և ժրաջան կեանք մը, իր սկզբնաւու-

^{*}) Տպում ենք այս յօդուածը որ հափազանց շահեկան է և այն կողմից որ ասպացուցում է այն ճշմարտութիւնը թէ ամենաազատամիտ և հայասէր օտարազգին անդամ ճշգրիտ գաղափար հունենալով մեր հայերիս իրական պայմանների մասին կարող էր միայն ութնալիական ծրագրներ շարադրել: Չարաչար սխալում են և գիտնականները, երբ փաստերը, իրականութիւնը մի կողմ թողած, վայրիվերոյ, մակերևոյթային տեղեկութիւնների հիման վրայ են «ծրագրներ» յօրինում...: «Եթէ խաչը իմն է—գօրութիւնը ես գիտեմ» ասելու է ամեն մի լրջմիտ և ոչ շովինիստ հայ, կարգալով մեր ազգին վերագրուած գովասանքները: Անցեալում մենք ծանօթացանք Ռուզվիլի մտածողութեան հետ. այժմ թող կարդան մերոնք և Ջէյմս Բրայսի մտածողութիւնները և ձեռք վերցնեն այն ցնորքներից, որոնք ձեռնտու են միայն Սուլթանին և Դաշնակցական—Հնչակեան մի քանի պրօվօկատօր շէֆերին, որոնք միայն օգտուում են... Ոչինչ անձամբ չվտանգելով:

Ծ. Խմբ.

րութենէն ի վեր ըլլալով փայլուն շրջան մը յանդուգն պայքարի և կորովի գործունէութեան:

Քիչերու միայն շուայրուած է այն յարգանքն ու պատկանանքը որ տածուած է ու կը տածուի տակաւին իրեն՝ միջազգային հիացող համակիրներու ստուար բանակէ մը, իր համբաւն ու կարողութիւնը տարածուած ըլլալով ամենուրեք՝ շնորհիւ իր մտաւորական բարձր արժանիքին և առաւելարար, իր մարդասիրական վսեմ սկզբունքներուն, որոնց համար մզած է սուր ճակատամարտ:

Բրայս ծնած է 1838 թ. մայիսին, Պէլֆապ (Իրլանդիա), Սկովտական ծնողքէ և իր սկզբնական ուսումը առած նախ Կլադկոյի (Սկովտիա) բարձրագոյն Վարժարանը և ապա նոյն քաղաքի Համալսարանը, ուրիչ յաջողապէս անցած Թրինիթի Համալսարանը՝ Օքսֆորտ (Անգլիա):

Այս վերջնոյն մէջ Բրայս ստացած է առաջնագոյն մրցանակները յունարէն բանաստեղծութեան ու արձակի, ինչպէս նաև լատիներէն պատմորձերու և այլնի համար:

1867-ին կանչուեցաւ Պարր և 1870-ին կարգուեցաւ Քաղաքական Օրինաց (Civil Law) պրոֆէսոր Օքսֆորտի Համալսարանը:

Հասնելով այս խաւին, Բրայսի մէջ արթնացաւ քաղաքական կեանքի սնափառութիւնը և 1874-ին, առաջին անգամը ըլլալով, ջանաց պարլամենտ մտնել՝ թեկնածու գրուելով Ուրբի, Թէպէտե անյաջող հետեանքով:

Այս առաջին պարտութիւնը չթուլացուց Բրայսի եռանդը և, սպասելով նոր առիթին, միևնոյն ժամանակ զբաղիլ սկսաւ օրէնսդիտական գործով, որու մէջ ցոյց տուաւ բացառիկ սրատեսութիւն և եզական ընդունակութիւն բազմակնճիւ խնդիրներու շօշափման մէջ:

1880-ին ներկայացաւ երկրորդ պատեհութիւնը Պարլամենտ մտնելու և այս անգամ Բրայսի ճիգերը պսակուեցան յաջողութեամբ և իջնելով քաղաքական կեանքի եռուզեռ ու զըժուարին սոսպարէզը, Ազատական Դրօշին տակ, մինչև վերջ ալ մնաց հոն, միշտ աստիճանական յառաջադիմութեան շաւղին մէջ:

Բրայսի քաղաքական կեանքի մէջ ծանօթացման զարկ տուող առաջնակարգ դէպքերէն մէկն էր իր Մօտաւոր Արևելք ճանարհորդութիւնը՝ որ սկսաւ 1876-ին, շրջելով Կովկաս, Սև Ծովու ափերը և Օթոման կայսրութեան զանազան մասերը: Մա մօտէն ծանօթացուց զինքը թրքական զարհուրելի ուժիմին ներքև հալածուող ժողովուրդներու վիճակին և յօդուածներու

շարք մը տեղացուց Լօնդօնի մի քանի նշանաւոր հանգէսներուն, ուր կը պատկերացուէին իր տպաւորութիւնները ժողովրդի կեանքէն, անոնց կրած զրկանքներուն նկարագրութիւնը սրտաշարժ ու փոթորիկող գրչով, ինչպէս նաև կարգ մը թերագրանքներ որպէս դարման:

Վերադառնալով Անգլիա և մտնելով Պարլամենտ, այս խնդրին լուծման վերաբերմամբ յաճախակի հարց դնողներէն մէկն էր ինք, ու իր ատենաբանութիւնները խոր յարգանքով կընդունուէին: Բրայս շուտով դարձաւ պատկառելի հեղինակութիւն մը Մօտաւոր Արևելքի վրայ: Մինչև 1876 իր համբաւը սկսեց անհասնել, իբրև գիտնական բառին լայն առումով: Նոյն պահուն ծագեցաւ պուլկարական հալածանքները թիւրք բռնապետութեան ներքև և հարկաւոր էր արթնցել եւրոպան:

Յիշեալ թուականին, երբ պատմական հսկայ միտինգը կը գումարուէր, ուր պիտի խօսէր Գլադստօն որպէս Պուլկարական դատի ջատակով, իր աջ կողմը ունէր բեմին վրայ Ճէյմս Բրայս, և Գլադստօրի նման անհատէ մը տածուած այսքան պատիւ ապարդիւն ղէպը մը չէր: Մեծ քաղաքագէտը նշմարած էր երիտասարդ Բրայսի մէջ քաղաքական բարձր ընդունակութիւն, կռուող հոգի և վսեմ սիրտ: Իր Արևելեան Հարցի վրայ ատենախօսութիւնները ունկրնդիւնները կելեքտրականացնէին և, ինչպէս առաջնակարգ հրապարակագիր մը կըսէ,— «ամբողջ 1879 շրջանին մարդկայնական դատի ուժեղ սիւններէն մէկն էր»:

Այս պահուն էր որ Բրայս, իր վերադարձին գրքի ձեով հրատարակեց, համակիրներու խնդրանքով, Օթօման կայսրութեան մէջ ճանապարհորդած ատեն գրած յօդուածները— «Արաբատ և Անդրկովկաս»—անունով, որուն պիտի անդրադառնանք քիչ վարը:

Մինչև այն օր զեռ ոչ մէկը այսքան անաչառ ու գունապեղ հատոր մը տուած էր այդ հարցը շօշափող: Ատով Բրայս արտայայտեց եզակի հեռատեսութիւն արտաքին քաղաքականութեան մէջ և սա ամէնէ աւելի գնահատուեցաւ Գլադստօնի կողմէ, որ 1886-ին կարգեց զայն ենթաքարտուղար Արտաքին Գործոց (Under-Secretary for Foreign Affairs):

Նոյն գործունեայ շրջանին էր որ նոյնպէս երևան եկաւ Գլադստօնի միտքը զրադող մեծագոյն հարցերէն մէկը—Իրլանդայի ինքնավար կառավարութեան (Home Rule) խնդիրը, որ ստեղծեց իր ղէմ թշնամիներու ստուար թիւ մը նոյն իր շարքերէն իսկ և հասարակաց միտքը ամբողջովին կեդրոնացուց ատոր վրայ: Բրայս, լայն միտք մը, անմիջապէս սրգեգրեց իր

մենտորին քաղաքականութիւնը և մոռանալով պահ մը իր իսկական պաշտօնը, դարձաւ անխոնջ պրօպագանդիստ մը իսկանտական Home Rule-ին,—առիթ մը որ բարձրացուց զինքը առաջին կարգի վիճողներու դասին:

Ճէյմս Բրայս չէր ու եղած ալ չէ երբէք ճարտասան հռետոր մը ինչպէս իր լիտըրը Գլադստօն, սակայն իր ճառերն ու ատենադրանութիւնները նկատուած են միշտ հասուն մաքի և ծանրախոհ դատողութեան արդիւնք և ատոր համար է որ ունկնդրուած է միշտ առանձին շահեկանութեամբ ու իր խորհուրդները յարգուած բացառիկ արժանիքով:

Իրլանդայի ինքնավար կառավարութեան ծրագիրը ոչ միայն անյաջող անցաւ, այլ և առաջ բերաւ Գլադստօնի կոստակցութեան նուաճումը, որով Ազատականութիւնը կրկին փոխադրուեցաւ ձախակողմը:

Սաղաղ ըլլալով ասպարէզը մի քիչ, Բրայս մէկուսացաւ ժամանակ մը՝ արտագրելու իր հեղինակութեանց գլուխգործոցը—«Ամերիկայի Հասարակապետութիւնը» (The American Commonwealth) անուն հատորը, որ մինչև օրս արժանացած է տասնեակ տպագրութեանց թէ՛ Անգլիա և թէ՛ Ամերիկա և ընդունուած ճշմարտութիւն մըն է բոլոր քննադատներու կողմէ թէ՛ այդ նիւթին վերաբերեալ աւելի ճշգրիտ, անկողմնակալ ու սրամիտ գործ մը արտագրուած չէ տակաւին և բուն այդ պատճառով է որ Ամերիկայի Հասարակապետութեան հարցով զբաղող ուսանողներու ուղեգիրքը հանգիստացած է այժմ և զրպրոցներու մէջ գնահատման առաջին տեղը գրաւած:

Համանման շրջանի մը գրած է նոյնպէս, թէև աւելի երիտասարդ հասակին, իր երկրորդ հսկայ աշխատութիւնը, «Հռոմէական Սրբազան Կայսրութիւնը» (The Holy Roman Empire), քանի մը հատորներէ բաղկացած, որ ամբողջ պատմութիւնն է հռոմէական վիթխարի կայսրութեան, իր փառքին ու անկումին, հեղինակը բնորոշող անկողմնակալ հոգիով մը պատմագրուած:

Երբ 1892-ին Ազատականութիւնը վերստին գործի գլուխ անցաւ, Բրայս պատրաստ էր նոր պատասխանատւութեանց ստանձնումին և եռանդուն դեր մը ունեցաւ Home Rule-ի երկրորդ Օրինագծի կազմումին մէջ:

Ատեն մը վերջ, (1895) երբ մինիստրութիւնը անցաւ Ռօզպլըրիի, Բրայս զահլիճին մէջ ստացաւ նախագահութեան պաշտօն Առևտրական Ժողովին (Board of Trade):

Իսկ այս քաղաքական պաշտօնավարութեան միջոցին չէ

դադրած նաև արտադրել է մի քանի աչքառու երկեր իրաւարանական և այլ հարցերու վերաբերմամբ:

Բրայս առհասարակ ճանչցուած էր իբրև պարլամենտի «ամենէ իմաստուն, բազմակողմանի ու կատարեալ անդամը»: Ներկայ նախարարապետը, Սըր Հէնրի Քէմբլը-Բէնըրմէն, որ վերջին Ազատական Դահլիճը կազմած պահուն զինքը Իրլանտայի առաջին քարտուղար կարգեց, խօսելով իր մասին, ըսած է:—«Բրայս եղած է ամեն տեղ, կարգացած է գրեթէ ամեն ինչ և կը ճանչնայ ամեն ոք», աւելացնելով որ իր ամենէ իմաստուն խրատուններէն մէկն էր ան և անոր խորհուրդները միշտ լուրջ ու ծանրակշիռ գտած:»

Սակայն, 1906-ի վերջաւորութեան, երբ Ամերիկայի նախկին բրիտանական հիւպատոսը հրաժարեցաւ պաշտօնէն, ամենէ յարմար և երկուստեք հաւասարապէս սիրուած ու ճանչցուած անհատը սեպուեցաւ Բրայս: Ռուզվելտ առանձին փափազ յայտնած էր այդ մասին՝ վստահեցնելով թէ Ամերիկայի հանրապետութիւնը շատ լաւ ծանօթ է իր անձնաւորութեան և մեծապէս կը յարգէ զինքը:

Ու այսպէս, Ճէյմս Բրայս այս պահուս կը գտնուի Վոշինգտոն իբրև հիւպատոս Մեծ Բրիտանիոյ ու իր այս պարլամենտական կեանքի վերջացումն է որ առիթ կուտայ մեզ անդրադառնալ իր անցեալ գործունէութեան վրայ հասարակութեան առաջ:

*
*
*

Ինչպէս ցոյց տուի այս անցողակի տեսութեան մէջ, Ճէյմս Բրայս հանդիսացած է միշտ ջերմ համակիր և պաշտպան ընկերական այն բոլոր շարժմանց որոնք ձգտած են մարդկային դանդաղածներու բարելաւութեան, բանուորական ժամերու նուազման ու իրենց ներկայ կացութեան բարեփոխման, ինչպէս նաև, ինչոր մեզի ամենէ աւելի կը շահագրգռէ հոս, հալածող ժողովուրդներու վիճակի բարուճման:

Երկար ուսումնասիրելով Մօտաւոր Արեւելի զրութիւնը, իր արտաքին գործունէութեան մէջ ամենէ աւելի զբաղած է այդ խնդրով և ատով ալ ինքզինքը հանրածանօթ դարձուցած: Թէպէտև առաքեալ մը խաղաղութեան և խորշող արիւնհեղութիւններէ, կայ անկիւն մը՝ ուր բնաւ չփարանիր սուր քաշել (ի պահանջել հարկին, երբ ուրիշ միջոցներ անոյժ են) այդ ալ Օթոման կայսրութիւնն է: Այս համոզումը տիրապետած է զինքը դեռ առաջին օրէն որ ոտք դրաւ հոն և նոյն համոզման վերայ անխտիր մնացած:

Նախ Պուլիպարիան էր, ապա Կրէտէ, ապա այլ սլաւոնեանցիներ և ի վերջոյ Հայաստանը:

Այս վերջնոյն մասին իր ունեցած կարծիքներուն ամենէ հաւատարիմ թարգմանն է իր «Արարատ և Անդրկովկաս» գիրքը, գրուած 1876-ի ճամբորդութեան միջոցին, երբ առաջին անգամը ըլլալով բարձրացաւ նաև Արարատայ գագաթը, որուն կարագրութիւնը կընէ խիստ շահեկան կերպով, և շարք մը կարևոր հանդէսներու մէջ լոյս տեսած յօդուածներ: Թէև այդ թուականէն ի վեր, պատահարներու անսահման արջրպետ մը, դրութիւնը կատարելապէս կերպարանափոխած, նկատողութեան արժանի է այն պարագան որ իր զետեղութիւններն ու դարմանները, ինչպէս նաև նախագուշակումները այլ և այլ հարցերու վերաբերմամբ՝ այսօր բացարձակ ճշմարտութեան են յանգած:

Դեռ այն օրէն իր հաստատ համոզումն է եղած որ Թիւրքիոյ այսպէս շարունակումը լինելով ապօրինի ու անհնար, նա պարտաւորուած է չքանալ, իր նեխած ռեժիմը քայքայուիլ, բայց թէ, հակառակ պարագային սոյն ղէպըը տեղի ունենայ, ի՞նչ պիտի ըլլայ Ասիական Թիւրքիոյ ապագան, որո՞ւ կողմէ պիտի յառաջանայ այդ և ո՞վ պիտի գերիշխանէ ու կառավարէ այդ լայնածաւալ երկիրը:

Բրայս հաւանական կը գտնէ երեք վախճան և կուզէ որ Մեծ Պետութիւնները աչքի առաջ ունենան:

ա. Նոր Մահմեդական պաւուր կամ արքայական տան մը բարձրացումը՝ նախորդը ջախջախելով:

բ. Թիւրքիոյ միացումը մէկ կամ մի քանի եւրոպական Պետութեանց և ի վերջոյ ձուլումը անոնց մէջ:

գ. Յայտնումը քրիստոնեայ ցեղի մը՝ իր մէջ մարմնացնելով քրիստոնեայ ամբողջութիւն կամ տէրութիւն մը:

Առաջին եզրակացութեան կուգայ Բրայս հիմնուելով պատմական ճշմարտութեանց վրայ, որով, ինչպէս կը տեսնուի, ամէն անգամ որ Մահմեդական մի ցեղ մօտեցած է անկումի, անոր յաջորդած է ուրիշը: Սակայն, այժմ փոխուած լինելով պայմանները, այդ հաւանականութեան տոկիւններն ևս կը գտնէ ամբողջովին անհետացած:

Երկրորդը, «թէև աւելի հաւանական, այլ նուազ բաղձալի», ինչպէս ինք կը գնէ, կրկին ի յայտ կը բերէ պատմութեան տուած օրինակներէն քաջալերուելով, անշուշտ ամէնէ պատրաստակամ աւարառուն համարելով Ռուսաստան՝ արգելք ու մրցում յառաջացնելով Անգլիոյ ղէմ: Բայց Բրայս չը հաւատար թէ Ռուսաստան կրնայ ունէլ զգալի օգուտ մատու-

ցանկի այդ երկրին, և եթէ նոյն իսկ յաջողի, Փոքր Ասիոյ մի քանի գաւառները իրեն կցելով, տիրապետող ոյժ մը ձեռք բերիլ Արեւելքի մէջ, առի կը նկատէ ինք բացարձակ դժբախտութիւն տիրապետող ցեղերուն, որովհետեւ չը կարծեր թէ Ռուսաստան «բաւականաչափ զարգացած է ու ազատամիտ ինքնին՝ ուրիշ ցեղեր կառավարելու և դաստիարակելու ընդունակ»:

Երրորդ կուգայ բարձրացումը քրիստոնեայ ցեղի մը Փոքր Ասիոյ մէջ, որ, շնորհիւ իր ընդունակութեանց, կարողանայ ստեղծել ոյժ մը և զարգանալով, շուրջը բոլորել զբացիները և ինքնուրոյն պատկանելի տէրութիւն (state) մը կազմել: Եւ, «միակ քրիստոնեայ ցեղը, կաւկասէ Բրայս, որ այսպիսի դրութեան խոստումը կուտայ, հայն է», ու կսկսի ընդարձակօրէն քննել հարցը: *)

Ինչպէս հետզհետէ պիտի տեսնենք, Բրայսի յոյսերը մեծ են հայութեան վերաբերմամբ և քիչ անգամ չէ որ կը պատահինք իր պարբերութեանց հայերը իբրեւ «մենէ գործունեայ և և եռանդուն ցեղը այդ մասերու», թէ «ուր որ երթան կը պահեն իրենց հաւատքը, իրենց մասնայատուկ դիմագծերը և իրենց հրաշալի ընդունակութիւնը», և այլն:

Հայաստան, կը վերլուծէ նա, իսկական երկրէ աւելի, ըլլալով լոկ աշխարհագրական արտայայտութիւն մը—անշուշտ իր ներկայ վիճակին մէջ՝ բաժնուած երեք տարրեր տէրութեանց միջև—կը կազմէ փոքրիկ գաւառ մը, ուր կը գտնուեն մօտաւորապէս 2 միլիօն հայ (այժմ թերեւ շատ աւելի նուազ), գրեթէ միեւնոյն քանակութեամբ մահմեդականներու հետ խառն և ըլլալով չափազանց հեռու եւրոպական տեսողութենէն, թըշուառութիւն ու կոտորածներ ամենէ աւելին են հոն: Ինչհետեւ Որովհետեւ թափառական ու աւաղակալարոյ քիւրտ ցեղեր, որոնք, քշուելով ծովեզերեայ երկիրներէն՝ ուր եւրոպական քօնսիւներ արգելք են իրենց շահատակութեանց, կը յարձակին այս խաղաղ, հանդարտաբարոյ ու զաշտային ժողովրդին վրայ, երբեմն անխափր քրիստոնեայի ու մահմեդականի, ու կսկսին կողոպուտ, աւեր, կոտորած, բոլորովին վստահ անպատիժ մնալու: Մահմեդականներու համար, յամենայն դէպս, կայ ճար ու դարման այս անդգամ յարձակումներէն ապահով մնալու, ըլլալով զինուած և ունենալով վստահութիւն կառավարական մի-

*) Ցնծաւ Հայաստան... որքան լաւատես է եղել մեր նկատմամբ մեծ Բրիտանիայի մեծ գաւառից հեռուից ճանաչելով մեզ: Ինչ պէտք է ասել, եթէ մեր երկրում մեր մէջ մի տարի էլ է պտտէր... Ծ. Խմբ.

ջամտութեան, մինչ հայերը կը տուժն անարգել, քանի որ կառավարիչներ ինքնին ջերմ համակիրներ և մինչև իսկ գրգռիչներ են ստէպ այս հրէշային արարքներուն:

Փրկումի մէկ միջոց միայն կը նախատեսէր հեղինակը Հայաստանի հայ համայնքին համար այս անտանելի կացութեան խուսափելու—գաղթում, գաղթում, որ կը շարունակուի անդադար, և որ երկրին վերջնական սպառումը պիտի նշանակէ, ինչպէս նաև ժողովրդին ցիրուցան սպառումը:

Այս էր Բրայսի համոզումը յիշեալ շրջանին ու այդ բոլորին հանդէպ կը դնէր մէկ դարման միայն Եւրոպայի ստաջ—անմիջական միջամտութիւն և փրկանք:

Ի՞նչ էր Անգլիոյ քաղաքականութիւնը: Բարեկաւել ենթակայ ցեղերու վիճակը և պատնէշ մը կանգնել Ռուսական յարձակման դէմ: Ինչո՞ւ յոյներու խնդիրը յառաջ մղած ատեն մոռնալ հայերը: Որովհետև անոնք աւելի հեռու կապրին, թէ ոչ, որովհետև նախորդները կը պատկանին պաւստական ցեղին:

Իրաւ է որ Հայաստանի վերաբերմամբ խնդիրը առաւել կնճռոտ ու դժուար է: Իրաւ է որ կան ծանրակշիռ առարկութիւններ, ինչպէս Փոքր Հայքի մէջ՝ որ իրական մասը կը կազմէ Հայաստանի, մահմեդականներու խառնուրդ ապրիլը հայոց հետ, որ, հակառակ իր մեծ թուին, հազիւ կրնայ անկախ հատուած մը կազմել. այսուհանդերձ, մեծահամբաւ հեղինակը հետեւեալ ձևով կը տարրալուծէ հարցը:—

Այն գաւառները որ մեծամասնաբար ենթակայ են քիւրտ աշխրեթներու հալածանքներուն, վերածել մէկ գլխաւոր նահանգի մը՝ շփման դնելով Սև Ծովու հետ՝ Կիրասոնի և Տրապիզոնի միջոցով և այսպէսով բաց պահել Անգլիական ու Ռուսական անմիջական ազդեցութեան: Կարգել Եւրոպական Տէրութիւններէն վաւերացուած կառավարիչ մը (հաւանականաբար Ֆրանսացի) և ջախջախելու համար քրդական նոր բնովորումները, կազմել տեղական միլիցիա մը մեծամասնաբար քրիստոնէայ ցեղերէ բաղկացած: Յառաջացնելով քրիստոնէայ ինքնավար կառավարութիւն մը, ազատ թողուլ գիւղերն ու գիւղաքաղաքները իրենց գործերը ինքնին որոշելու և իրենց առանձին զարգացման հետապնդելու: Անգամ մը որ գիւղացիին ու քաղաքացիին կեանքի ու գոյքի անձեռնմխելիութիւնը ապահովուած, երկրին բարգաւաճման հաւանականութիւնը անտարակուսելի է, և գաղթումի այն հսկայ հոսանքը որ դէպի դուրս կընթանար, պիտի յօժարաբար վերադառնայ և լայն քաղաքական կեանքի մեծագոյն յոյսերը իրականացնէ: Երա՞զ կամ անկարելի այսպիսի պարագայ մը: Օրինակ ունինք առջևնիս

Լիրանանը: Ու Բրայսը կը յարէ,—«Եթէ երբէք համանման բան մը չըլլուի Հայաստանի համար, և ամէնէ աւելի, եթէ չը դադարեցուն քրդական խժոժութիւնները հոն, հայ ժողովուրդը, որ 16 դարերու պատերազմներու և հալածանքի միջոցին կառնած է իր ազգութեան ու հաւատքին, պիտի անհետանայ երկրի երեսէն ու իր հայրենիքը ի վերջոյ կցուի Ռուսաստանի»:

Բրայս Հայաստանի կորուստին ու ժողովուրդի ձուլման մեծագոյն սպառնալիքներէն մէկը կը համարէ ռուսական հովանաւորութիւնը, և սա, զեռ 80-ական թուականներուն, երբ նա բարերար խնամակալի անունով կը ճանչցուէր ամենուրեք: Անհրաժեշտութիւնը կը շեշտէ պատնէշի մը անոր Ասիական Թիւրքիոյ վրայ յառաջխաղացման դէմ և յարմարագոյն կը տեսնէ սա յանձին ինքնավար հայ կառավարութեան մը:*) Որովհետեւ, կընդունի թէ ուր որ ընդհանուր քաղաքակիրթ աշխարհի շահերը դրուին մէկ մասնաւոր պետութեան մը քօնթրօլին ներքեւ, և ալ աւելի նուազարար, «կիսովի քաղաքակրթութեան և լոնապետան պետութեան մը (Ռուսաստանի) թոյլ տրուի երկարել իր տիրապետութիւնը ցեղերու և երկիրներու վրայ, որոնք կրնան ընդունակ ըլլալ տարրեր ու առանձին քաղաքակրթութեան և ի վերջոյ քաղաքական ազատութեան: Եթէ, կը շարունակէ Բրայս, Ռուսաստանի յառաջխաղացման սանձովը ցանկալի է Ասիայէն, հայազգութեան զարգացումը, ամենալաւ, և թերեւս միակ հաստատուն եղանակն է այդ բանին համար:»*)

Որքան ալ համակրանքի մեծ հոսանք մը կար այդ թուականներուն հայութեան կողմանէ դէպի Ռուսաստան, սրահայեաց քաղաքագէտին համար դժուար չէր գուշակել սուղագոյ դժգոհութիւնները:—«... Հայերը նախանձոտ են Ռուսաստանի վերաբերմամբ: Անոնք կը կասկածին իր ցանկութիւններուն վրայ՝ կու տալու այն պատկառելի եկեղեցին՝ որուն շուրջը կը դառնան իրենց (հայոց) հայրենասիրական յիշատակները և ոչնչացնելու իրենց վաղեմի ու զարգացած լեզուն՝ որ գրականութիւն ունէր ռուսական այրուէնը գտնուելէ դարեր առաջ: Իրենց ազգային յատկանիշները տարրեր են սլաւօնականէն ու թէպէտ և աստիճաններու կը բարձրանան ռուսական ծառայութեանց մէջ, երկու ցեղերու լուծման շատ քիչ նշան կայ: Հա-

*) Որպիսի միամտութեան և անպիտոթեան բէալ պայմանների:

Ծ. խմբ.

*) Ուրեմն դարձեալ հայութիւնը իբրեւ մի քաղաքական գործիք Անգլիայի մրցակից Ռուսաստանի դիմաց: Եւ զեռ թեթեամիտ ու խուժանամիտ մեր պօռոտախօսները ընդունակ են այդպիսի ապացոյցներով առաջ քշել հայկական հօտը դէպի սպանդանոց:

Ծ. խմբ.

յերը, ուրեմն, փրկուելով ներկայ թշուառական կացութենէն և քաջալերուելով անգլիական համակրանքէ, ամէն շարժառիթ ունին պահապան կանգնելու իրենց լեռնոտ ամրոցներուն մէջ սլաօնական գերիշխանութեան և Արևելիան Ուղղափառ եկեղեցիին դէմ: Իրենց (հայոց) ազդեցութիւնը, որ մեծ է***) արդէն Փոքր Ասիոյ մէջ, պիտի դառնայ հակառուսական, ազդեցութիւն մը և իրենց զոհ վիճակը խափանէ Ռուսաստանի միջամտութեան պատրուակները»:

Ուստի, նախաշիշուած երեք հաւանականութեանց լատգոյն ու ապահովագոյնը կը գտնէ Բրայս Ասիական Թիւրքիոյ բարելաւութեան համար՝ վերջինը, — սակեղումը քրիստոնեայ յառաջագէմ ցեղի մը և վերջնական հաստատումը Քրիստոնեայ Խնքնավար Տէրութեան մը: Բայց ի՞նչ համոզմամբ ու վրատահութիւնով, որպէս այս պաշտօնին ամենայարմար ցեղ, կը թելադրէ նա հայերը:

Մեր բնաբանէն հեռու է խնդրին կարելիութեան ու անկարելիութեան պարագաները քննադատել հոս, և ոչ ալ արդարացի կը համարենք ուրիշի մը գործունէութիւնը պարզած պահուն կողմնակի ու անտեղի դիտողութիւններ խճողել: Հետեւաբար, առանց վերապահումի կը ներկայացնենք զինքը և կուզենք նաև այստեղ շարք մը ամբողջական արտատպումներ ընել՝ ցոյց տալով իր փաստերն ու շարժառիթները:

«Հայերը, կը գրէ Բրայս, Արևմտեան Ասիոյ ցեղերուն մէջ միակն են որ ունին այս դերը ստանձնելու ընդունակութիւն: Սրամիտ են, եռանդուն, ժրաջան, սովբելու ատակ և արեմբուեան գաղափարներ որդեգրելու մէջ արագ: Բարոյականութեան (morals) և ընկերական բարքերու տեսակէտով կրնան շատ լաւ բաղդատուիլ իրենց յոյն ու ռուս զրացիներուն հետ: Իրենց քրիստոնէութեան ձևը չէ կարելի յառաջագէմ մը կոչել. բայց, անտարակուսաբար, իրենց քահանաները աւելի տգէտ չեն և ոչ ալ ժողովուրդը առաւել նախապաշարեալ քան Ուղղափառ եկեղեցիին պատկանողները: Ու անոնք առանձնապէս մեծ արժանիք մը ունին մոլեռանդութենէ (fanaticism) զերծ ըլլալու: Որ անոնք, ինչպէս քրիստոնեայ այլ մարմիններ, հալածած չեն երբէք ուրիշ հաւատքներ, թերևս ըլլայ այն պատճառով որ պատեհութիւնը ունեցած չեն: Սակայն իրենց եկեղեցին արժանի է զովասանքի ազատամիտ ու անշիշալուր ըլլալուն, պատրաստ ունէ

***) Այն մեծ էր, մինչև որ մեծ ստուերները ետեից ընկնելով եղածն էլ չկորցրին զառնալով թուով էլ, տնտեսական նշանակութեամբ էլ quantite negligible. Բրայսի փորացաւը հակառուսականութիւնն է... Ծ. Խմբ.

աղանդի հետ եղբայրակցելու, մինչ ժողովուրդը բնաւ ատելութիւն չը տածեր իր Մահմեդական գրացիներուն դէմ, և, յիշուաւի, բոլորին հետ ալ, բացի քիւրտերէն, սիրով կապրիւ Այսպիսի ազգութիւն մը որ կը միացնէ իր հզօր անհատականութեան և մարմնացած հոգիին ուժեղ ճկունութիւն մը մտքի, և կեանքի փոփոխուն պայմաններուն յարմարուելու կարողութիւն մը, մասնաւորապէս ընդունակ կը թուի հսկելու և քաղաքակրթելու շրջակայ Ասիական Նահանգները, որու միւսիւրման ընակիչները կորսուած են հիմնովին—եթէ երբէք ունեցած—իրենց յատկութիւնները: Հայոց պէտք եղածը կեղծոն մըն է, երկիր մը որ կրնան իրենցը կոչել և որ ժամանակի ընթացքին, հաստատութեան և քանակութեան աճումով, կարելի լինի տէրութեան (state) մը վերածել: Անկախութիւն պահանջել այժմ (1878) յիմարութիւն պիտի ըլլայ, որովհետեւ, նոյն իսկ մէկ կողմ առնելով շարք մը կողմնակի արգելքները, հազիւ թէ կարելի ըլլայ հաշտեցնել այդ միտքը յիշեալ գաւառներու միւսիւրման բնակիչներու ներկայութեան: Այնուամենայնիւ, եթէ անգամ մը բարեկարգութիւն հաստատուի, բարգաւաճումը կը հետեւի. և երբ, հետզհետէ, յառաջդիմական տարրը զերաթուէ, ինչպէս որ ի վերջոյ կը պատահի, լճացեալ ու առաւել կոպիտ մահմեդականները, անկախութիւնը հետո և չըլլար շատ:

«Այս բոլորը, թերեւ ըսեն ոմանք, ցնորական է,—աւելի զգացումի (sentiment) և երեակայութեան արդիւնք քան գործնական քաղաքականութեան: Շատերուն համար բարոյական ոյժերու վրայ հաւատքը ցնորական կը թուի: Իտալական միութիւնը բանաստեղծներու և դաւադիրներու երազներ էին: Գերմանական դաշնակցութիւնը doctrinaire պրօֆէսօրներու բանդադուշները: Այսպիսի պարագաներէ սարսափելու չէ»:**)

Բրայս յառաջ կերթայ խոստովանել որ հայ ազգի դատին ջատագովներէն ոմանք իրապէս մղուած են սէնթիմէնտէ, աչքի տուալ ունենալով իր պատկառելի անցեալը, իր զարգացման ատակութիւնները, իր ցեղային տոկոնութիւնը, բայց միանգամայն կաւելցնէ թէ ատոնք համակիրներու հոսանքը մղող ոյժեր են, բացարձակապէս անխուսափելի: Չուրանար նոյնպէս այդ իղէալի իրականացման դժուարութիւնները, հայ ազատ գաւառի մը ստեղծման արգելքները, հայ ինքնավար կիսանկախ իշխանապետութեան մը վերականգնացման խո-

*) Իսկ այդ «ցնորքներէ» հետեանքները տեսանք. իսկ որ «սարսափելու» է, չէ: Անալոգիաները սխալ են: Ծ. խմբ.

հերը, «բայց, կը յարէ, Թիւրքիոյ հորիզոնը այնքան մութ է, ճանապարհները այնպէս խափանուած, որ լուսոյ վերջին շառաւիղը պէտք է նշանակել և ծրագիր մը խորհիլ՝ բարեփոխման հնարաւորութիւն մը ձեռք բերելու»:

Հեղինակն կը հաւատայ թէ՛ եթէ հայերը թիրանան այս պաշտօնին մէջ, ուրիշ ոչ մէկը կարող է յաջողիլ և նոյն այսպիսի հաւանականութեան արդիւնքն իսկ բաւ կը համարէ Անգլիոյ երեւան գալ ու այս գործը յառաջացնել, որուն, անշուշտ, Ռուսաստան եթէ չկարողանայ ալ գիմադրել, հազիւ թէ պիտի ուզէ օժանդակել, քանի որ նա աւելի կը նախընտրէ հայոց իր մէջ ձուլումը:

Գրեթէ միևնոյն շրջանին, իր «Արարատ և Անդրկովկաս» գործին վերջին գլխուն մէջ, Բրայս ուրիշ հարց մը կը քննէ, որուն փորձերը թէպէտ և մինչև այսօր քանի քանի անգամներ կատարուեցան անյաջող հետևանքներով, աւելորդ չըլլար մէկ-երկու համառօտ արտաստպումներ ընել:

«Ինչո՞ւ, պիտի հարցուի,—կը զրէ նա,—հայերը չեն պատամբիր այս իժովութեանց դէմ, ինչպէս իրանց նախահայրերը կընէին: Մասամբ որովհետև անգէն են, մասամբ որովհետև ընակչութիւնը ցանցառ է, թաթարներ, ու քիւրդեր ցիրուցան իրանց մէջ, բայց գլխաւորաբար՝ որովհետև դարերու ստրկութիւնը ազգին հոգին ջախջախած է, որովհետև զիրենք առաջնորդող չկայ, որովհետև միջոց չկայ միացեալ գործունէութեան, ոչ ալ համակրանքի և օժանդակութեան յոյս կրօնական պետութիւններէն՝ ինչ որ Հելլէնիզմից և Պուլկարիոյ ժողովուրդները կանկնկալէին: Ինքնակառավարման միևնոյն անյարմարութիւնները պիտի պատճառաբանուին: Շիտակ է. Թիւրքիոյ հպատակներէն և ոչ մէկը այժմ յարմար է ինքնակառավարման, սակայն, հարցը այն չէ թէ անոնք յարմար են, այլ թէ ինքնակառավարութիւնը, որքան ալ յոռի, լաւագոյն չափով՝ հանդիսանայ այն բռնապետութեան՝ որուն ներքե կը տառապին հիմա և որու դառնութիւնը չափով մը կը բազմապատկուի բաղդատմամբ այն անդորրութեան և ապահովութեան՝ որ իրենց հայրենակիցները կը վայելեն Ռուս գերիշխանութեան տակ *): Թիւրքահայոց տեսակ մը անկախութեան հակառակ միջոցը կը մնայ իրենց կլանումը Ռուսաստանէն, որ արդէն իր դերքը կը գործածէ որպէս վեհապետ ու պաշտպան պատրիարքին՝ տեսակ մը հովանաւորու-

*) Պէտք է յիշել որ սա գրուած է 1887-ի ժամանակները:

թիւն պահանջելով բովանդակ եկեղեցիին վրայ: Առանց իսկապէս գոգո՛հ ըլլալու, այսուհանդերձ ռուսահայ հպատակները նուիրած ու նախանձախնդիր հպատակներ չեն, մինչ անոնք որ Թիւրքիոյ տակ կապրին, կը նային իր վրայ ինչպէս Պուլկարացիք կընէին,—լաւագոյն է ցարը քան սուլթանը, երկուքին ալ զգացումն է: Սակայն, լաւագոյն է տեսակ մը տեղական անկախութիւն քան Յարը կամ Սուլթանը...»:

Ու այս էջը կը փակէ Բրայսը սա ջերմ հաւատքով դէպի Թիւրքիոյ հայութիւնը, որ, աւանդ, քայքայումի եզրը հասած է այս րոպէիս:—

«Ով որ ուշադրութեան առնէ իրենց պատմութիւնը, և իրենց ցոյց տուած այժմու զարթնումի նշանները նկատէ, չը կրնար չը հաւատալ թէ լաւագոյն օրեր պահուած են իրանց համար: Յեղ մը որ տոկացած է այսքան յամառօրէն, իր մէջ ոսկոր ու ջիղ ունենալու է: Թէ արդեօք ինքնին քաղաքակրթութիւն մը պիտի յառաջացնեն անոնք, ոչ մէկը կրնայ նախապուշակել: Բայց անգամ մը որ օրհասական լոռնակալութիւնը որ անիծած է զիրենք, մեռնի, կարելի է յուսալ որ իրենց աշխատասիրութեամբ, սակաւապէս կեանքով և սուր մտաւորականութիւնով յաջողին բարգաւաճում վերաշնորհել այն երկիրներուն զորս հալածանք ու պատերազմ գրեթէ անսպասելի երածեցին...»:

Ու այս անսասան հաւատքով մեր սպագային վրայ, այդ օրերէն ի վեր Բրայս թողուցած չէ բնաւ Հայկական խնդիրը, ինչպէս նաև անոր յարակից Մակեդոնականը:

Բոլոր այն կռակակցութիւնները Անգլիոյ մէջ որ հպատակ ունեցած են Հայկական ու առհասարակ մօտաւոր Արեւելի բարեկալութիւնը, իրենց շարքերուն մէջ գտած են Ճէյմս Բրայս: Պատուակալ նախագահ էր Անգլո-Հայկական ու Միջագային Արեւելեան հարցի ընկերութեանց, որոնցմէ հրաժարեցաւ անցեալ տարի՝ պաշտօն ստանձնելով Ազատական դահլիճի մէջ:

Ազատական կառավարութեան առաջին շրջանը ըլլալով եռուզեռ ու փոթորկոտ շրջան մը ներքին խնդիրներու զբաղումով, առիթ մը չը ներկայացաւ Արեւելեան Հարցի յիշատակման, ուստի և չը կրցանք լսել Բրայսի նոր ծրագիրները որպէս պատասխանատու ազատական մինիստր, ինչ որ մեծապէս ցանկալի էր: Իսկ այժմ, Բրայսի գործունէութիւնը կարելի է փակուած համարել համանման խնդրոց մէջ՝ գոնէ որպէս պատասխանատու անձնաւորութիւն մը, քանի որ իր ներկայ պաշտօնը իբրեւ Հիւպատոս ունէ հաւանական պարագայ մը չը ներ-

կայացյնէր հզօր և մղիչ ոյժ մը երևան բերել «վերցնելու այս քաղաքակրթութեան դէմ սքանտալը (թիւրքիա), այս արատը եւրոպիոյ մաքուր համբաւին վրայ», ինչպէս կը յայտարարէր ինք դեռ 1904-ի վերջերը Լօնդոն կաղմակերպուած հսկայ միջազգային համագումարման մը մէջ:

Յիշեալ ժողովին, ուր կը նախագահէր ինք, իր արտասանած ճառէն կրնանք եզրակացնել որ տարիներ ընթացքը բնաւ փոխած չէին իր համոզումները թիւրքիոյ վերաբերմամբ, այլ ընդհակառակը, աւելի խանդավառած զինքը:

Տարիներու այս երկար շարքին փոռձառութիւնը սովորեցուցած էր իրեն թէ թիւրքիոյ համար վերացական բարեկարգումի խօսքեր ու թուղթեր անօգուտ են և վստահ ապարդիւն հետեանքի մը յանգելու:

«Անշուշտ, կըսէր, պետութիւնները փորձեցին իրենց խելահերը հանդարտել բարեկարգումներ պահանջելով. միշտ բարեկարգում կը պահանջեն անոնք ու միշտ բարեկարգումի խոստումներ կատանան. բարեկարգումները նոյնքան պատրաստակամ կը խոստացուին որքան ատոնց պահանջը, և ժողովուրդներու ստացած պատասխանները զոհերու քանակութեան չափ է: Բարեկարգումներ խոստացուեցան 1878-ին, Պերլինի վեհաժողովի ժամանակ, և բարեկարգումներ պահանջուած են մինչև օրս, գլխաւորաբար Մեծն Բրիտանիայէ, այլ ընդհանրապէս Ֆրանսայի և Իտալիոյ մասնակցութեամբ, բայց ոչ մէկը տակաւին փորձած է այս բարեկարգումները իրագործել: Սուլթանի միակ գործունեայ քաղաքականութիւնը եղած է կոտորած. ան ջանացած է զգոհութիւնը վերցնել՝ զժգոհ ժողովուրդը ջնջելով: Սուլթանի կառավարութիւնը, թէպէտև կոտորածներ կը սարքէ ու կարգապահութիւն կանուանէ... անուղղիչ է...: Երկու դարմաններէն մէկը՝ թիւրք կառավարութեան փոփոխումն է այնպիսի ձևով մը որ վերջ դնէ Սուլթանական բռնակալ գերիշխանութեան: Երկրորդը՝ որ, աւելի զիւրին է, գուրս բերել բոլոր այն նահանգները որոնք սուլթանական անմիջական իշխանութեան ներքեւ կը տառապին,—ու այս դարմանները ոչ մէկը այնքան լաւ կը հասկնայ որքան Եւրոպական Պետութիւնները... Սակայն պետութիւնները կը շարունակեն յապաղել, խոյս տալ ու մերժել այն միակ քայլերը որ կարող են փոխել կացութիւնը: Շատ լաւ գիտէք իրենց անգործութեան շարժառիթները: Երկուքը միայն պիտի յիշատակեմ ես: Մէկը այն պատճառաբանուած վախն է որ ազգու միջոցներ Եւրոպական պատերազմ կը յարուցանեն: Այլ վտանգը, եթէ վտանգ է երբէք, չը նուաղիր բնաւ յապաղումով. և թէ այդ վտանգը, եթէ

վտանգ է երբեք, կը պարտին իրենց հասարկութեան և նախանձոտութեան, քանի որ Սուլթանին հետ պատերազմական վտանգի երկիւղ չկայ»...:

Բրայսի մարդասիրական ծրագիրներէն ու աշխարհահայացքները լայն ու համայնական են ու սուլթանական ուժի մին հերքեւ հալածուող քրիստոնեաներու դատը չէ միայն որ նա քրիստոնեայ ու միւսիւլման համահասարակայեւն բարեկարգումի պտուղները, ինչպէս ճառին վերջաբանը յստակօրէն կը բացայայտէ այդ:—

«Ուստի, կըսէր, մենք հաւաքուած չենք հոս քրիստոնէութեան դատը պաշտպանելու իսլամութեան դէմ, այլ արտայայտելու այն յոյսը՝ որ քրիստոնեաներ ու միւսիւլմաններ միանուազ աշխատին իրենց հաւասար բարիքին համար, և այն հաւատքը՝ որ մեր պահանջած բարեկարգումները նոյնքան միւսիւլմանութեան շահուն ըլլան որքան քրիստոնէութեան... Մենք հաւաքուած ենք որպէս անշահախնդիր ներկայացուցիչները ինչ որ կը հաւատանք ըլլալ արդարութեան ու մարդկային դատին, և արդարութեան, մարդկութեան և ազատութեան անուանով է որ կը խնդրենք ձեզ ձեռք կարկառել ու ջանալ ճար մը դռնել՝ որով մինչև օրս անպտուղ ֆուցած ճիղերը վերջապէս հասնին բաղձալի վախճանին և այդ մեր ճիղերը սրտապնդող, սղատութեան, մարդկութեան և արդարութեան սրբազան անուններով, տարակոյս չունենք որ մեր ջանքերը ժամանակի ընթացքին յաջողութիւնով պսակուին...»:

Այսքանը, կը յուսանք, բաւականաչափ կը ծանօթացնէ հայ ընթերցողներուն Զէյմա Բրայսի կեանքը և գործունէութիւնը, իր ցանկութիւնը, յոյսը և հաւատքը հայութեան վերաբերմամբ:

Կան իր դարմաններուն և թելադրանքներուն մէջ (որոնք բաւական հին են այժմ) կէտեր՝ քննադատութեան ենթակայ, իսկ կան նաև մասեր զորս մեծապէս կրնայն նպաստել հայկական դատին՝ եթէ միայն ատոնք իրազօրծման շաւղին մէջ զրուին երոպական պետութեանց կողմանէ անշահախնդիր*) դիտումներով: Յամենայն դէպս, մենք խոյս կուտանք այս առթիւ այդպիսի կէտերու վրայ ծանրանալ և նիւթէն շեղելով, տարբեր հարցեր երևան հանել: Կը խուսափենք նոյնպէս այս վէ-

*) Մեր յարգելի աշխատակցի կողմից, որ իր նախորդ Ա. նամակում քննադատում էր բուրժուազական բարոյահասկացողութիւնը, զարմանալի է տեսնել այդպիսի հաւատ դէպի եւրոպական պետութիւնների անշահախնդրութիւնը: Ծ. խմբ.

տէրան հայասէրին համոզումները քննադատել: Ինչ որ ալ լինին ատոնք—սխալ թէ ուղիղ, մեզ համակրելի թէ հակասական—Բրայս անկեղծ էր, անշահախնդիր ու անխոնջ իր սիրած դատին պաշտպանութեան համար:

Իր երկար ու բեղմնաւոր կեանքի ընթացքին ան կոուած ու մաքառած է այն ամէն գաղափարի համար որոնք ձգտած են բարեկարգել տիրող ապօրինութիւնները, ըլլայ սա արհամարուած դասակարգի մը համար իր երկրին մէջ, ըլլայ հալածական տարաբախտ ցեղերու օգտին՝ իր երկրին ստանձաններէն դուրս, և, որքան ալ, ի երախտագիտութիւն մեզ մատուցած ծառայութեան:

Մինաս Յոյակ

ԻՆՉ ԵՆ ՈՒԶՈՒՄ ՍՈՑԵԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ

(ԳԷԴ և ՀԱՖԵՐԳ)

II *)

Այն պատճառով որ արտադրութեան միջոցներէ դործածումը աւելի և աւելի հաւաքական է դառնում, այսինքն պահանջում է աւելի և աւելի շատ մարդկանց միահամուռ աշխատանք, իսկ այդ միջոցներէ ձեռք բերելը մնում է անհատական,—այդ դրութեան իբրև հետեանք հանդիսանում է. մի կողմից այն որ արդիւնքները կուտակուած են ոչ-արտադրող սեփականատէրերի կամ դրամատէրերի ձեռքում, իսկ միւս կողմից աւելանում է աղքատութիւնը արտադրող ոչ-սեփականատէրերի այսինքն բանուորներէ: Եւ այդ չքաւո-

*) Տես «Մուրճ» № 2.

րութիւնը աճում է արտադրութեան բարգաւաճման հետ զուգընթացաբար:

Հէնց լոկ այն պատճառով որ բանուորներին չեն պատկանում արտադրութեան գործիքները կամ միջոցները որոնցով կատարւում է նրանց հաւաքական աշխատանքը, նրանց ձեռներից դուրս են սպրդում բոլոր այն հարստութիւնները որ նրանք ստեղծած են, և արտադրած արդիւնքներից նրանց բաժին է հասնում միայն այնքան, որքան անհրաժեշտ է նրանց կեանքի պահպանութեան և նրանց ցեղի աճման համար: Սակայն գրամատէրերը միշտ և անխուսափելիօրէն ձգտում են կրճատել նոյն իսկ այդ անհրաժեշտ ծախքերը, որ կազմում են աշխատավարձը. գրամատէրերը այդպէս են վարւում, որովհետեւ այդպիսի կրճատումը հանդիսանում է իբրեւ միակ միջոց աւելացնելու նրանց օգուտը, շահը: Այդ նպատակով նրանք ամեն կերպ ձգտում են երկարել բանուորական օրը, որ հասցրել են այնպիսի չափերի որ մինչև անգամ բուրժուական կառավարութիւնները ստիպուած էին հրատարակել օրէնքներ, որոնք սահմանափակում են բանուորական ոյժի այդօրինակ վատնումը: Գործարանատէրերի մէջ դոյութիւն ունեցող կատաղի պայքարից և մրցութեան միջից յաղթող են դուրս գալիս նրանք, որոնք կարողանում են իրանց բանուորներից մրգել չվճարուող աշխատանքի ամենամեծ քանակը, որովհետեւ այդ կերպ պակասեցնելով արտադրութեան ծախքերը, նրանք հնարաւորութիւն կունենան ուրիշներից աւելի էժան վաճառել և շուկան իրենց մենաշնորհը դարձնել: Այդ կերպ բախտաւոր մրցակցին հասած տիրապետութիւնը շուկայում կոչւում է բուրժուական լեզւում «բնական մենաշնորհ», շոկելու համար «պետական մենաշնորհից»: Այդ այդպէս լինելուց յետոյ հասկանալի է որ անկարելի մի բան է «բարի գործատէրի» համար, եթէ այդպիսին ճարուէր, ամենաչնչին սահմաններից դուրս բարուրքել իր կենդանի մեքենա-բանուորների դրութիւնը:

Մակայն այդպիսի բարուրութիւններ անելու հոգսերի փոխարէն, զրամատէրերը մէկը միւսից առաջ էին գնում մեղադրելու համար բանուորներին՝ ծուլութեան և չափազանց պահանջների մէջ, որոնք իբրեւ թէ քայքայում են «ազգային արդիւնաբերութիւնը»:

Յետոյ, բանուորավարձի ծախքերը պակասեցնելու նպատակով գործարանատէրերը քարը քարի վրայ չթողին բանուորի ընտանեական կենցաղի մէջ, խլելով նրանից կնոջ, յետոյ երեխային, որպէսզի մաշեն նրանց իրենց տաժանակիր աշխատանոցներում: Կանայք և երեխաները աւելի էժան գործիքներ էին քան տղամարդիկ և ահա թէ թէ ինչու, կամայ թէ ակամայ, նրանք ներմուծուած էին արդիւնաբերութեան շրջանակի մէջ, թէև բուրժուական մարդասիրութիւնը, ցանկալով դիմակաւորել կապիտալիստական շահագործման ամբողջ սարսափը, շահագործման որ չի խնայում ոչ սեռը ոչ հասակը, բարբաջում էր միմիայն բանուորական ընտանիքի բարօրութեան աւելանալու մասին:

Նոյն միակնպատակին՝ շահին են հետևում և գործարանական մեխանիզմի բոլոր կատարելագործութիւնները: Աւելի հասարակ զարձնելով աշխատանքը և միաժամանակ աւելացնելով նրա արդիւնաւէտութիւնը՝ այդ կատարելագործութիւնները հնարաւորութիւն են տալիս վարձողին իր ծառայողների թւում «խնայողութիւն» անել—հմուտ բանուորին, որ մեծ վարձ է պահանջում, փոխարինելով հասարակ բանուորով, իսկ տղամարդուն—կին և երեխայ բանուորներով: Մեքենաները, մեխանիկական կատարելագործութիւնները այդպիսով քշում են բանուորներին արհեստանոցից, իսկ քաղցը ստիպում է նրանց գործ վերցնել ինչ վարձով էլ լինում է լինի, այդպիսով ակամայից պատճառ լինել իջեցնելու բանուորավարձը այն ընկերների, որոնք մնացել են արհեստանոցում: Բանուորական ոյժի այդ յարաճուն վտարման վերջնական արդիւնքը լինում է արդիւնաբերական ազգարնակութեան աւելորդութիւնը կամ պահեստի բանուոր զօր-

քը, որ գործի է կոչւում ուժեղացած արտադրութեան ժամանակաշրջաններում, իսկ սովորական ժամանակ ծառայում է իբրև միջոց՝ բանուորավարձը իջեցնելու և բանուորական օրը երկարելու։ Այդ պահեստի զօրքի անդամ է դառնում իւրաքանչիւր բանուոր, որ գործազուրկ է մնացել իր ակամայ պարապութեան ամբողջ ժամանակուայ ընթացքում։ Իսկ եթէ որևէ երկրում զգացուի պակասութիւն արդիւնաբերական ազգաբնակչութեան աւելորդ քանակի մէջ—այդպիսի մի աղէտը հեշտ է ուղղել։ Կապիտալիստը,—որի համար միջազգայնութիւնը այնքան թոյլատրելի է, որքան այդ յանցանք է բանուորի համար,—միշտ կարող է դիմել միջոցի, որ օրէցօր աւելի և աւելի գործածական է դառնում, այսինքն՝ դիմել արտասահման և աւելի յետամնաց երկրներում, թէկուզ հէնց Չինաստանում, քաղցած ազգաբնակչութեան պահեստներումը գտնել այն ձեռները, որ հարկաւոր են նրան, որպէսզի իջեցնի բանուորական ոյժի զինը և սով առաջացնի իր սեփական հայրենիքում, դուրս շարտելով իր հայրենիքի աւելի մեծ պահանջ դնող բանուորներին գործարաններին։

Ինքնաշարժ մեքենաների տարածուիլն ու կատարելագործուիլը հարիւրապատիկ աւելացնելով թէ արդիւնքների քանակը, թէ դրամատէրերի օգուտը, ոչինչ չի աւելացրել արտադրողների վարձագնի վրայ. նա միայն աւելացրել է նրանց աշխատանքի և զրկանքների համագումարը։ Որքան աւելի շատ հարատուութիւններ են ստեղծել բանուորները իրենց տէրերի համար, այնքան շատ աղքատութիւն են ստեղծել նրանք իրենց համար։ Արտադրած արդիւնքների քանակի և բանուորական վարձի տարբերութիւնը մշտապէս աճում էր, և որքան շատ էին նրանք արտադրում այնքան քիչ էր արդիւնքները այն քանակը որ նրանք հնարաւորութիւն

ունէին գնել «սեփական գործադրութեան համար *)»։ Նոյն ուղղութեամբ է գործելու նաև արհեստաւորական և ամեն տեսակի կրթութեան տարածումը։ Կատարելագործելով կենդանի մեքենաները, այսինքն բանուորներին, նրանց աւելի ընդունակ դարձնելով որոշ արդիւնք արտադրելու աւելի կարճ ժամանակամիջոցում, արհեստաւորական (պրոֆեսսիօնալ) կրթութիւնը միայն կաւելագնի արդիւնքների քանակը ի մնաս արտադրողները շահերին, որոնց վիճակուած կը լինի տանել նորանոր անգործ դրութիւններ **)։ Նոյնը կը լինի իւրաքանչիւր առաջադիմութեան հետ ինչ տեսակ և լինի նա։ Նա դառնալու է բանուորի դէմ մինչև որ վարձու աշխատանքը բանուորին կը պահի գործիքի դերում արտադրութեան միջոցների տէրերի ձեռքում, մինչև որ հողը, գործարանները, հաղորդակցութեան միջոցները և այլն կը լինեն մասնաւոր մարդկանց սեփականութիւն։

Արտադրող դասակարգը կազատուի, այսինքն տէր կը դառնայ թէ իր վիճակի և թէ այն ամենի ինչ գոյութիւն ունի և ստեղծուած է միայն նրա աշխատանքով, երբ կոչնչացնի արտադրութեան միջոցների մասնաւոր

*) Այդպիսով արգիւնաբերութեան առաջադիմութիւնը, արտադրութեան առաջադիմութիւնը... ձգտում է աւելացնել մարդկանց մեջ անհաւասարութիւնը։ Այդ հակասութիւնը կարող է վերացուել միայն կապիտալիստական ձևի արգիւնաբերութեան վերացման հետ։

**) Սակայն զրանից չպէտք է եզրակացնել որ սոցիալ-դեմոկրատները դէմ են ժողովրդի պրոֆեսսիօնալ և ընդհանուր կրթութեան։ Նրանք միայն պնդում են որ ընդհանուր կրթութիւնը չի բարուրի, իսկ պրոֆեսսիօնալ կրթութիւնը կը վատնաբացնի բանուորների նիւթական գրութիւնը։ Բայց եթէ այդպէս է կրթութեան անմիջական տնտեսական ազդեցութիւնը, միւս կողմից նրա օժանդակող, պատմական ազդեցութիւնը ընդհակառակը չափազանց օգտակար է բանուոր դասակարգի համար։ Որքան պրոլետարիատը կրթուած և զարգացած լինի, այնքան աջող կը լինի նրա պայքարը բուրժուաշի դէմ։

խրաջուժը և փոխարէնը՝ այդ միջոցների կարգադրութիւնը կը դարձնէ կոլլեկտիւ կամ հասարակական:

Սակայն միայն բանուորները չեն որ այդ յեղաշրջման ժամանակ ազատութեան կը հասնեն. այդ յեղաշրջումը կազատի ամբողջ հասարակութիւնը:

Առանձնաշնորհեալ դասակարգերը այժմ էլ իրանց ազատ են համարում, բայց այդ այդպէս է իրօք: Նրանց հէնց անձը գտնւում է մշտական վստանդի մէջ համաձայնութիւններից (տիֆ, քոլերա և այլն), որոնք զարգանում են բանուորական դասակարգի աղքատութեան և ծիւրուածութեան շնորհիւ: Աւելի լաւ չէ ապահովուած և նրանց քաղաքական ազատութիւնը: Կոյր կրաւորական ոյժերը, ի դէմս զօրքի, պաշտօնեաների, պոլիցիայի, ուրոնց հարկը պահանջում է պահպանել և միշտ ուժեղացնել ժողովրդական մասսաների «յաւելումները» դէմ, այդ կոյր ոյժերը միշտ պատրաստ են ամենատեսակ բռնութեան, ամենատեսակ քաղաքական ճնշման գործիք դառնալ:

Ինչ վերաբերում է այն հարստութիւններին որոնց վրայ դողդողում են առանձնաշնորհեալները և կախում նրանցից ինչպէս ջրում խեղդուողը նաւի բեկորներից, պէտք է նկատել որ և այդ անարդար ստացուածքները գուրս են գալիս ձեռներից, շնորհիւ նրան որ կրճատւում են պետական թղթերից ստացուող տոկոսները, շնորհիւ սնանկութիւնների, շորթող ու ծղկող կասսիրների և ամեն տեսակի անկուշտ Նանաների:

Սակայն որքան և տպացուցենք բուրժուազիային, որի մեծ մասը իւրաքանչիւր տարի քանդւում է սրնանկութիւններից և արդիւնաբերական կրիզիսներից, թէ հասարակական կոմունիստական կարգերում բանուոր դասակարգի դրութեան բարուղման հետ կը լաւանայ և այդ բուրժուազիայի սեփական դրութիւնը, մենք երբէք չպէտք է յոյս դնենք դրա գործակցութեան այդ նոր կարգերը իրագործելու համար: Նրա հետ կը կրկ-

նուրի նոյնը ինչ եղաւ ազնուականութեան հետ, որ ոչ միայն չնպաստեց բուրժուական յեղափոխութեան, այլ և չէր համաձայնում թոյլատրել և ընդունել այն, թէև իբրև ունևոր դասակարգ այդ յեղափոխութիւնից ինքն էլ բաւական օգուտներ ստացաւ:

Առանձնաշնորհուած դասակարգերը միշտ անընդունակ են հանդիսացել զոհելու իրենց ըսպէական և տոբրեյթական շահերը իրենց համանդամների իսկական և հաստատուն շահերի հանդէպ: Այդ պատճառով ստիպուած նրանց պէտք է ազատել ուժով—յնդափոխութեան ճանապարհով:

D.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՈՒՄԲՈՒՐ ԵՒ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Տպում ենք Շուշուայ թեմական դպրոցում պատահած խռովութիւնների մասին մեր ստացած ընդարձակ զրութիւններէց միայն փաստական կողմերը: Մեր դպրոցները խառնակ վիճակի մէջ էին և առաջ, բայց մեր «ազգային սոսմբուրիստ նախարարների» շնորհիւ աւելի ևս խայտառակ ու անիրաւ դրութիւն ստեղծուեց: Մենք դեռ փաստերն ենք արձանագրում:

I.

Անցեալ նոյնքերի 9-ին Թեմ. դպրանոց իրարձր դասարանների մի խումբ աշակերտներ, դիմում են աշակ. Նարինեանին ու հարցնում. — Աշակերտական միութեան ժողով կայ այսօր, ի՞նչ տեսակ ժողով է և կարելի՞ է լսել:» Նա պատասխանում է, որ խառը միացեալ վարչական և դասախօսների ժողով կայ և որ միայն երեքին կարելի է լսել: Երեքով՝ Սեդրակ Յովհաննիսեան, Մ.-Արզումանեան և Յ.-Աղասեան փողոցից մտնում են դպրոցի շէնքը ու բարձրանում վերև:

Ժողովը սկսուելու ժամանակ, իրրև թոյլտուութիւն ստացած, պ. Աթ. Տէրտէրեանի հետ (դասախօսի պաշտօնով հրաւիրուած) մտնում են ներս: Լուռ սպասում էին ժողովի սկսուելուն: Դրան մօտ յանկարծ բարձրացաւ մի թեթեւ աղմուկ, որի միջից պարզ և որոշակի կերպով լսում էին պ. Ար. Մելքոնեանի հետեւեալ խօսքերը՝ (բարկացոտ և բնականից շատ բարձր). — Չի կարելի, ձեզ ասում եմ չի-կա-րե-լի, հեռացէ՛ք այս տեղից:

Այդ իսկ րոպէին ներս է մտնում աշակերտ Ս. Փօլեանը: Աշակերտ Ս. Յովհաննիսեան հարցնում է նրան՝ — «Միմէ՞ն, միթէ՞ չի կարելի լսել»: Պատասխանում է «Ձէ»: Կարճ և կտրուկ: Այն ինչ քիչ առաջ դուրսը, երբ իր ներկայութեամբ թոյլատրում էր Նարինեանը՝ ժողովին լսելու, նա լուռ էր և ինչպէս յետոյ իմացուեց, երեք հոգի իրենից թոյլտուութիւն են խնդրել, ասել է, որ սպասեն, ժողովի հարց կը դարձնէ: Համարեա նոյն կերպ վարուել են և միւս վարչականներից (թե-

մականի) շատերը, այսինքն երեք-երեք հոգու խօստացել ըն, որ ժողովի հարց կըդարձնեն կողմնակիներին լսելու խնդիրը, բայց մէկ էլ «Արտաշէսի աղիզ խաթրից» չ'անցնելու համար՝ ասել են «չի կարելի» կամ թէ ոչ ասել են, ոչ էլ արել որովհետեւ Արտաշէսը կը նեղանայ: Օ՛, որքան «անկեղծ» «հաւատարմութիւն» գէպի պ. Մելքոնեանը: Աշակերտները տրտնջում են.— «էս ի՞նչ տարօրինակ մարդիկ էք: Մէք ասում էք, «կարելի է», մէկ «չէ», մէկ՝ «կարծեմ կարելի է» մէկ էլ «չգիտեմ, Արտաշէսն հարցրէք»: Մի սաղ խօսք ասացէք էլի՞: Մենք ձեր խաղալիքն ենք, ի՞նչ է»:

Դուրս է գալիս երկրորդ անգամ պ. Ա. Մելքոնեան և հրամայում ու սպառնում.— «Խնդրում եմ կորէ՛ք այստեղից և մի աղմկէք, թէ չէ ուրիշ կերպ կը վարուեմ ձեզ հետ»:

Աշակերտները լուռ են, քիչ յետոյ պատասխանում են.— «Դուք իրաւունք չունէք մեզ հետ այդպէս խօսելու, թող վարչականները խօսեն, որոնք մեզ այստեղ սպասեցնել են տալիս»:

Պ. Ա. Մելքոնեան նորից հրամայում է կորչել, բայց տեսնելով, որ հրամանը չի կատարուում, ուրիշ կերպ է վարում: Հըրում է Ս. Եղիսեանին (Մ-րդ): Վերջինս միայն ասում է.— «պ. Արտաշէս, մի քիչ դապեցէք ձեզ»: Իսկ Յ.-Յովհաննիսեանը դառնում է.— «Եղէք քաղաքավարի և մի մոռացէք, որ ձեր դիմաց կանգնածներն ու խօսողները ծ տարեկան երեխաներ չեն, այլ մեծ աշակերտներ. իսկ դուք էլ ուսուցիչ էք»:

Պարոն Մելքոնեան այս բանի վրայ գոչում է զայրացած.

— «Դուք աշակերտներ չէք, այլ սրիկաներ:

— «Մենք ենք սրիկաները, բողոքում են աշակերտները:

— «Այո, եթէ աշակերտներ լինէիք, երէկ խառն ժողովում մեզ համար վարչականներ կ'ընտրէիք:

— Այդ ձեր գործը չէ, այլ աշակերտութեան:

— Ես թրում եմ այդ տեսակ աշակերտութեան վրայ:

— Պարոն Մելքոնեան, ի՞նչ մի մեծ բան էք արել աշակերտութեան համար, որ այսօր թքում էք նրա վրայ, հարցնում է Յ. Աղասեանը:

— Ես մինչեւ հիմա պաշտպանել իմ աշակերտութեան շահերը, իսկ աւտոհետեւ թքում եմ նրա վրայ:

Սկսում է մեծ աղմուկ, իրարանցում, և աշակերտներից ամեն մէկը պահանջում է.— «Կամ բացատրութիւն տուէք, կամ յետ վերցրէք աշակերտութեան հասցէին ձեր սպրգած վիրտուրական իծօքերը»:

— Այժմ հեռացէք, և մի աղմկէք, իսկ բացատրութիւններ տ-

ստաներիս ճամար վաղը, պատասխանում է պ. Մելքոնեան ու վարչականներից մի քանիսի դրդմամբ մտնում ներս:

Այնուհետև ազմուկն աւելի սաստկանում է և սկսում է նախատինք վարչականներին, որ աշակերտութեան ներկայացուցիչներ, ու նրա շահերին պաշտպան լինելով հանդերձ, տեսնում են աշակերտութեան պատիւը շօշափում է անիրաւացի կերպով ու չեն բողոքում, այլ լուկ լուռ թամաշաչիւների դեր են կատարում:

Երրորդ անգամ պ. Մելքոնեան իր հունարը փորձում է: Կատաղած դուրս է դալիս, «հանդստացնելու» աշակերտներին: — «Ի՞նչ էք բղաւում, սրիկաներ, (էլ իր ճղաւոցը չի ասում):

Աշակերտ Ս. Յ. մօտենում է նրան. — Պարոն, դո՛ւք էք թրքում աշակերտութեան վրայ:

— Այո, ես թքում եմ ձեզ պէս աշակերտների վրայ:

— Մենք էլ թքում ենք ձեզ պէս ուսուցչի վրայ, ասում է աշակերտը կորցնելով համբերութիւնը:

Ուսուցիչ Մելքոնեանը բռունցքը բարձրացրած, կատաղութեան փշփուրը բերանին «Ի՞նչ ես ասում» գոռալով յարձակում է աշակերտի վրայ և քաշում նրա օձիքից: Նոր այդ ժամանակ թամաշաչի վարչականները դալիս ու բաժանում են նրանց: Երբ Ս. Յ.-ին արդէն ազատել էին մի կողմ, նա դառնում է նրան:

— Զինովնիկական է ձեր վարմունքը, պարոն, դուք ժանդարմ էք:

Սա փորձում է երկրորդ յարձակումը դործել, սակայն բռնող բաղուկները այնքան էլ թոյլ չէին: Եւ իր սրտի մաղձը թափելու համար, հայհոյում է աշակերտ Ս.-Յ.-ի ծնողը ուսսերէն (Երեւանի ուսուցչական Սեմինարեան է աւարտել, խեղճը հայերէն հայհոյհանքներ չգիտէ): Այդ հայհոյանքը՝ վկայում են Յ. Սողոմոնեան, Ռ. Նարինեան, Յ. Յովհաննիսեան և Ո. Եղիեան:

Այստեղ աշակերտները իրենք ևս փորձ են անում յարձակուելու պ. Մելքոնեանի վրայ և նրանցից մի քանիսը սկըսում են փողոցային հայհոյանքներ:

Պ. Մելքոնեան սխրագործութեան այս ակտը կատարելուց յետոյ մտնում է ներս և ժողովականների (օրիորդների, սուցիչների և մի քանի աշակերտների) ներկայութեամբ մի աւելորդ անգամ ևս պնդում իր ասածները. — «Պարոններ, մենք եկել էինք այստեղ աշակերտութեան համար քարիքներ անելու: Բայց զրնանք, չարժէ այդ անել, որովհետեւ այստեղ չկայ աշակերտութիւն ալ կան սրիկաներ»: Աշակերտ Զաւէնը (վարչական), որ առաջուց

էլ ներսն էր՝ հէնց տեղն ու տեղը բողոքում է—«Իրաւունք չունիք ընդհանուրին սրիկաներ անուանելու»:

Աշակերտները դիմում են «քաղաքագէտ տեսչին», որ հէնց նոր էր եկել (զասախօսի պաշտօնով) ու տեսնելով աղմուկ, իրարանցում, հարցնում էր՝

—Ի՞նչ կայ, էս ի՞նչ է պատահել:

—Այս տեսակ կեղտոտ ուսուցչին կը պահէն, պ, Չլինգարեան, բողոքում են աշակերտները ու սկսում պատմել միջնադէպը,

«Տեսուչը» տեսնելով, որ բաւական լուրջ կերպով զայրացած են աշակերտները՝ սկսում է հսնգստացնել նրանց մանաւանդ մէկին, որ դառն հեկեկում էր ու հեծկտալով ասում. —«Ուսուցիչը աշակերտին ծնոյ կը հայհոյի, պ. Չլինգարեան»:

«Քաղաքագէտ տեսչի» դրութիւնը բաւական փափուկ էր որովհետեւ ակնածութիւնը և կախումը Դաշնակցութեան «Ապառաժից» չափազանց մեծ էր...

Ժողովը ցրուած էր, պ. Արտաշէս սանդուղքներով իջնում էր ցած: Աշակերտներից նրան ասողներ են լինում—«Քեզ պէսներին շատ ենք ճանապարհ դրել, քեզ էլ կը դնենք շուտով»:

Պ. Մեղքոնեան դառնում է և մի առանձին պարծենկոտութեամբ յստորաւում.—«Հըմմմ... Ես Արտաշէսն եմ, ձեզ պէս 600-ին բոլիս մէջ կը ճզմեն»...:

Ահա ընթերցող, դէպքի մանրամասն և ճշգրիտ լուսանկարը:

Ինչպէս արդէն վերև ցոյց տուեցինք, աշակերտներից և ոչ մէկը չէր ցանկանում անպայման, բռնի կերպով ներս մտնել ու չէր աղմկում: Նրանց ասել էին՝ սպասել ժողովի վճռին և սպասում էին: Նոյն իսկ երեքին թոյլատրած էր լսելու: Հետեւապէս ոչ մի Արտաշէս Մեղքոնեան բարոյական իրաւունք չունէր դուրս գալ ու այնպէս կոշտ ու կոպիտ տօնով հրամայել՝ «չի կարելի, հեռացէք, կորէք»:

Կրթուած, շիտակ ուսուցիչը չպէտք է անէր այդ: Եթէ պ. Մեղքոնեան արել է, առանց բոլէ անգամ հաշիւ տալու իրեն, թէ ո՞ւր է գտնուում ինքը և ի՞նչ է անում, նշանակում է նա արդէն անցել է կրթուած, շիտակ լինելու սահմանից, մանաւանդ այն դէպքում երբ հէնց ինքն էլ տեսնում էր, որ իր դուրս գալը հրամայականով խօսելն ու սպառնալը աւելի զայրացնում է աշակերտներին՝ քան հանգստացնում: Ուրեմն ինչպէս տեսնում է ընթերցողը, այս միջնադէպում մեղաւոր են՝

I. Նախ վարչականները, որոնք բաւական չէ որ խաբխրել են աշակերտներին, տեսել են աշակերտութեան պատիւը շօշափուում է անիրաւացի կերպով ու լռել են—չեն ըողոքել: (Բացառութիւն էին կազմում 2 հոգի):

II. Մեղաւոր է պ. Մեղքոնեան սխրագործութեան այդ ահտը կատարելուն մէջ:

Եւ III. մեղաւոր են աշակերտները, որովհետեւ երկար համբերելուց յետոյ՝ չեն համբերել և մինչ՝ ՚ի վերջ, որպէսդի դատաստանի ահեղ տտեանի առաջ պ. Մեղքոնեանին կարժրացնելը սուելի կատարեալ լէնէր, այլ նրա տուած վերաւորանքները էլ յետ խփել են իրեն, և մի քանիսն էլ տեսնելով (2 հոգի), որ ուսուցիչն իսկ չի քաշուում փողոցային հայհոյանք տալ, իրենք էլ էլ սկսել են նոյնը:

Նոյեմբերի 9-ի (1906-ի) դէպքին անմիջապէս հետևող օրերում, լարձր դասարանների աշակերտութեան գումարուած խառն ժողովներին աշակերտութիւնը գտաւ որ պ. Մեղքոնեան ընդհանուրին է վիրաւորել ու սկսեցին դատապարտել նրան՝ «նա բարբարոս է, նրա վարմունքը տմարդի վարմունք է, արժէր ատրճանակի հարուածներով նոյն իսկ հէնց տեղն ու տեղը գնդակահարել» (Ս. Փոլեան): Ապա դարձեալ նրանցից մէկը՝ Ռուբէն Նարինեան, ասաց որ երբ ինքը բռնած էր պ. Մեղքոնեանին, լսել է նրա բերանից ուստիքն ծնողական հայհոյանքը: (Վկայ են ամբողջ խառն ժողովականները): Թէ անհատների է վիրաւորել պ. Մեղքոնեան և թէ այդ անհատների առաջ են վիրաւորել նրան՝ և այն էլ փողոցային ամենավտի հայհոյանքով: Այդպէս էին միւսների հետ դատապարտում) Մեղքոնեանին և վարչական աշակերտները:

III. Մեղքոնեանին միանգամայն խառն ժողովը մեղաւոր ճանաչելուց յետոյ, դէպքին ներկայ եղողները փաստերով հաստատեցին, որ պակաս մեղաւոր չեն նաև վարչականները: Եւ նրանք համոզուեցին, որ իսկապէս իրանք էլ մեղաւոր են, ու խոստովանեցին իրանց յանցանքը: Միայն Ս. Փոլեանն էր, որ վարչականների մեղքը ևս բարդում էր պ. Մեղքոնեանի շինքին, պատճառաբանելով, որ իրանց ըողէ անգամ ժամանակ չէր տալիս մտածելու և ասելու՝ «Արտաշէս, իրաւունք չունիս դու աշակերտներին դրականապէս մերժելու, քանի որ մենք վարչականներն ենք՝ ու պատել ժողովի պատասխանին»... և այլն:

Այսպէս երկար մեղադրական «ճառեր» կարդալուց և լռութեան յետոյ, խառն ժողովը միաձայն որոշում է հրաւիրել պ. Մեղքոնեանին բացատրութեան, որի ժամանակ պիտի ներկայ լինէր և ամբողջ ուսուցչական խումբը: Եւ հարց է ծագում,

Մեկքոնեանին իբրև ընկերոջ պէտք է դատի հրաւիրել, թէ՞ իբրև ուսուցչի։ Առաջին բանաձևը պաշտպանում էին միայն աշակերտ-վարչականները, որոնք խակապէս «ընկեր» էին նրա հետ (մի սեղանի մօտ ճաշի նստած, մի բաժակով ջուր խմած, «ջան» սուտմ, «ջան» լսում) և աշակերտներից մի բանի հոգի։ Երկար բացատրում են երկու բանաձևերն էլ և վերջը դուռում քուէարկութեան։ Մեծածախնութիւնը պաշտպանում էր երկրորդ բանաձևը, որ և անցնում է։ Այդ բանի վրայ հինգ վարչականներ վրդովուած յաջորդ ժողովներին այլևս չեն յաճախում։...

Այնուհետև շշուկներ էին հասնում աշակերտութեան ականջին, թէ մերթ չորս, մերթ հինգ հոգու է միայն վիրաւորել պ. Մեկքոնեան։ Եւ այդ շշուկները նրանք, այդ վարչականներն էին տարածում, ասելով որ «ընկեր Արտաշէսի» հետ խօսել են, նա այդպէս է ասում, որ միայն չորս-հինգ աշակերտի է վիրաւորել։ Երբ դրանց նախատում էին.— «Ամօթ չէ՞ միթէ, որ դուք ձեր՝ նրանից լսածները մի կողմ էք թողնում ու հիմնում նրա նորամտած խօսքերի վրայ», պատասխանում էին.— «Ապա ինչո՞ւ խառն ժողովներում մեզ չէիք գնահատում, այլ դաւաճաններ, պատուի զգացումից զուրկ մարդիկ էիք համարում։ Այնուհետև՝ մենք իբրև աշակերտութեան շահերին դաւաճաններ և պատուի զգացումից զուրկ մարդիկ, ինչ ուզենք անելու ենք»։ Եւ շարունակում էին քարոզել, որ վիրաւորանքը միայն չորս-հինգ հոգու է վերաբերում։ Ամբողջ երկրորդ դասարանը, որին իբրև անգիտակից մի դասարանի՝ աշակերտութիւնը (բարձր դասարանների) չէր խառնել այդ գործում և ոչ որ մուտք չէր գործում այն տեղ, զրկարաց ընդունում է Ապառաժի «պրօպագանդիստ-առաքեալներին»։

Այս կոչը աշակերտներից (բարձր դաս.) երեք հոգու դիւրահաւատ սրտերում նոյնպէս լայն արձագանք է տալիս և և վերջիններս գնում մտնում են նրանց «շարքերը խտացնելու»։

Աշակերտութիւնը (վաթսուն հոգի) երկու երեք անգամ ներկայացուցիչների միջոցով պ. Մեկքոնեանին բացատրութեան է հրաւիրում, սակայն վերջինս չի գալիս, միշտ և միևնոյն պատճառաբանութեամբ։— «Ձեռն ուղղում, նոր անհատութիւններ կը պատահի։ Ես միայն չորս անհատի եմ վիրաւորել։ (Թուում է անունները, որոնցից մէկը միջնադէպին հեշ ներկայ չէ եղել և որին շատ լաւ էլ ճանաչում է), աշակերտութեան հետ բան չեմ ունեցել»։...

Լաւ է, չէ՞ ընթերցող, տանը նստել, թինկն տալ դիւա-

հի վրայ ու այսպէս պատասխանել բողոքող աշակերտութեան:

Աշակերտութեան ներկայացուցիչները և մի քանի հոգի գիմում են «տեսչին» և յայտնում, որ պ. Մելքոնեան բացատրութեան չի գալիս:

«Տեսուչն» ասում է, որ դէպքը եղել է մասնաւոր հոգի վրայ և ոչ մի կապ չունի դպրոցական ներքին կեանքի հետ, ուստի ուսուցչական-մանկավարժական խումբը բարոյական ոչ մի իրաւունք չունի խառնուելու այդ գործում:

Աշակերտները պատասխանում են թէ որքան էլ մասնաւոր բնոյթ կրի միջնագէպը, այնուամենայնիւ պէտք է կապել նրան դպրոցական ներքին կեանքի հետ, թէկուզ ամենափոքր չափով իսկ, քանի որ դէպքը եղել է թեմական դրարանացում, թեմականի ուսուցչի և աշակերտների միջև ուստի հէնց այնտեղ էլ ուսուցիչների և աշակերտների միջև էլ պիտի պարզուի, վերջանայ, գնայ:

«Տեսուչը» կարծես մի փոքր համաձայնում է, որ այդպէս է. — «ուսուցիչները, եթէ վերցնեն այդ գործը քննելու, որքան էլ չլինի, պաշտօնով շահագրգռուած՝ կը ճշուեն և կամայ-ակամայ կը պաշտպանեն իրանց ընկերոջը, թէկուզ նա մեղաւոր լինի: Բայց եթէ ուզում էք, որ արդարութիւնը միանգամայն երևան գայ, դրա համար ամենաօրինաւոր ճանապարհը միջնորդ դատարանն է, դատը յանձնեցէք նրան¹⁾»:

Աշակերտութիւնը հաստատ համոզուած լինելով, որ արդարութիւնը երբէք չի ոտնահարուի, այլ անպայման երևան կը գայ, ընդունում է միջնորդ դատարան, նստում դասերը շարունակում (մինչև այդ դասադուլ է եղել, ուսումնական ամբողջ երկու և կէս օր), ու հետևեալ օրը պաշտօնապէս յայտնում այդ մասին պ. Մելքոնեանին: Վերջինս ճիշդութիւն խորամանկութեամբ ուզում է խոյս տալ և միջնորդ-դատարանից,

¹⁾—Նոյն այդ տեսուչը, միջնորդ դատարանը իր մի քանի նիստերը շարունակելուց յետոյ, հրաւիրում է աշակերտութեան ներկայացուցիչներին և խնդրում, որ միջնորդ դատարանը ցրեն ու դատը յանձնեն իրան ու մեկնակաւ ծախան խմբին: Ներկայացուցիչները առարկում են. — «Ապա միևնոյնը երբ աշակերտութիւնը հէնց ինքն էր խնդրում ձեզանից, ինչու համաձայնեցիք, այլ դիտմամբ դրսի դուրս զարձրիք»: — «Լաւ, հէնց որ մի բան սկզբից ծռեն ու վերջը զգան ծոռիկան փաստը, միևնու վերջ էլ այդպէս ծռուր պիտի լսանք»: Մենք այն ժամանակ սխալուել էինք: — «Դուք, չէ՞ որ ասացիք, որ ուսուցիչները կամայ-ակամայ կը պաշտպանեն իրանց ընկերոջը: — «Այժմ ընդհակառակը, ամենախիտ պատժի կը ենթարկեն նրանք, իսկ միջնորդ-դատարանը», պատասխանում է քաղաքագէտ տեսուչը «Ապառաժի» և «աշակերտութեան» մէջ տարուբերելով...

ասելով՝ (և յուսալով որ գործը ուրբան ձգձգուի, գիտակից աշակերտները կամաց-կամաց իր կողմն են հակուելու—այդպէս են հասկացրել նրան, որ և ասել է աշակերտութեան ներկայացուցիչներին)՝ որ միջնորդ դատարան կը ընդունէ միայն այն պայմանով, եթէ այնտեղ քննուի ու պարզաբանուի թէ վերաւորանքը ո՞ւր է վերաբերում, և այնուհետև շարունակութիւնը Աշակերտական Միութիւնը իր ձեռքն առնէ, ճանաչէ արդարն ու մեղադրը և ըստ այնմ վճիռ կայացնէ:

Աշակերտութիւնը պնդում է ընդունել «միջնորդ դատարան», որպէսզի ապագայում ոչ մի թիւրիմացութիւն առաջ չըգայ:

Պ. Մեկքոնեան յամառում է իր ասածին, վերջը աւելացնելով—«Եթէ ինձ կախազան էլ հանելու լինին դարձեալ չեմ ընդունի միջնորդ դատարան այն ձևով, ինչ ձևով որ ընդունում է աշակերտութիւնը ²⁾»:

Աշակերտները տեսնելով որ պ. Մեկքոնեան զանազան անհիմն պատճառաբանութիւններով ուզում է գործը դեռ ձգ-ձգել, իրենց վերջին ուղիմատումն են դնում. պատասխանել «տեսչի» միջոցով՝ «այո» կամ «ոչ», որպէսզի ըստ այնմ որոշեն իրենց բանելիք դիրքը:

Միւս օրը «տեսուչը» յայտնում է, որ պ. Մեկքոնեանը համաձայն է առաջարկած բոլոր կէտերին, սակայն նրան ասել են որ Միջնորդ Դատարան հրաւիրողները միայն տատնուելով (18) հոգի են և պաշտօնական թղթի տակ «աշակերտութիւն» ստորագրութիւնը միանգամայն կեղծ է. ուստի նա պահանջում է ստորագրութիւն մի առ մի:

Գիտէին աշակերտները թէ ո՞ւր շնորհիւ է պ. Մեկքոնեան այնքան թե առել, և թէ ովքեր են այդ ստախօս լրտեսները, բայց և այնպէս պարոնի այս մի քմահաճոյք—պահանջը ևս կատարեցին: Յետ ստացան թուղթը և վաթսուն (60) հոգու ստորագրութեամբ էլ յետ ուղարկեցին իրեն, որից յետոյ նոր, պ. Մեկքոնեան ամբողջ երեք օր մտածելուց յետոյ, բարեհաճեց իր գրաւոր համաձայնութիւնը տալ:

Երեկոյեան փողոցում մի քանի աշակերտների առաջ կըստ-

²⁾ Աշակերտութիւնը իր՝ պ. Մեկքոնեանին դիմած պաշտօնական թղթի մէջ՝ յիշատակել է, որ «Միջնորդ Դատարանին» տալիս է հետեւեալ իրաւասութիւնները՝ I. քննել և պարզաբանել՝ արդե՞օք դուք աշակերտութեանն էք վերաւորել, թէ նրա մի մասին, իբրև աշակերտ անհատներ: II. Ի՞նչ կերպ էք վերաւորել, III. Կայացնել վճիռ տու՞մոյ կողմին բաւարարութիւն տալու: Այս երեք կէտերի վերաբերմամբ խնդրել է պ. Մեկքոնեանի դրաւոր համաձայնութիւնը:

բուժ է Վ. Նարինեանը և համարեա աղերսելով խօսում.— «Տղաներ, կիրքը մի կողմ թողնենք, խօսենք սառնարիւնութեամբ: Մենք էլ գիտենք, որ Արտաշէսը աշակերտութեանն է վիրաւորի: Լաւ, հիմի ի՞նչ անենք, հօ կախ չենք տալու: Եկէ՛ք, էլ ոչ Միջնորդ Դատարան ոչ բան, հաւաքուեցէ՛ք, Արտաշէսը զայ ու ներողութիւն խնդրի, վերջանայ գնայ»:

Նրանք ասում են՝—«Եթէ Արտաշէսը եկող լինէր, այն ժամանակ կը գար, երբ աշակերտութիւնը նրան 2—3 անգամ բացատրութեան էր հրաւիրում:

—Ձեր ի՞նչ գործն է, դուք հաւաքուեցէ՛ք, նրան ըերելն իմ պարտքս:

—Արդէն կողմերի համաձայնութեամբ ընդունուած է «Միջնորդ Դատարան», կը սպասենք բնութեան ու նրա վրձ-
ուին:

—Բայց, տղաներ, չկարծէք, որ ես ընկճուած եմ ձեր առաջ. պարծենում է նա ու բաժանում: (Վկայ են՝ Ա. Մուսա-
յիւեան, Չ. Կանայեան, Բ. Բարաղամեան, և Յ. Խանլարեան):

Գումարւում է Միջնորդ-Դատարանի առաջին նիստը: Ս. Փոլեանը բարձր դասարանների մի խումբ աշակերտների կողմից (8 հոգու) պ. Նախագահին մի ղեկուցումն է ներկայաց-
նում որ և կարդացւում է դատաւորների առաջ: Բովանդա-
կութիւնը հետեւեալն է, որ. պ. Մելքոնեան վիրաւորել է միայն մի քանի անհատների և ոչ նոյն իսկ միջնադէպին մասնակցող բոլոր աշակերտներին (12—15), ուստի զուր է աշակերտու-
թիւնը այդ վիրաւորանքը իր վրայ վերցնում:

Այդ ղեկուցում ներկայացնողների նպատակն է եղել ոչ թէ արդարաց-
նել պ. Մելքոնեանին, այլ զգալի կերպով թեթեւացնել նրա յանցանքը եւ
յոյց տալ դատաւորներին, որ նրա աշակերտութեան առաջ չէ մեղաւոր,
այլ միայն մի քանի անհատների:

Այժմ շարունակենք...

Գումարւում են Միջնորդ Դատարանի II, III, նիստերը և
պ. Մելքոնեան սկսում է իր ցուցմունքները՝ իր գործունէնու-
թեան սկզբնական օրերից՝ (թէ ի՞նչպէս պայքարեց և յաղթա-
նակը տարաւ)՝ մինչև միջնադէպը, ուր նա մեղադրւում էր ա-
շակերտներին, պատճառաբանելով որ վերջիններս ուզեցել են
բռնի կերպով ներս խուժել ժողով՝ չի թողել, և երբ իրեն վո-
ղոցային ամենալկաթի հայհոյանք են տուել, ինքն էլ նրանց ա-
սել է՝—«Սրիկաներ, թըքում եմ ձեզ վրայ, ձեզ պէս 600-ին
բոխ մէջ կը ճգմեմ»:

Դատաւորներից հարց տուողներ են լինում.—«Մի՞թէ ա-
շակերտները առանց իրաւունքի էին ուզում լինել ժողովում»,

պատասխանում է. «Ո՛չ, ... բայց եթէ քոյր վարչականները և նոյն իսկ խառն ժողովը թոյլատրէր նրանց լսելու, ես դարձեալ չէի թողնի, որովհետեւ այդպիսով բռնաբարած կը լինէինք միւս դպրոցների աշակերտների իրաւունքները... (!!??):

Աշակերտների օձիքից ընկելն ու խփելու փորձը միանգամայն ուրանում է ասելով՝—«Երբ նա (աշակերտը) ինձ ասաց թէ՛ մենք էլ թքում ենք ձեզ պէս ցեղ ուսուցչի վրայ, մօտեցայ, նրան ձեռքից ընկեցի, որ հանգստացնեմ: Ռուսերէն ծնողական հայնոյանը տալը նոյնպէս ուրանում է:

Մի քիչ էլ ստելուց յետոյ^{*)}, տալիս է իր մեղադրական կէտերը, որոնք են՝ I. աշակերտները բռնաբարել են միւս դպրոցների աշակերտների իրաւունքները: II, իրեն վիրաւորել են, III. քաղաքում սուտ լուրեր են տարածել, որ իբր թէ ինքը ատրճանակ է քաշել աշակերտների վրայ, IV խանգարել են դպրանոցի խողաղ պարապմունքները:

Ապա ասում է, որ ինքը փոխադարձաբար վիրաւորել է մի խումբ աշակերտների, որոնց միջից ճանաչում է միայն չորս-հինգ հոգու, որոնցից և պահանջում է բաւարարութիւն, վերոյիշեալ չորս կէտերի վերաբերմամբ: Եւ նստում է:

Այնուհետեւ ոկսւում է ներսում եղած ուսուցիչ վկաների հարցաքննութիւնը:

Ստութիւնից, շողոքորթութիւնից հետեւ փախչող շիտակ ու աղնիւ ուսուցիչները եկան ու ասացին այն՝ ինչ որ լսել էին ներսը պ. Մեկքոնեանից—ժողովը ցրուելու ժամանակ՝ և դուրսը՝ աշակերտներից, ժողովը ցրուելուց յետոյ: Իսկ մնացած ուսուցիչ վկաները եկան ու պ. Մեկքոնեանից լսածները ուղեցին մի կերպ քողարկել, (սակայն աւանդ շուտ բռնուեցին), իսկ աշակերտներին ասածներին մի տառն էլ աւելացնել: Այդ բանում աչքի էր ընկնում մանաւանդ, օր. Շ. Յ.-ն (պ. Մեկքոնեանի հետ է ապրում): Երբ նախագահը խնդրում է պատմել թէ ի՞նչ գիտէ նոյեմբերի 9-ն տեղի ունեցած միջնագէպի մասին, ասում է. —«Ես ներսն էի, պ. Մեկքոնեան եկաւ ու ասաց (թուքը կուլ տալով) «աշակերտների համար չարժէ գործել»: Նախագահը հարցնում է. —«Սրիկաներ չասաց պ. Մեկքոնեանը»: —«Սրիկանե՞ր... (աչքի տակով նայում է պ. Մեկ-

*) Ի միջի այլոց՝ դատաւորի այն հարցին՝ թէ «Ի՞նչպէս էր առաջնորդում ձեր վերաբերմունքը դէպի աշակերտութիւնը» պատասխանում է. «Ես միշտ սիրել եմ աշակերտութիւնը և պաշտպանել նրա շահերը մանկավարժական ժողովներում: Դրան վկայ են ամբողջ ժողովների արձանագրութիւնը»: Այս բանը հապկին աղմուկ հանեց: Պահանջում էր պ. Մեկքոնեանից իր ուսուցիչ բնկերների միջոցով հաստատել այդ:

քոնհանին, ձեռքերը դնում ճակատին, բաւական ժամանակ իբր թէ մտածում և ապա)... ոնց չէ՞, ոնց չէ՞, ասաց, իսկ երբ դուրս եկայ, աշակերտները միջոնցքում պ. Մելքոնեանին այնպէս սաստիկ հայհոյում էին որ...:

Գալիս է մի ուրիշ վկայ, պ. Ա. Թ.-ն, որ նոյնպէս շարունակ մտածում էր, թէ ի՞նչ տեսակ անէ, որ ի նպաստ Մելքոնեանին խօսէ: Հարցնում են.— «աշակերտ Եղիեանը լաց էր լինում»: Պատասխանում է «Չէ»:

— «Արտասուքներ շատ թափւում էին:— «Այո՛, ... և տեսչի առջ կանգնած խիստ հայհոյում էր...»: (Տեսուչն այդ բանը համարում է սուտ: Դատաւորներից մի քանիսը տեսչի վկայութիւնը դանդաղ էին անհրաժեշտ և շատ կարեւոր, որ և դրուեց բուհարկութեան: Չայների ճնշող մեծամասնութիւնը խեղդեց բանաձեւը, համարելով նրա դալը միանգամայն աւելորդ, բայց կարիք եղած դէպքում թերևս համաձայնուեն):

Գալիս է երրորդ վկան պ. Ա. Տ.-ն: Սա էլ սկսում է հոգեբանական թէօրիաներով արդարացնել պ. Մելքոնեանին, ասելով, որ երբ վերջինս ներս մտաւ և ասաց թէ՛— «սրիկայ աշակերտների համար չարժէ գործել», այդ խօսքերը ամենեւին ցնցող տպաւորութիւն չգործեցին իր վրայ, որովհետեւ լաւ բմբունել էի նրա հոգեբանական մոմենտը...:

Այլևս չենք ուզում ծանրանալ մնացած վկաների ասածների վրայ, որովհետեւ համարեա նոյն բովանդակութիւնն ունին:

Անցնենք բուն խնդրին:

Միջնորդ դատարանը մի քանի օր իր նիստերը շարունակելուց յետոյ, ցրւում է. (կը բացատրենք թէ ինչո՞ւ ցրուեց):

Դատաւորներից մէկի հեռանալուց յետոյ, վաթսուն աշակերտների կողմից ընտրուած ներկայացուցիչները վեր կացան ու բողոքեցին.— «Դուք պարտնայք դատաւորներ, եկել էր այստեղ ո՛չ թէ գործի արդարութիւնը երևան հանելու, այլ լոկ ձեր անձնական հաշիւները մաքրելու, մի թէ սա դատաւարութիւն է: Այլևս ի՞նչ է մնում մեզ անելու»: Քարտուղարը արձանագրում էր: Դատաւորներից մէկը՝ պ. Ա. Աթաբէկեան (հոգաբարձու) հեզնօքէն ժպտում է ու պատասխանում.— «Մնում է միայն մի լաւ ուռում կանչել»: Այստեղ արդէն ներկայացուցիչները վերջնականապէս տեսան, թէ ի՞նչ տեսակ դատաւորների հետ գործ ունեն և յայտարարեցին՝— «Պ. նախագահ, մեզ արդէն ծաղրել էլ են սկսում: Չենք ուզում այլևս... այստեսակ միջնորդ դատարան հարկաւոր չէ՛ մեզ»: Մարտ, 1906.

Եւ նախագահը պաշտօնապէս յայտնում է,—«Քանի որ կողմերից մէկը չի ուզում, ես անկարող եմ դառն շարունակել»:

Դատաւորներից մի քանիսը սկսում են նախատել պ. Աթաբէկեանին, թէկուզ վերջինս ճիշդ ու ջանք էր թափում արդարացնելու իրեն:

Բոլորքը ում է քաջամարտիկ Մեքքոնեան և ըստ իր սովորութեան, սպառնում նախագահին. — «Դատաւարութիւնը շարունակիր, թէ չէ՝ ուրիշ կերպ կը վարուեմ քեզ հետ*»): Այդ է պատճառը, որ աշակերտութիւնը իր առաջին թուեցիկի մէջ յիշել է — «...դործը հասաւ. «տուր ու դմիոցի» աստիճանին, ուր փայլում էր իր բոլոր ընդունակութիւններով դարձեալ Ա. Միքոնեան...»:

Միւս օրը դուէլի է հրաւիրում պ. նախագահին, «նազան, քառասուն քայլի վրայ»...

Ուրեմն աշակերտների ներկայացուցիչները սկզբում միայն իրենց բողոքն են յայտնել դատաւորներին, որ դատաւարութեան բուն խնդիրը թողած, անձնական գծով հաշիւներով են զբաղւում (օր-կ, միմեանց վիրաւորել՝ ու ժամերով վիճել այդ առթիւ):

Բողոքը, փոխանակ յարգուելու, ծաղրի-ծանակի է արժանանում: Եւ աշակերտների ներկայացուցիչներին այլևս ոչինչ չէր մնում անելու, բայց եթէ քանդել խեղկատակութեան բեմ դարձրած Միջնորդ Դատարանը...

Եւ մեռաւ միջնորդ դատարանը աշակերտութեան յոյզերն ու յոյսերը իր հետ իջեցնելով խորճնակ գերեզման...

Քաղաքիս ամենաառաջնակարգ ինտելիգենտ ուժերից էին դատաւոր կոչուածները. սակայն նրանց չաջողուեց հրապարակի վրայ դնել սեւ զատապարտեալին, որպէս զի գիտակից հասարակութեան քինոտ ու թունոտ նախապնդին արժանանար նա...:

Մեռաւ Միջնորդ դատարանը առանց ցանկալի հետեանքի հասնելու, այլ ընդհակառակը աւելի և աւելի բարդացնելով՝ առանց այն էլ բարդացած դործը...

Ի՞նչ անէր այժմ աշակերտութիւնը... Նորից միջնորդ դատարան ընտրէր...—Սակայն ի՞նչ երաշխաւորութեամբ, որ ընտրուած նոր մարդիկ, իրանց թայֆայական ու անձնական գծով հաշիւների ասպարէզ չեն պարձնի մի սրբազան հիմնարկութիւն: Ի՞նչ երաշխաւորութեամբ, որ արդարութեան պաշտ-

*) Նոյն բռնի ուժով, ինչպէս այժմ նախագահին, միջնադէպի ժամանակ էր ուզում աշակերտներին պարանոցից դուրս անել «դաշնակցաւարի»...

պանները չեն հրաւիրուի դարձեալ մենամարտի: Եւ վերջապէս թիվ կը յանդգնի այլեւս դատել պ. Մելքոնեանին, միջնադարեան հերոս ասպետին, «Ապառժի» հրամանատարներէից մէկին:

Ո՛չ աշակերտութիւնը միանգամ արդէն իր տեսածը տեսաւ:

Պարզ էր նրանց համար հակառակորդներին նպատակը:

Եւ ի նկատի առնելով «տեսչի» ամաշկարա բռնած պաշտպանողական դիրքը դէպի պ. Մելքոնեան (փակագծերում տանք.—վերջինս զգալով իր գործած յանցանքի մեծութիւնն ու անկշռելի ծանրութիւնը, հէնց սկզբից ուղեցել է հրաժարուել, սակայն «տեսուչը» չի թողցել, երևի նրա համար, որ մնայ, դպրոցը քանդէ, աշակերտներին իրար հետ թշնամացնէ, ցան ու ցրիւ անէ, ու նոր գնայ): Իրանց ութ ընկերների դաւանած սկզբունքը՝ ի՛նչ կերպ էլ լինի արդարացնել պ. Մելքոնեանին, վերջնոյս դումարած գաղտագողի—նկուղային ժողովները, ուր գրգռում էր միւս դպրոցների աշակերտներին (թեմականի իր) գէժ բողոքաւորների գէժ և պաշտպանում այնտեղ դուէլի վաղափարը, հաւատացնելով նրանց, որ միակ ամենալու միջոցն է վերաւորում պատիւը վերականգնելու համար (սա փաստ է), ահա այս բոլորը աչքի առաջ ունենալով և վերջնականապէս համոզուելով, որ իրանց կողմն է արդարութիւնը (ամենագորեղ փաստերից մէկը՝ իրանց ընկերների որոնք միջնադէպին ներկայ են եղել ու մասնակցել), տուած վկայութիւնները խառն ժողովներում, մանաւանդ ուսերէն հայոցանքի վերաբերմամբ, և այնուհետեւ կարծիքների երկու անգամ իսպառ փոփոխելը: Եւ որ այդ արդարութիւնը երևան հանելու համար ամեն տեսակ օրինաւոր ճանապարհների դիմել են*), աշակերտները այլեւս իրենց խիղճը հանգիստ են զգում և յիսունեօթ (57) ստորագրութեամբ պահանջում են տեսչից, որին աւելի շուտ են ճանաչում քան հոգաբարձութեան պ. Մելքոնեանի անյապաղ հեռացումը: Ահա այդ պահանջագիրը.—

«Մենք մեր վերաւորումած պատիւը ցանկացանք վերականգնել միջնորդ դատարանով: Ամբողջ երեք շաբաթ է ահա, ինչ անհամբեր սպասում ենք այդ «արդարութեան տուն» կոչուած հիմնարկութիւնից հնչուելիք «արդարութեան ձայնին»:...

«Սակայն միջնորդ դատարանի երէկուայ նիստում տեղի

*) Երկու-երեք անգամ ներկայացուցիչների միջոցով բացատրութեան են հրաւիրել, մի անգամ էլ Աշոտ Եպիսկոպոսի միջոցով և ապա միջնորդ դատարան:

ունեցած միջնադէպը եկաւ մեզ համոզելու, որ այլեւս միջնորդ դատարանը անկարող է շարունակել դատավարութիւնը.

I.—«Նախ՝ որ պ. Արտաշէս իրեն՝ աշակերտութեան շահերին պաշտպան ցոյց տալու համար՝ վկայ էր բերել մանկավարժական ժողովներէ արձանագրութիւնը և այդ պատճառով շեղել է միջնորդ դատարանին՝ դատավարութեան բուն խընդրից *):

II.—«Իւր՝ դատաւորներին ուղղած անտեղի սպառնալիքներով, առիթ տուեց միջնորդ դատարանի կազմալուծելուն **):

Ուստի մենք՝ բարձր դասարանների աշակերտներս, դըպրոցական խաղաղ կեանքը չվրդովելու համար, մեր այսօրուայ խառն ժողովում բարուօք համարեցինք դիմել ձեզ և յայտնել մեր վճիռը՝—

«Ամիջապէս հեռացնել աշակերտական շահերից յոխորտացող, բայց իրօք ոչինչ անող պ. Մեքրոնեանին, համարելով նրա մնալը դպրոցում աւելի քան վնասակար՝ թէ՛ մեզ և թէ՛ դպրոցի համար ***):...

«Արձակման մասին պաշտօնապէս յայտնել մեզ ամսոյս 30-ին, երեկոյեան, հակառակ դէպքում աշակերտութիւնը պատասխանատու չէ՛ դպրոցական խաղաղ կեանքը խտնաբերելուն»...:

Շուշի, 29-ին նոյեմբերի: Ստորագրութիւններ յիսունեօթ (57) աշակերտների:

Տեսուչն այս թուղթը կարգալուց յետոյ վճռականապէս ասում է ներկայացուցիչներին՝—«Ձեր պահանջը երբէք չի՛ յարգուի: Մեքրոնեանը մնալու է, կամ դժւր պիտի արձակուէր, կամ դպրոցը փակուի, երկուսից մէկը: Այսուհետեւ ինչ որ ձեռքներից դուրս է, չինայէք, արէր...»:

«Քաղաքագէտ տեսուչը» այդ ձևով յայտարարում էր «Ապառաժի» հրամանը:

*) Այս բանը շատ վիրասրական էր ուսուցիչներին համար, և նրանք պատրաստում էին զալ ու միջնորդ դատարանը ցոյց տալ թէ որքան է պ. Մեքրոնեան Մանկավարժական ժողովներում պաշտպանել աշակերտութեան շահերը: Նոյնը պահանջում էին և աշակերտութեան ներկայացուցիչները:

*) Այսինքն, աշակերտութիւնը նոր միջնորդ դատարան կազմելու, աչքի առաջ է ունենալու, որ նոյն սպառնալիքները (նոյն խսկ դուէլ) կարող են ստանալ և նորընտիր դատաւորները ու չի՛ կազմելու:

**) Եթէ պ. Մեքրոնեան աշակերտութեան շահերի պաշտպան լինէր, հէնց դէպքի յաջորդ օրը կը դար ու հաշիւ կու տար նրանց իր ասածների և արածների համար և ոչ թէ բացատրութիւններից խուսափելով գործը ծայրայեղութեան հասցնէր:

Ներկայացուցիչները այս խօսքերին արժանի պատասխանը տալիս են ու դուրս գնում.— «Իմաց կացէք, պ. Ջիլինդարեան, աշակերտութիւնը իր արդար բողոքը հնչեցնելու է է մինչև վերջ, երբէք տեղի չտալով անգամ մահուան սպառնալիքների առաջ»:

Եւ գեկտեմբերի մէկին բացասական պատասխան ստանալուն համար՝ քառասունեօթ աշակերտները՝ (տասն հոգին «Աստառաժի» սպառնալիքների խղճեցութեան տակ՝ իրենց չէզօքներ էին յայտարարել, սակայն չանցած երկու օր արդէն հակառակորդ բանակումն էին) դասադուլին յայտարարում— «Կամ մենք, կամ պ. Արտաշէսը»:

Դասադուլը շարունակում էր....:

Հակադասադուլականները, «քաղաքական ներկայ նեղ հանգամանքներում, երբ պատերազմական-դիմադրական դրութիւնը դատկեան սրի պէս կախում է թեմական դպրոցի ղիխին, նրանք անյարմար են գտնում դասադուլը ու հոգով-որտով հակառակ են, որովհետեւ քիւրքը կառավարութեան դիտող աչքից չի խուսափում ամենաթեթեւ շտիժումն իսկ *), ուստի գիմում են տեսչին և խնդրում պարտելու յարմարութիւններ: Տեսուչը համաձայնում է: Բողոքաւորները լսելով այս բանը՝ դալիս են ու ասում— «Պ. Ջիլինդարեան, իւրաքանչիւր դասարանում միայն 3-4 հոգի են պարագողները:— «Մի հոգու համար անգամ ուսուցիչ պիտի ուղարկեմ դասարանները» բարկացած պատասխանում է «հղօրներին» քծնող տեսուչը:

Աշակերտները պահանջում են, գէթ դասադուլի խաղաղութիւնը չխանգարելու համար, չանել այդ քայլը:

Չորս օրից յետոյ՝ հոգաբարձութիւնը՝ իրեն յատուկ շողորթութեամբ տապարէզ է իջնում՝ Միջնորդ Դատարանի գերում, բողոքաւոր աշակերտներից մի քանի հոգու հրաւիրում է քննութեան, ջանալով հաւատացնել, որ ինքը շատ կարճ միջոցում, նոյն իսկ երկու օրում, քննելու է գործը մանրամասնաբար և պ. Մելքոնեանին ամենախիստ պատժի ենթարկելու:

Աշակերտները լաւ իմանալով որ գործը բաւական լուրջ կերպարանք է ստացել՝ (այժմ թայֆայական մոլութիւնից կուրացած մի քանի անհատներ, իրենց համար պատուի խնդիր են դարձրել այն) և որ նրա քննութիւնը պահանջում է ձեռնհաս ու միանգամայն անշահամոլ մարդիկ, որոնց չի կարելի գտնել կոմիտայիներից ահաբեկուած Շուշում, տեսնելով ու ճանաչելով, թէ քննութիւն ձեռնարկող հոգաբարձութեան մեծամասնու-

*) Տէս նրանց թուոցիկները № 1, 2, «Մշակ» № 274:

թիւնը ինչ տեսակ մարդկանցից՝ է կազմուած, մանաւազ որ նրանցից երկուսը արդէն՝ Միջնորդ Դատարանում իրենց այլանդակ տիպերը բնորոշել էին, յայտարարում են.—«Մենք գոնէ, իբրեւ անհատներ, ոչ մի վստահութիւն չունենք ձեզ վերայ, նախ՝ նրա համար, որովհետեւ Միջնորդ Դատարանում արդէն ձեզանցից երկուսին՝ մեր հինգ մատի պէս ճանաչեցինք ու տեսանք թէ որքան նրանք «Չատագովում» են արդարութիւնը, 11.—Իսկ ուզում էք խարել մեզ ու հաւատացնել, որ երկու օրում կարող էք լուծել մի վերին աստիճանի բարդացած գործ, որի մանրամասն քննութիւնը պահանջում է եթէ ոչ մի ամիս, գէթ շաբաթներ: Ուստի գործին ձեր այդքան թիթեւ չընդ նայելով՝ ցոյց էք տալիս թէ ի՞նչ տեսակ քննութիւն է լինելու ձեր ապագայում անելիքը:

«Որ ձեզ երբէք չի աջողուի երկու օրում մանրամասն քննել այդ գործը և արդարութիւնը երեւան հանել, դրանում մենք խորապէս համոզուած ենք: Իսկ եթէ սիրում էք դպրոցը և վեր դասում նրա շահերը ամենից, աշակերտները, որ չեն կարողանում հաշտուել մի մարդու հետ, որ ամեն ինչացու է, բայց ոչ ուսուցչացու, պիտի արձակէք նրան: Ուզում էք իմանալ թէ բարոյական սնունդութեան ի՞նչ աստիճանի է հասել նա.—վկաները պատրաստ են նրա տուած ռուսերէն-ծնողական հայհոյանքը հաստատելու: Միթէ բաւական չէ՞ այդ, գաղափար կազմելու համար մի ուսուցչի ունեցած մանկավարժական ընդունակութիւնների մասին»:

—«Ձէ, մենք մանրամասն քննութիւն ենք պահանջում:

—«Իսկ մենք էլ չենք ուզում նոր միջնորդ դատարան, որ կարող է միայն նոր բարդութիւններ ծնեցնել, քան եղածը պարզել.—առաջին Միջնորդ Դատարանի պերճախօս օրինակը մեր առաջն է զրուած:

—«Մենք նրանց նման չենք, մենք շատ լաւ կը քննենք:

Աշակերտները զգում էին, որ մի յետին զիտաւորութիւն կայ, և՛ նոր հոգաբարձութիւնը իր նոր քննութեամբ ուզում է մի նոր խաղ խաղալ աշակերտութեան գլխին, այնուամենայնիւ դարձեալ խնդրում են նրա կարծիքն իմանալ, որովհետեւ նրան (աշակերտութեանն) է պատկանում՝ քննութիւնը հոգաբարձութեան յանձնելու կամ չյանձնելու խնդիրը:

Միջնորդ դատարանում եղածներէից մէկը, պ. Յ. Մ-ն, կատաղած վեր է կենում և սկսում կշտամբել աշակերտներին, վիրաւորական խօսքեր շարտել նրանց երեսին, որ իբր պ. Մեղրոնեան միայն նրանց է վիրաւորել, իսկ նրանք «անամօթարար» փաթաթում են այդ ամբողջի վզին:

Աշակերտները բողոքում են.—«Մի՞թէ մեզ բերել էք այստեղ անպատուելի՞ն համար: Պ. պ. հոգաբարձուներ ինչ՞եւ չէք սաստում ձեր ընկերոջը:

Յ. Մ-ն, նորից շարունակում է իր ասածները: Աշակերտները նրան դառնում են ու ասում—«Ձեզ էլ ենք ճանաչում, պ. Մեկքոնեան, ձեզ էլ, պ. Ա. Աթաբեկեանին էլ»: Եւ գնում են դուրս:

Միւս օրը հրաւիրւում են ամբողջ քառասունեօթը հոգին: Սրանցից ևս անվստահութեան սև քուէն ստանալով, հոգաբարձուներից շատերը ափսոսանքով սկսում են համոզել աշակերտներին, որ հաշտութեան ձեռք մեկնեն պ. Մեկքոնեանին, ասելով՝—«Երևի չի իմացել, իրան կորցրած է եղել և յանկարծ բիրանից թոցրել է այն հայհոյանքը: Որքան չլինի էլի ձեր ուսուցիչն է, մի կերպ հաշտուեցէք ու եօլա տարէք, մի թողնէք, որ թշնամին ուրախանայ: Այս անգամ ներեցէք, եթէ մէկ էլ պատահի, մենք առանց խօսալենելու նրան դուրս կը վռնողենք»:

Աշակերտները պնդում են, որ այլևս անկարող են հաշտուել այլասերում մի մանկավարժի հետ: (Փաստ են բերում նրա գուէլի գաղափարը պաշտպանելը, կոպիտ ուժով պարծենալը, աշակերտներին զինուած բանակների բաժանելը և այլն այլն գուտ դաշնակցական մաներները):

«Տեսուչն» էլ անձամբ և ապա մանկավարժական խմբով փորձում է հաշտեցնել աշակերտներին, սակայն իղճւր—պ. Մեկքոնեան իր գատապարտելի կամակորուժեամբ զործը՝ ծայրայնեղութեան և աշակերտների համբերութիւնը մինչև բողոքներն էր հասցրել:

Եւ շարունակում են իրանց յամառ դասադուլը ամբողջ 17 օր:

Այդ ժամանակամիջոցում պրիստաւի օգնականը գալիս է դպրոց ու յայտնում տեսչին, որ դասադուլ անողները թող զգուշանան. որովհետև նրանց առաջնորդներից և նրանց կողմնակից ուսուցիչներից մի քանիսն արդէն գիտէ ինքը, որոնք պիտի ձերբակալուեն, եթէ չվերականգնի դպրոցական խաղաղ կեանքը*):

Եւ երբ տեսուչը՝ իբր թէ սրտի կսկիծով յայտնում էր ոստիկանի չարագուշակ խօսքերը, աշակերտները նրան պատասխանում են՝

* Պրիստաւի օգնականի դպրոց գալու մասին՝ աշակերտները մի շաբաթ առաջ գիտէին և այդ լուրը տարածում էին իրենց (ու նոյն իսկ ուսուցիչներին) մէջ ու խրախուսում իրար, երբէք չխաբուել այդ աչքակապուկութիւնից:

—Զնւր, վրդովուած մի ձեացնէք ձեզ, որովհետեւ ինքներդ շատ լաւ գիտէք թէ ո՞ւմ սարքած խաղն է այդ, ով է ոստիկանը և ով նրան ուղարկողը...

Տեսուչը ձգնում է հաւատացնել, որ ինքը բանից խաբար չի, միայն գիտէ որ նրա ասածները շատ շուտ կարող են իրագործուել...

—Լաւ թող տանեն ու մեղնով բանտերը լցնեն՝ և թող այդ պատիւ բերէ ձեզ ու ձեր հոգաբարձութեան: Մենք կուռելու ենք անվերջ սե՛ւ բռնաւորի դէմ, թող զան աշատեղ մեզ վնդալիւծարեն ու զպրանոյի սալայատակները կարմիր ներկեն...

Մինչև պրիստաւի օգնականի գալը, հոգաբարձութիւնը «Ազգի» տպագրութեան համար դիմում է գաւառապետին ու թոյլտուութիւն խնդրում: Գաւառապետը կարգում է աղը և սկսում նախատել նրան ներկայացնող հոգաբարձուին. — Ապա երբ դպրոցում այսպիսի խռովութիւններ են պատահում, դասադուլ յայտարարում, ինչո՞ւ չեք յայտնում մեզ, չգիտէ՞ք, որ պատերազմական դրութիւն է...»: Ազգը ուղարկւում է Բառէրին: Սա ևս նախատում է սպառնում. «վերականգնէք դպրոցական նօրմալ պարապմունքները, հակառակ դէպքում զօրքի միջոցով կանեմ այդ»:

Յաջորդ օրը տեսուչը գաւառապետից ստանում է մի պաշտօնական թուղթ, որով պահանջւում էր անյապաղ տեղեկութիւն, թէ ինչո՞ւ են խռովութիւնները դպրոցում: Տեսուչը ամենայն համեստութեամբ կատարում է այս պահանջը:

Ի՞նչ է լինում հոգաբարձութեան հրատարակած ազգի հեկանքը՝ այն որ սովորական օրերի նման, երբ աշակերտները խումբ խումբ կանգնած են լինում դպրանոցի առաջ, պրիստաւը սկսում է հայհոյել նրանց ամենաանպատկառ հայհոյանքներով՝ (ասենք ի՞նչ զարմանանալ, ուսուցիչը որ հայհոյի, պրիստաւը հօ կա՞յ ու կա՞յ) և հրաժայում գարադավոյներին, որոնք «ДУНТОВЩИКИ!» գոռալով ու՝ մի քանի ջուխտ հայհոյանքներ կպցնելով, նազայկաների միջոցով սկսում են հալածել նրանց. և երբ վերջիններս իրարու գլուխ կոտրելով փախչում են, իրենք սկսում են հրճուել, զուարճանալ: Գաւառապետն էլ այնուհետեւ հրամայում է իրեն տեսնելուս անպայման գլխարկ հանել...

Ահա հոգաբարձութեան հրատարակած ազգի քարերար (!?) ազդեցութիւնը:

Բողոքող աշակերտները վերջին անգամ զրաւօր դիմումն են անում և յայտնում, որ պատրաստ են ուսողական ծնողական հայհոյանքի քննութիւնն ընդունելու:

Հոգաբարձուները ներկայանում են նրանց և ասում.— «Եթէ գործը կը տաք մեզ մանրամասնաբար քննելու, դպրոցի դռները բաց են ձեր առաջ, իսկ եթէ չտաք, տուժամանակ չը պէտք է յաճախէք դպրոց, հակառակ դէպքում կը դիմենք վըճառական միջոցներին»...

Հարցնում են.— «որո՞նք են այդ վճռական միջոցները:

Նախագահը լեզուն ծամծամել է սկսում, իսկ պ. Մելքոն-հանը դառնում է.

— «Այն, որ Բառէլը կը գայ և զօրքի միջոցով ձեզ դուրս կը քշէ դպրոցից...»: Ասում է դաշնակցական տեղական շէֆը*):

Աշակերտութեան տղար դայրոյթին հափ ու սահման չը կար...:

Ազատամիտ հոգաբարձուները (դաշնակցական) սողալ են սկըսել ազատութեան կատաղի թշնամու՝ մի բիւրօկրատի առաջ: Ինչո՞ւ... Ուժ և զօրութիւն են խնդրում նրանից՝ խնդրելու և ճզմելու համար աշակերտութեան հնչեցրած արդար բողոքի հուժկու ձայները: Գպրոցի տէրերն ու տնօրէնները մասնել են գպրոցն ու աշակերտութիւնը այն բիւրօկրատ կառավարութեան ձեռքը, որի դէմ էլ ածական չմնաց որ չշռայլեն իրենց «ըմբոստ» օրգաններում:

Եւ աշակերտները գնահատում են որանց այդ քայլը խրոխտ, համարձակ դատաւիտում են դաշնակցական հոգաբարձուների սև՝ արարքները: Ու այնուհետեւ դպրոցի փակման պատճառ չհանդիսանալու համար, պահանջում են վաղուանից և եթ արձակուած համարել իրենց, տալով վկայականները:

Հոգաբարձութիւնը և մանաւանդ «տեսուչը», որ հէնց դրան էին սպասում, միւս օրուանից հրամայում են քարտուղարին պատրաստել վկայականները: «Տեսուչն» իր նինգ սրտից թունաւոր «ախ»-եր քաշելով ստորագրում էր թղթերը: Վերջին օրն էր... Աշակերտութիւնը լացոտ ժպիտը երեսին՝ վերջին «մնաս բարովը» պիտ ասէր իր փոքրիկ ընկերներին: Նա պիտ հեռանար՝ որպէսզի Մելքոնեանի նման այլասերուած մանկավարժները շարունակէին իրենց բիրտ բռնկողներում աւելի ուժեղ թափով ճզմել մատաղ սերունդը... Հրաժեշտի վերջին օրն էր...

Եկան հոգաբարձուներն ու յայտնեցին, որ պ. Մելքոն-

*) Այդ տիպի «չեղափոխականներ» են հայրենքի այդ «փրկիչները», որոնց խօսքերի և դրժերի մէջ ոչ մի հետևողականութիւն:

եանը հրաժարուած է արդէն.— «Նա, որ միշտ սիրել է դպրոցը՝ սիրել աշակերտութիւնը, այսօր ցաւ է՝ զգում տենեւելով որ իր պատճառով աշակերտները հեռանում են: Եւ խնդրում է իրեն վաղուանից արձակուած համարել... Այժմ դուք մի վերցնէք ձեր վկայականները, նստէք ու շարունակէք ձեր պարապմունքները: Սակայն Մեքքոնեան հրաժարուելով հանդերձ բարոյական պարտականութիւն է դրել մեզ վրայ դորձը քննել և սրոշել իր մեղաւոր լինելու չափը. ուստի պէտք է ընդունէք քընսութիւնը...»:

Աշակերտները սուս ու փուս ցրւում են...:

Եւ գնաց... Մեքքոնեանը յօխորտալով— «Սիրեցի դպրոցը, սիրեցի աշակերտներին ու հրաժարուեցի»... Գնաց բարով... Կեանքը մեծ է և խորշերը բազմազան... Սակայն մի բան.— Եթէ իսկապէս դուք սիրում էիք աշակերտներին, ապա ո՛ւր էիք, երբ նա դասերը դադարեցրած, ձեր ետեւից ընկած հշաւիրում էր քաղատրումեան, ո՛ւր էիք, երբ ձեր շնորհիւ ատելութեան թունաւոր կարիճները կրծոտում ու խայթում էին մատաղ հոգիները: Ո՞ւր... այն ո՛ւր էիք փախչում սլատուի ատեանից...

Բողոքաւորները նստում են դասի...:

Այժմ էլ հսկադասադուլականներն են սկսում գասաղուլը, իրենց յետեւից քաշ տալով մէկ ամբողջ խակ մատա, որպիսին է երկրորդ (II) դասարանի երեխաները... «Ապառաժը» ձեռք չի վերացում անվերջ խաղերից և ինտրիգներից:

Դասադուլ են սկսում այն մի խումբ աշակերտները, որոնք իրանց ցրած թռուցիկներում կոկորդիլոսի արցունքներ էին թափում թէ— «...Ջննտորական զրուծիւնը գամոկլեան սրի պէս կախում է թեմական դպրոցի դիմին: Այն աշակերտները, որոնք քաջ գիտէին, որ «քիւրոկրատ կառավարութեան դիտող աչքից չի խուսափում ամենաթեթեւ շարժումն իսկ»:

...Այդ հտիադասադուլական աշակերտներն են այսօր դասադուլ յայտարարում և պահանջում հոգաբարձութիւնից՝ (որը պ. Մեքքոնեանի հրաժարականը ընդունելիս, ուխտել է ինչ կերպ էլ լինի անպայման արդարացնել նրան)՝ անյատկալ քննութիւն հակառակ դէպքում կը թողնեն դպրոցը ու կերթան...

Ճիզուխտների պատրաստած մերենայութիւններ.— չէ որ այդ կարգի նշանաբանն է...

«Նպատակը արդարացնում է միջոցները» — այդ է դրանց սկզբունքը:

Հոգաբարձութեան կարգադրութեամբ յունուարի 7-ին թեմական դպրոցի երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարանները ժամանակաւորապէս փակուեցին:

Դրան մօտ վարձկան մարդիկ են կանգնեցրած, որոնք

այդ դասարանների աշակերտների մոտքը՝ դպրոց խստիւ արգելում են: Փակման պատճառը այն է, որ հոգաբարձութիւնը պահանջում է աշակերտներից դէպքի մանրամասն քննութիւնը անպայման յանձնել իրան, իսկ աշակերտները չեն վստահանում, այլ պահանջում են Միջնորդ Դատարան, որի անդամները լինին միանգամայն չէզոք, ձեռնհաս ու անշահամոլ մարդիկ և ոչ «Ապառաժի» խրաւիլակները: Դրա համար աշակերտութիւնը յունուարի 12-ին գրաւոր դիմումն է արել հոգաբարձութեան և խնդրել, որ դործի արդարութիւնը միանգամայն երևան հանելու համար հրաւիրեն օտար քաղաքներից հմուտ իրաւաբաններ՝ լիազօր իրաւունքներով, որոնց կայացրած վերջնական վճոխն ենթարկուելու են և՛ աշակերտութիւնը և Մեկընեան և հոգաբարձութիւնը: Վերջիններս գրաւոր կերպով պատասխանել են, որ հոգաբարձութիւնը ոչ մի կերպ չի կարող փոխել իր որոշումը: Աշակերտութիւնը և Մեկընեան, որտեղից ուղղւում են թող մարդիկ հրաւիրեն (ինքը ազատ է համարում իրեն ամենաթեթեւ ճանապարհածախսն անգամ հոգալուց), սակայն այն պայմանով, որ վերջնական վճիռ կայացնելը՝ հոգաբարձութիւնը վերապահում է իրան:

Աշակերտներն էլ յամառում են իրենց առածին, խորապէս համոզուած լինելով, որ իրենց առաջարկածը Միջնորդ Դատարանի ամենաարդարացի և ամենաօրինաւոր ձևն է:

Մինչև օրս հրաժարուած Մեկընեանի դասերը զեռ չեն բաժանուած: Փառաքան հրաւիրելու համար ճանապարհածախք չգտնող դաշնակցական հոգաբարձութիւնը այս գլխից իրենց աղիղ Մեկընեանին վճարել են տարեկան ամբողջ սոճիկը 900 ռուբլի *): Երեւի հոգաբարձութիւնը մտադիր է արդարացնել նրան ու նորից հրաւիրել ուսուցչական. պաշտօնով:

Մի բան ևս, որ շատ զարմացնում է աշակերտներին. այդ այն է, որ հոգաբարձութիւնը միայն վերջին օրերն է յայտարարել թէ բարձր դասարանների փակման մասին, երբ

*) Ինքը հրաժարւում է և ստանում «ընկեր» հոգաբարձուներից էս գլխից տարեկան ամբողջ սոճիկը 900 ռուբլի... Այլ կերպ միթէ վայել է վարուել... ազգային սատրապներին... ուրիշ բան է եթէ սպորտէն կերպով, լոկ կապրիզով հեռացուածը դաշնակցական չէ, «թշնամի» է և համարձակւում է պահանջներ անել. օ մեր Տարտիւֆները հոյնիսկ կը խելագարուեն և կը խեղդուեն կոկորդիլոսեան առատ արցունքներից... խարդախ մարդիկներ, միթէ բան մնաց մեր կեանքում որ չկեղծէիք, չապականէիք:

աշակերտութիւնը պատրաստուում էր գրքերն առնել ու գալ դպրոցը:

Այս աշակերտական պայքարը հասարակական նշանակութիւն ունի և այն կողմից որ «հօօր» «Ապառաժի» սպառնալից հրամանների դէմ խիզախութիւն ունեցաւ չընկճուելու բողոքող աշակերտութիւնը. դա նշանակալից երևոյթ է մեր խուժանամիտ և ոտրկացած հասարակական կեանքում:

X.

Բ.

Ի դէպ. այդ նոյն դաշնակցական «մանկավարժ» Արտաշէս Մելքոնեանը թոյլ է տուել իրեն, իր սենեակի մէջ կատարել մի քստմենլի գործ ևս, որի նկարագիրը դնում ենք ստորեւ:

Թեմական դպրոցի ուսուցչուհիներից մէկը. օր. Շուշանիկ Յարութիւնեան, դպրոցի ծառաներից մէկի միջոցով տեսարաներ (ուղղելիք) է ուղարկում իր տունը, ուր ապրում է և պ. Մելքոնեանը...

Ծառան դուրս գնալուց՝ մէկ ժամ, ժամ ու կէս յետոյ, պ. Մելքոնեանի կրկնակօշիկները գողացւում են...

Նրա կատաղութիւնը վերջ չկար: Ատամները կրճատացնելով գոչում է.— «Օ՛, ես գիտեմ՝ այն սրիկա Յովսէփն է գողացել*»...

Նրանց տանու ծառան՝ փոքրիկ Սարգիսը վկայում է, որ Յովսէփի գնալուց յետոյ կրկնակօշիկները տեղն են եղել դրած, իսկ նրանցից յետոյ մի քանի մարդիկ հիկել ու գնացել են, կրկնակօշիկներն էլ անհետացել են նրանց հետ միասին: — «Ձէ ու չէ... Յովսէփն է գողացել, այն փողոցային սրիկան...

Արդ՝ ինչպէս նրան ճանկ գցել...

Եւ գտնում է միջոցը:

Յայտնում է օր. Շուշանիկին, որ միւս օրը Յովսէփին՝ տեսարանները տանելու պատրուակով. ուղարկէ իր մօտ, որպէսզի ինքը նրա «ճաշը մի լաւ եփէ»:

Միամիտ ծառան գալիս է ու քաշում զանգը: Պ. Արտաշէսը հրաւիրում է նրան ներս, իր սենեակը: — «Արի այստեղ»...

*) Խեղճ ծառան դեռ առաջին անգամն է, որ գնում է նրանց տուն: Մի քանի ամիս է, ինչ ստանձնել է թեմ. դպրոցում այդ պաշտօնը: Նրա միւս պաշտօնակից ընկերները երդում են, որ մինչև օրս նրանից ամենաթեթեւ գողութիւն անգամ չեն տեսել...

եւ սենեակի դուռը փակելով, երկու ձեռքով կատաղած բռնում է նրա ականջներին, գլուխը խփում պատին, գոռալով.— «Շան ուրդի, դժւ ես գողանում իմ կրկնակօշիկները»... Ապա սկսում է սիլլահարել: Ծառան դառնում է արտասուէքները կուլ տալով.— «Այ աղա, ախր իմ մեղքը ինչ ա ուր...— «Լութր սրիկա, ես քո աչքերից գիտեմ, որ դու գող ես»...— «Աստուած, երկինք, գետինք, ես գող չեմ, այ կանչել տուր Բալասանին (դպրոցի ամենահաւատարիմ ծառան ամբողջ 14 տարի է ինչ ծառայում է այնտեղ), նա ինձ շատ լաւ է ճանաչում»: Մի քանի սիլլաներ ու յիշոցներ էլ ուտացնելուց յետոյ, մարդ է ուղարկում Բալասանի ետեւից: Վերջինս գալիս ու վկայում է, որ «էսքան ժամանակ դեռ մի սպիչկի հարամութիւն անգամ չի տեսել նրանից»:

Եւ մի կերպ կարողանում է ազատել թշուառ ծառայողին...

Նրան բերին դպրանոց: Ականջներից արիւն էր կաթկաթում, իսկ աչքերն ու այտերը ուռել էին*)

Ժանսօթ. խմբ. Մնացած նիւթերը յետաձգւում եմ:

*) Այդպէս է լինում երբ խուժանապետը դառնում է... վարժապետ...

ՄՈՎՍԷՍ ԹԷ ԴԱՐՎԻՆ?

Պրոֆ. Ա. Դոգելի *)

Մարդու ծագման գաղափարը, որ դեռ հազար տարիներ առաջ տոգորել էր յունական փիլիսոփաների գիտակցութիւնը, նորից կեանքի կոչուեց 1809 թուականին Լամարկից և այլ ևս չմեռաւ։ Փայլակի նման նա բռնկուեւմ էր պատմութեան մտաւոր հորիզոնի վրայ կամ այստեղ կամ այնտեղ, բայց դեռ ևս չէր առաջացնում որոտնդոստ հարուածներ։ Սակայն փոթորիկը կախուած էր օդում և իւրաքանչիւր վայրկեան կարող էր պայթել. և նա իսկապէս պայթեց երբ 1859 թուականի աշնան ևրեաց Դարվինի գլխաւոր երկը։ Այդ երկնէ «Տեսակաների ծագումը բնական ջրկողութեան ճանապարհով կամ գոյութեան կռում լույսարմարուած ցեղերի պահպանումը»։ Դա քսան և երկու տարիների ընթացքում հետազոտողի մտքերի և աշխատանքների արդիւնքն է։ Այդ երկի երևան գալը տիեզերա-պատմական նշակութիւն ունեցող մի եղելութիւն էր, նման Կոպերնիկի ստեղծագործութեան։

Իսկապէս Դարվինը հանդիսանում է օրգանական աշխարհում մի Կոպերնիկ, ինչպէս նրան անուանեց հոգեկաւոր Դիւրուա Րայմոնդ, Բերլինի գիտական ճեմարանի նախագահը։

Թէ զարգացման ամենաբարձր տիպերը առաջանում են ամենապարզ տիպերից, թէ աւելի կատարեալները ունեցել են աւելի պակաս կատարեալ նախահայրեր, այդ յայտնում էին դեռ մինչև Դարվինը մտածողներից և հետազոտողներից ոմանք. սակայն մարդու ծագման մասին այդ ճշմարտութիւնը կենսաբեր տաքացնող և ոգեշունչ ոյժ ստացաւ լուսարնուելով հանձարեղ թէօրիայի կողմից, որ լուսաւորում էր զարգացման և գանակները, միջոցները և ճանապարհները։

Դարվինի գիրքը երևան եկաւ 1859 թ. տոբսուան, իսկ

նոյն օրուայ երեկոյեան նա ամբողջապէս արդէն ծախուել էր: Գրքի մի հրատարակութիւնը հետեւում էր միւսին, գիրքը թարգմանում էին քաղաքակիրթ աշխարհի բոլոր լեզուներով: Նրա ուսուցումը կենդանիների և բոյսերի տեսակների ծագման մասին մի մտաւոր յեղափոխութիւն էր և ինչպէս կայծակի հուժկու մի փայլ խփեց բնագիտների բանակին, ուր դեռ շատ հին գիտնականներ, եկեղեցու վետերաններ քնած էին քաղցր քնով, հաւատացած տեսակների յաւիտենական անփոփոխութեան մէջ: Դա մի մտաւոր փոթորիկ էր, որ բարձրացաւ և տարածուեց հեռու-հեռու ամբողջ քաղաքակիրթ աշխարհի վրայ, ամեն տեղ կործանելով հին, փամփ, սխալ հասկացողութիւնները և գիտական մտածողութեան նոր ճանապարհ բանալով:

Ձեռքի տակ ունենալով բնութիւնից վերցրած հազարաւոր ֆակտեր, Դարվինը ապացուցում է որ ամենաբարձր՝ զարգացում ունեցող օրգանիզմները ծագում են ամենապարզ ձևերից, որ բոլոր կենսաւոր էակները, բոյսերը, կենդանիները և մարդիկ պէտք է առաջ գային ամենապարզ օրգանիզմներից, որոնք անասնման երկար ժամանակամիջոցներում, միլիոնաւոր տարիների ընթացքում, գոյութեան կուռի մէջ յարմարուելով և բնական ջոկողութեան օրէնքով հասան մարմնի կազմի աւելի բարձր աստիճանների, աւելի կատարելատիպ էակներ դառան:

Այդ ուսուցումը որ հեշտութեամբ կարող է հասկանալ միջին ընդունակութիւնների տէր ամեն մի 14 տարեկան աշակերտ անհասկանալի էր երևում եկեղեցուն և նրա փաստաբաններին ու անթիւ բարեկամներին, որոնք նրա նկատմամբ այն ընդգիծաբար-թշնամական դիրքը բռնեցին, ինչպէս իր ժամանակին դէպի աշխարհակործան Կոպերնիկեան սխտեմը:

1859 թուականից ծագեց մի սլայքար որի նմանը բեֆոր-մացիայի ժամանակներից սկսած մարդկային կուլտուրական սլաւութիւնը չի իմացել:

Այն ժամանակ ապրող բնագետների մէջ, ինչպէս նկատուցինք, կային բաւական հին գիտնականներ, որոնք իրանց աշխարհայեցողութեան մէջ դեռեւս յենում էին Մովսէսի վրայ և անկեղծ հաւատում էին հրաշապործ ստեղծագործութեան: Այդ գիտնականները դաշնակցութիւն կազմեցին Դարվինի դէմ: Սակայն մի քանիսը զրանցից ջանասիրութեամբ ուսումնասիրելով նրա թէօրիան, որպէսզի մերկացնեն նրա սխալները և թոյլ կողմերը, յետոյ հրաժարուեցան իրանց նախապաշարունակներից և հակառակորդներից դառան ջերմ բարեկամներ և մարդու ծագման վարդապետութեան ջատագովներ:

Մերձաւորապէս երկու տասնեակ տարի տեւեց բնագետնե-

րի մէջ դարձինականների և հակադարձինականների պայքարը: Հակառակորդների թիւը օրէցօր նուազում էր և աւելանում կողմնակիցների թիւը մինչև որ դարձինականների յաղթանակը կատարեալ չդառաւ բնագէտների շրջանում:

Դարձինականութեան տարածումը վաթսուական թուականների Գերմանիայում նպաստեցին. Հէկել — Խենում, Նէգելի Միւնխենում, Կեօլլեկեր Վիւրցբուրգում, Խաւիայի Պադուա քաղաքում Կանեսարենի, Յիւրիխում — Դոդելը (հեղինակը): Առանց չափազանցութեան կարելի է ասել որ եօթնամասնական թուականներից սկսած Դարձինի ուսուցումը մարդու ծագման մասին բացարձակ պաշտպանների գտաւ գերմանական բոլոր բարձրագոյն ուսումնարաններում: Այժմ եթէ մէկը սկսէր Մովսէսի հոգով խօսել մարդկային ծագման մասին, նրա վրայ բնագէտները կը նայէին ինչպէս քարէ շրջանից մնացած մի տարօրինակ բրածոյ կենդանու վրայ:

Նոյնիսկ ֆրանսիական ակադեմիան, ամենապիտանական լայց միենոյն ժամանակ ամենապահպանողական ընկերութիւնը ֆրանսիայում, երկար ժամանակ անտես առնելով Դարձինի վերջապէս դառաւ նրա գաղափարների կողմնակիցը և ընտրեց նրան անգամ ճեմարանի: Եւ շուտով այդ օրինակին հետեցին Պետերբուրգի, Բաւարիայի, Աւստրիայի և այլ երկրների գիտական ճեմարանները:

Այլ կերպ վերաբերուեցին իհարկէ Եկեղեցու մարդիկ: Եկեղեցին արշաւանք սկսեց դարձինականների դէմ, սակայն այդ թէօլոգները անվիճելի ֆակտերով և մարդկային առողջ իմացականութեամբ զինուած բնագէտների կողմից սարսափելի հարուածներ ստացան և ստիպուած կղան լոկ և կամաց-կամաց հաշտուել նոր վարդապետութեան հետ: Վատիկանի բոլոր անէծքները, բողոքական կեղծաւորների մոլեռանդութիւնը անզոր էին ոչնչացնելու ճշմարտութիւնը: Իսկ յետոյ Ամերիկայում և գերմանիայում նոյնիսկ երևան եկան քահանաներ, որոնք դարձինիզմի մէջ ճշմարտութիւնը խոստովանելով աշխատում էին գիտութեան և կրօնի մէջ հաշտեցնող սահմաններ որոշել: Սմերիկայի քարոզիչ Մ. Յ. Sawage գրեց մի նշանաւոր աշխատութիւն «Կրօնը դարձինականական լուսարմուծութեամբ»:

Այդ գրքի մէջ բացարձակ ընդունում է այն եղելութիւնը որ մարդու ծագման մասին վարդապետութիւնը «արդէն վերջնականապէս ընդունուած է բնագէտներից և իրանից ներկայացնում է ոչ երկրորդական թէօրիա առանձին տեսակների ծագումը բացատրելու համար, այլ գլխաւոր սկզբունքը երկրագնդի վրայ ամբողջ կեանքի զարգացման համար»: «Եւ կար-

ծուժ եմ, ասում է Sawage, որ գիտութեան նպատակները ինչպէս և կրօնի նպատակները նախ և առաջ կայանում են ճշմարտութիւն որոնելու մէջ, որովհետեւ միայն ճշմարտութիւնն է տանում զէպի Աստուած... կրօնի և գիտութեան համար ամեն ժամանակ անէծք է եղել այն միտքը թէ որեւէ աեղ գոյութիւն ունի դադարը հետազօտութեան մէջ»...*):

Ի՞նչ բան է կրօնը (բելիզիում). իր ծագումով «բելիզիում» նշանակում է «կապանքներ» և մենք բնագէտներս զրա տակ հասկանում ենք կախումի գիտակցութիւնը արտաքին աշխարհից, իր մերձակորից, բնութիւնից և տիեզերքից, գիտակցութիւնը որ մենք արսօլիւտ կերպով ազատ չենք, այլ կապուած բնական կապերի ամբողջ ցանցով: Ահա այդ կախման գիտակցութիւնը այն բանից, ինչ որ մեզանից դուրս է և այստեղից բղխող մտածողութեան եղանակը ուրիշների նկատմամբ, կրօն է մեր հայեացքով:

Մենք կուսակաշտների կրօնքը անուանում ենք — նախնական. քրիստոնեաները Մոհամեդի կրօնքը անուանում են զգայնական, որովհետեւ նա իր հետեւողներին անդրգրեղեղմանային կեանքում հրաշալի հարեմ էր խոստանում: Մոհամեդը քրիստոնէական կրօնքը անմիտ է կոչում, որովհետեւ մի Աստուծոյ փոխարէն երեքի աստուածութիւն ենք ընդունում. հրէաները քրիստոնէական կրօնքը սխալ են համարում, որովհետեւ Նազարէթցի Յիսուսը իսկական մարգարէ չէր և ընհակառակը՝ քրիստոնեաները համարում են հրէական կրօնքը մոլար, որովհետեւ նրանք իրանց սեփական Մեսիային խաչեցին: Իւրաքանչիւր քրիստոնէական զաւանանք կամ ազանդ պնդում է որ միայն ինքն ունի ճշմարտութիւնը, իսկական կրօնքը: Կաթոլիկները, ինչպէս յայտնի է, իրանց եկեղեցին են համարում միակը որ փրկում է մարդկանց:— Եւ արեան ի՞նչ հեղեղներ են թափուել այդ կրօնների շնորհիւ: Ի՞նչ խայտառակ չարագործութիւններ են կատարուել յանուն կրօնքի:

Իւրաքանչիւր իսկական գիտութիւն պէտք է մարդուս համբերատար, հանդուրժող դարձնի: Իւրաքանչիւր կրօնքը նրա անհատական սեփականութիւնն է, որի կարգադրումի կամ սահմանաւորման մէջ ոչ ոք իրաւունք չունի, ոչ մի վարչութիւն, ոչ մի պետութիւն, և աւելի նուազ՝ պապը, որ նոյնպիսի մի մեղաւոր մարդ է, ինչպէս բոլոր մահկանացուները:

*) Այս մասը մեծ կրճատութեամբ է թարգմանւում. զարգինականութեան էութեան մասին «Մուրճում» շատ է խօսած նախընթաց տարիներում: Մ. Խմբ.

Յառաջխաղաց զարգացման սկզբունքը իբրև ուղեցույց թեև անցնում է դարվինիստի մտքի ելևէջներով, բնութեան այդ մշտական թէև դանդաղ առաջադիմութեան—էվոլյուցիայի օրէնքը հանդիսանում է ինքն իրանից իբրև մարդկութեան համար մի աւետիս, բնաճանաչութեան աւետարանը...

D.

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿԻՉՆԵՐԻ» ԳՈՐԾԵՐԻՅ

Թէ ինչ չարիք են խուժանամիտ և կամազուրկ եղած հայ հասարակութեան գլխին այն «կաղմակերպութիւնները», որոնք «երկրի մէջ կռուողներին» և «յեղափոխութեան» պատպրուակներով ամեն տեսակ բռնութիւններ և զեղծումներ են կատարում—այդ երևում են անթիւ փաստերից, որոնցից չնչին մասը կը լինի արձանագրուած մամուլի մէջ: Ով որ ծանօթ է խառնական մաֆիա և կամորա ընկերակցութիւնների գործելակերպերին նա ցատկ սրտի պէտք է խոստովանուի որ մեր «հայրենիքի փրկիչները» իւրացրել են այդ ընկերակցութիւնների մեթոդները: Բերենք մի քանի փաստեր, որոնք արձանագրուած են տարբեր ուղղութիւններ ունեցող օրգաններում, տարբեր վայրերում կատարուած:

Ա.

Կենդրոնագան ժողովի գումարումից առաջ՝ «Դաշնակցութիւնը» մի յատուկ կոչ հրատարակեց (Յուլիս 9 թւով):

Այդ կոչով «Դաշնակցութիւնը» «հետևելով ժամանակի մօղային» դեռ նախ և առաջ՝ լաւ հայ հոյով և զրպարտում էր հայ հոգեւորականութեանը ու հայհարուստ դասակարգին:

Ապա՝ պարծենալով որ ինքն «իր ուսերի վրայ է տանում հայ աշխատաւոր ժողովրդի կեանքի և նրա բռնաբարւած քաղաքական ու սօցիալական իրաւունքների պաշտպանութեան վեհ զործը»,—հրաւիրում էր «ընկերներին ու քաղաքացիներին», որ ձայն տան իրան թեկնածուներին. Որպէս զի նրանք «հեռացնեն հասարակական ասպարիզից վաշխառու աղաներին,

ցեց հոգևորականներին և առհասարակ բոլոր բուրժուա կեդ-
եքիչներին» և իրանց ձեռքն առնեն «Մեր բոլր ծխական, տնտե-
ական և կուլտուրական գործերի տնօրէնութիւնը»:

«Դաշնակցութեան» այս փքուն ու փծծուն կոչի առթիւ,
իւր ժամանակին, ես ընդարձակօրէն խօսել եմ անցեալ «Հով-
ուի» № №-ներում «ընտրական գիտակցութիւն» յօդուածումս:

Այստեղ պէտք է աւելացնեմ այս. եթէ անգամ ըն-
դունենք որ հոգևորականութիւնը արդարեւ աշխատաւոր դա-
սակարգին հարստահարել է,—այնու ամենայնիւ բողոքելու
իրաւունքը այդ մասին յամենայն դէպս «Դաշնակցութեանը»
չէ, որ պիտի ունենայ— «Դաշնակցութիւնը», որ իրան աչքի
գերանը թողած՝ ուրիշի աչքի չիւզը չպիտի ցոյց տայ: «Դաշ-
նակցութիւնը» որ տամնեկաւոր տարի բազմաթիւ անմեղ մար-
դկանց գրաւմաների հետ՝ կեանքերն ես հարստահարեց յանուն
Տաճկահայաստանում իւր ձեռնարկած աւանտիւրային, որ չոր-
բորդ տարին է գնում ահա, որ յանուն «ազգային ինքնապաշտ-
պանութեան» էլ հալ ու հարաքաթ չ'թողեց Ռուսահայ ժողո-
վրդի վրայ նրա թէ՛ վաճառական, թէ՛ արհեստաւոր, թէ՛ բանւոր,
թէ՛ քաղաքացու և թէ՛ գիւղացու վրայ, իւր սահմանած միա-
նւագ, արտակարգ և պարեքրական սուրբերով. որոնք հաւաքում է
ամենայն բռնութեամբ ու բարբարոսութեամբ*):

Նա,—«Դաշնակցութիւնը», որի ղինւորական ազենտներից
մէկը՝ Հ...ը դեռ նոր է ուղևորւել Անգլիասպեան երկիրը՝
այնտեղի հայութիւնից,—ինչպէս եկողներն հաւատացնում են,
—150,000 բուրլի կորզելու նպատակաւ՝ առանց միջոցների՝
մէջ խտրութիւն դնելու**):

Եւ, այդ ժողովրդի հարստահարելու, նրանից անվերջ դրամ
կորզելու ձգտումն էր առաւելապէս, որ «Դաշնակցութիւնը»
ստիպէ իւր աչքերը եկեղեցական և վանական կալաձաների ու
կայքերի վրայ գնելու՝ այս անգամ արդեն յանուն տնտեսական
և կուլտուրական գործերի տնօրէնութեան»:

*) Ծանօթ. «Դաշնակցութեան» հերոսներից մէկը,—Լ...
Թ... Շամշադինի գիւղերից մէկում իւր շուրջը ժողոված գիւ-
ղացիներին ցոյց տալով սեղանի վրայ դրած ժամացոյցը՝ պահ-
անջելիս է եղել, որ մինչև սլաքի այս ինչ գծից մինչև այս ինչ
գծին հասնեն՝ եթէ գիւղացիք 6000 բուրլի իրան չներկայացնեն
զէնք գնելու համար՝ նա ստիպուած կը լինի խիստ միջոցի ձեռ-
նարկել: Սարսափած գիւղացիք ճար ու ճուր անելով՝ 6000 բուրլի
հաւաքում և յանձնում են, սակայն մինչ օրս,—երկրող տարին
է գնում,—մի հատիկ զէնք չեն ստացել:

Ահա թէ ումից դաս և օրինակ վերցրին երկրիս զինուորական կառավարիչները՝ հայ գիւղացիներին տուգանելիս և տուգանքը պահանջելիս: Ծան. յօդ.

«Ինքնապաշտպանութեան» պատրուակով կորզած հարիւր հազարներով գնած զէնքերը վաճառում էին յօգուտ կազմակերպութեան, պահանջելով մի հրացանի համար 120 ռուբլի, փամփուշտի համար 70 ռուբլի, անցադրի համար 25—1000 ռուբլի և այլն ստանալով: Ո՞ւր էին գնում այդ բոլոր կորզած միջոցները: Ծ. «Մ.» խմբ.

**) Ծանօթ. Մեր ձեռքի եղած զբաւոյր տեղեկութիւնները և բանաւոր բազմութիւն ցուցումները՝ մեզ անմնապէս այն համոզման են բերել, որ Կրասնավոդսկում փետրուար ամսում սպանւած Մուշեղ Տէր Օհանեանցը՝ ուղղակի կերպով՝ զոհ է դաշնակցականների վրէժխնդրութեան՝ «Մշակի» 27 Ձեռն գետեղած լւր մերկացուցիչ նամակի համար:

Դժբաղդարար՝ մենք իրաւունք չունենք մեզ հաղորդւածները հրատարակելու, վասն զի թէ՛ գրաւորապէս մէջ տեղեկութիւն գրողները և թէ՛ բանաւորապէս ցուցում տուողները՝ այդ ամեն մեզ յայտնել են իրրեւ քահանայի, խոստովանաբար, յատկապէս խընդրելով, որ մենք չ'հրատարակենք, որովհետեւ նրանք «Դաշնակցութիւնից» վախենում են: Վախենում են մասնաւորապէս նրա այն ազենտից, որ այսօր փող կորզելով է զբաււած Անդրկասպեան երկրում: Ծ. յօդ.

Երբ բխրօյականներն են փող կորզում—գա «յեղափոխական» գործ է, երբ միհրանականները—այդ շանտաժ է, ըստ ազգային նախարարների լոգիկայի: Ծ. «Մ.» խմբ.

(«Հովիւ» № 10)

Բ.

Կողքի դպրոցի ողբալի վիճակը

Կողքի ծխական դպրոցը նիւթականապէս կարելի է ապահովուած համարել, եթէ անակընկալ պատուհասների չհանդիպի: Հասարակութիւնը դպրոցին է յատկացրել գիւղական բոլոր անուղղակի հարկերը (2 դինեաների, արօտատեղիների, դանթարի կապալավարձը), որոնք 3000 ռուբլուց աւելի արդիւնք են տալիս տարեկան:

Բայց այս էլ երկրորդ տարին է, որ ահապէն գումարը

վատնւում է կողմնակի կարեքների վրայ և զպրօցը զրկւում է նիւթական միջոցներից, շնորհիւ հոգաբարձութեան անփութութեան և նրանցից մի քանիսի անբարեխղճութեան:

Անցեալ 1906 թ. սեպտեմբերին Կողբում սպանւեց աղահանքների կառաւարտ Զաքար Չանփոլատեանը. այդ առթիւ գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ կառավարութիւնը 3550 ռ. տուգանք առաւ Կողբ գիւղից: Տուգանքը վճարելուհամար ամենեւին ժամանակ չտրւեց, այնպէս որ գիւղից սնամիջտպէս հաւաքելու հնարաւորութիւն չեղաւ: Վախենալով էկզեկուցիայի սպառնալիքից, ստիպուած եղան գիւղի մի քանի հարուստները վճարելամբողջ գումարը, մինչև որ հնարաւոր կը լինէր գիւղից հաւաքել և վերադարձնել նրանց փողերը:

Զաքար Չամփոլատեանի սպանութիւնը և սրա հետեանք տուգանքը մի կատարեալ չարիք գարձան Կողբ գիւղի հասարակութեան, մանաւանդ զպրօցի համար:

Սկզբում գիւղացիք մի կերպ հաշտւում էին տուգանքը վճարելու մտքի հետ, հաւատացած լինելով, որ Զաքարը սպանուել է անշուշտ իր հակայեղափոխական ընթացքի կամ իր կատարած որևէ յանցանքի պատճառով: *) Սակայն քիչ յետոյ հասարակութիւնը տեղեկացաւ կատարուած իրողութեան մասին, որ այդ սպանութիւնը տեղի է ունեցել Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի որոշմամբ և որ այդ որոշման ամենազլխաւոր շարժառիթը եղել են Չանփոլատեանների աղակցական հին խառը հաշիւները, որոնցով կենտրոնական կոմիտէն թոյլ է տուել իրան զրազուել «որպէս բացառութիւն»:**) Հասարակութեան զայրոյթին չափ չկար այն տռթիւ, որ յեղափոխական կուսակցութեան մի վարիչ մարմին մտնում է ինչ որ հակայեղափոխական աղանքների ժառանգական մութ հաշիւների մէջ, սպանում է զբանցից մէկին, և այդ սպանութեան պատճառով ստիպուած է լինում տհալին զրկանքներ կրել եւ 3550 ռ. տուգանք վճարել կառավարութեանը այն աշխատաւոր զիւղացիութիւնը, որի շահերի պաշտպանը պիտի հանդիսանար այդ յեղափոխական կուսացկութեան մարմինը: Մեծ իրարանցում ընկաւ գիւղացիների մէջ. շատերը նրանցից

*) Ո՛վ է դատաւորը և արգարութեան ի՞նչ երաշխիք է տրւում հասարակութեան, երբ ոչ-կազմակերպութեան մարդիկ սպանում են «կոմիտէներին» որոշմամբ. դա է կամորայի և մաֆիայի առանձնայատկութիւնը, և դեռ habeas Corpus-ի մասին են բարբաջում իրենց օրդաններում այդ ենիչերիները:

**) Կամորան և Մաֆիան նմանապէս զրազուում են մասնաւոր—ընտանեկան գործերի քնութեամբ և վճիռներով, որոշ վարձատրութեամբ...

Ծ. խմբ.

պնում էին, թէ «թող վճարեն տուգանքը նրանք, ովքեր յանցաւոր են այդ անարդար որոշման մէջ, իսկ կողքեցիք այդտեղ ոչ մի յանցանք չունեն. մանաւանդ, որ ժողովրդի շահերը և տրամադրութիւնը ամենեւին ինկատի չեն ունեցել որոշում կայացնելիս»¹⁾

Ժողովրդի այս նոր տրամադրութիւնը նկատելով, տուգանքը վճարող հարուստները եկան այն համոզմունքի, որ անհնարին կլինի ժողովրդից փող հաւաքել, մանաւանդ, որ կողքի հասարակութեան բացարձակ մեծամասնութիւնը, սակաւահող հողագործները և աղահանքերում աշխատող բանուորութիւնը, ծայրայեղ չքաւորութեան մէջ է, ուրեմն և ոչինչ չի կարող վճարել:

Ի՞նչ էր մնում անել. նրանք խոմ թոյլ չէին տայ, որ իրենց փողը կորչի:

Եւ դպրոցի հոգաբարձութեան աջակցութեամբ կլանեցին նրանք իրենց փողերի տեղ դպրոցական գումարները: Իսկ հոգաբարձուները մասնակցեցին դպրոցի գումարները վատնելուն, որովհետեւ իրենք էլ շահագրգռած էին այդ բանում. նրանցից մի քանիսը իրենք, մի քանիսի էլ ազգականներն էին, որպէս գիւղի հարուստներ, վճարել տուգանքը:

Մի չնչին գումար միայն (մօտ 600 ռ.) պահեցին, որպէս թէ 3 ուսուցիչների ուժիկը ամսէ ամիս վճարելու համար. բայց այդ գումարն էլ այսօր անամօթաբար վատնել են հոգաբարձուներից մի քանիսը, առանց միւսների գիտութեան, պարտք տալով ինչոր մարդասպան-սրիկայի, որպէսզի նա ծախսի դատարանի պատժից սպառնալու համար: Իսկ այդ մարդասպանից երբեք է յետ կատացւե՞ն արդեօք դպրոցի գումարները, շատ կասկածելի է ²⁾:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ հոգաբարձուները, գիւղում գոյութիւն ունեցող միմեանց ախոյեան թայֆաների

¹⁾ Բնորոշ է և յօդուածագրի հայեացքը արդարադատութեան մասին. ուրեմն այն անորոշ խուժանամիտ մասսան որ «ժողովուրդ» է կոչւում կարող էր իր տրամադրութեամբ սանկցիա տալ մի այդպիսի «որոշման»: Սոսկայի՜ խաւար և անզխտակցութիւն մարդկային իրաւունքների մասին: Թող պարոնը կարգաւ այս համարում Դիօնէօի յօդուածը: Ծ. խմբ.

²⁾ Յուսադատականը այն է որ մեր խուժանամիտ և ստրկամիտ հասարակութիւնը այդ բոլորը տանում է և պատասխանատուութեան չի ենթարկում չարագործներին: «Յեղափոխական» խօսքը դրանց համար դառելի է նոյնը ինչ «մարդասպան», որի գէմ կոտելու ոչ մի միջոց չկայ: Այլատերուած, բութ խուժան... Այդպէս են քեզ կրթիւն «հայրենիքի փրկիչները»:

Ծ. խմբ.

աչքի ընկնող ներկայացուցիչները լինելով (ինչպէս համարեալ ըստ գիւղերուն է), բոլորն էլ անհաշտ են միմեանց հետ: Դրանցից ամեն մէկը ամեն տեսակ ներելի ու աններելի միջոցներով աշխատում է իր ընկերների վարկը գցել հասարակութեան աչքում: Իրենց այդ անձնական գծում կրքերից դժբախտ, շատ անգամ փնտրում են երեխաների կրթական գործին: Դրանցից ոմանք պատրաստ են նոյնիսկ «քանգիլ դպրոցը», եթէ իրենց խօսքը չյարգւի:

Եւ այս հանգամանքների պատճառով Կողբի դըպրոցը, որ 3000 բուլբուլաց աւելի եկամուտ ունի տարեկան, ֆնացել է այսօր առանց կոպէկի: Ուսուցիչները այժմ ռոճիկ չեն ստանում, ծառաները—իրենց վարձը, հիւանդ իր շինած նստարաններն է ուզում դասարանից դուրս տանել իր աշխատավարձի փոխարէն, տանտէրը դասարանի դռներն է ուղում փակել, որովհետեւ սենեակի քրէհը չը ստացել. նոյն պատճառով ցախատան տէրը ցախերն է ուղում դուրս թափել, խանութպանը ուղում է իր տւած լամպաները տանել, որոնք տպառիկ գնւած են անգլիացէս չափահասների երեկոյեան դասատուութեան համար, և այսպիսի անվերջ լապտառակութիւնների դէմ ստիպւած է կռիւ մղել ուսուցիչը, որպէսզի դասատուութեան կանոնաւոր ընթացքը չխանգարւի:

Պարզ է, որ ռիսերիմ թշնամիներից բաղկացած հոգաբարձութիւնը ³⁾ անկարող կլինի այս չարիքը վերացնել: Այժմեան հոգաբարձուները անալոյման պէտք է տեղի տան աւելի բարեխիղճ և դպրոցի շահերին նախանձախնդիր մարդկանց, թէև նրանց իրաւասութեան ժամանակը դեռ չի լրացել: Հակառակ դէպքում առաջիկայ տարին, մօտ 600 տուն ունեցող Կողբ վիւղը կզրկւի իր ծխական դպրոցից, եթէ եկող տարւայ եկամուտներն էլ յատկացնեն տուղանքի տեղը, ինչպէս մտադիր են այժմեան հոգաբարձուները:

Բայց հեռանալուց առաջ հոգաբարձուները պէտք է բարեհաճեն իրենց վառնած դումարները հրապարակ հանել...⁴⁾

Պէտք է վերջապէս սթափւի գիւղի երիտասարդութիւնը իր թմրութիւնից և արտաքսի ասպարէզից ազա և տիրացու

³⁾ Ձե՞ որ «Ժողովրդի» ներկայացուցիչներ են, ուրեմն և սատրապներ, ըստ եղբ. Խատիսեանների լողիկայի... Ինչ ուղեւան կանեն. այդ դեմագոգիական արտուրդի է հասնում հայի ըմբռնումը դեմօկրատիկ ոկըղբունքների մասին:

Ծ. խմբ.

⁴⁾ Քարոզներով բան չի դառնալ. սովորէք ushagh դասարանով յարգելու ձեր իրաւունքը:

Ծ. խմբ.

հոգաբարձուներին, որոնք իրենց արշինից և անձնական կրթելից
դուրս ոչ մի սրբութիւն չեն ճանաչում...¹⁾

Աւետիս Օհանջանեան

(«Նոր-Աշխատանք»)

Գ.

Վերակազմեալների զեղծումները

Մեր ընթերցողները անշուշտ կը դիտեն՝ թէ սկսած ենք մեծ տեղ մը տալ Վերակազմեալ Հնչակեանների ներքին գործերուն: Այդ գործերը իսկապէս ներքին չեն, այլ ընդհանրական ազգային: Բազմաթիւ ոճրագործութեանց զոհ դացին ոչ թէ կրկու իրեք Վերակ, այլ՝ Հնչակեաններ, այլ՝ հայեր, որոնց պարագլուխն է Աբիկ Ունճեան: Աւելորդ է թէ խըտրանք մի չենք դնել հայու և հայու միջև: Անշուշտ շատ կը կսկծանք երիտասարդին վրայ որ Ամերիկա Տ. Սապահ-Գիւլի դէմ մահափորձ մը ընելով 13 տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտուեցաւ. միամիտ մը, բայց վերջապէս ինքնայոժար ոճրագործ մը, ոչ ոք զինքը կը բռնադատէր:

Հրատարակուած պաշտօնական յայտարարութիւնն ալ ցոյց կուտայ թէ 13,000 ոսկիի գումարի մը տակէն մտեր վրայէն ելեր են: Այդ ըստակէն 2,000 ոսկին մէկ անձ մը միայն կոկորդած է, ամբողջովին, միամտիլ ամբողջութեամբ կոկորդած: Հայ բանուորին ճակտին քրտինքը ²⁾:

Այդ գրամական զեղծարարութիւնն ալ մեզի անտարբեր չի կրնար թողուլ այլ և այլ տեսակէտներով, Աբիկ Ունճեանի սպանութեան ոճիրէն յետոյ, Վերակները Եգիպտոսի հայոցմէն մեծաքանակ գումարներ պահանջեցին. զօրեղ գիմադրանք մը կազմակերպուեցաւ այս ելուզակութեան դէմ: Ինչէն չպոռացին, ինչ գոռում գոչումներ չլուցան, «Լուսսար» և իր բարեկամները հակայեղափոխական են եղեր, հարուստները անսիրտ են եղեր, այդ ստակները զլանալով ուրիշ բան չեն ըներ եղեր բայց եթէ Հայաստանի հայերը կոտորածի դատապարտել անպաշտպան ³⁾ Եւ գպրոցներն երու կառուցման, հայթայթման ստակներն

¹⁾ Զարմանալի անպարկեշտութիւն դէպի «Ժողովրդի ներկայացուցիչներ»...

²⁾ Հետաքրքիր է իմանալ թէ այն միլիոններից որ կորցել են ազգից այդ «յեղափոխականները», անխտիր, քանի գրօշ է գնացել «ինքնապաշտպանութեան» վրայ:

³⁾ Կարծեմ զուր ևս շարունակում էք մոլորեցնել ժողովուրդը ձեր ապստամբական արկածախնդրական ցնորքներով, ձեր Մուրադներով...
Ծ. խմբ.

ալ իրենք կը պահանջէին: Հայաստանը պիտի պաշտանէին նէ:

Հիմակ ժողովուրդը կը տեսնէ թէ ի՞նչ է եղեր ներքին նպատակը այդ գոռում գոչումները ընողներուն: Անշուշտ այդ ներքին նպատակը քաջածանօթ էր ամէն անոնց որոնց քաջածանօթ էին այն մարդիկը իրեց բարեծնուդ անցեալով: Եւ անոնք որ ժողովրդին, բանուրին ճակտին քրտինք դրամը զեղծարարութեամբ մոխեցին, անոնք հարուստին դրամին պիտ խնայէին, մանաւանդ երբ թեթեալի վերհըսկում մը իսկ անկարելի էր ի պորժ դնել:

Հետեւաբար բնդհանրական շահը կը պահանջէ և ոչ իսկ կէտ մը մուծի մէջ ձգել. ահա ինչու համար «Լուսաբեր» այս միջին գործերուն մէջ լոյս բերելու համար սխնակներ կը շռայլէ գործերուն մանրամասնութեանցը:

(Լուսաբեր 343)

Ի.

Բարեհաճեցէք խնդրեմ «Մշակի» էջերում թոյլ տալ զետեղելու հետեւեալ նամակիս:

Վերջերումս Կրասնավոդսկում սպանուած «Մշակի» թղթակից երիտասարդ Մուշեղ Տէր-Օհանեանի անմեղ սպանութիւնը բաւական նիւթ տուեց հայ մամուլին:

Հանգուցեալ Տէր-Օհանեանի սպանութեան վերաբերմամբ էլ ամենայն հաւանականութեամբ շօշափելի ոչ մի փաստ չը կայ, որ դաշնակցականներն են սպանել. եթէ այդպիսի փաստեր լինէին, այն ժամանակ ոճրագործը մինչև անգամ իշխանութեան ձեռքիցն անգամ չէր կարող ազատուիլ: «Ազուէսից վկայ պահանջեցին պոչը ցոյց տուեց»: «Ժամանակը» այդ միևնոյն սպանութեան համար մի խղճուկ հերքում է զետեղում № 52-ում, ստորագրված էլի նոյն Կրասնավոդսկի դաշնակցական մի խումբ երիտասարդների կողմից:

Տողերիս գրողի յիշողութեան մէջ դեռ թարմ է, դեռ տալիսն է լրացնել այն չարարաստիկ միջնադէպը, որ անցեալ տարի տեղի ունեցաւ Ազուէսի շրջանում:

Անցեալ տարի... Դա Դաշնակցութեան միլիտարիզմի, ժարտի խրոխտ կոչերի, «հայդուկութեան» փառքի և յաղթութեան ոսկեգարն էր: Ո՞ր հասարակ ժահկանացուն կը համարձակվէր դաշնակցական «Կայծակ», «Երկաթ», «Վրէժ» ամենազարու հայդուկների կամքին հակառակ գնալ, նրանց «մածնին սև ստել», թր հողածին սիրտ կանէր չը ճանաչել, որ «բացի Ալլահից ուրիշ Ալլահ չը կայ և բացի Դաշնակցութիւնից ու-

րիշ դաւանանք գոյութիւն չունի»... Ահա այդ նշանակալից շրջանումն էր, որ Ագուլիսի և իր ամբողջ շրջանում Դաշնակցութեան հրատարակած «զինուորական դրութեան», «էկզէկսցիաների», և առհասարակ Դաշնակց. հայդուկների դեսպատական կարգերի, բաշխօղակութիւնների դէմ նամակի ձեռվ մի արդար դժգոհութեան խուլ ձայն լսվեց նորածաղիկ չարաճճի «կայծ» թերթում:

Օ՛, Աստուած իմ, այդպիսի մի յանգուզն նամակի առիթով ինչէր ասէք չը կատարուեց Ագուլիսում... Ամբողջ Ագուլիսը ալեկոծւում էր, իրար գլխովն էին զիպել ամբողջ Զոկլանդիան: Դաշնակցութեան զինուորական զիկտատուրան և գաղտնի ոստիկանութիւնը գործում էին գերազանց... Անմոռնչ ժողովուրդը Դաշնակցութեան մահաշունչ երկիւղից, ամենայն զգուշութեամբ, «փսփսալով» էին խօսում իրար ականջին—այդ միևնոյն նամակի առիթով, որպէսզի յանկարծ կասկածների ոչ մի տեղիք չը տան. (ականջը կանչի Տաճկաստանի դեսպատական կարգերի, ստորերկրեայ ոստիկանութեան—խափէների):

Ագուլիսի փողոցներում և լազարներում ինչ-որ «արտակարգ» գործի համար ման են գալիս ուսանողական գունաւոր, դիականալ նեղ շալվարը և տուժուրկէքը հագներին, փայլուն լակերօվանի կօշիկները ոտներին, մաուզէրները և դաշոյնները կողբերքից կախ արած, $\frac{1}{2}$ արշին երկարութեամբ փափախաւոր տղերք:—Ադն, մի զիտենայի էդ շուն շան որդի «մասնիչ» նամակ գրողը. գիտէք թէ ինչ կանէի:

Այդ միևնոյն նամակի պատճառով նրանք ժողովի են հրաւիրում ագուլեցիներին և վճռական տոնով ղոկերի առաջը իրանց ուղտիմատումն են դնում—«կամ յօդուածագիրը մեր ձեռքը յանձնել, կամ Ագուլիսում և իր գիւղերում գտնվող 7 հոգի ոչ դաշնակցական կասկածելի անձինք (մեծ մասը ուսուցիչներ) պէտք է կորչեն»:

Վիճակը ձգված էր... Դաշնակցական գեներալ-գուբերնատօրի և զինուորական շտաբի վճիռը լակօնական էր և խրոխտ... Իսկոյն Դաշնակցութեան էտապով Ագուլիս են բերվում 2 կասկածելի երիտասարդներ, որոնք բարեբաղդաբար «զինուորական դատարանի» առաջ արգարանում են:

Այնուհետև Մեսրոպը վարդ. Մաքսուտեանի և ուրիշների անվերջ խնդիրները ու միջնորդութիւնը անզօր են հանդիսանում «քաջ ֆիդայիներին» իրանց վճիռներից յետ կենալու:

Սկսվեց սարսափելի շրջանը...

Ամեն մի փոքր ինչ կասկածելի անձնաւորութիւն սոսկալի

դանագոծութիւնների, տուգանքների և անվերջ անպատուութիւնների և փողոցային հայհոյանքների էր ենթարկւում առանց դիրքի, հասակի և մինչև իսկ սեռի խտրութեան: Հալածանքը «աղանդաւորների» դէմ կատարեալ զարձաւ:

Թովմա—առաքեալի վանքի դարբասի առաջ 6 անգամ ատրճանակով կրակ են տալիս մի բոլորովին անմեղ ուսուցչի վրայ (այդ միևնոյն դէպքից մի քանի օր առաջ քաջ հայդուկները մի լաւ «քօթակ» են տալիս էլի նոյն պատանի ուսուցչին), բայց մթութեան պատճառով ուսուցչը բարեբաղդաբար անփափ է մնում:

Սրանք կենդանի փաստեր են: Հարիւրաւորներ կարող են վկայել: Կօմենտարիաները—ընթերցողին եմ թողում:

Արամ Գիւրջեան

Ե.

Նեղրի են եկել:

Նւ վերջապէս այնքան սարսափներից և արհաւիրքներից յետոյ «ժամանակեաններն» էլ են խելքի եկել և մերժում ու արհամարհում են բռնութիւնները, և ահա այսօր նրանք էլ են բողոքում բռնութիւնների դէմ. լաւ է ուշ, քան երբէք. միայն թէ բողոքէին հաստատ ու անկեղծ:

Այս քանի քանիցս անգամներ է, որ տեղ են տուել լրագրի էջերում, Արմաւիրից հասած նամակներին և լուրերին, որ Յունանեաններից բռնի միջոցներով պահանջւում է 10,000 ռուբլի: Ըստ «ժամանակեանների» դա թէև մատնութիւն էր, բայց որովհետև այդ այժմ ուրիշին է վերաբերում, մատնութիւն չէ: Նւ լաւ է, որ դուք այժմ հասկացել էք, որ այդպիսի դէպքերը պէտք է պարզել, այն, ինչ որ բռնութիւն է, և գնել հրապարակի վրա. այդ կէտում մենք էլ ենք ձեզ հետ համամիտ: Ժողովուրդը բռնութեան դէմ բողոքի ձեռք ձայնին վաղուց էր սպասում. վերջապէս լսեց. բռնութեան դէմ կռուելու դա մի մեծ գրաւական էր, և յուսով ենք, որ անշեղ պիտի գնաք այդ ուղիով շարունակ:

Այժմ ձեզ մնում է միայն այն, որ պատկառանքով վերաբերվէք տպագրական խօսքի մաքրութեանը. եթէ այս կէտումն էլ զգաստութեան նշաններ ցոյց տաք, մեր խոցոտ կեանքը կընդունէ խաղաղ կերպարանք, որ այդ դէպքում միայն իր հասկանալին ու որոշելիւ շատ հեշտ կը լինէր:

Նւ եթէ այսօր զուք և ձեր թղթակիցները ընկել էք փո-

դոցային խօսքերի հրապարակը, որպէսզի այս ու այն ճիգերով խշտէք ձեր հակառակորդին, վարելով տպագրական խօսքը իր մաքրութեան սահմաններից դուրս,—դուք չէք խնայել մինչև իսկ ընթերցող հասարակութեան բարոյական անկումը: Թու՝ նաւորելով հասարակութեան մտաւոր աշխարհը, այժմ մի որևէ տեղ ամեն չնչին վիճարանութեան հետևում է անմիջապէս ջարդ ու փշուրի վայրենի դրաման: Հասարակութիւնը երկու հատիկ մարդ չէ, որ նրանց մի օր չէ, մի ուրիշ օր հեշտութեամբ կարելի լինի հաշտեցնել. փոխադարձ ատելութեան և անարգանքի թոյնը երբ մտնում է մասսայի մէջ, այնուհետև իշխանութիւնը չարինն է, մասսան նրա դժոխային ծրագիրներն ու որոգայթներն ստրուկը:

Այժմ անցնենք օր. Բայաթեանի նամակին, որով նա աւգամայից յիշեցնում է մեր նամակի կտորը, որ իբր թէ մերայինները Արմաւիրում «Մշակի» մէջ մեր նկարագրութեան հակառակ դիրք են բռնել և այլն:

Պարտք են համարում նորից շեշտելու, որ մենք, որքան տեղեկեացել ենք կողմնակի աղբիւրներից և մանաւանդ շատ պարզ տեսնելով այստեղ Հ. Յ. Դաշնակցութեան Ձին. Խորհրդի գործունէութիւնը, դարձեալ նոյնն ենք կրկնելու, որ Ձին. Խորհուրդը բռնութիւններից միանգամայն հեռի է, և որ Ձին. Խորհուրդն է այն միակ կազմակերպութիւնը, որ իր ակտիւ գործունէութեամբ ձեռք է առել միջոցներ ու հաւածում է յեղափոխական անուան տակ կատարվող այդ կարգի բոլոր բռնութիւնները:

Իսկ ինչ վերաբերում է Յունանեանների վրա դրված պահանջին,—որքան ճիշտ է, մենք հաստատ տեղեկութիւն չունենք, միայն եկեւոր արմաւիրցիներից և այլ կողմնակի աղբիւրներից մեր լսածները յայտնում ենք վերապահութեամբ:

Որ Ձին. Խորհրդի պահանջը ոչ թէ 10,000 ռուբլի է կղել, այլ աւելի շատ, ասում են 300,000-ից դեռ աւելի:

Ինչ որ ներքին հաշիւ է եղել, իբր թէ, Դաշնակցութեան և Յունանեանների միջև, որ այդ գումարները մի քանի ոճիրներով կոշովել է տեղացի հայ ժողովրդից տաճկահայ դատի հետ ոչ մի բարոյական կապ չունեցող մի քանի բաղդախնդիր անհատների ոպառնալիքներով, և այդ խոշոր գումարները պարզվել են այժմ, որ գործադրել են անապատակ շռայլութիւններով, իբր թէ Ռուսաստանի յեղափոխական կուլին: Եթէ այդ ասէկօսէները ճիշտ տեղեկութիւններ են, գոնէ մեր անհատական կարծիքը այն է, որ Յունանեանները ամեն պարագայում էլ յանցաւոր են:

Եւ յիրաւի, ի՞նչ օրինաւոր կապ կարող է լինել տաճկահայ դատի և Ռուսաստանի յեղափոխական շարժման մէջ: Եւ ուրեմն մէկի համար յատկացված միջոցը ի՞նչպէս կարելի է միւսի համար գործադրել, նամանաւանդ, երբ այդ կոտորվում է հակառակ փող տուողների կամքին:

Ահա այն լուրջ բարդութիւնները, որ առաջ են եկել Աւստրիայում, և «ժամանակեանները» իրանց հաստատ և անհատատ թղթակիցների մի շարք ծամածուլութիւններով փորձեր են կատարում յեղափոխական ներքին գաղտնիքները մերկացնել, իրանց կարծիքով ի փաստ Զին. Սորհրդի, մինչդեռ անհասկանալի յիմարութիւններով մերկացնում են իրանց բուն պատկերը: Եւ ի գուր են Զին. Սորհրդի գործունէութիւնը «միհրանական» անուանում: Դաշնակցութեան պառակտման շրջանում Միհրանը եղել է մի անհատ և աչքի է ընկել նրանով, որ ամենան համարձակութեամբ դուրս է եկել գրչով և առանց քաշվելու մերկացրել է այն ամենը, որ կոչվում էր Դաշնակցութեան քիւրօկրատիա՝ հիմնված ամենագոր սերբօրի վրա և ամեն կերպ կաշկանդող հայկական կեանքի ազատ թռիչքը:

Միհրան

«Հայրենիքի փրկիչները» այս գործերին կցէք «Ազգային կառավարութեան» վերնազրի տակ անցեալներում «Մուրճում» տպած բոլոր փաստերը և յետոյ մի գարնուրէք այն խայտառակ կարգերից որ ստեղծուել են շնորհիւ հայութեան մտաւոր և բարոյական սնանկութեան: Ողբալի՜ ժողովուրդ, դու մեռնում ես, քայքայուած քո միջից դուրս եկած «յեղափոխական» ցեղերի շնորհիւ: Յեղափոխութեան վեհ գաղափարը դու այլանդակ տհասութեամբ ըմբռնեցիր, իմաստակ—մարդասպաններին և անպատասխանատու չարագործներին շփոթելով ազատութեան նուիրուած գաղափարական, մաքուր գործիչների հետ, որոնք երբէք թոյլ չեն տալ իրենց ձեռները թաթախել դրամաշորթական և ենիչե-րական շահատականութիւնների մէջ:

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ- ՆԵՐ

Բժշկատես Կ. Աղաջանեանցի.

Արտասանած կայսերական զինուորական բժշկական ճեմարանի հոգեկան
և նեարդային հիւանդութիւններէ կլինիկայի բժիշկներէ ժողովներէ հան-
գիստաւոր նիստում:

Անհատ և հասարակութիւն, ահա երկու սկզբունք, որոնք
անկարող են միմիանց զուգակշռել գոհացուցիչ կերպով: Պահի
անհատը ձգտում է անծաւալ զարգացման իր հոգևոր ուժերի,
քանի նա ճգնում է տիրապետելու աւելի լայն ասպարէզի
իր գործունէութեան համար, աւելի գործնական դեր կատա-
րելու, նա միշտ ընդհարումն է ունենում ուրիշների կարծեաց
և շահերի հետ, որոնք այսպէս թէ այնպէս սահմանափակում են
առանձին էակի հոգու ազատութիւնը և գործունէութեան ծա-
ւալը:

Թէ հասարակական գիտութեանց և թէ այլ և այլ եր-
կրների փրկիսփայլութեան և դրականութեան մէջ՝ տարբեր
ժամանակներում երևան են եկել երկու միմիանց միանգա-
մայն հակառակ միտումներ: Կամ անհատը շնչասպառ բռնու-
թիւնից՝ ազատութեան է ձգտել և կամ հասարակութիւնն ու
պետութիւնը ջանք են գործ դրել ձեռք բերելու ընդհանրական
մի ոյժ և իր հետ ձուլելու անհատի հոգևոր հարստութիւնը և
իրաւունքները:

Մարդս սկսել է կարիք զգալ ուրիշների ընկերակցու-
թեան այն ժամանակից ի վեր, երբ նա անդադրում կուի մը-
ղելով բնութեան և այլ կենդանի արարածների դէմ, կարօ-
տում է մի ուրիշ մարդու օգնութեան, որի շահերին նա այս-
պէս թէ այնպէս ստիպուած էր նախանձախնդիր լինելու: Երբ
մարդ կապուեց հողի հետ և սկսեց պարապել հողագործու-
թեամբ և տնտեսութեամբ, հարեանների և միևնոյն ցեղին

պատկանող անձանց յարաբերութիւնները սկսեցին աւելի կայուն բնաւորութիւն ստանալ:

Նախնի մարդկային համայքները շատ պարզ կազմակերպութիւններ էին և համայնական կերպարանք էին կրում: Միայն հաւասար անհատների ընկերակցութիւնը կարող էր մաքառել այն ծանր պայմանների դէմ, որոնցով շրջապատուած էր նախնական մարդը, որը ունէր ընդհանուր հող իր ընկերների հետ միասին, ընդհանուր որս և ընդհանուր գետեր ձկնորսութեան համար:

Արդիւնաբերութեան ծաղկումն փոքր առ փոքր նպաստում է մասնաւոր սեփականութեան սկզբնաւորութեան: Մասնաւոր սեփականութիւնը սպառման միջոց լինելուց՝ սկսեց ազդել արդիւնաբերութեան և մինչև իսկ հողի վրայ, որը բնական հետեւանք էր մասնաւոր երկրագործական տնտեսութեան: Մասնաւոր սեփականութիւնը անհատի հետ կապուելով ծնունդ տուեց կալուածքի կամ սեփականութեան ժառանգարար տիրապետելու գաղափարին:

Մասնաւոր սեփականութեան ազդեցութեամբ արդիւնաբերութեան միջոցների վրայ և սրա հետ անմիջական կապ ունեցող սպառման միջոցների անհաւասար բաշխմամբ՝ սկսւում է և սոցիալական անհաւասարութիւնը որին իբր հետեւանք երևան են գալիս հարստութիւն և աղքատութիւն: Երբ Փիլիպոս Մակեդոնացին նուաճեց Յունաստանը՝ Ատտիկէի աղգաբնակութիւնը բաղկացած էր օտարերկրեայ ստրուկներից, տեղացի քաղաքականապէս իրաւագուրկ և չքաւոր բնակիչներից և հարուստներից:

Տնտեսական անհաւասարութեան հետեւանքը քաղաքականապէս իրաւագուրկ վիճակն է: Հասարակական զարգացման նախնական շրջաններում կազմակերպւող հասարակագիտական կառավարութիւնը գէպի անկումն է դիմում: Չքաւորութիւնը և իրաւագուրկ վիճակն ամբոխի, ու տիրապետող դասակարգերի ցոփ և անառակ կեանքը հիմնական քայքայումն են առաջ բերում և այդպիսով խորտակուող եղբայրութեան գաղափարի փլատակների վրայ խրոխտ սաւառնում է միապետութեան գաղափարը:

Աղգաբնակութեան մի մասի աղքատութեան ու իրաւագուրկ վիճակի սկիզբը—միկենոյն ժամանակ սկիզբն է նրա խուլ կամ ակնյայտի յուզման:

Հարստութիւնը զէնք է նոր հարստութիւն գիզելու: Դեռ հին դարերում փոքր սեփականատէրերը չկարողանալով դիմա-նալ հարուստ ստրկատէրերի ճնշմանը՝ պրօլետարների թիւն

էին ստուարացնում: Եւ այս իրաւագուրկ ու սովալլուկ մարդիկ էին որ առաջին բողոքողներն հանդիսացան բարոյագիտութեան աշխարհում՝ ընդունելով Քրիստոսի հաւասարութիւն քարոզող կոչը:

Աղքատներն ու իրաւագուրկները զուրկ են և քաղաքակրթութիւնից: Ճնշուած ամբոխը կռիւ մղելով յանուն քաղաքական և տնտեսական հաւասարութեան՝ իսկապէս նա դադարի կերպով մաքառում է ձեռք բերելու իրաւունք՝ սեփական քաղաքակրթութիւն ունենալու, հոգեպէս ազատուելու:

ԺԸ դարու լուսաւորիչ անհատականութիւնը, յանձին կանտի, գտաւ իր ազդաւորին, իսկ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը այն պայքարն էր, որը կառավարութեան նոր կազմ տուեց: Քայքայուող աւատականութեան տեղ կառուցուեց զրամական տիրապետութեան շէնքը: Անհատը սկսեց քաղաքականապէս ազատուել, բայց կանգուն մնացած տնտեսական անհաւասարութիւնը դեռ մնում է իբր մի նոր կուռի անյատակ աղբիւր: «Գռեհիկ կերպով սկսուեցաւ յեղափոխութիւնը երրորդ դասակարգի, այն է միջին կարգի մարդկանց ապստամբութեամբ և գռեհիկ վախճանով էլ պսակուեցաւ այդ յեղափոխութիւնը: Ազատութիւն գտաւ ոչ թէ անհատը իրրեւ սոսկ մարդ, այլ քաղաքացին Gitoyen, քաղաքական անձը» (Շտիրներ): Եւ ցարդ մարդկանց մեծամասնութիւնը, թէև քաղաքանապէս ազատ, հարկադրուած է իր ողջ ազատ ժամերը դործադրել լոկ շահագործող տարրերի շռայլութեանը յազուրտ տալու համար, անվստահ միանգամայն վաղուան օրուան նկատմամբ:

Ահներև է որ այսպիսով ազատութիւնը լիակատար չեղաւ: Բայց առանց այդ էլ ուշադրութեան արժանի է այն պարագան որ ինչպէս լուսաւորիչ անհատականութեան ներկայացուցիչները, այնպէս և ազատութեան շահագրգիռ կուռողները միշտ խօսում էին հասարակական անհատի ազատութեան մասին: Առանձին անձի հոգեբանական առանձնայատկութեան մասին խօսք չէր լինում:

Թէև Ռուսսօն և պնդում էր՝ որ ազատութիւնից հրաժարուելը նշանակում է հրաժարուել իր մարդկային արժանապատուութիւնից՝ բայց և այնպէս նա ուշադրաւ տեղ է տալիս հասարակական գաղափարով տոգորուող առանձին անհատին: «Եթէ իւրաքանչիւր որ իրաւունք ունենար հրաժարուելու իր կողմից իր իրաւունքներից, ասում է Ռուսսօն, նա իրաւունք չունի հրաժարուելու իր որդոց փոխարէն, որոնց ազատութիւնը իրանց է պատկանում և բացի նրանցից ուրիշ ոչ ոք իրա-

ւունք չունի այդ մասին տնօրինութիւն անել»։ Մի ուրիշ տեղ նա ասում է. «Այն պայմանագիրը, որ մի կողմի մարդուն տալիս է բացարձակ իշխանութիւն, իսկ միւս կողմին հարկադրում է անսահման հնազանդութեան, այդպիսի պայմանագիրը ոյժ չունի և հակասող է»։ Սակայն նոյն հեղինակը ենթադրում է, որ հասարակական պայմանագիրը ոչ այլ ինչ է լայց եթէ ոչ պայմանաւորութեան իւրաքանչիւր իրաւունքների զոհ բերելը յօգուտ ողջ հասարակութեան»։ Ըստ Ռուսսօյի, հասարակութիւնը մի մեծ քաղաքական կազմուածք է, որի նկատմամբ անհատը իրր գործարան զանազան դերեր է կատարում։ Հասարակական կազմուածքի գաղափարով այնպէս յափշտակուած էր Ռուսսօն, որ նա ծայրագոյն իշխանութեանը իբր պիտի էր համարում այդ կազմուածքի, սովորութիւնները ու օրէնքներ որպէս ուղիղ և այլն։ Այդպիսով Ռուսսօյի կարծիքով անհատը հասարակական կազմուածքի գործարան է, որի բարօրութիւնը իբր մասնիկի, կախումն ունի կազմուածքի բարութք վիճակից։ Առանձին անհատի առանձնայատկութեանց կամ նրա հոգևոր անհատականութեան մասին դեռ խօսք չկայ։

ԺԸ պարու մտքի միւս մեծ կոթողը—Կանտը, ենթադրում էր, որ մարդկային վարմունքի անենածշարիտ ղեկավարը պէտք է համարել պարտաւորութեան զգացմունքը և այդպիսով անհատի գործունէութեանց գլխաւոր պատճառարանութիւնը էտիկայի սկզբունքի մէջ էր տեսնում։

Միակը և բացարձակ իրականը՝ այդ պարտքն է, իսկ փնայածը ենթադրական միայն։ Պարտքի իրականութիւնը անհերքելի է։ Չարիքը, եթէ նա գոյութիւն է ունեցել և ունի, բացարձակ պարտքի խախտումն է, ուստի և նա չպէտք է լինի։ Յարգանք ղէպ ազատութիւնը, առաջին սրբազան պարտքն է։ Երջանկութիւնը և առաքինութիւնը, եթէ նոքա ներդաշնակ են շաղկապուած միմեանց հետ, գերագոյն բարիք են ստեղծում։ Մենք պէտք է հաւատանք որ հնարաւոր է գերագոյն բարիք ստանալ, այլապէս մեր ձգտումը անմիտ մի քայլ կը լինէր։ Բայց որպէս զի կարելի լինի գերագոյն բարեաց հասնելու, անհրաժեշտ է և գերագոյն նպատակ, որին ձգտում է տիեզերքը։ Բանական արարածի պարքն է աւելի լայն իրազօրծել վսեմ բարիքի գաղափարը, այն է ներդաշնակութեան մէջ դնել բարոյականութիւնը երջանկութեան հետ։ Անմահ է ազատ կամքը և բնութիւնը պէտք է ներդաշնակէ և առաքինութեան պահանջների հետ, որով և ստեղծւում է բարոյական օրէնքը։ Գործիք այնպէս, որ միշտ տեսնես թէ քո և թէ ուրիշների մէջ ազատ և խելամոռած կամք—այսինքն մարդկութիւնը նպատարաւ, 1907,

տակ լինի և ոչ միջոց... Գործիր այնպես՝ ինչպես օնէնսդիր և միեւնոյն ժամանակ իբր հպատակ ազատ և խոհեմ կամքի հասարակապետութեան»։ Այդպիսով յարգելով մարդու անձնաւորութիւնը, մի անհատի ազատութիւնը շնորհիւ բարոյական սկզբունքների՝ պաշտպան է հանդիսանում և մի ուրիշի ազատութեան։

Սակայն վերջ ի վերջոյ անհատի ազատ կամքը պէտք է ի նկատի ունենայ պարտքի սկզբունքները։ Անհատից դուրս միանգամայն անկախ գոյութիւն ունի մի բացարձակ նպատակ, որին ձգտում է տիեզերքը և որին պէտք է ձգտի և ազատ կամքը։ Իւրաքանչիւր անհատի ինքնուրոյն առանձնայատկութեանց մասին, ըստ երևոյթիւն, կանաւր տրամադիր չէր ձառելու։

Փրանսիական յեղափոխութիւնը յանուն ընդհանրական շահերի մահուան էր մատնում հազարաւոր անհատների և կարծես թէ այդպիսով գործնականապէս իրագործում ժամանակի փիլիսոփայական հոռանքները։

Բայց, սակաւ առ սակաւ սկսում է լսուել անհատի բողոքիչ ձայնը, որը ձգտում է պաշտպան կանգնել իր անհատական իրաւունքների։ Անհատը ձգնում է նպատակ դառնալ և ոչ թէ իբր միջոց հասարակութեան և պիտութեան։ Նա հանդէս է բերում իր ազատութեան սկզբունքը և պահանջում է յարգանք դէպի անհատի, առանձին անձի, հոգևոր բազմազան առանձնայատկութիւնները։

Սահելով անցաւ լուսաւորիչ անհատականութեան դարը, անցաւ և հասարակական կազմութեան երկրապագելու վերացական զաղափարների դարը, երբ ընդհանրութեան շահերին գոհ էր բերում առանձին անհատի անձնաւորութիւնը։ Ներկայում, մեր աչքի առաջ կուի է մղում մի կողմից անտեսադէս ստրկացնելու մարդուն, միւս կողմից վերջնականապէս հոգևոր և բարոյական ազատութիւն ձեռք բերելու անհատի համար։ Անտարակոյս հասարակական կազմութեան մասին եղած գաղափարը ոչ մի էական հիմք չունի։ Գոյութիւն ունին միայն և եթէ կենդանի մարդիկ օժտուած բազմազան առանձնայատկութիւններով և ահա այս մարդիկ սկսում են միմեանց հետ փոխադարձ յարաբերութիւններ։ Ծառայելով միմեանց, նրանցից իւրաքանչիւրը աշխատում է իր ինքնուրոյնութիւնը պահպանել անաղարտ, ջատագով հանդիսանալ իր «ես»-ին։

Քաղաքակիրթ, երկրներում դրամական տիրապետութիւնը հովանի է լինում անհատին քաղաքական կողմից, բայց անտեսական ստրկութիւնը մնում է։ Հէնց նոյն իսկ իր բոլոր

առանձնայատկութիւններով, կենդանի արարածի հետ, նրա հոգու հետ՝ դրամական տիրապետութիւնը վարւում է առաջուանից ոչ աւելի: Սովորաբար ժարդկանց մեծ մասը իրանց ողջ ժամանակը, հոգեկան և ֆիզիքական կարողութիւնը գործադրում են որպէսզի սովից չմեռնեն, և խեղդամահ են լինում վաճառականական դարի նեխուած ու շինծու առաքինութեան ճնշման տակ:

Նիւթապաշտները պնդում են, որ որոշ հասարակութեան մէջ և որոշ շրջանում բարոյականութեան գաղափարը արդիւնք է հղել այդ հասարակութեան և շրջանի տարբեր դասակարգերի տնտեսական յարաբերութեանց: Առաքինութեան մասին մենք կը խօսենք ի ստորև, բայց պէտք է ասել որ շինծու և արտաքին երևոյթներով միայն շրջափակուած առաքինութիւնը անտարակոյս կախումն ունի և նախորդում է դասակարգերի մէջ եղած քաղաքական և տնտեսական փոխադարձ յարաբերութիւններից: Հէնց այդ շինծու ու արտաքին առաքինութիւնն է, որ խեղդում է անհատի տարրական հոգևոր երևոյթները և արգելք դառնում նրա զարգացման: Դրամական տիրապետութեան առաքինութիւնը մի շատ նեխուած դանդուած է, և այդ է պատճառը, որ անհատական ուղղութեան փայլուն ներկայացուցիչները այնպիսի կատաղութեամբ են յարձակւում նրա վրայ:

Ռուսոն նաև թերահաւատութեամբ վերաբերուելով լուսաւորութեան բարեբար ազդեցութեանը առաքինութեան վրայ, քացասական համարումն ունէր լուսաւորութեան մասին: «Սըտրուկներ չունիք դուք, բայց ինքներդ ստրուկներ էք», ասում է նա իր լուսամիտ ժամանակակիցներին: «Դուք ոչ հոովմայեցի էք, ոչ սպարտացի, ասում է Ռուսոն, նոյն իսկ աթէնացի չէք: Հանգիստ թողէք այդ մեծ անունները որոնք ձեզ չեն սաղում: Դուք առեւտրականներ էք, արհեստաւորներ, հասարակ քաղաքիներ, միշտ զբաղուած ձեր մասնաւոր շահերով, ձեր աշխատանքով, առևտրով և օգուտներով:»

Ձեզ համար ազատութիւնը միայն միջոց է անարգել հաքստութիւն ձեռք բերելու և անվտանգ տիրանալու նրան:

Մեր ժամանակի ընթացիկ առաքինութիւնը, ինչպէս արտաքին առաքինութիւն անցած բոլոր շրջանների, իւր հիմունքները ամրապնդում է հաստատուելով «սրբազան հիմունքների» և «գարաւոր նեցուկների» վրայ և այդպիսով սրբագործում է առանձին անհատի տնտեսական ստրկութեան և անհատական դժգոհութեան հանգոյցները:

«ժամանակակից մարդու կեանքը, զանգաղ ինքնասպանութիւն է սկզբունքի վերածած», ասում է Նիցշէն:

Ամեն ինչ կորաւ. ասում է նա, իբրև մի գիշերուան յիշողութիւն. յոյները, հռովմէացիք: Նախազգացման վսեմութիւնը, ճաշակը, գիտական սիստեմա, հանճար, կազմակերպութիւն և կառավարութիւն, հաւատ, կամք, որը ձգտում էր ապագայի ստեղծագործութեան, այն մեծ «այո»-ն, որ արտայայտում էր ամեն ինչում, ինչպէս imperium Romanum և սահելով ընթացում ամեն զգացմունքներում, մեծ ու հանճարեղ ոճը ոչ իբրև արուեստ, այլ իբրև իրականութիւն, իբր ճշմարտութիւն, կեանք: Այս ամենը հիմնայատակ եղաւ մի գիշերուայ մէջ:

Չարի և բարւոյ գաղափարների մէջ, սրբագործուած ընթացիկ առաքինութեան փայլով, Նիցշէն տեսնում է միմիայն «մարդկայինը, և լոկ մարդկայինը». առաքինութիւն է համարւում այն ամենը, ինչ որ նպաստում է մարդու մեղմանալուն և ձեռնասուն զառնալուն, ասում է Նիցշէն: Այդ եղանակով նրանք դայից շուն կերպարանափոխուեցին և հոյն իսկ մարդուն դարձրին կատարեալ ընտանի կենդանի, մարդուն... Իրենց առաքինութեամբ նրանք կամենում են իրենց թշնամիները աչքերը հանել և վեր են սլանում լոկ այն նպատակով, որ ուրիշներին ստորացնեն»: Նիցշէն հնթադրում է, որ բախտաւորութիւնը կաշանում է «Յաւիտենական, սարսափիչ և մեղմասրտութիւնից վեր գտնուած ուրախութեան—էութեան մէջ. խնդութիւնը պիտի անկախ լինի, այն խնդութիւնը, որը իր մէջ պարունակում է և ոչնչացման հրճուանքը»: Հրաժարուել բազմաւորութիւնից և առաքինութիւնից, յաղթելով իր մէջ մարդկայինը, ահա վսեմ ազատութեան սկզբունքը: «Ես Ձեզ կանչում եմ ոչ թէ աշխատելու, այլ կռուի, և ձեզ կոչում եմ ոչ թէ խաղաղութեան դիմելու, այլ յաղթանակի: Թող ձեր աշխատանքը կսիւ լինի և ձեր խաղաղութիւնը յաղթանակ»:

Մեր ժամանակակից հասարակութիւնը հազիւ թէ կարող է համարուել բերրի հող անհատի հողերը և բարոյական ոյժերի ազատ զարգացման և մարդասիրական ձգտումների իւրացման համար: Գոյութեան կռիւը, չնայելով իր արտաքին քրնքոյշ արտայայտութիւններին, այժմ աւելի լարուած բնաւորութիւն ունի, աւելի մեծ պահանջ է զգում հոգևոր ուժերի, և նմանում է մի բոցայի, ուր բոցավառում են կրքերը և աղահուրթիւնը: Ճարօրինակ է մեզ թւում, ասում է Սպէնսեր, բայց պէտք է խոստովանել, որ մարդասիրական զգացմունքների զարգացումը չէ հետևում քայլ առ քայլ քաղաքակրթութեանը, այլ ընդհակառակ, մարդասիրութեան սուղին աստի-

ճանները անբաժան կապուած են որոշ անմարդասիրութեան հետ»:

Եթէ մի կողմ թողնենք հասարակական օրգանիզմի մասին եղած վերացական գաղափարը, ստիպուած կը լինինք խոստովանուելու, որ քաղաքակրթութիւնը, նուրբ ճաշակը և ընթացիկ առաքինութեան գաղափարը միշտ և ամենուրեք գտնուած են տիրապետող դասակարգերի ուժգին ճնշման տակ: Մեր ժամանակակից տիրապետող բուրժուազիսի ճնշումը պէտք է համարել վերին աստիճանի աւերիչ բոլոր վերոյիշեալ գէպքերում:

Շարունակելով կոիւր յանուն ազատութեան, նոյն իսկ քաղաքակիրթ երկրներում, անհատները դեռ պէտք է հիմնովին կործանեն քաղաքական անհաւասարութեան մնացորդները: Պէտք է վերջ տան տնտեսական ստրկացմանը, արմատախիլ անելով փոքրամասնութեան տիրապետութիւնը, որի շնորհիւ նրանք շահագործուած են մեծամասնութեան աշխատանքը լուրջ աշխատանքով, որ արդիւնաբերութեան միջոցների տէրը իրենք են: Ահա երբ վերջ կը դրուի փոքրամասնութեան տիրապետութեան, այն ժամանակ կենդանի մարդը իր ֆիզիքական և հոգեկոյն կարիքներով նպատակ կը դառնայ, այլ ոչ թէ միջոց հասարակութեան ձեռքում:

Այս պայմանների կատարումը միայն միջոց կը տայ իրաւագոյնի ու շահագործուած ամբոխին մոտեցնել քաղաքակիրթ կեանքի մէջ և ստեղծագործել, միջոց կը տայ թօթափել տիրապետող տարրերի նիւ գասակարգային բարքերի լուծը:

Անկարելի է լուրթեամբ անցնել այն երևոյթը, որ նոյն իսկ քաղաքակիրթ երկրներում բացի քաղաքական, ընկերավարական ու բարոյական լծից, գոյութիւն ունի լծի և մի այլ մասնաւոր տեսակը—ընտանեկան լուծ, որը ուժգին կերպով արտացոլուած է կանանց վրայ: Դեռ ևս Թուրքիայի Մօրը իր ութուպիական սօցիալիզմի մէջ պարզ ի պարզոյ մատնացոյց էր անում, որ ընտանիքը այն ժամանակ միայն կը լինի երկու սեռի փոխադարձ համակրանքի վրայ հիմնուած դաշն, երբ ամուսիններից իւրաքանչիւրը հաւասար իրաւունքներով սեփականատէր կը լինի արդիւնաբերութեան միջոցների և աշխատով ամուսնութիւնը կազատուի իր տնտեսական հիմունքներից: Ներկայ դարում, երբ հասարակական հիմունքները խախտուած են, ոչ պակաս քայքայման են ենթարկուած և ընտանիքի հիմունքները, ինչպէս և ողջ հասարակական կեանքը: Հոգեկոյն և ընկերավարական քայքայման հետ զուգընթացաբար զարգանում է ֆիզիքական այլասերումը, որպէս անառակ ու մոլի

հայրերի թողած ժառանգութիւն, հայրերի, որոնք իբր անցեալի ուրուականներ հետևում են իրենց որդիներին:

Ազատութիւնն անհրաժեշտ է և անխուսափելի: Սակայն ինքնաբերաբար հարց է ծագում. արդեօք բաժնէ միայն դրամական տիրապետութեան կատարեալ խորտակումը և լայն բարեփոխութիւնների իրագործումը, որպէսզի անհատը ազատուելով բոլոր քաղաքական հանգրուաններից և տնտեսական ու հոգևոր ստրկութիւնից՝ համարէր կոիւր վերջացած: Չկայ արդեօք մի ուրիշ գործօն ևս, որը անկարելի է զանց առնել և որը էական նշանակութիւն ունի ոչ միայն անհատի ազատարար կոուէլնթացքում, այլ և անհրաժեշտ է և յաղթանակից յետոյ, որպէսզի ձեռք բերած նոր կազմը հաւասարակշռութեան մէջ զնէ:

Այդ գործօնը կայ և թագնուած է մարդկանց մէջ եղած անհատական տարբերութեանց խորութեան մէջ: Կանտը չի շեշտում անհատական տարբերութեանց նշանակութեան վրայ, բայց նա զգում էր, որ մէկ անձի ազատութեան վտանգ կարող է սպառնալ միայն մի ուրիշ անձն: Կանտը ժարգու ազատութիւնը յարգելու սկզբունքը սրբազան պարտք համարելով՝ այդպիսով նա ընդգծում է, որ մէկի ստրկութիւնը մի ուրիշ անձի գործունէութեան արդիւնք է:

Եթէ իրերի խորը թափանցենք, կը գտնուին այն եզրակացութեան, որ սկզբնական անհաւասարութիւնը, դեռ ևս նախապատմական շրջաններում, արդիւնք է եղել հասարակութեան անդամների մէջ եղած տարբերութեանց: Ամենից խելօքը և ճարպիկը միշտ ափրել է, նրա հետ էին խորհրդակցում, նրան էին ընտրում իբր առաջնորդ կսիւններում. պատերազմական աւարի մեծ մասը նրան էին բաժին հանում և ստրուկների մեծ մասը նրան տալիս: Արդիւնաբերութեան յառաջագիմութեան և մասնաւոր սեփականութեան զարգացման ընթացքում ևս, կրկին ամենից խելօքը և տաղանդաւորն էր աւելի ձեռք բերում, հարստանում և ձգտում իշխելու և տիրապետելու: Մարդկային համայնական կազմակերպութեան նախնի շրջաններում, մարդս դեռ հնթակայ էր իր կենդանաբանական գուգորդութեան իրականացմանը: Կենդանական թագաւորութեան մէջ ևս ուժեղը աւելի գիւրութեամբ է կերակուր ճարում, ոչնչացնում է ուրիշ աւելի թոյլ արուններին և իրենից յետոյ թողնում է աւելի զօրեղ սերունդ: Երբ մարդս դեռ գտնում էր կենդանաբանական շրջափոխութեան շրջանում, անհատական առաւելութիւնները, այն է, տաղանդը, ճարպկութիւնը, խելքը, քաջութիւնը, առաջնութեան պայ-

քարի մէջ մեծ դեր էին խաղում: Այդ անագորոյն կռիւք իր սարսափներով դէպի սերունդի ազնուացումն էր տանում, ուստի և կարելի էր նրա նւտ հաշտուել:

Բայց, որքան կենդանաբանական շրջանը իրաւունք էր տալիս խելօքներին, ուժեղներին և քաջներին իշխելու, այնքան ժամանակակից կազմը, չխախտելով անհաւասարութեան սկզբունքը, կցեց նրան և անարդարութեան գաղափարը: Անհատական գերազանցութիւնը, որ անհրաժեշտ էր կենդանաբանական շրջափոխութեան շրջանում իշխանութիւն ձեռք բերելու համար, մեր օրերում նրա նշանակութիւնը թուլացաւ: Դրամական տիրապետութեան դարում բաւական է ձեռք բերել նշանաւոր գումար, շարժական կամ անշարժ ժառանգութիւն և այդ իրաւունք կը տայ իշխելու աւելի օժտուած, բայց չքաւոր անձանց վրայ: Յաղթողը այս դէպքում ոչ թէ զբաւատէրն է, այլ նրա դրամը իբր գործիք: Եթէ զբաւատէրը վստահ չէ իր վրայ, ծայրայիտ դէպքում կարող է խոյս տալ շահագիտական գործունէութիւնից և դրամագլխին չգիպելով իսկ, միմիայն տոկոսներով ապրել ոչ միայն համեստ, այլ նոյն իսկ պատուով: Նրան հովանաւորում է և տիրող եկեղեցին, որը օրինականութիւն է տալիս նրա բարոյագիտութեան, և պետական ոյժը որ ջատագով է հանդիսանում նրա շահերին:

Մօտիկ անցեալում պետական մի գործիչ պնդում էր որ չքաւորներն կամենում են հարուստների միջոցներին տիրանալ, և այդպիսով հաւասարել նրանց անձնաւորութիւնը: Այդ գործիչը պարզամտութեամբ ենթադրում էր, որ բոլոր հարուստների անձնաւորութիւնը ինքնուրոյն է և որ նրանք յաղթում են շնորհիւ իրանց հոգեկան զօրութեան...

Կենդանաբանական կռուի շրջանն անցել է: Դրամական տիրապետութեան դարն էլ յաւիտենական չէ: Մեզ հետաքրքրում է այն հարցը թէ ինչպէ՞ս կվերաբերի առանձին զօրեղ անհատը ամբոխի ազատութեանը: Կնպաստէ արդեօք այդ անհատը ազատարար գործունէութեան. կարող է արդեօք ընտելանալ նա ազատ և հաւասար մարդկանց նոր շրջանում, կամ կը ցանկանայ արդեօք այս կամ այն եղանակով ասպարէզ դուրս գալ և ստրկութեան նոր ձև ստեղծել?... Գուցէ նրա ողջ էութիւնը համակուած կը լինի իշխանութիւն ձեռք բերելու և հարստութեան տէնչով և նա բոլորքուած կը նետուի մի նոր կռուի մէջ ծարաւի լինելով նոր յաղթանակի...

Ո՞րտեղից պիտի աշխարհ գայ զօրաւոր անհատը այդ մարդկանց գերագոյնը—դժուար է նախատեսել: Հարցը, այս

դէպքում, վերաբերում է ոչ թէ տոհմային կամ դրամական զօրեղագոյնին, այլ հոգու զօրեղ ներկայացուցչին:

Կարճ ի արդեօք այդպիսի անհատը որ և է նշանակութիւն ունենալ հասարակական գործի զարգացման նկատմամբ:

Ազգը, ժողովուրդը կամ նրա առանձին դասակարգը— հաւաքական դադարաւոր են, որի լաղազրիչ տարրը անհատն է: Անհատն է զգում, գիտակցում, ցանկանում և գործում: Անհատի գործունէութիւնը ձեւակերպում է համայնքի միւս անդամների գործունէութեան հետ, ի հարկէ փոխադարձաբար: Անհատը կամ ինքն է նրանց նմանում ու համակերպում կամ նրանք իրան: Հասարակութեան անդամները անկարող են միմիանց հետ շփուել առանց հոգեբանական փոխադարձ ազդեցութեան: Միխայլովսկին գեղեցիկ է լուսարանում թէ ինչ դեր է խաղում ներշնչումն հասարակական կեանքի այլ և այլ երևոյթներում: Ուղեղագննական գրականութիւնը լի է ապացոյցներով, թէ ինչպէս նոյնիսկ հոգեկան հիւանդները, զառանցանքի ու ցնորքի ենթարկուած, առաջնորդել են ամբոխին: Անտարակոյս այս հարցը արժանի է ուշադրութեան, ընդարձակ ու հետաքրքիր է նա, բայց մենք, ցաւօք սրտի անկարող ենք երկար զբաղուել նրանով: Մեզ համար կարեւորագոյնն այն է, որ մարդս ենթարկուելով ուրիշի ազդեցութեան, ոչ միայն կարող է իսպառ մոռացութեան տալ իր խոհաքննին շահերը, այլ ընդունակ է կատարելու գործեր, որոնք փաստաբար են իրեն համար և նոյն իսկ ինքնասպանութեան հասնել: Զանազան ժամանակներում և այլ և այլ ազդեցութեան տակ ողջ հասարակութիւնը երբեմն ներշնչւում էր և ենթարկւում մի անհատի ազդեցութեան տակ: Անհերքելի երևոյթներ են—ամբոխի ենթարկուիլը մի հերոսի ազդեցութեան կամ փոխադարձ նմանելու ձգտումը նոյն հասարակութեան մէջ: Տարդը հիմնական օրէնք է համարում տիեզերական կամ համաշխարհային կրկնողութիւնը, որը երևան է գալիս անբարեկարգ բնութեան մէջ իբր ալիքանման շարժողութիւն, օրգանական աշխարհում—իբր իրան նման էակներ արտադրող մի ոյժ և վերջապէս հասարակութեան մէջ—որպէս նմանողութիւն: Նմանելու համակիր կողմը օժտուած է լինում ոչ միայն նմանուելու բուռն ընդունակութեամբ, այլ և ունենում է սեփական նախաձեռնութեան ուժ, որը նոյնպէս ձգտում է զարգացման:

Անհատի հսկայական նշանակութիւնը խոստովանում է նոյնպէս շիզոֆրենիան: Նրա կարծիքով, հասարակութեան տար-

բեր մասերի մէջ առաջին տեղն են բռնում ոչ թէ նիւթական յարաբերութիւնները, այլ զուտ հոգեբանական. «Եթէ ընդունում ենք որ հասարակութիւնը օրգանիզմէ, պէտք է նրա վրայ նայենք իբր բնահոգեբանական օրգանիզմի վրայ, իբր էապէս հոգեբանական, բայց ֆիզիքական հիմունքով:» Քաղաքակրթեան, դաւանանքի, էստետիքայի ու բարոյագիտութեան ստեղծագործութեան մէջ մասնակից է անհատի հոգեբանական ողջ մթնոլորտը, նրա իմացութիւնը, կամքը, նրա յուզումը և գիտակցութիւնը:

Հասարակութեան վրայ պէտք է նայել, իբր լծորդութիւն ինքնուրոյն և լուսնադակ անհատների, որոնք միմիանց հետ փոխադարձաբար կապուած են հոգեպէս՝ քաղաքականապէս, տնտեսապէս և իրաւական կողմից:

Մեր ժամանակի հոգեբանութեան մէջ, այս գիտութեան առաջնակարգ ներկայացուցիչները շեշտում են կամեցողութեան սկզբունքի վրայ. «Հոգեկան աշխարհը կամքի թագաւորութիւնն է, ասում է Վունտը. վճռական նշանակութիւնը կամքին է պատկանում և ոչ թէ երեւակայութեանը կամ մտքին: Նոյն ուղղութեամբ է ընթանում և Հեֆտինգը: Մինչև անգամ Մարկսըն էլ առաջնակարգ տեղ էր տալիս կամքին, թէև մարդկային հոգու բոլոր գործօններից Մարկսը առաջ էր մղում տնտեսական դերի գործօնը: Լուսաւորիշ կամ կրթական շրջանը մարդկային հոգու միակ շարժիչ էր համարում ձգտումն դէպի երջանկութիւն, իսկ Մարկսը աւելի ևս սահմանափակեց այդ գործօնի նշանակութիւնը, նրա ամբողջ էութիւնը կենդրոնացնելով անհատի սեփական կեանքի պահպանութեան մէջ:

Նիւթապաշտական ուղղութիւնը, որը ուսումնասիրում է գլխաւորապէս տնտեսութեան նիւթական գործօնները, մի մեթոդ է, որը որոշ սկզբունքի պիտի հետևէ որոշ տեսակետից առած: Մարդկային հոգու կարիքները, հետևապէս և մարդու զործունէութեան պատճառները տարբեր են, և ինչ կողմից էլ մենք ուսումնասիրելու լինենք մարդկային հոգու գործօնները, եղանակի տեսակէտից մենք միշտ իրաւացի կը լինինք: Հասարակական իսկական գիտութիւնը պէտք է ձգտէ շարկապելու հաւաքական հոգեբանական հարցերը իրաւաբանական, տնտեսական և քաղաքական հարցերի հետ:

Այս ամենի եզրակացութիւնը այն է, որ անհատը ինքն ըստ ինքեան սոցիալական շարժման գործօններից մէկն է:

Այս սկզբունքը որոշելով, մենք կարող ենք անցնել այն հարցին, թէ ինչպէս կվերաբերի առանձին գերագոյն անհատը մարդկութեան ազատագրական ձգտումներին:

Եթէ գերագոյն անհատը նպաստէ ընդհանուր ազատութեանը և չձգտէ վերականգնել ստրկութեան մի նոր տեսակը ու զոհ լինի ապագայով ու իր պատկերը չփոխելով ապրէ հաւասար մարդկանց հասարակութեան մէջ, այդ դէպքում ազատագրական շարժումը մի նոր խոշոր նեցուկ է ձեռք բերում, որին պէտք է ոչ միայնի նկատի ունենալ, այլ և գնահատել: «Թող նրանք հազարաւոր կամուրջներ ից և կածաններից անցնելով զիմեն ապագային, ասում է Նիցշէն, միշտ աւելի պիտի գործնական նրանց մէջ թշնամութիւնը և անհաւասարութիւնը, այդպէս է հարկադրում ինձ խօսելու գերազանց սէրը»... «Կեանքը ուզում է դէպի վեր սլանալ սիւների և աստիճանների շնորհիւ: Նա փափագում է նայիլ անսահման հեռաւորութիւնը և տեսնել երջանկաբեր գեղեցկութիւնը —ահա թէ ինչու կեանքը բարձունքի կարօտ է զգում: Եւ որովհետեւ նրան հարկաւոր է բարձրութիւն, ուստի անհրաժեշտ են աստիճաններ և աստիճանների հակասութիւն և աստիճաններով վեր ելնող անձինք. վերասլանալ է փափագում կեանքը և վեր բարձրանալով ուզում է յաղթել ինք գինքը»... «Ուրիշի ինքնուրոյնութեան պտուղը վայելելով ուրախութիւն ճաշակելը, առանց նրան նմանելու, զուցէ մի ժամանակ նոր քաղաքակրթութեան նշան լինի»:

Ժամանակակից մարդկութիւնը ատելով հանդերձ Նիցշէն հաւատում է նրա լուսաւոր ապագային, հաւատում է գերագոյն մարդուն. գերագոյն մարդը մանկական հոգու մաքրութիւն կունենայ և կը հասնի բարձր և անաղարտ քաղաքակրթութեան: Հոգևոր պարզութեան հետ, գերագոյն էակը հզօր կը լինի որպէս մրրիկը, խորունկ որպէս ովկեան: Նա անջատ ամբոխից կերթայ իր ճանապարհով, կը գործէ ազատ ու անկախ, առանց քաջալերութիւն սպասելու ուրիշներից. գերագոյն էակը շողկապուած կը լինի ոչ թէ ներկայ վայրկեանի, այլ յաւիտենականութեան հետ: Նրա քաղաքակրթութիւնը յստակ և գեղանի է: Նիցշէն հերքում է ամենը, ինչ որ պարուրուած է միջին ընդունակութեան քօղով:

«Գեղեցկութիւնը ինձ հեռի է վանում ձեզնից, ասում է նա, հիւրի այն ամենից ինչ որ դուք սիրում էք, որին երկրպագում էք: Եւ ձգտում եմ իմ խաբիսիսը բաց ծովում և ասում եմ «Այստեղ է հիմնուելու միաժամանակ գերագոյն էակի կղզին»:

Անհատականները, որոնք ճանաչում են առանձին անհատի դերը և կամքի գերակշռութիւնը գիտակցութեան վրայ, ճշգրտում են հաշտեցնել մի անձի հոգևոր ինքնուրոյնութեան ան-

սահման զարգացման կարելիութիւնը ուրիշների ազատ գոյ-
ութեան կարելիութեան հետ: Ահա այստեղ էլ ստիպուած են
չափազանցութեան դիմել: Հարկադրուած, ինքնուրոյն էակի
ազատ կամքին պէտք է վերագրել պարտքի գաղափարը, որը
ինքստինքեան սահմանափակումն է և արտաքին կողմից մի-
այն պարտադիր հպատակով: Ազատ կամքին հարկադրում ենք
խորհելու այն մասին, որ գոնէ բաւականութեան զգացման
տեսակէտից պիտի ազատութիւն ցանկալ ուրիշներին, որով-
հետեւ բանական արարածը պարտաւոր է հասկանալ, որ այն
հասարակութեան մէջ ուր ամենքն էլ բախուաւոր են, բախտա-
ւոր կը լինի և ինքը: Վերջին դատողութիւնը շատ էլ չի կա-
րող ըննադատութեան հնթարկուել: Եթէ մարդս կարեկցու-
թեան զգացմունքից զուրկ է, եթէ նա չէ ընդունում պարտքի
վերացական սկզբունքներից և ոչ մինը, այդ դէպքում հազիւ
թէ նրա հաս-մարդասիրական զգացմունքը ներշնչի նրան, որ
պարտաւոր է արձակել իւր ստրուկներին, որ երբ նա կը հա-
ւասարուի իրաւունքներով իր ստրուկներին, նա ինքն էլ եր-
ջանիկ կը լինի, ինչպէս և արձակուած ստրուկները: Պարտքի
պարտաւորիչ սկզբունքը պայմանական գաղափար է և իւրա-
քանչիւր առանձին մարդու համար ոչ բոլորովին բացարձակ
նշանակութիւն ունեցող: Եսական դատողութիւնները, եթէ
բացակայում են նրանցից սէրը և կարեկցութեան զգացմունքը,
հազիւ թէ կը իրականացնեն ուրիշ անհատի և ազատութեան
յարգանքի ձգտումը:

Բայց միթէ չկայ մի ուրիշ միջոց, որով ողու գերա-
զանց էակը կարելի համարէր ոչ միայն շրջապատողների ա-
զատութեան և բազմաւորութեան վրայ հաշտ աչքով նայել,
այլ և օժանդակէր և փափագէր նրանց իրագործումը:

Մեզ թւում է որ այդ ելքը կայ, և թագնուած է անհատի
բարոյական զգացմունքի մէջ: Այդ զգացմունքը նպատակ չու-
նի, անշահասէր է, և չէ համակերպում բնականցական սկզ-
բունքներին: Այս զգացմունքը հեռի է և յաճախ հակասող
դանազան շրջանների դասակարգային բարոյագիտութեան ըն-
թացիկ և արտաքին սկզբունքներին: Ըստ էութեան մարդիկ
առաքինի են, յաճախ ի նկատի են տունում ընթացիկ «սրբա-
զան սկզբունքների» հայեցակէտը, որը երբեմն ոչ միայն սն-
բարոյական, այլ և անօրէն բնաւորութիւն է կրում: Յիշա-
տակենք Լ. Տոլստոյին, Նիչչէին և ազատութեան ուրիշ զօ-
րավիգներին:

Բարոյագիտութեան մէջ լայն ծաւալ ունի դեռ ևս այն
հայեացքը, որ առաքինական զգացմունքը իրեն նպատակ է.

ընտրում և ղեկավարում է որոշ միտումներով: Կանտի նոր-հետեողները առաջ են բերում բարոյական դաւանանքի սկզբունքը, որը ընդունում է որ կան բաներ որոնք պէտք է ընդունելի լինին ոչ թէ շնորհիւ փաստական գատողութեան, այլ որովհետեւ նրանք բարոյական արժանիքներով են օժտուած: Այստեղ մոռացութեան են տալիս, որ լաւի և վատի հասկացողութիւնը բարոյական կողմից բոլորեքեան միակերպ չեն ըմբռնում, և որ բարոյական դաւանանքի իրաւասութիւնը կարելի է վերագրել նախազգացման շրջանին:

Մեր քննադատած զգացմունքը չի հիմնուում ոչ հաւատի և ոչ գատողութեան վրայ: Այդ զգացմունքը արգասիք է մարդկային հոգու զօրութեան: Ինչ անձնական նպատակների է ձգտում հայրենիքի համար զոհուող անձը, քանի որ յաղթանակը և փառքը նրան չէ պատկանելու, նրան, որ այս կեանքից դիմում է դէպի մահուան և ոչնչացման թագաւորութիւնը:

Օ. Կօնտը հասկանութիւնը համարում էր հակասոցիալական սկզբունք և նրան հակապատկեր էր համարում մարդասիրական զգացմունքը: Ըստ Սպէնսերի, բարոյագիտութեան արմատները պէտք է որոնել ընկերավարական կազմի մէջ, որը և ենթակայ է շրջափոխութեան օրէնքներին: Պարզ է որ անմարդաբնակ կղզում ապրող մարդը չէր կարող ունենալ բարոյագիտական զգացմունք: Բայց եթէ այդ զգացմունքը ծնունդ է առնում և պատճառ կայ նրա գոյութեան, միաժամանակ նա և զարգանում է:

Բարոյագիտական զգացմունքը կենդանի արարածի եռանդի արդիւնք է: Ընկերավարական կազմի տակ այդ եռանդը որոշ ուղղութիւն է ստանում: Հաւանական է որ կենսական ուժերի աւելորդ մասը գոյութիւն ունէր և մինչև մարդու սոցիալական զարգացման հասնելը, և այդ ուժերի աւելորդը այս կամ այն կերպ արտայայտւում էր և այն ժամանակ, բայց յատկանիշ ընաւորութիւն ստանալով, բարոյական զգացմունքը սկսեց օրգանապէս և անխզելի կապուել անհատի հոգեւոր գոյութեան հետ: Մայրը սկսեց օրգանապէս կապուել իր մանկան հետ, նրա մէջ տեսնելով իրեն, իր «ես»-ը: Սոցիալական անհատը սկսեց կապուել մի ուրիշ մարդու հետ. տեսնելով իրան աւելի լայն ծաւալով, ուրիշի մէջ իրան տեսնելով: Որքան հոգեպէս բարձր է մարդը, այնքան աւելի ներգաշնակ է նրա բարոյականութեան զարգացումը, և այնքան աւելի լայն է սփռուած ուրիշների վրայ նրա ուժերի աւելորդը: Ուտել և խմելու համար մարդը, անհրաժեշտ կարիք չունի ուրիշների ընկերակցութեան: Բայց

որպէսզի կարող լինի սքանչանալ բնութեան տեսարաններով կարողանայ երաժշտութեան ձայներով արբենալ, նա կարիք ունի ընկերի:

Բարոյական զգացմունքը հիմնական տեսակէտից զուրկ է մղումն է, որ չունի ոչ խոհական և ոչ սոցիալական նպատակներ: Սոցիալական միջավայրը այս մղումին միայն ուղղութիւն է տալիս և մասնաւորում նրա նշանակութիւնը: Հէնց այդ եղանակով էլ մասնաւոր կերպարանք ստացան անհատի հոգեւոր կեանքի և ալ ընդունակութիւնները և որոշ մասնաւոր ուղղութիւն ստացան: Կամքը, աւելի շուտ ինքը կարող է ուղղութիւն տալ ամբարուած եռանդին, և ոչ թէ բարոյական դիտումները պէտք է դեկլավաթէին կամքը: Դատել պարտքի մասին, մարդկային վերջնական նպատակի, տիեզերական նպատակի մասին, որի հետ միանալու է մարդկային բարոյականութիւնը, միևնոյն է թէ դատում ենք միանգամայն անհատականալի նիւթերի մասին: Ունի արդեօք մարդկութիւնը բարոյական նպատակ, կամ ունի տիեզերքը որևէ նպատակակէտ. այս ամենը որոշ չափով բնազանցական հարցեր են: «Բնութիւնը ողջովին առած, անպատճառ չպէտք է պտղաբեր լինի, ասում է Գիւստ: Բնութիւնը կեանքի և մահուան մեծ հաւասարակշիռն է: Թերևս նրա գերազանց բանաստեղծութեան աղբիւրը—նրա վեհ անպտղաբերութեան մէջն է ծածկուած: Յորեան արտը ովկիանոս չէ. Ովկիանը չէ գործում չէ արտադրում, նա յուզում է ալեկոծում. նա կեանք չէ տալիս, բայց կեանք է պարունակում, կամ աւելի շուտ նա միակերպ անտարբերութեամբ տալիս է կեանք և զրկում կեանքից: Նա մի մեծ և յաւիտենական ծփումն է, որ օրօրում է էակներին: Երբ նրա խորն էս նայում—տեսնում էս որ այնտեղ կեանք է եռում: Ձկայ մի կաթիլ ջուր, որ չունենար իր բնակիչները, որոնք մաքառում են միմիանց հետ, միմեանց հալածում, խոյս տալիս և կլանում: Մարմնի, Ովկիանոսի ինչ գործն է թէ այս ստորերկրեայ իր դառն ջրերում ապրում և վխտում են արարածներ: Նա ինքը խռովայոյժ կռուի տեսարան է ներկայացնում, պատերազմի, որ չէ իմանում թէ ինչ է ժամանակաւոր խաղաղութիւնը: Նրա ալիքները ընդհարում են, զօրեղազոյնը զրկում և կլանում է աւելի թոյլին և այս տեսարանը աշխարհների պատմութեան, երկրի և մարդկութեան պատմութեան սղումն է: Այդ տիեզերքն է որ հայեացքների համար բիւրեղացել թափանցիկ է դարձել»:

Բնութիւնը անտարբեր է: Մարդկութեան բարոյական խնդիրները մեր տեսողութիւնից թաղնուած են: Իսկ բարոյական զգացմունքը մարդու մէջ դարկ է, որ երբեմն դիտակցու-

թեան է հասնում և հոգեկան ցոլացման վերափոխում: Բարոյական զգացմունքի արմատը—անհատի հոգևոր ուժերն են, իսկ այդ զգացման ուղղութիւնը մասնաւորութեւ է անհատի հասարակական երկար կեանքի շնորհիւ»: Ամեն նախազգացում գիտակցական դառնալով, յաւակնութիւն ունի խորտակուելու», իսկ բարոյական զգացումը յաճախ հեռի է գիտակցութիւնից:

Բարոյական զգացման աղբիւրը, Գիւտն որոնում է հէնց իրեն՝ կեանքի մէջ, գիտակցութեան և նախազգացման ներդաշնակութեան մէջ: Մարդս պտղաբեր է մտքի կողմից. պտղաբեր է նրա զգացմունքը, նրա կամքը և նրա բարոյական ուժերը: Կեանքը ոչ միայն փոխակերպութիւն, իւրացումն ու սննդառութիւն է, այլ միաժամանակ կեանքը սպառումն և աւերումն, կեանքը յաւիտենական արգաւանդութիւն է, հոյակապ ստեղծագործութիւն: Եթէ իմ մէջ ծնունդ է առնում մի միտք, ես տանջանքով համակուած փափագում եմ հաղորդել այդ միտքը ուրիշին, փոխանակութիւն կատարել: Եթէ ես երաժշտութեան հնչիւններից բերկրանքի մէջ եմ կամ ընութիւնն եմ գիտում, ես ցանկանում եմ որ ուրիշներն էլ ներկայ լինեն, որ նրանք էլ զգան իմ հրճուանքը: Մեզ վիճակուած է թէ արցունք և թէ խնդութիւն աւելի քան պէտք է: Կեանքը ձգտում է մեծ ծաւալ ստանալու, և անցնում է միւսներին վիթխարի ու անարգել յորձանքով: «Պարտքը ուժի հեռաւոր արտայայտութիւն է միայն և այդ ոյժը անարգել ձգտում է իրականութեան». Պէտք է տեսնել «Ես կարող եմ, ուստի ես պարտաւոր եմ» և ոչ ընդհակառակն, որովհետեւ ոյժը ձգտում է գործունէութեան և գործադրութիւն է որոնում: Երբեմն փնտրում է մինչև իսկ գրգող, յուզող հոսանք, որ վտանգալից է և որ զուրկ է շահագիտական կամ անձնական որևէ միտումներից: Հոգևոր կազմակերպութեան բարձրութեան վրայ ինքը՝ երջանկութեան բնաւորութիւնը աւելի և աւելի սոցիալական ուղղութիւն է ստանում: Բարոյական զգացմունքը ուժի հետեանք է, անձ թէ ինչու մեզ հասկանալի է մանուկների, ծերունիների և հիւանդների հսականութիւնը, որոնց կենսական ուժերը հազիւ են բաւականանում նրանց սեփական կեանքը պահպանելու համար:

Իբրեւ եզրակացութիւն պէտք է ասել, որ անհատի բարոյական ուժը առաւելապէս պէտք է ծախսուի—մօտիկ մարդկանց բարօրութեան և բաղդաւորութեան համար և ոչ թէ նրանց հետ կռուելու, որովհետեւ բարիքը ընդունում են առանց ընդդիմադրութեան, իսկ կռիւը ընդդիմութեան է տեղի տալիս: Ըստ կարեւորյն բարիք կարելի է անել առանց ուրիշի

օգնութեան, իսկ կռուել կարելի է մի քանիսների հետ, ուրիշներին օգնութեամբ և ոչ միշտ յաղթանակի իրական յոյսերով: Կռոււմ օգնողը անշուշտ իր սեփական միտումներով ու շահերով է առաջնորդուում: Ամենաբացարձակ բռնապետը իսկապէս թշուառ կալանաւոր է և ստրուկ այն անձանց ձեռքին, որոնց գործակցութեամբ նա բռնութիւններ է կատարում:

Ամփոփելով այս ամենը, մենք ուրանալ չենք կարող որ անհատը սոցիալական շարժման ամենանշանաւոր գործօններից մէկն է: Մենք ենթադրում ենք, որ զօրեղ անհատի կողմից ազատագրական շարժման մատուցած աջակցութեան ազդեւորը անհատի բարոյական զգացմունքի մէջն է թաղուած, անհատի հոգեւոր էութեան խորութիւնիցն է նա ծորում: Դադարեցին գահի համար ծագած կռիւները, վերջ դրուեցաւ կրօնական և ազգային պատերազմներին, վերջ կը լինի և տնտեսական պայքարներին: Բայց ինքը կռուի զաղափարը անգարձ ու զազիր յաւիտենականութեան մէջ կը լուծուի այն ժամանակ, երբ ոգու գերազանց էակը զինուած իր բարոյական վեհութեամբ դատակնիք կը կարգայ բռնութեանը: Ապարդիւն չեն անցնիլ Լ. Տոլստոյի ու նրա հետ միասին անհատականութեան այլ ներկայացուցիչներէ յոյսը ու ակնկալութիւնը, որ ամենից առաջ պէտք է վերածնութեան ենթարկուին անհատն և բարոյագիտութիւնը: Բաւական չէ միայն փոփոխել հաստատութիւնները, որպէսզի բռնապետական կազմը էապէս վերանայ, հարկ է որ միաժամանակ մարդը ինքն էլ հոգեպէս վերածնուի: Միւս կողմից, պէտք է ասել, որ ստրկական վիճակն էլ երբեմն ծարաւի է լինում զոնէ արտաքին ազատութեան, որպէսզի ճնշուած էակի անձնաւորութիւնն էլ զարգացման ենթարկուի: Անհրաժեշտ է յիշափոխիլ ոգին, կերպարանափոխել արտաքին ձևերը, կաղապարները անհատների փոխադարձ երջանկութեան համար:

Ոգու յեղաշրջման նշանակութիւնը զօրեղ արտայայտիչ գրտաւ յանձին Հենրիխ Իբսէնի, որը շեշտում է այդ յեղաշրջումը ազատագրական մեծ գործի մէջ: Նա չէ պատկերացնում բանուորական դասը և նրա ձգտումները: Նա պատկերացնում է միմիայն հասարակ բուրժուա միջավայրը, որի ծնունդ էր ինքը և որին ատում էր: Հա հաւատում է մարդկութեան ապագային. հաւատում է անհատին և նրա մեծ կողմանը: Սակայն որքան էլ պայծառ են Իբսէնի գոյները ներկան նկարագրելիս, այնուամենայնիւ Իբսէնի ապագայի հերոսները որոշակի կերպարանք չեն կրում և նրանք սաւառնում են սիմվոլների եթերում: Իբսէնը բանաստեղծ էր և բա-

րոյագէտ. նա որոշ քաղաքական ծրագիր չունէր, նա գործունէութեան եղանակի սլարգարանութեամբ չէր զբաղուում, բայց նա աւելի վառ քան մի ուրիշը ըմբռնեց վիճակը, որ «սոցիալական հարցը ամենից առաջ անհատական ոյժի, կամքի, եռանդի, լուսաւորութեան և բարոյագիտութեան խնդիր է» (Օ. Լուրիէ):

Իրսէնին մեղադրում են, որ նրա բարոյագիտութիւնը կենդանի գործի չի վերածւում, որ նա քարոզում է ապստամբութիւն յանուն ապստամբութեան, որ աղատագրական շարժման միայն հոգեբանական կողմն է նրան հետաքրքրում և ոչ ինքը կեանքը: Նոյն իսկ Նորդաուն մատնացոյց էր անում, որ Իրսէնը ձգտում է մի ինչ որ մառախլապատ անիշխանականութեան: Գ. Վ. Պլէխանովը Իրսէնի երկերը քննադատելիս, ասում է նոյնպէս որ Իրսէնը անծանօթ է ժամանակակից շարժման խնդիրներին. «Ցանկալի է շատ ոգու ազատութիւն և կամքի յստակութիւն, ասում է Պլէխանով, բայց չէ որ քաղաքականութեան նշոյլ իսկ չկայ այդ երազանքների մէջ, իսկ առանց քաղաքականութեան սոցիալիզմ չկայ»:

Միանգամայն ճշմարիտ է: Առանց քաղաքականութեան սոցիալիզմ չկայ, իսկ առանց անհատի՝ քաղաքականութիւն: Փամանակի պայմաններից կախումն ունի ծրագրի և գործելու եղանակի ժաղկումը: Իրսէնը ամենից առաջ սրտատրոփ սպասում է մարդու, խոշոր անհատի երեւմանը, որը գալու է ոչ թէ ստրկութեան կապանքներ բերելու, այլ ազատելու: Նրա հերոսները սլանում են դէպը վեր, և իբրև նոր դաւանանքի ու նոր կեանքի հետևորդներ, իբրև անցողական շրջանի անվստահ հերոսներ, նրանք բարձունքներից դահավիժւում են մահուան գիրկը: Սակայն Իրսէնը չէ լքանում, և երբ Րիդա Ալմէրսը պապականւած հոգևոր վերածնութեան ծարաւով հարցնում է թէ ուր՝ նայել: Լսում է Իրսէնի մշտական պատասխանը.

«Նայիր վեր... դէպի լեռների բարձունքները: Նայիր աստղերին դէպի վեհ խաղաղութեան թագաւորութիւնը:

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԹՅՈՒԹԻՒՆ

- 1) Մ'րաւեան՝ Դաւանակցութեան կրիգիսը, հրատարակութիւն «Երիտասարդ
Դաշնակցութեան», 1907, գ. 15 կ.
2) Բիխարդ՝ ինչու եւի՞ տնջաւում՝ Դաւանակցութիւնից, 1907, գ. 5 կ.

Ամեն տեսակի դաշնակցականներով լիքն է մեր կիանքը։ Ահա և «Երիտասարդ Դաշնակցականներ», որոնք ամենաձայրայ-
յիղ ձախակողմեաններ են և «յստակ» սոցիալիստ-բէվոլիւ-
ցիօներներ. միայն հանելուկ է թէ ինչու այնուամենայնիւ «Դաշ-
նակցական» սնանկացած ետրլըկն են կոչուում իրանց ճակա-
տից։ Երևի «սոստեական» պատճառներով են բացատրում... Թէ
ինչ նոր բան կարող են ասել այդ «սոցիալիստները» զա հե-
տաքրքրական չէ, որովհետև նոր Ամերիկա գտնողներից չեն
այդ «ինտելիգենտ» ֆիդաները։ Դրանց իմաստականութիւնը
ապացուցուած է հէնց նրանով որ զրանք ամեն բան կապում են
անձերի հետ և չեն կարողանում տարբերել երևոյթները անձ-
նաւորութիւններից։ Դրանց համար իհարկէ գոյութիւն չունին
Մարքսի կլասիկ խօսքերը, թէ «առանձին անհատը պա-
տասխանատու չէ ճանաչուած այն յարաբերութիւնների համար,
որոնց սոցիալիստական ստեղծուածն է ինքը այդ անձը»։ Բայց
մեր «Երիտասարդ դաշնակցականները» ըստ ֆիդաների ամեն բան
վերածում են անձնականի։ Այդ կողմից այդ բրոշիւրը քիչ
բան է աւելացնում էջմիածնի կենտրոնական ժողովում արտա-
սանած դրանց իմաստակ և ըմբոստ կառանչների վրայ։

Հետաքրքրական է բրոշիւրը մի այլ տեսակէտով. նրա
մէջ, իրա դաշնակցականի բերնով, «հզօր կազմակերպութեան»
վրայ բարդուած են հէնց այն ոչդաշնակցականների մեղադրանք-
ները, որոնց հեղինակներնին շէֆերը պատրաստ էին պատառ
պատառ անել։ Այժմ լաւ լսենք դաշնակցականներեն, որոնց
քննադատութիւնը ուրիշների ասածների կրկնութիւններն են։

Պ. Մ'րաւեանի ասելով հայ «բուրժուական գեմոկրատիան»
չկարողանալով կանգնել դասակարգային հողի վրայ բնականօ-
րէն գնում է բուրժուական—շովինիստական ճանապարհով, իր
Մարտ, 1907

անյատակ մթութեան մէջ նա առաջնորդներ է փնտրում և այդ առաջնորդները նրան ճանապարհ են ցոյց տալիս»... «Եւ այդ բանի մէջ յաջողութիւն ունեն միայն նրանք, որոնք աւելի լաւ խաբել *) գիտեն, որոնք յարմարուել գիտեն մասսայի ստոր ու զռհիկ ինստիտուցիան: Այդպիսի պայմաններում բացուում է մի ասպարէզ դեմագոգիայի համար: Ահա թէ ինչու այսօր հայկական դեմօկրատիայի առաջնորդները մեր դեմօկրատիայի արժանաւոր ներկայացուցիչները չեն, այլ զանազան բախտախնդիրներ, կարիերիստներ, որոնք զուրկ լինելով միանգամայն մտաւոր և բարոյական արժանիքներից, սակայն մի մեծ տաղանդի տէր են հանդիսանում, դեմագոգիական տաղանդի, որով այնքան առատօրէն օժտուած են մի շարք դաշնակցական պսպղուն «գործիչներ», որոնց հրապարակախօսական և հեռտորական լեկսիկօնի մէջ ամեն բան կարելի է գտնել—և՛ ազգ, և՛ դասակարգ, և լիբերալիզմ, և՛ սոցիալիզմ, և՛ կրօն, և անաստուածութիւն, և համազգային համերաշխութիւն և դասակարգային պայքար: Տեղը եկաւ նրանք ազգային են, տեղը եկաւ սոցիալիստ, տեղը եկաւ նոյնիսկ կղերական»:

Այդպէս ենթորոշուում դաշնակցական «պսպղուն» գործիչները», որոնց անունները միշտ կարելի է գտնել «Յառաջ—Ալիք—Չանգ—Երկիր—Ժամանակ» օրգանի մեծ «խմբագիրների և մեծ աշխատակիցների» ցանկում: Այդ վեհափառ «դեմագոգներն» ու «խաբեբաներ» են, հետեւաբար, Ա. Ահարոնեան, Մ. Յովհաննիսեան, Գ. Սափակ, Ե. Թովչեան և ընկերութիւն:

«Ի՞նչ է Հ. Յ. Դաշնակցութիւնը»—հարցնում է «երիտասարդ դաշնակցական» Մրաւեանը—Դաշնակցութիւնը անլեզալ մշակականութիւնն է: «Դրօշակը» «Մշակի» արտասահմանեան անցնողը հրատարակութիւնն է: Այն ինչ որ գրում էր «Մշակը» զգոյշ ու խոհեմ, այսպէս ասած, տողերի մէջ, նոյնը ասում էր «Դրօշակը» ազատ համարձակ, առանց քաշուկու: «Դաշնակցութիւնը անլեզալ մի կազմակերպութիւն էր, «Մշակը» լեզալ մի թերթ էր:

«Դաշնակցութիւնը» առաջին շրջանում հայ բուրժուական դասակարգային կուսակցութիւնն էր: Դաշնակցութիւնը հէնց սկզբից և եթ տարուած էր հայկական ինքնուրոյն կառավարութիւն, ինքնուրոյն պետութիւն տեղծելու ցնորքով:

«1903 թուականից ռուս կառավարութիւնը հայ ազգին, որպէս «կրամոլնիկ» ազգի, յայտարարում է օրէնքից դուրս և և դադարում է հայ ժողովրդի վերաբերմամբ կատարել իր՝ որպէս կառավարութեան վրայ վերցրած պարտականութիւն-

*) Ընդգծումները ամեն տեղ մերն է: Մ. Յ.

ները: Այդ պաշտօնը ստանձնում է «Դաշնակցութիւնը», դառնալով կուսակցութիւնից ազգային կառավարութիւն: Դա «Դաշնակցութեան էվօլիցիայի երկրորդ շրջանն է. նա դառնում է, պատժում է, հարկ ժողովում, ծախսում, իշխում հայ ժողովրդի վրայ անկօնտրօլ և այլն:

Սակայն ժամանակի ընթացքում այդ «կառավարութիւնը» կղզիանում է, կտրւում է իր կապը տիրող բուրժուա դասակարգի հետ, դառնում է առանձին կաստա իր ուրոյն շահերով: Մի նոր արտաքին թշնամու—թրքական արշաւանքների երևան գալն էր որ դադաթնակէտին հասցրեց Դաշնակցութեան կարևորութիւնը և ոյժը, տալով նրա ձեռքը տիրապետելու ամենամեծ զէնքը—մշտական զինուած զօրքը: Թուրքական վտանգը ստիպում էր հայ բուրժուազիային խուճկ ծխել Դաշնակցութեան զինուորական ոյժի առաջ, իսկ դաշնակցութիւնը իր կողմից սկսում է արհամարհել իր պաշտպանութեան տակ վերցրած ազգաբնակչութիւնը: Իր պաշտպանութիւնը Դաշնակցութիւնը ճրի չէր բաշխում, նա այդ պաշտպանութիւնը ծախում է ժողովրդին այս վերջինիս ստրկացման դնով: Դաշնակցութիւնը սկսում է բռնանալ ազգաբնակչութեան բոլոր խաւերի վերայ, բայց առանձնապէս և աւելի մեծ չափերով իհարկէ հասարակ ժողովրդի վրայ: Ազգաբնակչութեան ներքին կեանքի ամենախիստ և ամենամանրակրկիտ խնամակալութեան տակ վերցնելով Դաշնակցութիւնը անվերջ բռնութիւններ էր կատարում:»

«Ռուսաստանի յեղափոխութիւնը գալիս է սթափեցնելու դաշնակցական ինտելիգենցիայի սոցիալիստօրէն մտածող այն մասը որ տարիների ընթացքում տարուած է եղել դաշնակցական բուրժուա ինտելիգենցիայի սոցիալիստական փրագիօլոգիայով: Առաջ է գալիս Դաշնակցութեան մէջ մի նոր՝ թարմ հոսանք, երիտասարդ Դաշնակցականների հոսանքը: Այդ շէմեցրեց դաշնակցական բիւրօկրատներին, որոնք սկսում են «սոցիալիստանալ», «բիւրեղանալ» որպէսզի պառակտման առաջն առնեն: Գոյութեան խնդիր կար հրապարակի վրայ և դաշնակցութիւնը գերմարդկային ջանքեր էր գործ դնում իր ճանկերից «աշխատաւոր մասսան» բաց չթողնելու համար, կազմում է պրոֆեսսիօնալ միութիւններ իր դրօշակի տակ: Դաշնակցական միտումները այդ սոցիալիզմի մէջ զուտ զուբառովական միտումներ են, աշխատաւոր դասակարգին խաբող մանեօվրներ:»

Այդպէս է ասում.. «Երիտասարդ Դաշնակցութիւնը»: Շարունակենք նրա մերկացումները.

«Դաշնակցական բիւրօկրատիայի մէջ են մտնում այն

հարիւրաւոր դաշնակցական ստորին պաշտօնեաները, զանազան շրջանապետները, գինուորական լիազօրներ, թաղապետներ, զինուորներ և նոյն իսկ պրօպագանդիստներ, որոնք մտել են Դ-եան մէջ ոչ թէ գաղափարից դրդուած, այլ լոկ ռոմիկի ևւ որոշ արտօնութիւններից օգտուելու համար: Այդ բիւրօկրատիան մի նոր պարագիտ է ժողովրդական օրգանիզմի վրայ: Իր գոյութիւնը պաշտպանելու համար այդ բիւրօկրատիան ամեն ջանք գործ է դնում որ բաւարարութիւն տայ և բանուորին և տաճկահային և բուրժուային և կղերին: Եւ Դաշնակցական բիւրօկրատիայի խանութում դուք ամեն բան կը գտնէք, և տաճկահայի խնդիր և սոցիալիզմ և Արծրունեան մաքուր լիբերալիզմ և կրօն և եկեղեցի. «մենք պաշտպան ենք հանգիստանում կրօնի և եկեղեցու» պարծանքով յայտարարում է «Երկիրը»:

«Պարզ գիտակցելով որ ժողովրդի բոլոր խաւերը՝ թէ գիւղացին և թէ բանուորը, թէ բուրժուան և թէ հոգևորականը, բոլորն էլ որոշ չափով զժգոհ են Դաշնակցութիւնից, այդ բիւրօկրատիան րեֆորմներ է մտցնում իր վարչական մեխանիզմի մէջ և առաջ է տանում իր գործը մի յաջողութեամբ, որին կը նախանձէր Ստոլիպինեան կարիւհտը»:...

«Եւ ահա հայ ժողովրդի քաղաքական զժնդակ պայմանները միացած աշխատաւոր ժողովրդի անյատակ տգիտութեան հետ այն պատրաստ հողն է, որի վրայ բուրժուական Դ-ը կը հիմնէ իր տիրապետութիւնը և դեռ սա երկար կապրի», որովհետեւ կը շահագործէ թէ բարոյական և թէ նիւթական այն ահագին կոսպիտալը որ նա զիջել է տարիների ընթացքում» (Էրես 36): Նա տէր է նիւթական ահագին միջոցների, նա տէր է տարիների ընթացքում կատարելագործուած մի վարչական մեխանիզմի, նա տէր է նաև բարոյական մի մեծ հմայքի, որ նա ձեռք է բերել ժողովրդի առատահոս արիւնով: Դ—ը շահագործում է և շովինիստական այն մութ զգացմունքները, որ տարիների ընթացքում Դաշնակցութիւնը պատուաստել է հայ ժողովրդին:»

«Դաշնակցական բիւրօկրատիան, որ ունի իսկական բիւրօկրատիայի բոլոր առանձնայատուկ կողմերը, չափազանց սիրում է իշխել և հրամայել, բայց երբեք՝ ղոհաբերել... «Ձէ որ կառավարութիւնը բոլորիս էլ ճանաչում է և իսկոյն ամենքիս էլ բռնել կը տայ»... ասում են իրենց մէջ շէֆերը... (Երես. 46): Բայց նրանք յեղափոխական են... Տաճկահայաստանում... որտեղ իրանք չկան: Օ՜ դա շատ հասկանալի է. «չէ որ այստեղ Ռուսաստանում ամենքին ճանաչում են, ամենքին բռնել՝ կը տան», իսկ այնտեղ թող զոհուեն ուրիշները, իսկ բիւրօկրատները կը

նային բուրժուական սալօններում և քերթելով «աշխատաւոր ժողովրդին» քէֆ կանեն:

Այդպէս է խօսում... Երիտասարդ Դաշնակցութիւնը, նոր ոչինչ չասելով, այլ ինքն ևս պնդելով և հաստատելով, «լեզաւ ինտրիգենտների գանդատները»...

Իր մերկացումների մէջ զուտ ճշմարտութիւններ ասելով իրան լաւ ծանօթ դաշնակցական «պսպղուն» շէֆերի մասին, պարոն Մրաւեանը չի կարողանում սղաւտուել այդ շօլայի մաներներից, որ կեղծիքը, ստախօսութիւնը հասցրել համենափայլուն կատարելագործութեան: Նա չի կարող իր «երիտասարդ դաշնակցականի» դիմով ըմբռնել որ իր ակնարկած «լեզաւ» ինտրիգենտներից շատ շատերը de facto շատ և շատ աւելի իրաւունք ունեն յեղափոխական կոչուելու, քան ինքը այդ «երիտասարդ դաշնակցականը», որի ամբողջ «յեղափոխութիւնը» կայնում է մի դիմակաւորուած գիշերային դրամաշուրթեան մասնակցելու մէջ... Մի խայտառակէք և ցեխը գցէք այդ յեղափոխական խօսքը կպցնելով ամեն մի դատարկ գլխի արտաքին պատից: Ձեր հասկացողութեամբ «յեղափոխական» են և ամեն տեսակի շանտաժիստները, որովհետեւ «բուրժուա» են սպանում, «կալուածատէրերին»-ին մօրթում: Բայց թողնենք այդ, որովհետեւ խօսք էինք տուել ըստ էութեան չքննել այդ բրօշիւրը, այլ բերել միայն նրա վկայութիւնները...

Մենք տեսանք թէ ինչ անուններով է մկրտում «ազգիս պարծանք Դաշնակցութեան» ղեկավարներին այդ «երիտասարդ դաշնակցականը»: Մարդ զարմանում է այդ պարոնի լուգիկայի և էթիկայի վրայ, երբ տեսնում է որ այնուամենայնիւ նա և իր նմանները այդ «կաղմակերպութեան» մի ֆրակցիան են կազմում: Իր միւս ընկերակիցներին (կենտրոնի և աջակողմեան դաշնակցականներին) «խաբեքաներ, շահագործողներ, ոռճկով ապրողներ, ուրիշների արիւնով յեղափոխական անուն վաստակողներ, բռնակալներ, բիւրօկրատներ» անուններով մկրտելով հանդերձ նա չի սօսկում այդ արատաւորուած անունից և իր ճակատին կպցնում է նոյն ցուցանակը մի քիչ... մաքրուած: Իրենց թէօրիական հայացքներով երիտասարդ Դաշնակցականները մօտ են երևում սոցիալիստ յեղափոխականների մաքսիմալիստներին: Անշուշտ Մաքսիմալիզմը միայն դաշնակցական սումբուր սկզբունքներով մի քիչ փոփխում:

Հիմքը դարձեալ քալլագեօզ էքսպերիմենտներ ժողովրդի աշխան և գրպանի հաշուով, պատճառարանուած չմարսուած առանձնատիպ «սոցիալիզմով»...

Երկրորդ բրոշիւրը «Խնչու ենք անջատուում Դաշնակցութիւնից» պարզում է նոր հոսանքի profession de foi-ն: Պարզ երևում է որ անօգուտ չեն անցել սոցիալ-դեմոկրատներին, «Մուրճի» և այլոց խիստ քննադատութիւնների և հարուածները դաշնակցական մտածողութեան մէջ: Այդ բրոշիւրում դաշնակցականները արդէն բոլորովին այլ երգեր են երգում Տաճկահայաստանի խնդրի մասին: Դրանք այժմ պաշտպանում են այն տեսակէտը որի դէմ պայքարում էին իրենց «Յաւաջ—Ալիքում»: Այսպէս ուրեմն այժմ իրողութիւն է որ Դաշնակցութիւնը քայքայուած է և բաժնուած առնուազն երեք կտորի. բիւրօյական, միհրանական և երիտասարդական: Ամեն մէկը իրան իսկական Դաշնակցական է համարում, բոլորն էլ փող կորզելիս իրար են մեղադրում շանտաժի մէջ: Բաբելոնեան խառնակութիւն որի վերջը վերջնական քայքայում և չարիքի ոչնչացում.— Բանի որ «Երիտասարդ Դաշնակցականները» ընդունում են միջոցների անխտրականութիւնը, մաքսիմալիզմը, ըստ երևոյթին, մասնաւոր անհայտների և ոչ հաստատութիւնների նկատմամբ — կարելի է ասել որ դրանք էլ իրենց մէջ պարունակում են ապապայ այլասերման սաղմերը: Այդ բոլորի հիման վրայ մենք իրաւունք ունենք ասել Ֆիդայիզմի այդ մօղերն մետամորֆոզին quid quid id est timeo danaos et dona ferentes:

Փոխելով Վիրգիլիսի danaos խօսքը fidaos—ով...

Անկախ

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Տեղեկագիր և հաշուէցոյց Թաւրիզի հայուհեայ բարեգործական միացեալ ընկերութեան 1905—1906 ուսումնական տարեշրջանի, Թաւրիզ 1906,
- 1) Հաշիւ Թիֆլիզի հայուհեայ բարեգործական ընկերութեան 1906 թ. Թիֆլիզ 1807
- 3) Լ. Մանուէլեան, բանաստեղծութիւններ և պօէմաներ, զիրք երկրորդ, 1907, 40 կ.
- 4) Ա. Զանեան, բանաստեղծութիւններ, II պրակ, Բագու 1907 թ.
- 5) Մրաւեան, Դաշնակցութեան կրիզիսը, Երիտասարդ Դաշնակցութեան հրատարակութիւն № 1, (զիմում դաշնակցական բանուորութեան), Վեննա, 1907, գ. 15 կ.
- 6) Լենկօ, ինչ են ցանկանում սոցիալիստները, թարգմ. Յ. Լալ., գ. 3 կողմ.
- 7) Պշիբիշեակի, երջանկութեան համար, Թիֆլիս, 1907 թար. Ս. Շխեանի, I յաւելում «յուշարարի»: գինն է 50 կ.
- 8) Մ. Զաւեան «Դաշնակցութիւն» ժամանակից անհրաժեշտ էվօլիւցիան, Բագու, 1907, գ. 5 կ.
- 9) Մարտիկ, իմ երգերից, Թիֆլիս 1906 գ. 30 կ.
- 10) Խ.Ազատ, ինչ է սահմանադրութիւնը. Թիֆլիս, 1907, գ. 21.
- 11) Բին. Տէր Գրիգորեան ազատութեան խանդը, բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1907 գ. 20 կ.
- 12) Պրոլետարի յեղափոխական երգեր, հրատ. Ռ. Ս. գ. բ. կ. գ. 15.
- 13) Վ. Նեմիրովիչ Դանչենկօ Հահուհի դայանէն, Բագու թարգմ. ա. Ս. Սիմէոնեանի. գինը 8 կ.
- 13) Աշխատաւոր երգերը, հրատ. Երիտասարդ Դաշնակցութեան, գ. 3 կ.
- 14) Տան, Քրիստոս աշխարհում ֆանտազիա, Թ. Վ. Սիրտ. գ. 3 կ.
- 15) Կառլցկի, ներկայացուցչական կառավարութիւն, Թ. Խան-Ազատ, գ. 40 կ.
- 16) Միքայէլ Նալբանդեանի երկերը, 2 հատոր, 1906 Ռոստով, գ. 3 ր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երկրորդ Պետական Դումայի դիմադիծը:—Ռուս ժողովուրդի Գաշնակցու-
թիւնը:—«Աշխատաւոր մասսա» և պրոլետարիատը:—Մեր կադետները,
Առցիալ-դեմոկրատիան և Գաշնակցութիւնը:

Երկրորդ Պետական Դումայի դիմադիծը այժմ կարելի է պարզուած համարել: Եթէ Առաջին Դուման լի էր յեղափոխական խանդավառութեամբ, եթէ՝ Հալոսկանց վաստ թէ՛ դըրսում կազմ կանգնած է յեղափոխական քայլեր անելու պատրաստ «ժողովուրդը»՝ այն Դուման իրան պահում էր կառավարութեան վերաբերմամբ մարտահրաւէր խիզախութեամբ:—այժմ, Վրբորդի կոչի անարձագանք վերջաւորութեան, ժողովըրդի ցոյց տուած կրաւորականութեան և բւերօկրատիայի երևան հանած նիւթական ոյժի հետ, պէտք է որ օգը ցնդուէին յեղափոխական վառ ոռմանտիզմի ցնորքները և սոսկ իրականութիւնը իր զգաստացնող սառնութեամբ իջեցնէր ժողովրդական ներկայացուցիչների լորրօքուած կրակը և յեղափոխական Ֆրադէօլոպիան տեղի տար լրջմիտ դատողութեան, առաջ մղելով շրջանայեաց, հաստատակամ, բէալ գործելակերպի քաղաքականութիւնը: Դումայի ձախակողմեան թեւը, մազաչափ չփոխելով իր քննադատական հարուածների ուղղութիւնը, խոյս է տալիս միտինգային և ցուցամտական ձեւերից և աշխատուով աւելորդ առիթ չտալ կառավարութեան ցրելու Դուման, որը ոյժերի ներկայ յարաբերութիւնների մէջ միակ նեցուկն է երկրի օրէնսդրական վերահսկողութեան: Տեսնելով ընդիմադիր Դումայի այդ զսպուած կորովի ծայրայեղ աշակողմանները, յանձնառու «ռուս ժողովրդի գաշնակցութեան» ախրահռչակ լիդերների, էլ սկանդալ, էլ պրովոկատորական խայտառակութեան չի մնում որ Հաարքեն իսկական ռուս մարդկանց սրտին անհաճելի Դումայոււմ, որպէսզի առիթներ ստեղծեն արձակել տալու, փակելու այդ հաստատութիւնը և «ռուս գաշնակցականների» բեցեպաներով նոր ընտրական օրէնքներ մացնելու ի փառս ուղղափառ և «սպարիօտ» «սոցալ-բոմշչիկների»: Սակայն ռուս գաշնակցականների (СОЮЗНИКИ)

ներկայացուցիչները այնպիսի մտաւոր- բարոյական անանկութիւն ցոյց տուին որ նոյնիսկ նրանց հովանաւորող թւրքօկրատները իրանց վատ զգացին և աշխատեցին ցոյց տալ իրանց անհամակիր դէպի աջակողմեան այդ «յեղափոխականները»: Եւ Պուրիշկէնիչները, Կրուշչեանները իրանց «ընկեր» Իլիօզոր վար- գապետով «Ռուսական Դրօշակում» («Русское Знамя») և ուս- դաշնակցականների այլ օրգաններում էլ հայհոյեանք, զրպար- տութիւն չմնաց որ չթափէին այն մարդկանց հասցէին, որոնց երէկ երկինք էին լսարձրացնում: Մինիստրները «մատնել են հայրենիքը ջնուգներին» ճշացին գրանք: Եւ ուս- դաշնակ- ցականների սե հարիւրակները սկսեցին ուժգին թափահարել իրենց զինուած բուռնցքները, վրէժխնդրութեամբ բորբոքուած, անկիւնի յետեից բացին քաղաքական սպանութիւնների սերիան: «Ով մեզ հետ չէ—նա մեր թշնամին է—պէտք է ոչնչացնուի» ճշում էր «Ժողովրդական զատաստանի կամորան» (Камора народной правды): Եւ Հերցենշտէյնի սպանութեան հետեւց հռչակա-ւոր Իօլլոստի սպանութիւնը: Անշուշտ ուս- դաշնակցութեան շէֆերը այնքան յիմար չեն որ սպանութիւնները այնպէս կազ- մակերպեն որ իրենց կաշին վտանգուի. Կամորան և Մաֆիան այդ կողմից ոճիրները գիտեն այնպէս ճարպիկութեամբ կա- տարել որ ինքը սատանան չի կարող գտնել «քաջ տղերանց» կամ ինչպէս խտալացիներն են ասում այդպիսի ընկերակցու- թիւնների անդամների մասին—«չար տղերանց» (Մարանդրինի):

«Սուս է, պրովակացիա է, ապացուցէք որ մենք ենք», ասում էին Պուրիշկէնիչների ընկերները իրենց պատրիօտական օրգաններում: Իսկ «Новое Время» (Նոր ժամանակ) նոյն իսկ գտաւ որ իրենք ջնուգներն են սպանել Իօլլոստին... և սպանուածի անուան շուրջ ինսինուացիաներ սարքեցին, որպէսզի մոլերեց- նեն հատարական կարծիքը, քնացնեն հարցը, արդարապա- տութեան ուշադրութիւնը այլ կողմ ուղղեն... Ինչ սոսկալի նմանութիւն այդ բոլորի և խեղճ Տէր Օհանեանի սպանութեան և հայոց «Ժամանակի» բռնած զիրքի մէջ այդ ոճրի քննութեան ասիթով: Եւ քնացրին մեզանում Տէր Օհանեանի սպանութեան հարցը Կովկասի մամուլի ներկայացուցիչները, որոնցից մէկը ուղղակի յայտնեց առգերս գրողին թէ «վախենում ենք»... զրչի քաջամարտիկ զինուորներ, որոնք աւելի սովոր են մկրատի և սոսնձավրձնի...

Ի հարկէ ուս- ինտելիգենցիան մերինի նման չէ. նա այն- պիսի բարոյական մեծ ոյժ ունի որ չի ընկճուիլ այդ կամորա- կան ոճիրներից և վախկոտութեամբ յետ չի քաշուլի մերկացում- ներից, ինչպէս այդ անում է արեւիկան «ամենակուլաւորա-

կան ազգի» ամենամերկանտիլ ինտելիգենցիան, և չնայած «ռուս ժողովրդի դաշնակցութեան» բոլոր հնարադիտութեան, նրա դեմագոգիական բոլոր կեղծիքներին նրա սնած սրիկաները իրենց ներշնչող շէֆերի հետ ականջները բռնուած խաւար մութ անկիւնի յետեւից լոյս աշխարհ կը հանուին: Կոլոսս ազգի վեհաիրտ ինտելիգենցիայի վրայ կարելի է միանգամայն վստահ լինել. թող գլխին վայ տայ համակերպուող և վախկոտ ինտելիգենտներ արտադրող «արեւելքի ամենակուլտուրական» ազգը որ ամբողջապէս մի ստոր դերի է դառել մի խումբ զուլուր-ների ձեռքում...

Երկրորդ Դումայի ընդգիմագիր կուսակցութիւններից իրենց ծրագրային հետեղականութեամբ և մաքառող ոյժերի կորովով դարձեալ աչքի են ընկնում կոնստիտուցիոն—դեմոկրատները և սոցիալ-դեմոկրատները, մէկը իրեն էվոլյուցիոն դեմոկրատիզմի, իսկ միւսը յեղափոխական դեմոկրատիզմի ներկայացուցչութիւն, մէկը իրեն բուրժուական (մասնաւոր սեփականութեան) կարգերում իրագործելի արմատականութեան ներկայացուցչութիւն, իսկ միւսը իրեն լաւագոյն տպագայի՝ սոցիալիզմի իդէալների համար սոցիալական դիտութեան վրայ հիմնուած մարտնչող մի ավանգարդ. կոնստիտուցիոն—դեմոկրատները և սոցիալ-դեմոկրատները կեանքի մէջ իրար լրացնող հոսանքներ են, գիտութեան և բնականութեան վրայ հիմնուած քաղաքական կատեգորիաներ են:

Պարզ է որ սոցիալ-դեմոկրատիան չի կարող հաշտուել նոյն իսկ ամենաարմատական դեմոկրատիկ կարգերի հետ մինչև որ չվերացուի մասնաւոր սեփականութեան սկզբունքը: Հետեաբար, նրա դերը պարլամենտներում միմիայն քննադատական է օպպոզիցիան և գէպի առաւելագոյն դեմոկրատիական պահանջները մղող: Նրա սկզբունքային քննադատութեան և արմատական պահանջների ազդեցութեան տակ ստիպուած է էվոլյուցիոնական դեմոկրատիան կամ ռուսական իրականութեան մէջ «ժողովրդի ազատութեան կուսակցութիւնը» միշտ գէպի ձախ պահել իր նաւի ղեկը և մաքսիմալ դեմոկրատիզմը մտցնել մշակած օրինագծերի մէջ: Ոչ միայն մեղանում, Ռուսաստանում, ուր դեռ դժուարութեամբ նոր նոր է սահմանադրուում սահմանադրական կեանքը, այլ ամենաառաջնակարգ պարլամենտական երկրներում անգամ, օրինակ՝ Ֆրանսիայում, սոցիալ-դեմոկրատիան, մասնակցելով «բուրժուա կառավարութեան» օրէնսդրական աշխատանքի մէջ, ղեկավարող դեր չի ստանձնում, այլ իր անխնայ քննադատութիւններով նա միայն ստիպում է մեծամասնութեան վրայ հիմնուած միմիայն

սրութեան առաւելագոյն զիջումներ անել: Այն իմաստակ արհամարհանքը որ տածում են զէպի բուրժուական գեմօկրատիայի կատարած գործերը և բեֆորմները արեւելքի «ամենակուրտութեան ազգի» փրկիչները իրենց աջարսանդալ սուբուր օրգաններում, ի հարկէ անձանօթ է իսկապէս կուտուրական ազգերի չկեղծուած սոցիալիստներին, որովհետեւ գեմօկրատիայի իւրաքանչիւր յաղթանակ ստեղծում է նոր նպաստաւոր պայմաններ սոցիալիզմի առաջնադաց ընթացքի համար, տալիս է հնարաւորութիւն բացարձակօրէն կազմակերպելու, թոռով և գիտակցութեամբ ստուարացնելու պրօլետարական բանակը, որը միակ անկեղծ մարտնչողն է սոցիալիզմի թագաւորութեան համար:

Առանց կապիտալիզմի չկայ պրօլետարիատ առանց գիտակից պրօլետարիատի չկայ սոցիալիզմի գալուտ: Սոցիալիստ-յեղափոխականները յետագործ հայեացքը դարձնելով զէպի հնարարեան համայնքը, իրանց մաքսիմալիստական էքսպերիմենտներով և գիւղացիութեան վրայ զրած յոյսերը ոչ մի գիտական հիմք չունեն և հին բուհտարական բոմանտիզմի կերպարանափոխուած կրկնութիւններ են կամ ինչպէս ճիշտ նկատում են ս.-դ.-ները «մանր—բուրժուական, բէակցիօն ութուպիզմ» է: Դեռ չենք խօսում դաշնակցական տիպի սոցիալ-յեղափոխական իմաստակ ֆալսիֆիկացիայի մասին...

Դեմօկրատիական կարգերի ստեղծումով չքանում են սրիկայատիպ դեմադոգները և խաւար մասսայի դիւրահաւատութիւնը և ստրկամտութիւնը շահագործող զանազան կեղծ յեղափոխական փրկիչներ, իրենց կամորային և մաֆիական բանդաներով, կոնսպիրատիւ կառավարութիւններով, ժողովուրդը ահ ու դողի մէջ պահող սև և կանաչ հարիւրակներով և դրսի ֆիգայական աւանտիւրներով: Բռնակալական բուրժուատիական բեթիմի վիժմունք այդ տիպի «յեղափոխական» ալֆոնսները և դրամաշորթ մարգատպանները ընագլմամբ կողմնակից են մըշտատե խառնակ, քաօսային դրութեան, գիւղայր, գեմօկրատիական օրինակարգը գերեզման է այդ տեսակ «կազմակերպութիւնների» համար, որոնք իրենց օրգաններում անձի և բնակարանի անձեռնմխելութեան մասին են ճառում, իսկ իրականութեան մէջ ոչ անձի, ոչ բնակարանի անձեռնմխելութիւն են ընդունում ոչ անկախ դատարան իրենց սատրապային գերիշխանութեան դիմաց, կեղծաւորներ և փարիսեցիներ, որ զբոլից գեղեցիկ էք ինչպէս գերեզմաններ, իսկ ներսում լի ոսկորներով և ապականութեամբ: Սիմիլիստներ, որոնք ձկանում են յեղափոխական, ձկանում են գեմօկրատ, ձկանում են սոցիա-

լիստ, ձեռնում են շիտակ, մի խօսքով կեղծում են հանապազ, ամենուրեք անամթարար: Այդ տեսակ գործիչների համար պայծառ լոյսը բարոյական մահացում է. նրանց պէտք է ամպած օրը, ինչպէս գայլին, որ բստ ժողովրդական առածի «ամպ օրը կուրախանայ»:

Այդ բորբոսնած հոգիների քարոզները հող են զանում խաւար գիւղացիների և սահմանափակ արհեստավորների խաւերում և յետ վանում գիտակից պրոլետարիատի միջից, որովհետեւ այս վերջինս իր մտաւոր հասունութեամբ պաշտպանուած է դեմագոգիական կեղծիքներից: Այդպիսով միակ ոյժը որ ընդունակ է մեր իրականութեան մէջ մաքառել զաշնակցական մոլորեցնող խուժանապետութեան դէմ սոցիալ-դեմոկրատիան է հանդիսանում: Inde ira! Դա է պատճառը որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր բոլոր ոյժը լարել է հայկական կեանքում այդ նորարարող զէնքերով զուսպութիւնները որոնք մէջ խեղդելու համար: Մենք ուղիղ մի տարի առաջ, երբ դեռ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր փառքի և իշխանութեան գաղաթնակէտին էր հասել, նոյն այս էջերում գուշակել էինք որ նա կընկնի խիլալ Դաւիթի ձեռքից, ինչպէս անճոռնի Գողիաթը *): Այժմ մեր գուշակութիւնը կամաց կամաց իրագործուեց անհերքելի փաստերով... Այժմ երեք մասերի անջատուած Դաշնակցութիւնը քայքայւում է և օրհասական տանջանքների մէջ գալարուելով աշխատում փրկել իր առևարական տան սնանկութիւնը գէթ արտաքին միութեան ցուցանակով... սակայն այն ինչ պէտք է լինի—անխուսափելի է. և ժողովրդի կողմէնքերով գնուած մատակերները խօսքի ազատութեան դէմ զործածելով դուք «ուլը կողովի տակ չէք թաղցնիլ»:

Սեփական իշխանութիւնը պահպանելու ինստիտուտից դրդուած մեր «ոցիալխաւ-յեղափոխականները» առաջ են քշում պրոլետար հասկացողութեան տեղ «աշխատաւոր» մութ տերմինը, որպէս զի այդ անորոշութեամբ շարունակեն իրենց կեղծ փրկիչների շահաւէտ գերը: Սակայն ի՞նչ է նշանակում «աշխատաւոր» խօսքը սոցիալիստական տեսակէտից: Ո՞վ չէ իր աշխատանքով ապրում, եթէ հաշուի չառնենք մի քանի տասնեակ խոշոր բուրժուաներ և բանթիւններ. միթէ միջակ առևարականը, միջակ գործատէրը ստիպուած չէ իր և իր ընտանիքի անձնական աշխատանքը զնել այս կամ այն գործի մէջ ոչ պակաս քան մի «ընկեր» վարդապետ, մի ընկեր տէրտէրը, մի ընկեր վարժապետ, ընկեր վաշխատու գիւղացիները, ընկեր ար-

*) Տես 1906 թ. «Մուրճի» Ապրիլ-մայիս և յունիսի համարը:

հետաուորները, ընկեր բիւրօյական շէֆերը, շրջիկները, գինիւրաւները և fuffi quatti լեզիօնը:

«Աշխատաւոր մասսան» տերմինը իր առաձգականութեամբ անշուշտ շատ ձեռնտու է ազգային խնամակալների համար, որովհետեւ տեղը եկաւ այդ լայնարձակ սուտնի տակ կարելի է ծածկելու միայն վեղարը, այլ և ազգասէր և բարեգործ միլիօնատէրերի փորը: Ինչպէս ֆիդայական աշուղներն են ասում.

«Հարուստը, ձեր ոսկին տուէք մեր ազգին»)

Յիշեն սերնդներ ձեր անուն անգին»!

Արդարեւ, մենք դեռնենք խոշոր հայ բուրժուաներ, որոնք վախից սինկուլուրաներ են ստեղծում այս կամ այն ազդեցիկ շէֆի համար և այդպիսով դառնում անձեռնմխելի ազգային պարծանքներ և ամենայն հայոց խնամակալների շարքերում յարգուած անձնաւորութիւններ: Դա բոլորին յայտնի փաստեր են:

«Աշխատաւոր» խօսքը այդպիսով դառնում է մի ճիւղութեամբ մասնօր մեր ազգը փրկող կազմակերպութեան ղեկավարների ձեռքում տեղը եկաւ վաշխառուն էլ «աշխատաւոր» շարքին է պատկանում, եթէ նա կոմիտէի անդամ է կամ օժանդակողէ տղերանց գործերին. աշխատաւոր է և մի փողաւոր ինժեներ, փաստաւրան կամ բժիշկ, որոնք ամբողջապէս խոշոր բուրժուաների ճարպով և օժիտային խնամխութեամբ են ապրում, իրենց փառաւոր ապարանքներում և ճաշեր տալիս պնակալէլ շէֆերին: Բայց նոյն այդ «աշխատաւորները» շահագործողների շարքը կանցկենան հէնց որ համարձակութիւն ունենան դիպչելու ամենայն հայոց խնամակալների կենսական շահերին և... պրեստիժին: Ահա ինչ հրաշագործ բան է «աշխատաւոր» տերմինը:

Այդ առաձգականութեան շնորհիւ դաշնակցականը կարող է այնպիսի միտամորֆոզների ենթարկուել որ հոռմայեցի բանաստեղծ Օվիդիուսի երեակայութեամբ անգամ չի անցել: Դրանք կարող են, օրինակ, էջմիածնի պրոկուրոր Կանչելիէն խնկարկողին յանկարծ սոցիալիստ-յեղափոխական դարձնել, «Новое Время»-ի բարեացակամութիւնը հայ ազգի դէմին հրաւիրող քաղաքագէտին, որ իր համոզմունքներով աւելի է հեռու սոցիալիզմից և յեղափոխութիւնից, քան պատկառելի Գէյդէնը, դաշնակցական հրամանով Պետական Դումայում սոցիլիստ յեղափոխականների մէջ նստացնել և ստիպել ճառել հակառակ իր համոզմունքներին: Սակայն այդ երկու պատգամաւորները այնքան խելացի են որ երբ տեսան որ իրենց հոժկու ճառերի ազդեցութեան տակ Դուման դատարկւում է—գերադասեցին

*) Այսինքն... Դաշնակցութեան անկօնորոշ տնօրինութեան:

այնուհետև հետևել «լուծիւնը ոսկի է» իմաստութիւն և դաշնակցական հետտորութեան ասպարէզը ամբողջապէս մնաց Ստեփան «ամուսն»: Դրանք կարող են «Մշակի» նախկին աշխատակիցին, որ իր գաւառական ձանձրալի թղթակցութիւններով և բանալ մտքերով քուն էր յարուցանում, յանկարծ այնպէս կերպարանափոխել որ նրա կրակոտ ճառերից «աշխարհիս բոլոր առաստաղները կը փլուեն (ի հարկէ հոմերական հռոցից) և բոլոր մեծ պետութիւնների գեապանները» լեղապատառ եղած հրաժարականներ կը տան և ալգպիսով կը լուծուի և պետական բիւզժէի հարցը: Ահա ինչ հրաշագործ ազդեցութեան ունի մի հատիկ բազմարժանդակ բաւը. «աշխատաւոր»: Դա հանճարեղ դիւա է և արժանի աղգային ճիղուխթների նրբամիտ հնարագիտութեան: Եւ իրենց մտքում դրանք ծաղրում են բոլոր այն մարդկանց որոնք ուզում են որ ամեն մի բառ ճշտօրէն արտայայտի իր բովանդակութիւնը՝ դա ձեռնտու չէ, այլ բան է ճկունութիւնը, առաձգականութիւնը, ճիղուխթութիւնը: Ես գիտեմ բազմաթիւ «դաշնակցականներ» որոնք դէմ են սոցիալիզմին, բայց խորամանկութեամբ ի ցոյց մարդկանց սոցիալիստ են կրկնում: «Աշխատաւոր» խօսքը շատ ղէպքերում է փրկում այդ քամէլէօններին:

Դեռ կան չարախօսներ որոնք չեն հաւատում այդ տղերանց անկեղծութեան, շիտակութեան... Այո՞, դրանք անկեղծ դեմագոգներ են: Իսկ ովքե՞ր են անկեղծ դեմօկրատները: Նախ և առաջ սոցիալ-դեմօկրատները, որոնք դիմում են սոցիալիստական կարգերին յիմնուած սեփականագուրիկ—պրոլետարիատ դասակարգի գիտակից և կազմակերպուած գործունէութեան վրայ: Ապա անկեղծ են և կոնստիտուցիօն-դեմոկրատները, որոնք սոցիալիզմից չբարբառելով չեն էլ կեղծում, երբ իրենց շարքերում գտնում են բոլոր դասակարգերից յարած դեմօկրատիական սկզբունքների համակիրներ, մասնաւոր սեփականութեան սկզբունքի դէմ չմաքառելով ներկայումս, դրանք ոչ մի կեղծիք չեն գործում յայտարարելով իրենց «ժողովրդի ազատութեան» կուսակցութիւն, արմատական դեմօկրատիզմի ջատագովներ: Դրանք քաղաքական շիտակութեան ակտ են կատարում չխճողելով իրենց ծրագիրը կեղծ, առերես սոցիալիզմով: Ահա այդ երկու հոսանքները—սոցիալ-դեմօկրատիան և կադէտիզմը տարածումով մեր իրականութիւնը կադատուի կամաց կամաց այն կօշմարից, որ այլանդակում է և թշուառութեան անդունդը գլորում մեր ժողովուրդը: Դժբախտաբար մեր կեանքը դեռ այն աստիճան կաշկանդուած է միջոցների անխտրականութեան ասպետների լռնութիւնից, մեր խուժանամիտ և ստրկա-

հոգի հասարակութիւնը այնքան նիւթական միջոցներ է կենտրոնացել իրեն բռնաբարոյներ ձեռքում, որ ազատագրութիւնը «ազգային բիւրօկրատիայից» հեշտ բան չէ: Ոչ սոցիալ-դեմօկրատիան, ոչ էլ մեր կադետները ընդունակ են այն միջոցներով հարիւր հազարներ «հանգանակել» որ սովորական բան է ազգային յեղափոխականների համար: Իսկ մասսային գիտակցութեան բերելու համար հարկաւոր է մամուլ, լաւ պրոպագանդա, որ առանց զբաղական միջոցների դժուար է առաջ տանել: Պրօլետարական ջանքերով հիմնուած մի «Հոսանք», մի «Բանուոր», մի «Ձայն» չեն կարող պահպանուել: Իսկ մեր ինտելիգենցիան սովոր է և զիւր վաղուց ի վեր կրաւորական խողովակի դեր ստանձնել միմիայն ազգային յեղափոխականների համար:

Մեր ինտելիգենցիայի մեծագոյն մասը իր մտաւոր-բարոյական զարգացման աստիճանով, ոգու վեհերոտութեամբ բնաւ նման չէ ուսւ ինտելիգենտ ոյժերին, այլ աւելի մերկանալի է, աւելի սերտ կապուած խոշոր բուրժուազիայի հետ, աւելի համակերպուող ամեն տեսակ բռնի ոյժին, հանգստութիւն և կոմֆորտ սիրող: Դրանք կարծէք զգուժ են որ վերջ ի վերջոյ բիւրօյական դաշնակցականները իրենց առաձգական ծրագրերով և ճիգով շէֆերով աւելի հարազատ են իրենց: Այդ ինտելիգենտ *офмбателъ*-ների մեծամասնութիւնը այնպէս է որ ոչ միայն տանում են դաշնակցական սպարապետների լուստանքը, հայհոյանքը, սպառնալիքները այլ և քծնում դրանց, աշխատում հաճոյանալ, ճաշերով, փէշքէշներով, ծառայութիւններով դիւր գալ ոճրագործ աղերանց: Ստոր զաստկարգ!

Մեծ յոյսեր զնել այդպիսի բարոյական ֆիզիօնօմիա ունեցող մարդկանց վրայ միամտութիւն է: Կեանքը ամեն օր նորանոր փաստերով գալիս է ապացուցանելու որ կադետիզմի հայ կեանքում ընդունակ չէ եռանդուն դործունէութեան, իրենց շարքերում անվեհեր մարտնչողներ համարեա չունեն մեր կադէտները, որոնք թէև դաշնակցական չեն, բայց խոհեմութեամբ, մի քանի բացառութիւններ չհաշուած, լոււմ են, երբ տգլիս տէր ու տնօրէնները բղաւում են զրանց երեսներին. «վախկոտ բուրժուաներ, մասնիչներ» և այլն: Ի՞նչ սպասել այդպիսի գեներալներին... Այն էլ պէտք է ասել որ նոյն այդ ինտելիգենցիան միացած մեր բուրժուազիայի հետ ինքն «փրկիչներն» ձեռքում կենտրոնացրել է այն ահաբիւն միջոցները, որոնցով յղփացած այժմ հլու, անմոռնչ հնազանդութիւն են պահանջում մաուզիւրներով զինուած անպատասխանատու խնամակալները:

Եթէ հասարակ ժողովուրդը զոգում է ամեն մի Սողոմոն

փաշայի մտրակից—դա դեռ հասկանալի է, իսկ երբ ինտելիգենտ մարդիկ են ընդհանուր առմամբ հաշուում և համակերպում սոսկալի անիրաւութիւններին, բռնութիւններին և ուժերներին—այն ժամանակ լաւ է խաչ գնէք այդպիսի հասարակութեան վրայ... Ե՞րբ, ի՞նչ բռնութեան առիթով մեր «ինտելիգենտները» ցոյց տուին որ աղամարդիկ են և ոչ զիւններ... Մի երկու փորձեր արին, լայց երբ տգիւտանցից ծաղրուեցան իսկոյն յետ քաշուեցին և քնացին հարցը: Такъ убои́те и спокое́нъ! Այո, պարոններ զուք անկարող էք գործ կատարել, որովհետեւ հափաղանդ կուշտ էք... Եթէ այդ ինտելիգենցիան ուզում է քաւել իր չին մեղքը—պէտք է փոխի իր վեհերոտ վերաբերմունքը, ուժգին ձայնով ի լուր ամենքի կոչի գրանց երեւին. «հերիք է, քաշէք ձեր արիւնոտ ձեւները ժողովրդի կզակից և քսակից!»...

Ասածիցս պարզ է որ ներկայ մոմենտում մեր հայկական իրականութեան մէջ կազետիզմը անկերպարան վիճակի մէջ է, չունի անվեհեր, եռանդուն, գաղափարին տաք կրած, մասնաւոր կազմակերպելու ընդունակ տարրեր, որովհետեւ մեր ինտելիգենցիայի մեծամասնութիւնը փափկամարմին և կամազուրկ բընաւորութեան տէր է, այլապէս ոչ—պրոլետարական խուերում նա կարող էր աջողութիւն ունենալ, եթէ չքաշուէր խիզախ կռուից դաշնակցականների դէմ: Միակ ոյժը որ մեր իրականութեան մէջ ընդունակ է պայքարել այդ չարիքի դէմ դա սոցիալ-դեմոկրատիան է: Դժբաղդարար այդ նորարողութիւնն ոյժը դեռ պառակտուած է, չունի բաւականաչափ նիւթական միջոցներ աջող գործունէութեան համար նաեւ այն նահանգներում, ուր գործարանական կեանքը դեռ զարգացած չէ և չկայ պրոլետարիատ: Մակայն ապագան նրանն է, որովհետեւ կուլտուրական իւրաքանչիւր քայլ, ամեն մի դեմոկրատիական բեֆորմ, կեանքի իւրաքանչիւր տնտեսական բարգաւաճում, ազատ մտքի, գիտութեան ամեն մի շող՝ նպաստում են նրա աճման և վաւասում դեմագոգիային: Սոցիալ-դեմոկրատիան օրէցօր մեծանում է իրրեւ մի հսկայ մանուկ, որին պատմութիւնը վիճակել է մեծ ապագայ, իսկ դաշնակցութեան տիպարի կազմակերպութիւնները իրրեւ սուս բիւրօկրատիայի, թրքական բեֆիմի և տզգային խաւարամտութեան մի վիժմունք, պէտք է քոյքայուելի, չքանայ իրրեւ նոր պայմաններին տնտեսապատասխան մի զանդուած, մի անախրոնիզմ և մի չարիք: Քանի շուտ հասկանայ հասարակութիւնը այդ ճշմարտութիւնը, այնքան լաւ է իրա համար:

Լ. Ս.

3 ապրիլի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քիւղացիական տպատոմբուիւնը Առեմանիայում:—Գիմակուորուած ձոր-
տատըրուիւնն եւ կապիտալիստական զիւղատնտեսութիւն:

Ահա մի երկիր որ ահագին ջանքերով իրագործեց ազգային
ինքնուրոյնութեան ձգտումը եւ դառաւ անկախ «ազգային կառա-
վարութիւն», որի ղեմ յետոյ քանիցս ապստամբուել է ինքը ազգը
իր ահագին մեծամասնութեամբ: Այդ «հակազգային» բմրոսու-
թիւնը չափազանց վշտացնող եւ անախորժ էր «ազգի խնամա-
կալներն» համար, որոնք ի փառս եւ ի սրաշտպանութիւն հա-
մայն սուսանայոց ստանձնել են թագաւորի, մինիստրնե-
րի, սենատորների, հրամանատարների, սպաների, դատա-
ւորների եւ առհասարակ մեծամեծների պաշտօններ: Դժգոհ
են այդ «ապրերախտութիւնից» եւ այն խոշոր կալուածա-
տէրերը, որոնք «ազգային ինքնուրոյնութեան» նեցուկ են,
ազգային պարծանք՝ բիլլերիստների եւ բանաստեղծների մեկե-
նասնէր. նրանք էին որ հրաժարուեցան ձորտաաիրական իրա-
ւունքներից եւ ի փառս ազգի սահմանադրութիւն մշակեցին:
Զարմանալի ժողովուրդ է ռումբնացի խաւար ամբոխը, որին
խնամակալելու իրաւունքը նախախնամութիւնը յանձնել է հայ-
բենիքը «փրկող» կալուածատէրերին. միթէ շատ է ի տրիտուր այդ
ծառայութեան, որ ներկայումս մշակութեան պիտանի հողերի
50% պատկանում է ազնուականներին, իսկ մնացածը 5 միլիոն
ժողովրդին: Միթէ մի անարդար բան կայ նրանում որ 408,000
հողի բոլորովին ազատ են սեփական հող մշակելու ծանրութիւ-
նից եւ կարող են օրեկան 20 կոպէկով մշակել կալուածատէրե-
րի ընդարձակ զաշտերը եւ այգիները: Իսկ եթէ ձմեռը զրանք
առանց պորժի են մնում. ինչ մեծ բան է. չէ՞ որ կան կենդա-
նիւնք, որոնք ամբողջ ձմեռը ոչինչ չեն ուտում, այլ որջերում
մըստիւմ են. թող այդ երկրագործ մշակները հետեան այդ ի-
մաստուն կենդանիների օրինակին... Ամեն սրբութիւն ոտնակոխ
անող քննադատները յետոյ սասում են որ սակաւահող եւ անհող
Մարտ, 1907.

գիւղացիների երեխաների 50⁰/₀ կոտորւում է, որ կան միլիո-
նաւոր գիւղացի մանուկներ, որոնք կով ասած չորքոտանին չեն
էլ տեսել և կաթի համը մնացել է իրենց բերնում միայն մօր
ստինքներից... Զարմանալի սենտեմենտալ մարդիկ, չէ՞ որ կա-
լուածատէրերը իրենց ընդարձակ հողերը իրենք չեն մշակում, այլ
յանձնում են կապալառուներին (հրէայ, յոյն, հայ) որոնք իրենց
հերթում 100—140⁰/₀ աշխատանքով յանձնում են այդ կտորները
մշակել ցանկացողներին: Էլ ի՞նչ էք ուզում. թող անհող կամ սա-
կաւահող գիւղացիները աշխատեն այդ կապալառուների համար
և կուշտ կ'ապրեն... Այդպէս է փաստարանում գիւղացիութեան
տէր և տնօրէն ազնուականութիւնը և ի պաշտպանութիւն այդ
արգարադատութեան կանգնած են մարտիկները իրենց թըն-
գանօթներով, մատւէրներով: Գիւղացիները փորձեցին գործով
յայտնել իրենց բողոքը և արեան գետերի մէջ խեղդուեց այդ
բողոքը իւր սեփական ազգային կառավորութեան քաջամարտիկ
զինուորներից, հերոս հրամանատարներից և բարեսիրտ թագա-
ւորից, որի կարծեմ ամուսինը նոյնիսկ զրոգ է, լաւ ո՞՞ւր է, պատ-
մելու շնորհ, գողարիկ-մողարիկ զգացմունքներով լի պատկեր-
ներ... Բայց և այնպէս ազգային կառավարութեան շահերը այլ
բան է, իսկ բիլլետրիստիկան, աշխատաւոր մասսայի մասին
հրգեր, պատկերներ, յօդուածներ գրելը այլ բան: Եւ ահա
մորթում են ուղեւորացիները, այլուում նրանց գիւղերը ոչ «օ-
տարազգի» տաճիկներից, այլ սեփական ազգի կնիշերիներից:
Անշուշտ շատ աւելի քաղցր է երբ մտրակում է հարազատ ազ-
գայինը, քերթում ազգային ինամակալը, սպանում ազգային քաջ
զինուորը, քան երբ այդ կատարում են մի որեւէ թուրք կամ
քիււրդ ապօրէնը: Եւ ազգային այդ սնահաւատութեան զոհ է ոչ
միայն հայը... ներեցէք սխալուեցի... ոչ միայն ուղեւորացին,
այլև աւելի քաղաքակիրթ ազգերը... Իսկ ի՞նչպէս անել որ ազ-
գասիրութիւնը չարատաւորուի այդ անիրաւութիւնից: Եւ իշ-
խող ազգասէրները գտան միջոց. չէ՞ որ հողերի կապալառու-
ները մեծ մասամբ հրէաներ են, ուրեմն խուժանին այն-
պէս հասկացնենք որ կալուածատէրերը բարի քրիստոնեա-
ներ են, իսկ գիւղացիութեան զրկանքների մէջ միակ յանցաւոր-
ները այդ քրիստոսավաճառ ջնուգներն են: Եւ խուժանը հե-
տեւում խուժանապետների թելադրութեան և զրգման սարքում
է հրէական ջարդեր... Յեղական և կրօնական նախապաշարմունք-
ները միշտ ձեռնաու են խուժանապետներին և տխմար, խա-
ւար խուժանը միշտ տալիս է խուլիվանական շահատակութիւն-
ների համար ահագին բանականեր: Այդպէս ուրեմն Ռուսաստանի
զէպքերը լացաւորիկ երկոյթներ չեն, այլ մի օղակ նման երկոյթ-

Ներքի համաշխարհային շղթայի մէջ: Մենք հայերս պէտք է որ այս երկու տարուայ զէպքերից յետոյ լաւ հասկանանք և ըմբռնենք այդ ցաւալի անցքերը...

Գիւղացիական ապստամբութիւնները իբրեւ տարերային բռնկումներ շատ քիչ են փոփոխում այն անտեսական հիմքերը որոնցից գիւղացիները տանջւում են, գլխաւորապէս այն պատճառով որ գիւղացիութիւնը չի կարողանում ստեղծել այնպիսի գիտակից և շահերի միտօրինակութեամբ ամրապնդուած կազմակերպութիւն, ինչպէս արգելնագործական բանուորութիւնը: Հողատիրէ գիւղացիները կամ երկրագործական մշակները իրենց հասարակական գրութեամբ շատ մօտ են կանգնած ինքուստրիալ բանուորութեան, բայց լինելով ոչ համախմբուած, հետաքաղաքներից և զարգացնող կենտրոններից, նրանք անկարող են այնպէս աջող կազմակերպուել ինչպէս գործարանների բանուորները. իսկ սակաւահող գիւղացիները, զանազան շերտաւորումներով իրարից բաժան-բաժան եղած և մանր սեփականութեան յարած, դժուար են ըմբռնում այն գաղափարը—սոցիալիզմը—որ օգնուում է պրոլետարիատը: Այդպիսով սեփականագուրկ հողագործ մշակները և մանր սեփականատէր գիւղացիները տարբեր անտեսական կատեգորիաներ են: Մանր սեփականատէր գիւղացին նման է արգելնաբերական անտեսութեան մէջ ռահստաւորին և նրա հետ միասին կազմում է մանր սեփականատէրերի դասակարգ: Իսկ պրոլետար խօսքը կարող է գործադրուել միմիայն սեփականագուրկ երկրագործ մշակների նկատմամբ: Գիւղացիական պրոլետարիատի գրութիւնը կը փոխուի երբ կապիտալիզմը մուտք կը գործի և երկրագործութեան մէջ, այսինքն հողատէրերը ոչ թէ վաշխառուների պէս իրենց հողերը մաս-մաս կտալով կը տան ուրիշներին մշակութեան համար, այլ իրենք իրենց արգելնագործութեան միջոցներով—հողով և խոշոր գրամազլիսով—կը ստեղծեն կապիտալիստական հողագործութիւն: Մի քանի տարի առաջ սոցիալ-դեմօկրատիական գրականութեան մէջ գիտական վէճ ծագեց այն հարցի առիթով թէ գիւղատնտեսութեան մէջ կարող է զարգանալ կապիտալիզմը թէ ոչ: Այդ բարդ հարցը բազմակողմանի քննութեան ենթարկուեց և վերջնական եզրակացութիւնն այն էր, որ կապիտալիստական զարգացման օրէնքը ճիշտ է և գիւղատնտեսութեան նկատմամբ, թէև այդ պրոցեսը այդտեղ աւելի դանդաղ է ընթանում: Յամենայն դէպքս պարզուեց որ զօռով հին համայնականութիւնը պահպանելով կամ վերադառնալով հին ձևի համայնական կարգերին, կամ ինչ որ պալիտալ կօօպիրացիաներով, ինչպէս առա-

Ջարկում են սոցիալիստ-բեօլիւցիօներները, համարեն ոչինչ չի կարելի շինել, այլ պէտք է գիւղատնտեսութեան մէջ ևս վերացնել այն բոլոր խոչնդոտները որոնք արգելում են կապիտալիզմի առաջնադասման ու արագ էվօլյուցիային հաւ տնտեսութեան այդ ճիւղում: Իսկ ամենից մեծ խոչնդոտը այդ ուղղութեան գէտ խոշոր կալուածատիրութեան այն ձևն է երբ կապալով կամ մշակելու պայմանով կտորներ են տրուում գիւղացիներին. դա գիմակաւորուած ճորտատիրութիւն է և աշխարայ վաշխառութիւն: Աւելի լաւ է որ հողը խլուի դրանցից, վաճառուի ի սեփականութիւն գիւղացիների, խողնուի հողը ազատ վաճառելու և գրաւ դնելու իրաւունքը, քան արուեստական միջոցներով լատիֆունդիաներ պահպանելը և գիւղացիներին հնաձե համայնական իլլուզիաներով կերակրելը:

Արդիւնաւործութեան թոյլ զարգացման շնորհիւ Ռումանիայում չկայ ուժեղ կապակերպուած բանուորութիւն և ահա գիւղացիութիւնը ինքը մենակ անգոր է յիպոփոխութիւնը ցաննալի վախճանի հասցնելու, հոյն իսկ փոխելու ընտրողական այն կիրաւունքը, որով պարլամենտ են ուղարկում միմիայն խոշոր կալուածատէրերը: Թէ ինչ տեսակ օրէնքներ և կարգեր պէտք է մշակեն այդ մագնատները, որպէսզի դրանց մշտական խնամակալութիւնից զուրս չգայ ռումանական ժողովուրդը—այդ պարզ է ով բմբունում է պետութեան դատակարգային կազմի էութիւնը: Սակայն Ռումանիայի տէր և տնօրէնները անկարող են կանգնեցնել տնտեսական զարգացման ընթացքը. արդիւնարեքական դրամապլուխը ծովի հման ծածկելով ամբողջ եւրոպան բացառութիւն չի կաղմելու Ռումանիայի նկատմամբ և նա volens nolens կընկնի կապիտալիզմի ճիրտների մէջ, որ շահագործութեան հետ միասին բերում է և, հակառակ իր կամքին, շահագործման գերեզմանափորին: Յետաֆնաց, խաւար, աղքատ երկրներում ինչքան ուղում են դանազան տիպի ֆիզաներ վխտան, դրանք բացի քաօսից և խառնակութիւնից բան չեն կարող առաջացնել իրենց անհատական, խմբական փորձերով. կար ժամանակ որ մարդիկ լայնալիճ աղեղներով էին կռում, աւագակային խմբերով էին տիրապետութիւններ հաստատում, կարգեր փոփոխում, այժմ այդ բոլորը հին հին դարուց յիշատակներ են և լաւագոյն դէպքում գօնքիշօտական քաջագործութիւններ... Կար ժամանակ որ բժշկութիւնը կախարդների և դալլաքների ձեռքում էր, այժմ բժշկական գիտութիւնների մէջ աղէտ և անփորձ մարդուն չեն տանի հիւանդի մօտ, եթէ չեն ուզում նրան միւս աշխարհը ուղարկել: Տգէտ և սղայամիտ էքսպերեմենտները հասարակա-

կան ցաւերի բժշկութեան գործում մնացել են միմիայն տհաս և խաւար ազգերի մէջ... Այդ պէտք է գիտակցեն մանաւանդ այն փխրուն ու վախտ «ազգային» կազմուածք ունեցող ժողովուրդները, որոնք սիրում են, շովինիզմի փշոցներից տարուած, «հերոսական» մասսային ինքնասպանութիւններ կատարելու... Այն ինչ անվնաս է անցնում մի փրդի համար, մահաբեր է ծաի օրգանիզմի համար... Հասարակական ցաւեր բժշկող դալլարներից և փալչիներից աղատուելու համար պէտք է ամեն մի ժողովուրդ գրկաբաց ընդունի գիտական սոցիալիզմը և աշխատի բմբունել նրա խորիմաստ էութիւնը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

— Ամսագրիս խմբագրի ընտանեկան դժբաղդութեան պատճառով և մասամբ նաև «Հերմէս» տպարանի գրաշարների գործադուլի պատճառով ուշացաւ այս համարի լոյս տեսնելը:

— Շատ փաստեր ապացուցում են որ մեր «ազգային կառավարութեան» ներկայացուցիչները իրանց բազմաթիւ ագենտներով բոյկոտի են ենթարկել «Մուրճ» ամսագիրը: Այդ բոյկոտը աւելի ուժեղ է այն վայրերում ուր դեռ ևս անսասան է այդ խնամակալների մոլորեցնող վարդապետութեան և անբարոյականացնող գործելակերպի հմայքը: Աւելի վատ իրա հայ հասարակութեան համար, եթէ նա գերադասում է ինքնախաբէութիւնը և ինքնաստրկացումը անվեհեր ճշմարտախօսութեան և խօսքի անկախութեան: Եթէ այդ հասարակութիւնը յօժարակամ դիակ է դարձել— ոչ մի գալվանական հոսանք նրան չի կենդանացնիլ, դիակին փառաւոր կերպով կը թաղեն «ընկեր» վարդապետները և «ընկեր» խուժանապետները: Մենք մեր պարտքը կը

կատարենք լսելով միմիայն մեր ներքին ձայնին, խղճի թելադրանքին, հաւատարիմ մեր հրապարակախօսական կոչման և պարտականութեան:

— Թիւրքահայոց հարցի մասին այն նոր ուղղութիւնը որ շատ որոշ կերպով արտայայտուել էր «Մուրճի» 1906 թուականի № 4—5 «Մօտիկ անցեալից» յօդուածում և ստացաւ իր վերջնական ձևը նոյն թուականի յուլիսի (№ 7) համարում տպուած «Արաքսին տեսութեան մէջ» («Թիւրքահայերի վիճակը. հին նախապաշարումներ եւ նոր ճանապարհը») և նոյն համարի «Մօտիկ Անցեալից» գրուածքում—առանձին դարկ ստացաւ և զարգացաւ, երբ հիմնուեց նոյն ուղղութեամբ մի յատուկ շաբաթաթերթ—«Երկրի Չայնը»: Այդ թերթի պրոպագանդի շնուհիւ արտասահմանի թիւրքահայերը կամաց-կամաց սկսում են ընտելանալ նոր ճանապարհին: Ուրախալի երևոյթ! Բայց մի փոքրիկ դիտողութիւն այդ շաբաթաթերթի խմբագրութեան, որի ղեկավարը պ. Տ. Զ. պէտք մօռացած չլինի որ յիշած ուղղութեամբ յատուկ օրգան ունենալու միտքն անգամ ծագեց «Մուրճի խմբագրատանը... Մինչդեռ արտասուպելով բոլոր կարծիքները թիւրքահայ դատի մասին այդ խմբագրութիւնը ուղենալով որ միայն իրեն վերագրուի նոր ուղղութեան նախաձեռնութիւնը, համարեա ոչինչ չի ասում յիշած յօդուածների մասին, որոնց մէջ արդէն շատ պարզ ձևակերպուած էին այն բոլոր սկզբունքներն ու հիմքերը, որոնց ջատագով միայն յետոյ, հոկտեմբեր ամսից, հանդիսացաւ ի մեծ ուրախութեան մեր և ինքը «Երկրի Չայնը»...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան եւ ծախուաւ եւ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԳԵԱՆԻ

Երկիրը, երկու հատորի մէջ, հեղինակի պատկերով, կենդանաբան ակնարկով և ինքնաձեռագրով բաղկացած 1080 մեծ երեսներէց:

Գինն է երկու հատորի համար 3 ռուբլի:

Գրավաճառների 20% զեղջ:

Դիմել՝ Նոր Նախիջևան, հայոց բարեգործական ընկերութեան գրասենեակը:

Նոյն տեղ ծախուաւ է նաև Ռաֆ. Պատկանեանի երկրի III հատորը, գինն է 1 ռուբլի:

Ուսանողների, ուսուցիչների, աշակերտների և հոգևորականների համար Միք. Նալբանդեանի երկհատորը արժէ 2 ռ., Ռ. Պատկանեանի III հատորը 50 կոպ. Ճանապարհածախսը իրանցը:

Յարգանք նախագահ՝ Գ. Չալխուշեան

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

1907 թւի

Չ Ա Յ Ն

Քաղաքական, ցեղասպան, հասարակական
ժառանգութեան

Բաժանորդագինը՝ Թիֆլիզ տարեկան 3 ռ.
կէս տարին 1 ռ. 60 կ., ամսական 30 կ., հատով
7 կ. Թիֆլիզից դուրս տարեկան 3 ռ. 50 կ.
կէս տարին 2 ռ. ամսական 35 կ. հատով 8 կ.:
Արտասահման տարեկան 4 ռ. 50 կ. կէս տարին
2 ռ. 50 կ. ամսական 45 կոպ.

ԲԱՆԻՈՐՆԵՐ, ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵՑԷՔ ՉԵՐ ԹԵՐԹԻՆ

Հասցէն՝ Тифлисъ, редакция «Дзайнъ», Малая-
Ванская, № 4. Արտասահմանից՝ Tiflis, rédaction du
«Dzaïn», Malaja-Vanskaja, 4.

1887

Ի. ՏԱՐԻ

1907

„ՀԱՆԴԵՍ ԼԵՍՈՐԵԼՅ“

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Թ Ե Ր Թ Ը

Կը մտնէ իւր գոյութեան քսաներորդ տարեշրջանը, և կը շարունակուի իր ծանօթ ուղղութեամբն և ծրագրով: «Հանդէս Ամսօրեայ» իբրև Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաբանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան, պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ—ինքնագիր և թարգմանածոյ: Ձանց պիտի հառնուին հայ ականաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւններ: Նոյնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարևոր լրերու, նոր հրատարակութեանց ևն:—Տարեկան բաժնեգինն է 10 Ֆր. 4 ռ.—կանխիկ:

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Ս Յ Է Ն

A la Rédaction de la Revue „Handess“, Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ԲԱՅՈՒԱԾ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ Հ Ա Ս Կ Ե Ր “

Մանկական պատկերազարդ ամսագրի

Խմբագրութեան հասցէն՝ Թիֆլիս, Բէհրուլեան փողոց №25, (Тифлисъ Редакция журнала «Аскеръ» կամ Tiflis (Gauakas) Pedak. de journ. «Hasker»)

Խմբագիր-հրատարակիչ՝ ԿՈՏ. ԼԻՍԻՅԵԱՆ

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(35-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1907

ԹԻՖԼԻՍԻՆ

«Մշակը» կը հրատարակի նոյն պըտգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր ըացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի». տարեկան գինը 10 ռուբլի է, տասնամէկ ամսանը նոյնպէս 10 ռ., տասն ամսանը՝ 9 ռ., ինն ամսանը՝ 8 ռ., ութը ամսանը՝ 7 ռ., եօթն ու վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը՝ 5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3 ռ., երկու ամսանը՝ 2 ռ. և մի ամսանը 1 ռուբլի:

Արտասահմանեան ըաժանորդագրութիւնը. Ա. մ. երկաթի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 զոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրեւէ կարելի է յսկազրատանը (Բաղարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրեւէլու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս՝ պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЬ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունուով են բոլոր լեզուներով:

Ապստիկ ըոժանորդագրութիւն չէ ընդունում:

Բ Ա Յ Ի Ա Ծ Է

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲԱԶՄԱՎԵՊԻ

ԲԱԶՄԱՎԵՊ ամսաթերթ Ս. Ղազարու Հայկական Ճեմարանի, հայ պարբերաթերթերու երիցագոյնը, իր վաթսներորդ չորրորդ տարեշրջանին մէջ պիտի մասնակցի, աւելի հզօր թափով, ազգային մտաւոր վերածնութեան:

Իր նպատակին հասնելու համար, Բազմավել կը ներկայացնէ հայ ժողովրդեան բաժին մը՝ բոլորովին ազգային գիտութեանց նուիրեալ:

ՀԱՅԿԱԿԱՆ, ՃԵՄԱՐԱՆ.

այս տիտղոսին ներքե կը ներկայացունին բանախօսութիւններ՝ Հայոց պատմութեան, Մատենադրութեան, Լեզուաբանութեան, Ծիսագիտութեան Գեղարուեստներու վրայ, այլն:

Հայկական Ճեմարանի կը յաջորդէ բաժին մը՝ նուիրեալ գեղեցիկ դպրութեանց, ուր կը ներկայացունին բանաստեղծութիւններ՝ օտար զրաւանութիւններէ, իտալականէն, մասնաւորապէս, որ քիչ ծանօթ է ազգին: Բազմավելի «զրաւան» բաժինն ունի վէպեր, նորավէպեր, — թատերգութիւններ, և այլն:

Վերջապէս Բազմավէլ պիտի ունենայ նաև համազգային Դիտութեանց ու Գիւտերու նուիրեալ բաժին մը, որուն պիտի աշխատակցին եւրոպայի համալսարաններէն վկայեալ հայ բժիշկներ և մասնագէտներ: Տարեկան գինն է ֆ. 10:

Դիմել՝ Rédaction de la Revue «Bazmavep». St. Lazare—Venise.

На 1907 годъ

Открыта подписка на историческій жур-
наль

„Б Ы Л О Е“

Журналь—внѣпартійный и посвященный исторіи освободительнаго движенія—издается подъ редакціей В. Я. Яковлева—Богучарскаго и П. Е. Щеголева при ближайшемъ участіи В. Л. Бурцева по слѣдующей программѣ.

Статьи и изслѣдованія по исторіи освободительнаго движенія въ Россіи.

Біографіи дѣятелей движенія, воспоминанія о нихъ, ихъ собственные мемуары, дневники, письма, статьи, стихотворенія и проч.

Документы и другіе матеріалы, касающіеся движенія.

Отдѣльные факты и эпизоды изъ исторіи движенія.

Историческая бібліографія.

Журналь будетъ выходить по прежнему ежемѣсячно, книжками въ 20 печатныхъ листовъ каждая.

Въ журналь помѣщаются—на отдѣльныхъ листахъ и въ текстѣ—портреты дѣятелей, факсимиле, рисунки, имѣющіе отношеніе къ исторіи движенія.

Цѣна съ пересылкой и доставкой: на годъ (съ 1 янв. по 1 янв.)—8 руб.; на $\frac{1}{2}$ года (съ 1 янв. по 1 июля)—4 руб.; на $\frac{1}{4}$ года (съ 1 янв. по 1 апр.)—2 руб. Переменная адреса—30 коп. (При переменной адреса контора проситъ подписчиковъ сообщать старый адресъ, внесенную сумму и срокъ подписки). Книжные магазины при подпискѣ получаютъ 5% скидки.

Цѣна отдѣльной книжки въ книжныхъ магазинахъ—1 руб., для покупающихъ въ конторѣ—85 коп., для выписывающихъ изъ конторы—1 руб. 10 коп. съ пересылкой. Книжнымъ магазинамъ на отдѣльныя книжки—30% скидки.

Подписка принимается въ конторѣ журнала—(ежедневно, кромѣ праздниковъ, отъ 9 до 4 час. дня)—С. Петербургъ, Лиговская ул., 44

Редакція помѣщается въ С. Петербургѣ на Знаменской ул. д. 19.

Личныя объясненія съ редакторами—по понед., вторн., четверг., пятницамъ (кромѣ праздниковъ) отъ 3 до 5 час. дня.

Редакторы { В. Я. Богучарскій.
П. Е. Щеголевъ.

Издатель Н. Е. Парамоновъ.

Открыта подписка на 1907 годъ
НА ГАЗЕТУ

ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ

Газета будетъ выходить ежедневно, кромѣ послѣ праздничныхъ и по-
недельникковъ. Чтобы имѣть возможность своевременно доставлять га-
зету городскимъ и особенно иногороднымъ подписчикамъ, контора из-
данія проситъ записаться на газету своевременно, такъ какъ заго-
товка адресовъ гг. подписчиковъ требуетъ на мало времени.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой въ Тифлисъ: * Съ перес. въ другіе города:
На 12 мѣс.—5 р., на 6 мѣс.— * На 12 мѣс.—7 руб., 6 мѣс.—
3 руб., на 3 мѣс.—1 р., 75 к., * 4—р., на 3 мѣс.—2 р., 50 к.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но только съ 1 чис-
ла каждого мѣсяца, исключительно въ конторѣ изданія. Головин-
скій проспектъ, № 15.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: Для Закавказья за мѣсто, занимаемое строкой
петита, передъ текстомъ—10 коп. и послѣ текста—5 коп. Извѣщенія
о зрѣлищахъ печатаются на первой страницѣ по—20 коп. за строку и
на 4—по 10 коп. За объявленія въ справочномъ отдѣлѣ взимается по
8 коп. за строку. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимаются
исключительно въ центральной конторѣ торговаго дома Л. и. Э.
Метцль и К^о въ Москвѣ, Мясницкая, д. Ситова и въ отдѣленіяхъ его—
въ С.-Петербургѣ, Большая-Морская, № 11; въ Варшавѣ, Краковское
предмѣстье, № 53, по 24 к.—передъ текстомъ и 12 коп. послѣ текста.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1907 ГОДЪ
НА ГАЗЕТУ


ЗАКАВКАЗЬЕ

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ—8 р., на 6 мѣс.—
5 руб., помѣсячно 1 р.

*Плата за объявленія: впереди текста за строку пе-
тита 15 коп. послѣ текста 8 коп.*

Тифлисъ. Головинскій пр., д. Пондоева, рядомъ съ го-
родской аптекой.

Редакторъ-издатель П. А. ГОТУА.



"ՄՈՒՐՃ"

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏԵՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

(Նոր շրջան VII տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

ԳՐԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

տարեկան 10 ռ.
կէս տարին 5 ռ 40կ
ամսական 90 կ.

ՏԵՏԵՍԱԿԱՆ

տարեկան 13 ռ. (32 ֆ.)
կէս տարին 7 » (18 ֆ.)
ամսական (3 ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նա՛նու մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Տարը.
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, զինղացիների և բանուորների համար քաժանոր-
դագինն է (Ռուսաստ.) 8 ռուբլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4)ռ.:

Հասցէն. Тифлис «Мурдж» Tiflis «Mourch»

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ
մանաւանդ բուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, եւ քերթի միայն մի
երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադուրեան, ուղղագրութեան եւ
նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք
է ուղարկել խմբագրութեանը նաեւ քննադիրը:
2. Զընդունուած մեծ յօդուածները (36 երեսից աւելի) պահուում են
խմբագրասանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնում են: Զեռագիրը յետ ստա-
նալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու
նոտանաւորները չեն վերադարձնում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւ-
նը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները հա-
մարում են անվճարելի:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները
փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք
է պատասխանի համարուղարկեն նամակագրոյմ կամ պոստային
բլանկ:
6. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ:
Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր
ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի ստալիկայ համարն
ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ
պէտք է յաւանել նաեւ հին հասցէն:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ